

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱԿ-Ի «ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՑԵՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

Միավորված ազգերի կազմակերպության «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման 6-րդ Ազգային զեկույցը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

6-րդ Ազգային զեկույցի մշակման գործընթացին մասնակցել է «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի» հայաստանյան մասնաճյուղը: Զեկույցը տեղադրվել է «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի պաշտոնական կայքում (www.cbd.int):



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	5
ՆԱԽԱԲԱՆ	6
ԲԱԺԻՆ I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ	
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ	8
Ազգային նպատակային խնդիր 1.....	8
Ազգային նպատակային խնդիր 2	10
Ազգային նպատակային խնդիր 3	12
Ազգային նպատակային խնդիր 4	14
Ազգային նպատակային խնդիր 5	19
Ազգային նպատակային խնդիր 6	22
Ազգային նպատակային խնդիր 7	24
Ազգային նպատակային խնդիր 8	26
Ազգային նպատակային խնդիր 9	28
Ազգային նպատակային խնդիր 10	29
Ազգային նպատակային խնդիր 11	31
Ազգային նպատակային խնդիր 12	32
ԲԱԺԻՆ II. ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ	
ՀԱՄԱՐ 2014-2018 ԹԹ. ԶԵՆՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ	
ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	33
Օրենսդրություն	33
Կառավարման համակարգ	38
ԲՀՊՏ-ների համակարգի զարգացում, կառավարման բարելավում, նոր պահպանվող տարածքների ստեղծում.....	39
Դեգրադացված էկոհամակարգերի վերականգնում՝ ջրային էկոհամակարգերի օրինակի վրա	42
Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված մեխանիզմների ներդրում	46
Հայաստանի Հանրապետությունում կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման համար նախադրյալների ստեղծում էկոհամակարգային մոտեցման կիրառման և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով	48
ԲԱԺԻՆ III. ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ	
ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	50
Ազգային նպատակային խնդիր 1	51
Ազգային նպատակային խնդիր 2	53
Ազգային նպատակային խնդիր 3	56
Ազգային նպատակային խնդիր 4	58
Ազգային նպատակային խնդիր 5	86
Ազգային նպատակային խնդիր 6	102
Ազգային նպատակային խնդիր 7	123
Ազգային նպատակային խնդիր 8	126
Ազգային նպատակային խնդիր 9	134
Ազգային նպատակային խնդիր 10	140
Ազգային նպատակային խնդիր 11	144
Ազգային նպատակային խնդիր 12	151
ԲԱԺԻՆ IV. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ	
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԻԶԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ	154
Նպատակային խնդիր 1	154
Նպատակային խնդիր 2	156
Նպատակային խնդիր 3	157



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Նպատակային խնդիր 4 159
Նպատակային խնդիր 5 161
Նպատակային խնդիր 6 163
Նպատակային խնդիր 7 164
Նպատակային խնդիր 8 168
Նպատակային խնդիր 9 170
Նպատակային խնդիր 10 171
Նպատակային խնդիր 11 173
Նպատակային խնդիր 12 174
Նպատակային խնդիր 13 175
Նպատակային խնդիր 14 178
Նպատակային խնդիր 15 179
Նպատակային խնդիր 16 180
Նպատակային խնդիր 17 180
Նպատակային խնդիր 18 181
Նպատակային խնդիր 19 182
Նպատակային խնդիր 20 184

ԲԱԺԻՆ VII. ԵՐԿՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԿԱ ՆՈՐԱՅՎԱԾ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 186
Անողնաշար կենդանիների փոփոխման միտումները 2014-2018 թթ. ընթացքում
(դրական և բացասական) 186
Ողնաշարավոր կենդանիների փոփոխման միտումները 2014-2018 թթ.
ընթացքում (դրական և բացասական) 188
Ֆլորայի տեսակային կազմի և քանակի փոփոխման միտումները
2014-2018 թթ. ընթացքում (դրական և բացասական) 191
Սնկեր 194



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ.
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման Գործակալություն.
ԱՆԽ	Ազգային նպատակային խնդիրներ.
ԲՀՀ (WWF)	Բնության համաշխարհային հիմնադրամ.
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ.
ԲՀՊՏ-ՌՊԾ	Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր.
ԲՊՄՄ (IUCN)	Բնության պահպանության միջազգային միություն.
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա.
ԳԱԱ ԿՀԳԿ	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն.
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ.
ԳԷՀ ՓԴԾ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագիր.
ԳՄՀԸ (GIZ)	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն.
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն.
ԵՄ	Եվրոպական միություն.
ԶԼՄ	Զանգվածային լրատվական միջոցներ.
ԷԾ	Էկոհամակարգային ծառայություն.
ԿԲԿ	«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա
ԿԲՀ (CNF)	Կովկասի բնության հիմնադրամ.
ԿԲՏ	Կարևորագույն բուսաբանական տարածք.
ԿԹՏ	Կարևորագույն թռչնաբանական տարածք.
ԿՌԳԱԾ	Կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն և գործողությունների զգային ծրագիր.
ԿՓՇԿ	«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա.
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան.
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն.
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք.
ՄԱԿ ԱԶԿ (UNIDO)	ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն.
ՄԱԿ ԵՏՀ (UNECE)	ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով.
ՄԱԶՏ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր.
ՄԱԿ ՇՄԾ (UNEP)	ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր.
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն.
ԶԳՌ	Զրային գենետիկական ռեսուրսներ.
ՊԳԿ (FAO)	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն.
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություն:



ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման հարցերը երկրի շրջակա միջավայրի ռազմավարության անբաժանելի մասն են՝ նպատակաուղղված կենսաբազմազանության կորստի, բնական միջավայրի դեգրադացման կանխարգելմանը, բնության բազմազանության և մարդկանց բարեկեցության ապահովմանը: Հայաստանի որդեգրած քաղաքականությունը համահունչ է ԿԲԿ 2010-2020 թթ. Ռազմավարական պլանով սահմանված հետևյալ նպատակներին.

1. կենսաբազմազանության կորստի հիմնական պատճառների դեմ պայքարի իրականացում՝ ներառելով կենսաբազմազանության թեմատիկական կառավարության և հասարակության գործունեությունում.
2. կենսաբազմազանության վրա ուղղակի ծանրաբեռնվածության կրճատում և կայուն օգտագործման խթանում.
3. կենսաբազմազանության վիճակի բարելավում՝ պահպանելով էկոհամակարգերի, տեսակների և գենետիկական բազմազանությունը.
4. կենսաբազմազանության և էԾ-ների ապահովմամբ մարդկանց օգուտների ծավալի մեծացում.
5. գիտելիքների կառավարման և ներուժի ստեղծման շնորհիվ կենսաբազմազանության պահպանության և օգտագործման արդյունավետության բարձրացում:

Հիմք ընդունելով ԿԲԿ գլոբալ նպատակները և դրանցից բխող նպատակային խնդիրները՝ ՀՀ կառավարության կողմից սահմանվել և 2015 թ. «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրում»¹ (ԿՌԳԱԾ) ամրագրվել են կենսաբազմազանության պահպանության և օգտագործման հետևյալ գերակա ռազմավարական ուղղությունները.

1. կենսաբազմազանությանն առնչվող ՀՀ օրենսդրության և կառավարման համակարգի բարելավում.
2. կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանության բարելավում ու խախտված բնակմիջավայրերի վերականգնում.
3. կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշման կրճատում և կայուն օգտագործման խթանում.

¹ 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության նիստի N 54 արձանագրությունից քաղվածք:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103638>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

4. կենսաբազմազանության կորստի հիմնական պատճառների վերացում՝ միջճյուղային հարաբերությունների կարգավորման և բնակչության իրազեկվածության բարձրացման միջոցով.
5. կենսաբազմազանության պահպանության և բնական պաշարների կայուն օգտագործման բնագավառում գիտական հետազոտությունների, գիտելիքների կառավարման և ներուժի ստեղծման ակտիվացում:

Բացի այդ, կատարելով ԿԲԿ-ի կողմից երկրի ստանձնած պարտավորությունները և հաշվի առնելով ընթացող միջազգային զարգացումներն ու Հայաստանում առկա էկոլոգիական ու բնապահպանական հիմնախնդիրները, 2014 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը»² (ԲՀՊՏ-ԲՊԾ), որը սահմանել է Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացման ռազմավարական հետևյալ նպատակները.

1. ԲՀՊՏ-ների համակարգի զարգացման ու արդյունավետության բարձրացման միջոցով երկրում էկոլոգիական կայունության և մարդու համար առողջ ու բարենպաստ շրջակա միջավայրի ապահովում.
2. ԲՀՊՏ-ների էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, գիտական, կրթական, ռեկրեացիոն և հոգևոր արժեքների պահպանությունը, որը պետք է իրականացվի էկոհամակարգերի, գենետիկական պաշարների, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանման, վերականգնման և երկարաժամկետ օգտագործման միջոցով:

Հիմք ընդունելով նշված հիմնարար փաստաթղթերի դրույթները՝ սահմանվել են կենսաբազմազանության ռազմավարական ուղղություններին համահունչ ԱՆԽ-ները, որոնք կներկայացվեն և կքննարկվեն սույն զեկույցի համապատասխան բաժիններում:

² 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1059-Ա որոշում: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166>



ԲԱԺԻՆ I

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն ԿԲԿ-ի կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման 2011-2020 թթ. Ռազմավարական պլանի և կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման Այիչիի նպատակային խնդիրների՝ Հայաստանը ստանձնել է համարժեք պարտավորություններ:

Ազգային նպատակային խնդիր 1.

ՀՀ օրենսդրությամբ ամրագրել կենսաբազմազանության և ԷԾ-ների գնային արժեքի գնահատման մեխանիզմները

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Վերջին տարիներին ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում կտրուկ աճել է էկոհամակարգերի դերի և արժեքի, ինչպես նաև դրանց ծառայությունների միջոցով կյանքի որակի բարելավման նկատմամբ հանրության հետաքրքրությունը: Բնական պաշարների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում էկոհամակարգային մոտեցման կիրառումը կարող է օգնել կառավարություններին, համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին բազմաթիվ օգուտներ ապահովել հողօգտագործողների, հողի սեփականատերերի ու հասարակության համար: Չնայած դրան, Հայաստանում ներկայումս կենսաբազմազանության և ԷԾ-ների արժեքները լիարժեք արտացոլված չեն որոշումներ կայացնելու գործընթացներում և հիմնականում հաշվի չեն առնվում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման ժամանակ: Կենսաբազմազանության և ԷԾ-ների արժեքային գնահատման ներառումը տնտեսական զարգացման և աղքատության կրճատման ռազմավարություններում պահանջում է դրանց պատշաճ գնահատում և շահագրգիռ կողմերի ու կառավարության միջև համագործակցության սերտացում: ԷԾ-ների արժեքավորումը թույլ կտա գնահատել տարբեր ոլորտներում ծրագրերի իրականացումից ակնկալվող շրջակա միջավայրի պոտենցիալ կորուստները, դիտարկել հնարավոր այլընտրանքները և դրանցից ընտրել էկոհամակարգերի ու կենսաբազմազանության վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող տարբերակները:

Կախված երկրի հնարավորություններից՝ կենսաբազմազանության և ԷԾ-ների արժեքային գնահատումը կարելի է իրականացնել փուլ առ փուլ: Նախ՝ գնահատել հեշտությամբ հաշվառվող արժեքները, այնուհետև զարգացնել այդ գործընթացը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում» չի սահմանվել ԷԾ-ների



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

գնահատման գաղափարը և գնահատման իրավական հիմքի ստեղծման անհրաժեշտությունը: Հետևաբար՝ բնապահպանության ոլորտի գործող օրենսդրության կատարելագործման խնդիրն արդիական է, քանի որ այն չի ապահովում էկոհամակարգային մոտեցման մոդելի կիրառմամբ այնպիսի գործընթացների կարգավորում, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և օգտագործման համալիր պլանավորումը, լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառմամբ բնական ռեսուրսների վերականգնման ունակության բարձրացումը, միասնական մոնիթորինգի իրականացումը, տեղեկատվական համակարգերի կառավարումը և բնության բոլոր բաղադրիչների փոխկապակցվածության ապահովումը:

Կենսաբազմազանության և էԾ-ների տնտեսական արժեքի հաշվառման անհրաժեշտությունը ցանկացած տնտեսական ծրագրի պլանավորման և իրականացման, ինչպես նաև էկոլոգիական վնասի գնահատման ժամանակ պետք է օրենսդրորեն ամրագրված լինի, իսկ տնտեսագիտական գնահատման անցկացման սկզբունքները պետք է հաստատված լինեն պետության կողմից:

Հարկ է նշել, որ մեր երկրի բնակչության մեծամասնությունը լավ տեղեկացված չէ բնական շրջակա միջավայրից ստացվող օգուտների վերաբերյալ: Նշված նպատակային խնդրի իրագործման արդյունքում Հայաստանի բնակչության իրազեկված լինելը կնպաստի կենսաբազմազանության և էԾ-ների պահպանությանը:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- 1 6 11 16
- 2 7 12 17
- 3 8 13 18
- 4 9 14 19
- 5 10 15 20

Այլ կարևոր տեղեկատվություն. Տվյալ ԱՆԽ-ի իրականացմանը նպաստելու համար ԿՌԳԱԾ-ում ներառվել է հետևյալ գործողությունը. «1.1. Որոշել էկոհամակարգային ծառայությունների գնային արժեքի գնահատման մեթոդաբանությունը և փորձարկել բնության հատուկ պահպանվող տարածքներում»,



իսկ ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել է «ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայություններից ստացվող օգուտների գնահատում, դրանց վերաբերյալ բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացում» գործողությունը: Դրա շնորհիվ կստեղծվեն նախադրյալներ ԷԾ-ների գնային արժեքի իրատեսական գնահատման, ինչպես նաև բնօգտագործման մեխանիզմների կատարելագործման միջոցով ԲՀՊՏ-ների դերի և նշանակության բարձրացման համար:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am

Ազգային նպատակային խնդիր 2.

ՀՀ օրենսդրությամբ հստակեցնել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կատարելագործել կենսապաշարների կառավարման համակարգը

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Հայաստանում լայնորեն տարածված է կենսաբանական ռեսուրսների օգտագործումը (մերձալպյան և ալպյան մարգագետինների օգտագործումը՝ որպես բնական կերհանդակներ, ուտելու և դեղատու բույսերի, հատապտուղների հավաքը, որսը և այլն), որն առանձին դեպքերում հասել է գերօգտագործման (անտառային ռեսուրսներ, ձկնորսություն): Ընդ որում՝ կենսառեսուրսների օգտագործումը հիմնականում ընթացել է տարերայնորեն՝ առանց հաշվի առնելու ռեսուրսի վերարտադրության բնական հնարավորությունները և դրա ապահովման անհրաժեշտ նախապայմանները: Գերօգտագործման ցայտուն օրինակ է Սևանա լճում ձկնապաշարների, մասնավորապես՝ սիգի պաշարների կտրուկ կրճատումը, որը փաստորեն սխալ կառավարման և գիտական հիմնավորումներն անտեսելու արդյունք է: Լճում սիգի պոպուլյացիայի խզումը մասնագետների կողմից բացատրվում է որսագողության աննախադեպ չափերով և որսի կանոնների խախտմամբ, որի պատճառով, չնայած այդ ձկնատեսակի որսի արգելքին, որսացվել են դեռ սեռահասուն շրջանին չհասած առանձնյակները: Բնակչության կենսամակարդակի աճը պետք է ապահովվի տնտեսական գործունեությունում վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են դրանց սպառումը և երաշխավորում վերականգնումը՝ ի շահ ապագա սերունդների:

Տեղական բնակչության կողմից ոչ բնափայտային անտառօգտագործումը հաճախ ընթանում է անկանոն, որի հետևանքով խախտվում է անտառային կենսաբազմազանության բնական վիճակը, նվազում են օգտակար բուսատեսակների պոպուլյացիաների թվաքանակը և էկոհամակարգի ամբողջականությունը: Անտառտնտեսությունների անտառկառավարման պլաններում բացակայում են



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Կենդանատեսակների միգրացիայի ապահովման, կենսապաշարների հաշվառման ու օգտագործման ենթակա չափաքանակների որոշման և որսորդական տնտեսությունների կազմակերպման, ինչպես նաև անտառային կողմնարդյունքի կայուն օգտագործման վերաբերյալ պլանավորված ծրագրեր: Անբավարար մակարդակի վրա են անտառների հաշվառման, անտառային կադաստրի և կենսաբազմազանության մոնիթորինգի վարումը, ինչպես նաև անտառագիտական հատուկ ուսումնասիրությունները:

Առկա անկանոն վիճակը պայմանավորված է ոչ միայն բնապահպանական վերահսկողական կառույցների անբավարար աշխատանքով, այլև օրենսդրության անկատարությամբ, հատկապես՝ կենսառեսուրսների օգտագործման նորմավորման և չափաքանակների որոշման առումով: Կենսառեսուրսների արդյունավետ կառավարման անհրաժեշտ տարրերը՝ հաշվառումը, գույքագրումը և մոնիթորինգը, դեռևս պատշաճ մակարդակով և ծավալով չեն իրականացվում: Կենսաբազմազանության վերաբերյալ լիարժեք տեղեկատվական համակարգի բացակայությունն իր հերթին բացառում է կենսաբազմազանության վրա մարդածին և բնական գործոնների ազդեցության իրական գնահատումը, պատճառած վնասի հաշվառումը և հստակ տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացումը:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության տնտեսական գնահատման ուղղությամբ, որը կարող է հիմնավորել տվյալ անտառային էկոհամակարգի տնտեսական նպատակով չօգտագործելը կամ այլընտրանքային օգտագործումը՝ երկար ժամկետում ավելի մեծ օգուտներ ստանալու համար: Նման գնահատումներ կարող են իրականացվել նաև անտառային ԲՀՊՏ-ներում:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | |
|---------------------------------------|---------------------------------------|-----------------------------|-----------------------------|
| <input type="checkbox"/> 1 | <input checked="" type="checkbox"/> 6 | <input type="checkbox"/> 11 | <input type="checkbox"/> 16 |
| <input type="checkbox"/> 2 | <input type="checkbox"/> 7 | <input type="checkbox"/> 12 | <input type="checkbox"/> 17 |
| <input type="checkbox"/> 3 | <input type="checkbox"/> 8 | <input type="checkbox"/> 13 | <input type="checkbox"/> 18 |
| <input checked="" type="checkbox"/> 4 | <input type="checkbox"/> 9 | <input type="checkbox"/> 14 | <input type="checkbox"/> 19 |
| <input type="checkbox"/> 5 | <input type="checkbox"/> 10 | <input type="checkbox"/> 15 | <input type="checkbox"/> 20 |



Այլ կարևոր տեղեկատվություն. Չնայած վերջին տասնամյակների ընթացքում որոշակիորեն կատարելագործվել է կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների օգտագործման օրենսդրությունը, սակայն առաջնային են մնում կենսաբազմազանության կայուն օգտագործման սկզբունքների հստակեցումը, կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները՝ հիմնված լինելով էկոհամակարգային մոտեցումների, ժամանակակից գիտական հետազոտությունների վրա և մատչելի ու հասանելի կլինեն բնակչության համար: Տվյալ նպատակային խնդրի իրականացումը նախադրյալներ կստեղծի կենսաբազմազանության բնագավառում միջոցառումներ գործունեության համակարգման, միասնական քաղաքականության իրականացման, տեղեկատվության փոխանակման, որոշումների ընդունման գործընթացների բարելավման և ընդունված որոշումների արդյունավետ իրականացման համար:

Տվյալ ԱՆԽ-ի իրականացման վերաբերյալ «3.2. Բացահայտել լայն կիրառում ունեցող բուսատեսակները և որսակենդանիները, գնահատել դրանց պաշարները և որոշել հավաքի/որսի չափաքանակները» գործողությունը ներառված է ԿՌԳԱԾ-ում և 2018 թ. փետրվարի 22-ի N 7-29 ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության բնական պաշարների կառավարման ռազմավարություն» փաստաթղթի միջոցառումների ծրագրում:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am

Ազգային նպատակային խնդիր 3.

Ապահովել գենետիկական պաշարների վերաբերյալ տվյալների մատչելիությունը և տեղեկատվության փոխանակումը

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Լինելով ԿԲԿ-ի և «Պարենի արտադրության և գյուղատնտեսության վարման համար օգտագործվող բույսերի գենետիկական ռեսուրսների մասին» միջազգային դաշնագրի կողմ երկիր՝ Հայաստանը ստանձնել է գենետիկական ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման վերաբերյալ պարտականություններ: Ըստ դաշնագրի դրույթների՝ երկիրը պարտավոր է բոլոր կողմ երկրների համար մատչելի դարձնել իր ունեցած գենետիկական բազմազանության և սերմերի հավաքածուներում պահպանվող մշակաբույսերի նմուշների մասին տեղեկությունները: Ներկայումս մշակաբույսերի նմուշներ պահպանող հայաստանյան հաստատությունները մոտ 2500 նմուշ արդեն ներառել են միջազգային տվյալների բազայում: Ազգային տվյալների շտեմարանը, որը պարունակում է 6586 նմուշների վերաբերյալ տվյալներ, համացանցում տեղադրված չլինելու պատճառով հասանելի չէ լայն հանրությանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2015 թ. Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ, որպես միջազգային տեղեկատվական համակարգի մի մաս, ստեղծվեց Հայաստանի Բույսերի գենետիկական ռեսուրսների տեղեկատվության փոխանակման նոր համակարգ, որում, բացի հաստատությունների, մասնագետների, սելեկցիոներների, սորտերի, իրականացվող ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններից, հրատարակություններից և իրավական ակտերից, մուտքագրված են նաև ազգային տվյալների շտեմարանի 6586 նմուշների անձնագրային տվյալները:

Գենետիկական բանկերի ու գիտահետազոտական կազմակերպությունների միջև բնութագրական տվյալների փոխանակման մեխանիզմի բացակայության և տվյալների բազաների կառավարման բնագավառում պատրաստված մասնագետների սահմանափակ թվի պատճառով բնութագրման և գնահատման տվյալները, որոնք ստացվում են սելեկցիոն և հետազոտական ծրագրերի իրականացման արդյունքում, ներառված չեն տվյալների բազաներ և ազգային ու միջազգային գրացուցակներ, ինչը սահմանափակում է դրանց մատչելիությունը շահառուների համար և խոչընդոտում գենետիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Իրավիճակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է մշակել գենետիկական ռեսուրսների վերաբերյալ համապատասխան տվյալների տրամադրման ու փոխանակման մեխանիզմներ:

Տվյալ նպատակային խնդրի իրականացման և ազգային օրենսդրության կատարելագործման միջոցով կստեղծվեն նախադրյալներ նաև Նագոյայի արձանագրության կարևոր պահանջի ապահովման ուղղությամբ՝ բոլոր շահագրգիռ կողմերի համար մատչելի դարձնելով տեղեկատվությունը Հայաստանի գենետիկական պաշարների վերաբերյալ:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

Ազգային

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

1 6 11 16

2 7 12 17

3 8 13 18

4 9 14 19

5 10 15 20



Այլ կարևոր տեղեկատվություն. Կենսաբազմազանության ոլորտում տվյալների փոխանակման մեխանիզմների ստեղծման կարևորության վերաբերյալ նշվում է ԿՌԳԱԾ-ում, որի նախատեսված գործողությունների շարքում ընդգրկվել են «1.4. Մշակել ex-situ հավաքածուներ պահպանող հաստատությունների միջև տվյալների փոխանակման կարգ և ներառել ազգային ու միջազգային կատալոգներում պահպանվող նմուշների վերաբերյալ անձնագրային և բնութագրման տվյալներ», «4.6. Բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը Նագոյայի արձանագրության վերաբերյալ, քննարկել արձանագրության վերաբերյալ ազգային մոտեցումները և նախանշել հետագա քայլերը»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

<https://www.cbd.int;> <http://www.fao.org/plant-treaty;> www.arlis.am; www.mnp.am;
<http://www.fao.org/pgafa>

Ազգային նպատակային խնդիր 4.

Բարելավել կենսաբազմազանության բնակմիջավայրերի պահպանությունը՝ նվազագույնի հասցնելով դրանց դեգրադացումը

Տվյալ նպատակային խնդիրը, լինելով բազմաբնույթ և ծավալուն, ներառում է տարբեր ներուլորտային ասպեկտներ և տարանջատվում է հետևյալ ենթախնդիրների.

1. որոշել կորստի վտանգի առաջ գտնվող բնակմիջավայրերի վիճակը և այն հիմնական սպառնալիքները, որոնք հանգեցնում են էկոհամակարգերի դեգրադացմանն ու մասնատմանը.
2. գնահատել կլիմայի փոփոխության պատճառով հիմնական էկոհամակարգերի խոցելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կենսաբազմազանությամբ առավել հարուստ տարածքներում մարդածին գործոնի ազդեցության բնույթին և կլիմայի փոփոխության մեղմման հարցերին.
3. նպաստել կենսաբազմազանության պահպանությանը և ԷԾ-ների ամբողջ ծավալով տրամադրմանը՝ դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման միջոցով:

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը՝ ըստ նշված ենթախնդիրների:

1. **Որոշել կորստի վտանգի առաջ գտնվող բնակմիջավայրերի վիճակը և այն հիմնական սպառնալիքները, որոնք հանգեցնում են էկոհամակարգերի դեգրադացմանն ու մասնատմանը.** Էկոհամակարգերի վիճակի վատթարացումը հիմնականում պայմանավորված է կենսաբազմազանության բաղադրիչների աճելավայրերի քայքայմամբ, որը տեղի է ունենում հանքարդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, անտառտնտեսվարման, ճահիճների չորացման, ջրամբարների և փոքր ՀԷԿ-երի կառուցման ու շահագործման,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

սեյսմահետախուզման և պայթեցման աշխատանքների իրականացման, բնական պաշարների անկայուն օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով: Բացի էկոհամակարգերի ամբողջական դեգրադացիայից, հաճախ տեղի է ունենում առանձին պոպուլյացիաների և տեսակների բնակմիջավայրերի մասնատում (ֆրագմենտացիա)՝ անտառների հատման, ավտոճանապարհների, երկաթգծերի, ջրագծերի կառուցման, էլեկտրահաղորդակցման գծերի անցկացման և այլ գործողությունների ժամանակ: Մասնատման արդյունքում տեղի է ունենում վտանգված տեսակների պոպուլյացիաների գենետիկական մեկուսացում, նվազում է բնակմիջավայրի որակը:

Հայտնի է, որ որոշ էկոհամակարգեր, մասնավորապես՝ ջրապահովման ծառայություններ տրամադրող, առավել էական նշանակություն ունեն մարդկանց բարեկեցության և առողջության համար: Հայաստանի ամենախոշոր բնական ջրամբարը՝ Սևանա լիճը, մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակներն ուներ հավասարակշռված էկոհամակարգ՝ մակարդակի բնական տատանումներով: Սակայն էներգետիկայի և այլ տնտեսական ճյուղերի պահանջների բավարարման նպատակներով 20-րդ դարի ընթացքում ջրային պաշարների օգտագործումն ավելացավ աննախադեպ տեմպերով և քանակով: Արդյունքում լճի մակարդակն իջավ 19.6 մ-ով, ծավալը՝ 58.5 մլրդ. մ³-ից նվազեց մինչև 33.0 մլրդ. մ³, մակերեսը 1416.2 կմ²-ից դարձավ 1238.1 կմ²: Լճի մակարդակի իջեցմամբ խոր և անդառնալի փոփոխություններ են տեղի ունեցել ցամաքային ու ջրային ֆաունայում և ֆլորայում, ընդ որում՝ լճից իսպառ վերացան Սևանի էնդեմիկ իշխանի երկու ենթատեսակները, կրճատվեց էնդեմիկ կողակի թվաքանակը, ինչպես նաև ջրային էկոհամակարգին բնորոշ բուսատեսակները և անողնաշար կենդանիները: Առաջացած բացասական պրոցեսները կանխելու և հետևանքները վերացնելու նպատակով աշխատանքներ են իրականացվել ջրի մակարդակի բարձրացման ուղղությամբ, որի շնորհիվ 2001 թ.-ից Սևանա լճի մակարդակը բարձրացել է շուրջ 3.94 մետրով: Սակայն 2011-2018 թթ. ջրի մակարդակի բարձրացման տեմպերի նվազումը, կլիմայի տաքացման միտումները բացասաբար են ազդել լճային էկոհամակարգի վրա՝ առաջացնելով ջրի ակտիվ ծաղկում, էվտրոֆացման գործընթացների ակտիվացում, ձկան պաշարների վերականգնման դժվարացում:

Հայաստանի ջրային էկոհամակարգերի վիճակն ավելի է սրվել վերջին տասնամյակներում՝ կապված փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման հետ, որն առաջացրել է ջրային ռեսուրսների գերօգտագործում, գետային էկոհամակարգերի ու լանդշաֆտների վատթարացում, բնակչության կյանքի որակի հետ կապված խնդիրներ: Փոքր ՀԷԿ-երի նախագծման և շահագործման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվում ջրային ֆաունայի կարիքները, իսկ լեռնային գետերի ջրային ռեժիմի փոփոխության ազդեցությունն ափամերձ և ջրային էկոհամակարգերի ու կենսաբազմազանության վրա ոչ միայն չի գնահատվել, այլև



չի ուսումնասիրվել: Բացի այդ, շատ փոքր ՀԷԿ-եր չեն պահպանում ջրի թույլատրելի էկոլոգիական թողքերի սահմանված չափաքանակները, ինչը բերում է գետերի էկոհամակարգերի դեգրադացման:

Բնակչության համար անփոխարինելի են ԷԾ-ներ տրամադրող անտառները, որոնք կատարում են կարևոր կլիմայա- և ջրակարգավորիչ գործառույթներ, նպաստում են գյուղատնտեսության զարգացմանը և ածխածնի ակտիվ կուտակիչներ են: Հարկ է նշել, որ անտառային կենսաբազմազանության պահպանության համար անհրաժեշտ է ցանկացած անտառային տարածքի մոտավորապես 20 %-ը զերծ պահել ինտենսիվ շահագործումից, հատկապես տարածաշրջանի բարձր արժեք ունեցող անտառներում:

Կենսաբազմազանության պահպանության տեսակետից արոտավայրերն ու խոտհարքներն առավել կարիք ունեն կայուն կառավարման մոտեցումների ներդրման: Որպես արոտավայր օգտագործվող բնական էկոհամակարգերի համար էական վտանգ է ներկայացնում արոտավայրային ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխումը: Հեռավոր արոտավայրերը տուժում են թերարածեցումից, որի պատճառով տեղի է ունենում էկոհամակարգերի փոփոխություն, մասնավորապես ալպյան գորգերը փոխարինվում են ալպյան մարգագետիններով, իսկ համայնքային գյուղամերձ արոտների զգալի մասը գերօգտագործվում է և ենթարկվում տարատեսակ դեգրադացիաների՝ սկսած բուսական ծածկույթի փոփոխությունից մինչև էրոզիայի օջախների առաջացումը: Բազմամյա ոչ արդյունավետ օգտագործման և խնամքի բացակայության հետևանքով բնական կերհանդակների մոտ 150 հազ. հա դուրս է մնացել գյուղատնտեսական օգտագործումից:

Այսօր անտառային, ջրաճահճային, արոտավայրային էկոհամակարգերի դեգրադացման կանխումը գիտակցվում է որպես երկրի առաջնային խնդիր: Հետևաբար՝ բնակմիջավայրերի կորստի տեմպերի կրճատման նպատակով անհրաժեշտ է անցկացնել էկոհամակարգերի և կենսաբազմազանության կորստի ուղղակի և անուղղակի պատճառների բացահայտում և բացասական ազդեցության վնասի գնահատում: Անհրաժեշտ է նաև դեգրադացված բնակմիջավայրերի վերականգնման, պահպանության և պաշտպանության համալիր միջոցառումների մշակում և իրականացում, ինչը թույլ կտա կանխել ապօրինի անտառօգտագործումը, դադարեցնել արիդային և սեմիարիդային բնակմիջավայրերի անհիմն մելիորացիան, խիստ հսկողության տակ վերցնել հիդրոէներգետիկ ռեսուրսների օգտագործումը (փոքր ՀԷԿ-եր), նվազեցնել ենթակառուցվածքների ազդեցությունը:

2. Գնահատել կլիմայի փոփոխության պատճառով հիմնական էկոհամակարգերի խոցելիությունը՝ հարուկ ուշադրություն դարձնելով կենսաբազմազանությամբ առավել հարուստ տարածքներում մարդածին գործոնի ազդեցության բնույթին



և կլիմայի փոփոխության մեղմման հարցերին: Որպես չորային կլիմայական պայմաններով լեռնային երկիր՝ Հայաստանի ամբողջ տարածքը խոցելի է կլիմայի գլոբալ փոփոխության նկատմամբ: Մթնոլորտի ջերմաստիճանի բարձրացումը, ջրի հասանելիության նվազեցումը, ջրհեղեղների և երաշտների հասցրած վնասների աճն անկասկած մարտահրավերներ են Հայաստանի կայուն զարգացման համար:

Ըստ գիտական կանխատեսումների՝ ջերմաստիճանի փոփոխությունը կհանգեցնի նոր ֆիզիկաաշխարհագրական կլիմայական համակարգի ձևավորմանը: Համաձայն ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի իրականացման երկրորդ ազգային հաղորդագրության (2010 թ.)՝ Հայաստանում կլիմայի փոփոխության արդյունքում կանխատեսվում է անապատների, կիսաանապատների և արիդ նոսր անտառների տարածքի ընդլայնում (դրանց վերին սահմանի ուղղաձիգ բարձրացման հաշվին), տափաստանային էկոհամակարգերի տեղաշարժ՝ լեռնային պրոֆիլով դեպի վեր 250-300 մ-ով, որի հետևանքով տեղի կունենան էկոհամակարգերի կազմի ու կառուցվածքի զգալի փոփոխություններ, խիստ կկրճատվեն մարգագետնային տարածքները: Անտառի աճի պայմանների վատթարացման հետևանքով կարող է անհետանալ ավելի քան 17000 հա անտառ (5-5.5 %): Բացահայտված է, որ զգալիորեն պակասել են անտառային տեղամասերը, կիսաանապատային և տափաստանային բուսականության գոտիներն ընդարձակվել են, իսկ ալպիական բուսականության գոտին՝ փոքրացել: Կիսաանապատներում ակտիվացել են հողային էրոզիայի և անապատացման երևույթները, նկատվում է կիսաանապատային գոտու ընդլայնում լեռնային պրոֆիլով մոտ 50 մ դեպի վեր, իսկ առանձին չորասեր տեսակներն արդեն հանդիպում են իրենց տարածման նախկին բարձունքային սահմաններից 200-300 մ բարձր կետերում:

Այս փոփոխությունները խոր ազդեցություն են թողնում ինչպես բնական ռեսուրսների վիճակի, այնպես էլ հասարակության առողջ ապրելակերպի վրա, որի նվազեցման համար կպահանջվի էկոհամակարգերի դիմակայության ավելացում և կլիմայական հարմարվողականության հատուկ միջոցների կիրառում՝ կապված ջրերի և անտառների կառավարման, հողօգտագործման, սննդամթերքի արտադրության և մարդկանց առողջության հետ:

Առավել կարևոր խնդիր է որոշել հիմնական խոցելի էկոհամակարգերը և կենսաբազմազանությամբ հարուստ տարածքները, կանխորոշել կլիմայական գործոնի ներքո դրանց բիոտայի հնարավոր փոփոխությունները և իրականացնել բացասական ազդեցության մեղմման գործողություններ:

3. Նպաստել կենսաբազմազանության պահպանությանը և էԾ-ների ամբողջ ծավալով տրամադրմանը՝ դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման միջոցով: Ածխածնի կուտակումը և անտառների ածխածնային հաշվեկշռի փոփոխությունները կախված են անտառահատումների ծավալներից (հատկապես



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ապօրինի) և անտառային հրդեհների քանակից: Վիճակը շտկելու համար Հայաստանի անտառածածկը պետք է հասցնել 20.1 %-ի: ՀՀ կառավարությունը հանձն է առել այդ ցուցանիշին հասնել մինչև 2050 թվականը: Ներկայումս արդիական են բոլոր էկոհամակարգերի կողմից ածխածնի կլանման և կուտակման պոտենցիալ հնարավորությունների ուսումնասիրումն ու գնահատումը, ինչպես նաև առավել կարևոր էկոհամակարգերի վերականգնման ծրագրերի իրականացումը:

Էկոհամակարգերի դիմադրողականության բարձրացման հարցում (ածխածնի պաշարների կուտակման ավելացում) կարևորվում է նաև ջրաճահճային տարածքների պահպանումն ու վերականգնումը ինչպես Սևանա լճի ավազանում, այնպես էլ այլ վայրերում: Ընդ որում՝ Սևանա լճի էկոհամակարգի անկայուն վիճակը պայմանավորված է ջրի մակարդակի իջեցմամբ, լճի ծավալի փոքրացմամբ, ջրում կենսածին տարրերի հաշվեկշռի և սնման շղթաների խախտմամբ, կենսաբազմազանության բաղադրիչների անհետացմամբ, մեծ քանակությամբ կեղտաջրերով, հանքային պարարտանյութերով և գյուղատնտեսական արտադրության թափոններով աղտոտմամբ:

Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի անարդյունավետ օգտագործումը հանգեցրեց բազմաթիվ աղբյուրների և ջրաճահճային տարածքների չորացման: Զրոգտագործման փակ համակարգին անցումը կնպաստի ջրային ռեսուրսների վերականգնմանը, կապահովի բարենպաստ պայմաններ ջրլող թռչունների, ձկների և ջրաշխարհի այլ ներկայացուցիչների վերարտադրման համար:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | |
|---------------------------------------|--|--|-----------------------------|
| <input type="checkbox"/> 1 | <input type="checkbox"/> 6 | <input type="checkbox"/> 11 | <input type="checkbox"/> 16 |
| <input type="checkbox"/> 2 | <input type="checkbox"/> 7 | <input type="checkbox"/> 12 | <input type="checkbox"/> 17 |
| <input type="checkbox"/> 3 | <input type="checkbox"/> 8 | <input type="checkbox"/> 13 | <input type="checkbox"/> 18 |
| <input type="checkbox"/> 4 | <input type="checkbox"/> 9 | <input checked="" type="checkbox"/> 14 | <input type="checkbox"/> 19 |
| <input checked="" type="checkbox"/> 5 | <input checked="" type="checkbox"/> 10 | <input checked="" type="checkbox"/> 15 | <input type="checkbox"/> 20 |

Այլ կարևոր տեղեկատվություն. Կենսաբազմազանության վրա բացասական ազդեցության և էկոհամակարգերի դեգրադացման տեմպերի աճի նվազեցման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

խնդիրը հանգամանորեն վերլուծված է ԿՌԳԱԾ-ում, որի նախատեսված գործողությունների շարքում ընդգրկվել են մի շարք կարևոր գործողություններ. «2.1. Գույքագրել ու քարտեզագրել անտառային և արոտավայրային դեգրադացված ու մասնատված էկոհամակարգերը, բացահայտել բնակամիջավայրերի կորստի ուղղակի և անուղղակի պատճառները», «2.2. Անցկացնել կլիմայի կանխատեսվող փոփոխության հետ կապված Հայաստանի հազվագյուտ էկոհամակարգերի խոցելիության գնահատում՝ ներառյալ փոփոխությունների համակարգչային մոդելավորումը»:

ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել է հետևյալ գործողությունը՝ «ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի և ԷԾ-ների վրա կլիմայի փոփոխության և անապատացման (հատկապես լեռնահանքային արդյունաբերությամբ պայմանավորված) հնարավոր ազդեցության բացահայտում և դրա հետևանքների մեղմացմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.unfccc.int; www.arlis.am; www.mnp.am; www.armstat.am; www.wrma.am;

Ազգային նպատակային խնդիր 5.

Բարելավել կենսաբազմազանության in-situ և ex-situ պահպանությունը

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Լինելով բազմամակարդակ՝ տվյալ ԱՆԽ-ի իրականացման գործընթացը նպատակաուղղված է հետևյալ առանցքային հիմնահարցերի լուծմանը:

1. Զարգացնել և ընդլայնել ԲՀՊՏ-ների համակարգը՝ ըստ լանդշաֆտների ու էկոհամակարգերի հիմնական տիպերի և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների, բարելավել ԲՀՊՏ-ների կառավարումը և ֆինանսական կայունությունը, ձևավորել էկոլոգիական ցանցի հիմնական բնապահպանական և սոցիալ-տնտեսական մոտեցումները և ներդնել համապատասխան պիլոտային ծրագրեր: Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 387.0 հազ. հա կամ հանրապետության տարածքի շուրջ 13 %-ը: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում է տարածքների տեխնիկական վերազինում, պահպանությունն իրականացնող անձնակազմի վերապատրաստում, գիտական ուսումնասիրությունների ընդլայնում և այլն: Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացմանը և կառավարման բարելավմանը նպաստող սկզբունքները, մոտեցումները և իրատեսական գործողություններն արտահայտված են 2014 թ. սեպտեմբերի 29-ի N 1059-Ա որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագրում»:



Հայաստանում ձևավորված ԲՀՊՏ-ների համակարգում անհավասարաչափ են ներկայացված էկոհամակարգերի/լանդշաֆտների տարբեր տիպերը, ինչպես նաև մարդածին ազդեցության տակ գտնվող տարածքները, որոնք ընդգրկում են հարուստ և յուրահատուկ կենսաբազմազանություն, մասնավորապես՝ մշակովի բույսերի վայրի ազգակիցներով հարուստ բարձրլեռնային տարածքներ: Համակարգը չի համապատասխանում միջազգային չափանիշներին և էկոլոգիական ցանցի հիմնման համար նախատեսված պայմաններին: Ազգաբնակչության բարձր խտությունը, զարգացած ենթակառուցվածքները, գյուղատնտեսական հողերի զգալի մակերեսը դժվարացնում են նոր ԲՀՊՏ-ների և էկոմիջանցքների ստեղծման համար հողատարածքների առանձնացումը: Դեռևս լուծված չեն ինչպես զուտ ֆինանսական, այնպես էլ օրենսդրական հարցերը՝ կապված ԲՀՊՏ-ների համար օտարվող հողերի, պահպանման գոտում և էկոմիջանցքներում բնօգտագործման սահմանափակումների դիմաց փոխհատուցման տրամադրման հետ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հանրապետության շահագրգիռ կառույցները դրսևորում են քաղաքական կամք այդ խնդիրների լուծման համար՝ ինչպես ԲՀՊՏ համակարգի ընդլայնման, այնպես էլ էկոլոգիական միջանցքների ստեղծման առումով:

2. Բարելավել կենսաբազմազանության ex-situ պահպանությունը՝ գենետիկական բանկերի և այլ հավաքածուների ընդլայնման, վայրի կենդանիների և բույսերի բազմացումն իրականացնող տնտեսությունների ստեղծման, համապատասխան տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Գենետիկական բազմազանությունը Հայաստանում ներկայացված է.

- տնտեսական արժեք ունեցող մշակաբույսերի տարբեր սորտերով և ընտանի կենդանիների տարբեր ցեղերով.
- մշակովի բույսերի և ընտանի կենդանիների վայրի ազգակիցներով.
- ֆերմերային ավանդական սորտերով և ցեղերով.
- վայրի ուտելի, դեղատու, եթերայուղատու բույսերով:

Այս ամենը ենթարկվում են տարբեր մարդածին և բնական գործոնների բացասական ազդեցության և պահանջում վերարտադրման ու վերականգնման տեխնոլոգիաների կիրառում: Առանձնակի կարևորություն ունի բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների ex-situ պահպանությունը, որը հնարավորություն է ընձեռում վերականգնելու բնական աղետների կամ մարդածին գործոնի հետևանքով վտանգված կամ ոչնչացված ռեսուրսները՝ հետազոտողներին և ֆերմերներին տրամադրելով դրանցից մշտապես օգտվելու հնարավորություն: Չնայած վերջին տասնամյակում գենետիկական ռեսուրսների ex-situ պահպանության բնագավառում արձանագրվող նվաճումներին՝ երկրի տեսակային և ներտեսակային բազմազանությունը դեռևս լիարժեք ներկայացված չէ բույսերի և կենդանիների կենդանի հավաքածուներում, առկա սերմային և գերալազմայի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

բանկերում, որոնք միաժամանակ տեխնիկական, ֆինանսական, մարդկային ներուժի անբավարարության պայմաններում չեն կարող ժամանակակից մակարդակով ապահովել գենոֆոնդի պաշտպանվածությունը և վերարտադրման ունակությունը: Հետևաբար, անհրաժեշտ են այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեն և՛ առկա ex-situ հավաքածուների ընդլայնմանը, դրանց հարստացմանն ու ժամանակակից սարքավորումներով ապահովմանը, և՛ նոր նեղ մասնագիտական հավաքածուների ստեղծմանը:

3. **Որոշել և դասակարգել ինվազիվ և էքսպանսիվ տեսակները, գնահատել դրանց վիճակը, բնական էկոհամակարգերի համար առաջացած վրանգները, ձեռնարկել միջոցներ գոյություն ունեցող և պոպուլացիայի ինվազիվ բուսա- և կենդանատեսակների ներթափանցման ճանապարհների և տեղաշարժման վերահսկման ուղղությամբ:** Հայաստանում ինվազիվ տեսակների առավել բարձր խտացում նկատվում է մարդածին ներգործության տակ գտնվող բնակմիջավայրերում, իսկ վերջերս նաև կլիմայի փոփոխության արդյունքում վտանգված էկոհամակարգերում: Առավել խոցելի են գյուղատնտեսական հանդակները, անտառները և ջրային էկոհամակարգերը: Ինվազիայի պրոցեսը զգալիորեն արագացել է տարբեր երկրների հետ հարաբերությունների (քաղաքական, մշակութային, առևտրային և այլն) ակտիվացման պատճառով, ինչպես նաև տրանսպորտային հոսքերի կտրուկ աճի հետևանքով: Հաշվի առնելով հանրապետության աշխարհաքաղաքական դիրքը և սոցիալ-տնտեսական զարգացման միտումները՝ օտարածին տեսակների ինվազիայի գործընթացը հետզհետե կուժեղանա: Ընդ որում՝ եթե Հայաստանի ինվազիվ բուսատեսակների վերաբերյալ տարվում են համեմատաբար ինտենսիվ ուսումնասիրություններ, ապա օտարածին կենդանատեսակների որոշման, դասակարգման և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության հետազոտման ուղղությամբ աշխատանքները զգալիորեն քիչ են: Արդի խնդիր է ինվազիվ կենդանիների տեսակային կազմի որոշումն ու դրանց քանակի և տարածման բացահայտումը: Պետք է պարզվեն օտարածին վայրի կենդանատեսակների ներթափանցման մեխանիզմները և ճանապարհները, գնահատվեն այդ տեսակների ազդեցությունը բնական էկոհամակարգերի վրա: Անհրաժեշտ է կազմակերպել օտարածին տեսակների մոնիթորինգ, որի համար պետք են որակավորված մասնագետներ, մշակված նորմատիվա-օրենսդրական և մեթոդական բազա, ինչպես նաև հարկ է բարձրացնել հասարակության տեղեկացվածությունն այդ ամենի վերաբերյալ:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-



ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | | | | | |
|--------------------------|---|-------------------------------------|----|-------------------------------------|----|--------------------------|----|
| <input type="checkbox"/> | 1 | <input type="checkbox"/> | 6 | <input checked="" type="checkbox"/> | 11 | <input type="checkbox"/> | 16 |
| <input type="checkbox"/> | 2 | <input type="checkbox"/> | 7 | <input checked="" type="checkbox"/> | 12 | <input type="checkbox"/> | 17 |
| <input type="checkbox"/> | 3 | <input type="checkbox"/> | 8 | <input type="checkbox"/> | 13 | <input type="checkbox"/> | 18 |
| <input type="checkbox"/> | 4 | <input checked="" type="checkbox"/> | 9 | <input type="checkbox"/> | 14 | <input type="checkbox"/> | 19 |
| <input type="checkbox"/> | 5 | <input type="checkbox"/> | 10 | <input type="checkbox"/> | 15 | <input type="checkbox"/> | 20 |

Այլ կարևոր տեղեկատվություն. Կենսաբազմազանության in-situ և ex-situ պահպանության բարելավման համար անհրաժեշտ քայլերը հանգամանորեն վերլուծված են ԿՌԳԱԾ-ում, որի շնորհիվ նախատեսված գործողությունների շարքում ընդգրկվել են հետևյալ գործողությունները. «2.4. Անցկացնել բուսա-կենդանական տեսակների գնահատում ըստ ԲՊՄՄ (IUCN) չափանիշների, պատրաստել վտանգված տեսակների բնակմիջավայրերի երկրատեղեկատվական համակարգի քարտեզները», «2.5. Մշակել և ներդնել Հայաստանում խոշոր կաթնասունների (մուֆլոն, բեզուարյան այծ, ազնվացեղ եղջերու, ընձառյուծ) պահպանության գործողությունների ծրագրեր», «5.2. Իրականացնել ինվազիվ տեսակների գույքագրում, բացահայտել ՀՀ տարածք ներթափանցելու ուղիները և գնահատել էկոհամակարգերում տարածվածության աստիճանը»:

ԲՀՊՏ-ՌՊԾ-ում, որը սահմանել է Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացման ռազմավարական ուղղությունները, ի թիվս այլոց ներառվել է «ԲՀՊՏ-ների համակարգի զարգացում» ուղղությունը, որի 8 գործողություններն ուղղված են նոր պահպանվող տարածքների ստեղծմանը և գործող ԲՀՊՏ-ների սահմանների վերանայմանը, ազգային էկոլոգիական ցանցի հիմնմանը և այլն:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.armstat.am;

Ազգային նպատակային խնդիր 6.

Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կրճատելու կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշումները

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Բաց եղանակով հանքարդյունահանումը, շինարարությունը, ապօրինի անտառահատումները, գյուղատնտեսության և հիդրոէներգետիկայի զարգացումը, չկանոնակարգված զբոսաշրջությունը և ռեկրեացիան առաջացնում են տեսակների բնակմիջավայրերի կորուստներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ կառավարության կողմից հանքարդյունաբերությունը հռչակված է տնտեսության գերակա ճյուղ, որն ապահովում է երկրի ՀՆԱ-ի 17 %-ը, որի զարգացումն ընթանում է բնապահպանական ու սոցիալական հետևանքների անբավարար գնահատմամբ, որի արդյունքում այն կարող է բացասական ազդեցություն ունենալ բնության և բնակչության առողջության վրա: Գիտական ուսումնասիրությունները վկայում են, որ հանրապետության շատ շրջաններում հողի և ջրի աղտոտվածությունը զգալիորեն գերազանցում է թույլատրելի նորմերը, որի հետևանքով աղտոտված գետերի ֆաունան զգալիորեն կրճատվել է, իսկ գետային և ցամաքային էկոհամակարգերի աղետալի վիճակը խորանում է տարեցտարի: Հանքարդյունաբերության գեոէկոլոգիական հետևանքների պատճառով (հողային ծածկույթի խախտում, պոչամբարների ընդլայնում, թափոնների կուտակումներ, ջրային ռեսուրսների աղտոտում) մասնատվում են բուսական և կենդանական պոպուլյացիաները, խախտվում են կենդանիների միգրացիոն ուղիները և սպառնում որոշ հազվագյուտ տեսակների գոյությանը:

Գյուղատնտեսության, շինարարության, հիդրոէներգետիկայի զարգացումը նույնպես ներգործում են էկոհամակարգերի վրա՝ առաջացնելով տեսակային ու գենետիկական բազմազանության փոփոխություններ և դրանց բաղադրիչների ուղղակի կորուստ (Սևանա լճի ձկնային պաշարներ, անտառային ոչ բնափայտային ռեսուրսներ, արոտավայրերի կերային բույսեր): Նման իրավիճակն առաջին հերթին ազդում է սոցիալապես անապահով խավերի վրա, որոնք անմիջական կախվածություն ունեն կենսառեսուրսներից և էԾ-ներից: Կենսաբազմազանության կորուստը և էկոհամակարգային գործառույթների փոփոխություններն անուղղակի ներգործում են նաև մարդկանց առողջության, կենսամակարդակի, տեղական միգրացիայի վրա, ինչը կարող է նույնիսկ հանգեցնել ներքին քաղաքական կոնֆլիկտների:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

Ազգային

ԱՆԻ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

1 6 11 16

2 7 12 17

3 8 13 18

4 9 14 19

5 10 15 20



Այլ կարևոր տեղեկատվություն. ԿՌԳԱԾ-ում այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ նախատեսված են հետևյալ գործողությունները՝ «3.1. Գնահատել կենսաբազմազանության և էԾ-ների վրա փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունահանման ազդեցությունը, մշակել և ներդնել դրա վերացման/նվազեցման միջոցառումների պլան», «3.5. Գնահատել Սևանա լճի արժեքավոր ձկնատեսակների ձվադրավայր հանդիսացող գետերի էկոլոգիական վիճակը, բացահայտել տեսակներին սպառնացող վտանգները, մշակել և ներդնել դրանց պոպուլյացիաների վերականգնման գործողությունների ծրագիր», «4.3. Վերլուծել բնական էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա տնտեսության տարբեր ճյուղերի ազդեցության գնահատման մեթոդաբանությունն ու միջազգային փորձը՝ մեթոդիկաների տեղայնացման նպատակով»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.armstat.am;

Ազգային նպատակային խնդիր 7.

Սահմանել խրախուսման մեխանիզմներ կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման համար

Գոյություն ունեն բազմաթիվ դրական խթաններ, որոնց կիրառումը կարող է խրախուսել կենսաբազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը: Այդպիսի խթաններից են պետական տուրքերի, հարկերի, վճարների կամ սակագների նվազեցումը, ինչի արդյունքում առավելություններ կամ արտոնություններ տրվում են այնպիսի գործունեության իրականացման համար, որը բարենպաստ ազդեցություն կունենա կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա: ԷԾ-ների դիմաց վճարները համարվում են ուղիղ և ճկուն խրախուսման մեխանիզմ, որը նախատեսում է օգտագործողի կողմից անմիջական դրամական փոխհատուցման վճարում այն էԾ տրամադրող ֆիզիկական անձին կամ համայնքին, որի որոշումներից է կախված բնօգտագործման բնագավառում էԾ-ների տրամադրումը: Ընդ որում՝ խրախուսման տարբեր մեխանիզմների կիրառման հարցում պետք է պահպանել որոշակի ճկունություն և հաշվի առնել տեղական պայմանները: Հայաստանի համար առաջին հերթին արդիական են վերարտադրվող ռեսուրսների խթանման մեխանիզմները, մասնավորապես՝ անտառների վերականգնման առումով: ՀՀ անտառային օրենսգիրքը (2005 թ.) խթանում է անտառների հիմնումը ոչ անտառածածկ և բնական վերած չունեցող տարածքներում, որոնք տրամադրվում են անհատույց, եթե անտառօգտագործողն իր միջոցների հաշվին պատրաստվում է անտառ հիմնել այդ տարածքում: Անտառի շարք անցնելուց հետո տարածքը դառնում է անտառօգտագործողի սեփականությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների կողմից ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման համար բնօգտագործման վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» N 1535-Ն որոշման համաձայն անտառամերձ բնակավայրերի բնակիչներին թույլատրվում է սեփական միջոցներով մթերել և անտառային տնտեսություն վարող տարածքային կազմակերպություններից անվճար ձեռք բերել մինչև 8 մ³ թափուկ վառելափայտ:

Կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստող դրական խթանների կիրառման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսական մեխանիզմներ՝ ԷԾ-ների վճարումների և Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգի զարգացմանը նպաստելու համար: Վերջինիս կիրառումը (փոխհատուցման ձևով) պետք է նպատակաուղղվի հողի սեփականատերերին՝ գործող ԲՀՊՏ-ների սահմանների ընդլայնման, նոր ԲՀՊՏ-ների և էկոլոգիական միջանցքների ստեղծման գործընթացներում, որը կնպաստի ինչպես ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կազմակերպությունների գործունեությանը, այնպես էլ ԲՀՊՏ-ների մասնակցային կառավարման գործընթացներում շահագրգիռ կողմերի մասնակցության արդյունավետության բարձրացմանը:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-

ԱՆԻ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | |
|---------------------------------------|-----------------------------|-----------------------------|-----------------------------|
| <input type="checkbox"/> 1 | <input type="checkbox"/> 6 | <input type="checkbox"/> 11 | <input type="checkbox"/> 16 |
| <input type="checkbox"/> 2 | <input type="checkbox"/> 7 | <input type="checkbox"/> 12 | <input type="checkbox"/> 17 |
| <input checked="" type="checkbox"/> 3 | <input type="checkbox"/> 8 | <input type="checkbox"/> 13 | <input type="checkbox"/> 18 |
| <input type="checkbox"/> 4 | <input type="checkbox"/> 9 | <input type="checkbox"/> 14 | <input type="checkbox"/> 19 |
| <input type="checkbox"/> 5 | <input type="checkbox"/> 10 | <input type="checkbox"/> 15 | <input type="checkbox"/> 20 |

Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԻ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված է հետևյալ գործողությունը՝ «3.3. Մշակել առաջարկներ համայնքային և մասնավոր սեփականության տարածքներում կենսաբազմազանության պահպանության խրախուսման վերաբերյալ»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am;



Ազգային նպատակային խնդիր 8.

Բարելավել մշակովի բույսերի և ընտանի կենդանիների վայրի ազգակիցների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսակետից արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանության պահպանությունը

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Մարդու գործունեության ազդեցությունը, վնասատուների և հիվանդությունների աճը, կլիմայի փոփոխությունը և բնական աղետներն այն հիմնական գործոններն են, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների համար: Այդ տեսակետից Հայաստանի կենսաբազմազանությունը վտանգող ներգործություններն են.

1. բնակմիջավայրերի կորուստը՝ հանքարդյունաբերության, շինարարության և կլիմայի փոփոխության հետևանքով էկոհամակարգերի ուղղակի քայքայման և անապատացման գործընթացի ընդարձակման պատճառով.
2. մշակաբույսերի վայրի ազգակիցների, արոտավայրերի ու խոտհարքների արժեքավոր բույսերի բնական պոպուլյացիաների կրճատումը՝ լքված տարածքների առկայության պատճառով (վարելահողերի մոտ 33 %-ը կամ 150 հազ.հա ծածկված են ագրեսիվ մոլախոտերով և դարձել են մշակվող հողատարածքներում և բնական էկոհամակարգերում դրանց տարածման աղբյուր).
3. բնական էկոհամակարգերի կազմալուծումը, բուսական բազմազանության փոփոխությունը և կորուստը՝ հողերի դեգրադացիայի (հողերի էրոզիա և երկրորդային աղակալում) պատճառով՝ շուրջ 11 %.
4. գենետիկական էրոզիան, որը տեղի է ունենում ավանդական սորտերի հիբրիդային և ժամանակակից սորտերով արագընթաց փոխարինման հետևանքով.
5. արոտավայրերի և խոտհարքների գերշահագործումը, արոտների ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխումը, որը հանգեցնում է էկոհամակարգերի և բույսերի գենետիկական ռեսուրսների բազմազանության փոփոխության (ալպյան գորգերը փոխարինվում են ալպյան մարգագետիններով, իսկ մերձալպյան մոլախոտերն ակտիվ ներխուժում են ալպյան էկոհամակարգեր) և ընտանի կենդանիների համար կերային պայմանների խիստ վատթարացման.
6. օտարածին տեսակների ներթափանցումը, որոնք վերջին տարիներին զգալիորեն ընդլայնել են իրենց տարածման սահմանները (կապված կլիմայական պայմանների փոփոխության և խախտված բնակմիջավայրերի տարածքների ընդլայնման հետ).
7. վայրի ուտելի բույսերի չկարգավորված հավաքը (ժամկետների և մեթոդների խախտմամբ), որն ազդում է դրանց բնական վերականգնման վրա:

Ազգային մակարդակում գենետիկական ռեսուրսների կայուն կառավարման գործընթացի բարելավմանը կնպաստեն օրենսդրության կատարելագործումը, in-situ պահպանության ընդլայնումը՝ ԲՀՊՏ-ների համակարգում մշակովի բույսերի վայրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ազգակիցներով հարուստ տարածքների ընդգրկմամբ, ex-situ պահպանության ապահովումը բուսաբանական այգիներում, սերմնային հավաքածուներում և գենետիկական բանկերում (տեսակների, սորտերի և գենետիկական նյութի պահպանման միջոցով), գենետիկական ռեսուրսների դերի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ամուր գործակցային կապերի հաստատումը պահպանողների, օգտագործողների և ֆերմերների միջև՝ գենետիկական նյութի նպատակային օգտագործումը խթանելու նպատակով:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային
-

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | |
|----------------------------|-----------------------------|--|-----------------------------|
| <input type="checkbox"/> 1 | <input type="checkbox"/> 6 | <input type="checkbox"/> 11 | <input type="checkbox"/> 16 |
| <input type="checkbox"/> 2 | <input type="checkbox"/> 7 | <input type="checkbox"/> 12 | <input type="checkbox"/> 17 |
| <input type="checkbox"/> 3 | <input type="checkbox"/> 8 | <input checked="" type="checkbox"/> 13 | <input type="checkbox"/> 18 |
| <input type="checkbox"/> 4 | <input type="checkbox"/> 9 | <input type="checkbox"/> 14 | <input type="checkbox"/> 19 |
| <input type="checkbox"/> 5 | <input type="checkbox"/> 10 | <input type="checkbox"/> 15 | <input type="checkbox"/> 20 |

Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված է հետևյալ գործողությունը. «3.6. Մշակել և իրականացնել մշակաբույսերի հին ավանդական, մասնավորապես մշակումից դուրս մղված սորտերի, գենոֆոնդի վերականգնման և պահպանման գործողությունների ծրագիր»: 2017 թ. մշակվել և ներկայումս քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության Պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման ազգային ծրագիրը», որտեղ վերլուծվել է նշված ռեսուրսների ներկա վիճակը, բացահայտվել են խնդիրները և առաջնահերթությունները, մշակվել են զարգացման ուղղությունները և գործողությունների ծրագիրը 2017-2022 թվականների համար:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am;



Ազգային նպատակային խնդիր 9.

Ուժեղացնել համագործակցությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև, բարձրացնել բնակչության իրազեկվածությունը կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Էկոլոգիական խնդիրներին բնակչության ճիշտ արձագանքման և հանրության ու պետության միջև փոխվստահության ձևավորման համար անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվության առկայություն: Կարևոր է բարձրացնել ճյուղային ոլորտներում (տնտեսական, ֆինանսական, գյուղատնտեսական, բնօգտագործման, գիտական և այլն) անձնակազմի կարողությունները, բնակչության իրազեկվածությունը բնության պահպանության ժամանակակից մոտեցումների ու սկզբունքների մասին, որոնք ամրագրված են ԿԲԿ-ում և դրա արձանագրություններում ու որոշումներում: Անհրաժեշտ է օրենսդիր և գործադիր մարմիններում, այլ պետական ու բիզնես կառույցներում բարձր որակավորում ու էկոլոգիական գիտակցություն ունեցող անձնակազմի ձևավորումը, ինչը կնպաստի էկոլոգիապես անվտանգ և առողջ շրջակա միջավայրի ստեղծմանը:

Կենսաբազմազանության պահպանության և գնային արժեքավորման հետ կապված ոլորտային խնդիրները բավարար չափով ընդգրկված չեն բնակչության հետ տարվող աշխատանքներում, էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգում, ԶԼՄ-ների կողմից իրականացվող քարոզչական գործողություններում: Արդյունքում՝ իրազեկվածության ցածր մակարդակը, ուսումնասիրությունների ու տեղեկատվական բազայի ոչ լիարժեքությունը, կենսաբազմազանության ու ԷԾ-ների կարևորության թերի ընկալումը խոչընդոտում են ճիշտ որոշումների ընդունմանը, որոնք կարող են սահմանափակել կենսաբազմազանության հետագա կորուստը և բնական կապիտալի ոչնչացումը:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

- Ազգային

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

- | | | | | | | | |
|-------------------------------------|---|--------------------------|----|--------------------------|----|--------------------------|----|
| <input checked="" type="checkbox"/> | 1 | <input type="checkbox"/> | 6 | <input type="checkbox"/> | 11 | <input type="checkbox"/> | 16 |
| <input type="checkbox"/> | 2 | <input type="checkbox"/> | 7 | <input type="checkbox"/> | 12 | <input type="checkbox"/> | 17 |
| <input type="checkbox"/> | 3 | <input type="checkbox"/> | 8 | <input type="checkbox"/> | 13 | <input type="checkbox"/> | 18 |
| <input type="checkbox"/> | 4 | <input type="checkbox"/> | 9 | <input type="checkbox"/> | 14 | <input type="checkbox"/> | 19 |
| <input type="checkbox"/> | 5 | <input type="checkbox"/> | 10 | <input type="checkbox"/> | 15 | <input type="checkbox"/> | 20 |



Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված են հետևյալ գործողությունները. «4.4. Մշակել և իրականացնել կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման և տեղեկատվության տարածման ծրագիր», «4.5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կայք-էջում ստեղծել տեղեկատվական համացանցային ռեսուրս կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման մասին», «4.6. Բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը Նագոյայի արձանագրության վերաբերյալ, քննարկել արձանագրության վերաբերյալ ազգային մոտեցումները և նախանշել հետագա քայլերը»:

ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել են հետևյալ գործողությունները՝ «2.10 ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայություններից ստացվող օգուտների գնահատում, դրանց վերաբերյալ տեղական բնակչության շրջանակներում իրազեկվածության բարձրացում», «2.9 ԲՀՊՏ-ների վերաբերյալ հանրային իրազեկվածության և էկոկրթության ծրագրի մշակում և իրականացում», «2.13 ԲՀՊՏ-ների պահպանության, օգտագործման և էկոզբոսաշրջության զարգացման գործընթացներում համայնքների մասնակցության ձևերի բացահայտում»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am;

Ազգային նպատակային խնդիր 10.

Միջոցներ ձեռնարկել տնտեսության միջճյուղային հարաբերություններում ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն բնական ռեսուրսների օգտագործման հետևանքով էկոլոգիական կայունության խախտումները

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Հայաստանում կանաչ էկոնոմիկայի սկզբունքների կիրառումը և բնապահպանական քաղաքականության հաջողությունը պայմանավորված են սոցիալ-տնտեսական համակարգերի ինտեգրմամբ՝ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր սեկտորի գործողությունների ներդաշնակեցմամբ: Հետևաբար՝ տնտեսության ճյուղային ոլորտների քաղաքականությունը պետք է համահունչ լինի բնապահպանական քաղաքականությանը:

Ներկայումս Հայաստանում դեռևս արձանագրվում է տարբեր ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ԿԲԿ սկզբունքների անտեսում, կոնվենցիայի հիմնախնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունող մարմինների ցածր իրազեկվածություն, բնակչության էկոլոգիական կրթության ցածր մակարդակ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Բացակայում են միջճյուղային համագործակցության հստակ մեխանիզմները, կենսաբազմազանության կառավարման ոլորտում սահմանված չեն կորպորատիվ պատասխանատվության և ռիսկերի հաղթահարման համար անհրաժեշտ համատեղ գործողությունները: Այդ տեսակետից անհրաժեշտ է ներգրավել բնապահպանական խնդիրները երկրի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ծրագրերում, ինչը կօժանդակի գործընթացների համագործակցված և համակարգված պլանավորման ու կառավարման իրականացմանը՝ էկոհամակարգային մոտեցման սկզբունքի գերակայությամբ: Քաղաքական որոշումների կայացումը պետք է հիմնվի էկոհամակարգերի և կենսաբազմազանության դերն ու արժեքները բացահայտող գիտական տեղեկատվության վրա, որը մատչելի ու հասանելի կլինի բնակչության համար:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

Ազգային

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

1 6 11 16

2 7 12 17

3 8 13 18

4 9 14 19

5 10 15 20

Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված են հետևյալ գործողությունները. «4.2. Մշակել առաջարկություններ ոլորտային քաղաքականությունում կենսաբազմազանության պահպանության և էկոհամակարգային մոտեցումների ներդրման ուղղությամբ», «4.1. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծել «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջգերատեսչական համակարգող խորհուրդ»:

ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել է հետևյալ գործողությունը. «3.9. Տարբեր ոլորտների ռազմավարություններում, ծրագրերում, պլաններում ԲՀՊՏ-ների համակարգի զարգացմանը սպառնացող վտանգների բացահայտում և դրանց նվազեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am;



Ազգային նպատակային խնդիր 11.

Կատարելագործել կենսաբազմազանության վիճակի և միտումների, դրա գնային արժեքի, ինչպես նաև կորստի հետևանքների հետ կապված գիտելիքները, գիտական բազան և տեխնոլոգիաները

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը. Վերջին հնգամյակում Հայաստանում շարունակվել են կենսաբազմազանության վիճակի, միտումների, ինչպես նաև դրա կորստի հետևանքների վերաբերյալ ակտիվ ուսումնասիրություններ, անհրաժեշտություն է առաջացել ավելի մեծ ուշադրություն դարձնել կենսաբազմազանության և էԾ-ների ինքնարժեքային նշանակությանն ու գնահատմանը, հատկապես ԲՀՊՏ-ների համակարգում: ԲՀՊՏ-ների էԾ-ների տնտեսական գնահատման արդյունքները տեղեկատվական հիմք են վարչական խնդիրների լայն շրջանակի լուծման համար: Այս առումով անհրաժեշտ է գիտական հետազոտությունների ընդլայնման ու մոնիթորինգի համակարգի կատարելագործման միջոցով բարձրացնել կենսաբազմազանության ուսումնասիրվածության մակարդակը՝ ներառելով քիչ ուսումնասիրված կամ չհետազոտված տաքսոնները և համակեցությունները, բացահայտել դրանց ներկա վիճակն ու փոփոխման միտումները: Ըստ ԲՊՄՄ (IUCN) չափանիշների՝ անհրաժեշտ է գնահատել ֆաունայի և ֆլորայի կարևոր տեսակները, իրականացնել երկրի կարևորագույն էկոհամակարգերի/բնակմիջավայրերի և դրանց բնորոշ առանձին, առավել վտանգված տեսակների մոնիթորինգ, նպաստել կենսաբազմազանության օգտագործման և պահպանման բնագավառում միջոյուղային գիտական հետազոտությունների անցկացմանը, ինչպես նաև իրականացնել հասարակության իրազեկման բարձրացման և կրթական ծրագրեր:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

Ազգային

ԱԽՆ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

1 6 11 16

2 7 12 17

3 8 13 18

4 9 14 19

5 10 15 20



Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված է հետևյալ գործողությունը. «5.1. Կենսաբազմազանության հիմնախնդիրներին առնչվող գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների սահմանում և դրանց շրջանակներում գիտական ծրագրերի իրականացում»:

ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել են հետևյալ գործողությունները. «2.4. ԲՀՊՏ-ներում գիտական հետազոտությունների գերակա թեմաների որոշում/սահմանում և իրականացում», «2.10. ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայություններից ստացվող օգուտների գնահատում, դրանց վերաբերյալ տեղական բնակչության շրջանակներում իրազեկվածության բարձրացում»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am;

Ազգային նպատակային խնդիր 12.

Ուժեղացնել կենսաբազմազանության ուսումնասիրության ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացը և բարձրացնել նրանց մասնագիտական որակը

Նպատակային խնդրի տրամաբանական հիմնավորումը.

Կենսաբազմազանության կառավարման համակարգում, հատկապես՝ անտառների և ԲՀՊՏ-ների կառավարման բնագավառներում, առկա մարդկային ներուժի մասնագիտական կարողությունները բարելավման ու որակավորման բարձրացման կարիք ունեն: Անտառների կառավարման բնագավառի աշխատակիցների մասնագիտական հմտությունները զարգացնելու, աշխատանքների որակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ինչպես կենտրոնական համակարգի, այնպես էլ տարածքային օղակների աշխատակիցների վերապատրաստում: ԲՀՊՏ-ների կառավարման համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի կադրերի մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Կադրերի մասնագիտական, տնտեսական և հաղորդակցման հմտությունների բարելավման, ինչպես նաև տեխնիկական վերազինման արդյունքում առավել արդյունավետ կիրականացվեն այն գործառույթները, որոնք նպատակաուղղված են բուսական, կենդանական աշխարհի օբյեկտների և պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, գիտական ուսումնասիրություններին, կանոնակարգված զբոսաշրջությանը, այդ թվում՝ էկոզբոսաշրջության կազմակերպմանը, հասարակության իրազեկվածության բարձրացմանը, ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների հետ համագործակցության ապահովմանը և այլն: Արդյունքում՝ մասնագետները ձեռք կբերեն հմտություններ՝ ներդաշնակեցնելու հանրային կյանքի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ոլորտներն ու կկարողանան կիրառել այդ գիտելիքները գործարար շրջանակների, զբոսաշրջիկների, տեղի բնակչության և այլ շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ հաստատելիս: Հարկ է նշել, որ ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կազմակերպություններն ընդգրկված չեն քաղաքացիական ծառայության համակարգում, որի արդյունքում անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացները երբեմն իրականացվում են միջազգային ծրագրերի շրջանակներում, որոնք շարունակական բնույթ չեն կրում: Կադրերի որակավորման բարձրացումը հնարավորություն կտա ԲՀՊՏ-ների անձնակազմին խիստ համակարգված և որոշակի պարբերականությամբ անցնել վերապատրաստման դասընթացներ: Արդյունքում պետական կառավարման համակարգ ընդգրկված քաղաքացիական ծառայողների և ԲՀՊՏ-ների անձնակազմի գիտելիքների ու կարողությունների միջև տարբերությունը կհասցվի նվազագույնի, որն էլ կհանգեցնի ԲՀՊՏ-ների ընդհանուր կառավարման բարելավմանը:

Տվյալ նպատակային խնդրի կիրառման մակարդակը.

Ազգային

ԱՆԽ-ի կապը Այիչիի նպատակային խնդիրների հետ:

<input type="checkbox"/> 1	<input type="checkbox"/> 6	<input type="checkbox"/> 11	<input type="checkbox"/> 16
<input type="checkbox"/> 2	<input type="checkbox"/> 7	<input type="checkbox"/> 12	<input type="checkbox"/> 17
<input type="checkbox"/> 3	<input type="checkbox"/> 8	<input type="checkbox"/> 13	<input type="checkbox"/> 18
<input type="checkbox"/> 4	<input type="checkbox"/> 9	<input type="checkbox"/> 14	<input checked="" type="checkbox"/> 19
<input type="checkbox"/> 5	<input type="checkbox"/> 10	<input type="checkbox"/> 15	<input type="checkbox"/> 20

Այլ կարևոր տեղեկատվություն. Այս ԱՆԽ-ի կատարման ուղղությամբ ԿՌԳԱԾ-ում նախատեսված են հետևյալ գործողությունները. «5.3. Մշակել դասընթացների ծրագիր և կազմակերպել կենսաբազմազանության ոլորտում գիտելիքների ձեռքբերման և որակավորման բարձրացման դասընթացներ տարբեր թիրախային խմբերի համար»: «5.4. Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման համար մշակել մասնագետների գիտելիքների և որակավորման բարձրացման դասընթացների ծրագիր և կազմակերպել մասնագետների վերապատրաստում»: ԲՀՊՏ-ՌՊԾ-ում ներառվել է հետևյալ գործողությունը. «2.8. ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կազմակերպությունների կադրերի վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում»:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am;



ԲԱԺԻՆ II.

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 2014-2018 ԹԹ. ԶԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Կենսաբազմազանության և էկոհամակարգերի համար սպառնալիքների կանխարգելման, վերացման/մեղմման նպատակով 2014-2018 թթ. Հայաստանում ձեռնարկված միջոցները բխում են ԿՌԳԱԾ-ում սահմանված գերակա ռազմավարական ուղղություններից:

Կենսաբազմազանության հիմնախնդիրների լուծման գործում ՀՀ կառավարության ջանքերն ուղղված են օրենսդրության և կառավարման համակարգի բարելավմանը, դեգրադացված էկոհամակարգերի վերականգնմանը, ԲՀՊՏ-ների զարգացմանը, բնության և մարդու վրա կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ու հետևանքների նվազեցմանը, ինչպես նաև երկրի տնտեսությունում կանաչ էկոնոմիկայի գաղափարների ու սկզբունքների ներդրմանը: Ընդ որում՝ կենսաբազմազանության կորուստները կանխարգելող կամ էկոհամակարգերի վիճակը բարելավող գործողություններ իրականացվել են ավելի վաղ, քանի որ բնության բաղադրիչների վիճակի զարգացման միտումները կարող են ցայտուն դրսևորվել միայն երկարաժամկետ կտրվածքով: Այդ իսկ պատճառով որոշ նախաձեռնած միջոցների արդյունավետությունն այսօր դժվար է լիարժեք և օբյեկտիվ գնահատել՝ տվյալների սակավության, դիտարկման ժամկետների սղության կամ երևույթների դրսևորման կոնսերվատիվ բնույթի պատճառով:

1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ապահովման ուղղությամբ 2014-2018 թթ. ընթացքում մշակվել և ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք կարգավորում են բուսական և կենդանական աշխարհների, անտառների, ԲՀՊՏ-ների, կրթության բնագավառներում հարաբերությունները:

2014 թ. սեպտեմբերի 29-ի N 1059-Ա որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը», որով սահմանվել են ԲՀՊՏ-ների զարգացման ռազմավարական նպատակներն ու գործողությունները: Վերջիններիս իրականացման միջոցով կապահովվի ԲՀՊՏ-ներում լանդշաֆտների և դրանց բաղադրիչների արդյունավետ պահպանությունը, էկոհամակարգերի ինքնակարգավորվող ներուժի վերականգնումը, հարակից տարածքների խելամիտ բնօգտագործումը, հասարակության և բնության փոխշահավետ համագործակցությունը: Որպես ԲՀՊՏ-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ների ռազմավարության առաջնահերթություններ նշվում են ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության կատարելագործումը, ԲՀՊՏ-ների կառավարման բարելավումը և ինստիտուցիոնալ կապերի ամրապնդումը, ԲՀՊՏ-ների համակարգում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովումը:

ՀՀ կառավարության կողմից 2015 թ. դեկտեմբերի 10-ի N 54 արձանագրային որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրում» ամրագրվել են կենսաբազմազանության պահպանության և օգտագործման գերակա ռազմավարական ուղղությունները, նպատակային խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները:

ՀՀ նախագահի կարգադրությամբ (2017 թ.) հաստատվել է ՀՀ բնական պաշարների կառավարման հայեցակարգը, որը սահմանում է բնական պաշարների կառավարման սկզբունքները, հիմնական խնդիրները և ուղղությունները:

2018 թ. փետրվարի 22-ի N 7 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Բնական պաշարների կառավարման ռազմավարությունը և բնական պաշարների կառավարման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը», որի շարքում է «Լայն կիրառում ունեցող բուսատեսակների և որսակենդանիների բացահայտումը, դրանց պաշարների գնահատումը և հավաքի ու որսի չափաքանակների որոշումը» գործողությունը: Վերջինս շարունակական բնույթի ունի, իսկ առաջին արդյունքներն ակնկալվում են 2019 թվականին:

2016 թ. ընդունվել է ՀՀ հարկային օրենսգիրքը, որի 208-րդ հոդվածում սահմանվել են կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի նոր դրույքաչափերը:

2017 թ. ընդունվել է «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանել է Կարմիր գրքում գրանցված բուսա- և կենդանատեսակների որսի և (կամ) ոչնչացման դեպքում յուրաքանչյուր առանձնյակի համար վնասի հատուցման սակագինը: Օրենքը նախատեսում է տուգանքներ ոչ միայն ողնաշարավոր, այլև անողնաշար կենդանիների համար: Անտառների ապօրինի հատումների նկատմամբ վարչական միջոցների խստացման շնորհիվ նախատեսվել են անտառից դուրս գտնվող տարածքներում կամ տեղափոխման ժամանակ հայտնաբերված ապօրինի մթերված փայտանյութի և դրանից ստացված արտադրատեսակների վնասի հատուցման սակագները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մի շարք որոշումներ՝ ԲՀՊՏ-ների հետ կապված օրենսդրության կատարելագործման, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության առումով: Մասնավորապես՝

1. ՀՀ կառավարությունը 2016 թ. օգոստոսի 18-ի N 860-Ն որոշմամբ հաստատել է կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկն ու համապատասխան սխեմաները՝ ըստ մարզերի: Դրա շնորհիվ հստակեցվում են որսահանդակների տարածքները, ինչն իրավական հիմք է ստեղծում այլ տարածքներում կենսաբազմազանության վրա ճնշումը նվազեցնելու համար: Միևնույն ժամանակ նախադրյալներ են ապահովում որսահանդակների հիման վրա որսորդական տնտեսությունների ստեղծման համար, որտեղ բիոտեխնիկական միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի կանոնակարգելու որսորդական ռեսուրսների կայուն օգտագործումը: Որսահանդակների տարածքները որոշվել են՝ հիմք ընդունելով տվյալ վայրում առկա ՀՀ Կարմիր գրքում չգրանցված որսի կենդանիների տեսակները և դրանց քանակները:
2. ՀՀ կառավարության «Բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» 2014 թ. հուլիսի 31-ի 781-Ն որոշումը սահմանում է բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումները՝ պահպանվող գոտիների առանձնացումը և այնտեղ տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակումը:
3. 2017 թ. փետրվարի 23-ի ՀՀ կառավարության N 190-Ն որոշմամբ հաստատվել է «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները»:
4. 2018 թ. հունվարի 25-ի N 3 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման հայեցակարգը», իսկ դրանից բխող «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման 2018-2021 թվականների միջոցառումների ծրագիրը» քննարկման փուլում է:

Նշված ժամանակահատվածում մշակվել են նաև հետևյալ փաստաթղթերի նախագծերը.

1. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»: Նախագծով նախատեսվում է հստակեցնել տարբեր մարմինների իրավասությունները ԲՀՊՏ-ների կառավարման գործում, լիազոր մարմինն տրվել է ԲՀՊՏ-ների կառավարման համակարգման լիազորություն, իսկ բնության հուշարձանները և պահպանվող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

լանդշաֆտները կարող են կառավարվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: ԲՀՊՏ-ների գոյություն ունեցող չորս կատեգորիաներին ավելացվել է նորը՝ պահպանվող լանդշաֆտը, հստակեցվել են բոլոր կատեգորիաների ԲՀՊՏ-ների պահպանության ռեժիմները և օգտագործման թույլատրելի տեսակները, այդ թվում՝ էկոզբոսաշրջությունը: Հստակեցվել են նաև պահպանման գոտիների, էկոլոգիական ցանցերի և էկոլոգիական միջանցքների ստեղծման ու կառավարման, բնության հուշարձանների, կենսոլորտային պահպանավայրերի և պահպանվող լանդշաֆտների վերաբերյալ դրույթները:

2. Մշակվել է անտառային օրենսգրքի նոր նախագիծը: Միևնույն ժամանակ ENPI-FLEG 2 ծրագրի շրջանակում Համաշխարհային բանկի կողմից իրականացվելիք գործողությունների շարքում նախատեսվում է վերլուծել և վերանայել անտառի հետ կապված օրենսդրությունը, ինչպես նաև ինստիտուցիոնալ և վարչարարական կառուցվածքի կատարելագործման հարցերը: Գործողությունը ներառելու է վերլուծություն, հակասությունների և անհամապատասխանությունների վերհանում:
3. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցում նախատեսվում են մի շարք փոփոխություններ՝ կապված կենսառեսուրսների օգտագործման, կենդանիների անազատ և կիսազատ պայմաններում պահման թույլտվության տրամադրման և հաշվառման կարգի սահմանման, օգտագործման իրավունքների կանոնակարգման հետ:
4. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2017 թ. շահագրգիռ մարմիններին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության բնապահպանական բարձր արժեք ներկայացնող անտառների որոշման չափանիշների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը քննարկման փուլում է:
5. Մշակվել է «Բնակմիջավայրից դուրս բուսական և կենդանական տեսակների հավաքածուների պահպանությունն իրականացնող կազմակերպությունների միջև տվյալների փոխանակման և հավաքագրման կարգը», որը սահմանում է գենետիկական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն ունեցողների, գիտահետազոտական և հավաքածուներ պահպանող հաստատությունների միջև համապատասխան տվյալների տրամադրման ու փոխանակման մեխանիզմը՝ բոլոր շահառուներին գենետիկական ռեսուրսների մասին տեղեկատվությունը մատչելի դարձնելու համար:
6. Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը նպատակաուղղված է կարգավորել նոր փոքր ՀԷԿ-ի կառուցման համար ջրօգտագործման թույլտվության տրամադրումը, նաև կարգելվի փոքր ՀԷԿ-երի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

կառուցումն այն գետերի վրա, որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր, ԲՀՊՏ-ների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում:

Որ ԱՆԽ-ն կամ Այիչիի նպատակային խնդրին աջակցում է տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 1, 2, 5
- Այիչիի նպատակային խնդիր – 7, 11, 12, 14

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. Նշված ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են բուսական ու կենդանական աշխարհի պահպանության և կայուն օգտագործման հետ կապված հիմնասյունային հայեցակարգեր և ռազմավարական փաստաթղթեր, ինչպես նաև դրանցից բխող գործողությունների ծրագրեր՝ նախատեսվող ժամանակացույցներով և պատասխանատու կողմերով: ՀՀ կառավարության կողմից հաստատված որոշումների արդյունքում կանոնակարգվում են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանման, ԲՀՊՏ-ների կառավարման մեխանիզմները, էկոհամակարգերի վրա մարդածին գործունեության նվազեցման միջոցները: Սակայն ամբողջ ոլորտի համար կարևորություն ունեցող օրենքների և կառավարության որոշումների նախագծերի ընդունման դանդաղ տեմպերը խոչընդոտում են գործունեության մեջ դրված ռազմավարական փաստաթղթերով ամրագրված գործողությունների իրականացումը:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; <http://forestcommittee.am>

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2017 թ. նոյեմբերի 30-ի N 50 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, ռազմավարությունը և միջոցառումների ցանկին»: Հայաստանի անտառների պահպանության և կառավարման ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործման նպատակով 2018 թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ը հանձնվել է բնապահպանության



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Նախարարության ենթակայությանը, ստեղծվել է Անտառային պետական կոմիտե, իսկ նախարարության աշխատակազմում՝ Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչությունը: Այս փոփոխությունների արդյունքում, լիազորությունների ընդլայնման ու հստակեցման միջոցով, նախատեսվում է միջազգային սկզբունքներին համահունչ կայունացնել, կատարելագործել և զարգացնել անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգը, բարձրացնել ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետությունը, ապահովել էկոհամակարգային մոտեցմամբ անտառների համապարփակ կառավարումը: Քանի որ նշված բարեփոխումները սկիզբ են առել 2018 թ.-ից, ապա դրանց արդյունավետությունը դեռևս հնարավոր չէ գնահատել: Հիմնական խոչընդոտներից է բարձր որակավորում ունեցող կադրերի պակասը և ստեղծված կառույցների միջև գործառույթների հստակ տարանջատումը:

2017 թ. ապրիլի 27-ի ՀՀ կառավարության N 445-Ն որոշմամբ ստեղծվել է և վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը, որի համաձայն այն կառավարությանը ենթակա, օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Վերջինս կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի բնագավառներում: Դրանով իսկ կառավարությունը ստանձնել է երկրում տեսչական բարեփոխումների իրականացումը, որի նպատակն է առավել արդյունավետ տեսչական համակարգի հիմնումը և գործարար միջավայրի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Մարմնի գործունեության թափանցիկության ապահովման համար ձևավորվել է պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներից բաղկացած կառավարման խորհուրդ, որը լիազորված է հաստատել ստուգումների տարեկան ծրագրերը, հաշվետվությունները և սահմանլ կատարողականի ցուցանիշները:

ՀՀ վարչապետի 2016 թ. օգոստոսի 4-ի N 710-Ա որոշմամբ հաստատվել է «Միավորված ազգերի կազմակերպության «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշման 3-րդ կետի պահանջի համաձայն՝ 2016 թ. ՀՀ բնապահպանության նախարարի՝ N 216-Ա հրամանով հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը:



Որ ԱՆԽ-ին կամ Այիչիի նպատակային խնդրին աջակցում է տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 10, 6, 5, 4
- Այիչիի նպատակային խնդիր – 4, 13, 11, 10, 14

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. Քանի որ Անտառային պետական կոմիտեն ստեղծվել է 2018 թ., դրա գործունեության արդյունավետության մասին հնարավոր կլինի դատել ավելի ուշ: ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների, շրջայցերի, վարչական վարույթի գործերի քննության ընթացքում հայտնաբերված խախտումների արդյունքում, այդ թվում՝ կենսաբազմազանության և անտառների գծով, պետբյուջե են մուտքագրվել խոշոր գումարներ: Իրականացվել են հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների ստուգումներ, այդ թվում՝ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման, Ալավերդու պղնձամոլիբդենային գործարանի և այլն:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր
www.arlis.am; www.gov.am; www.mnp.am; <http://forestcommittee.am>

3. ԲՀՊՏ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՆՈՐ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Վերջին տասնամյակում Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսն ավելացել է մոտ 80 հազ. հա-ով և ներկայումս կազմում է շուրջ 387 հազ. հա կամ հանրապետության տարածքի շուրջ 13.1 %-ը: Միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ իրականացվում է տարածքների տեխնիկական վերազինում, պահպանությունն իրականացնող անձնակազմի վերապատրաստում, գիտական ուսումնասիրությունների ընդլայնում և այլն:

Մեծ դեր է կատարում ՄԱԶԾ/ԳԷՀ «Հայաստանում պահպանվող տարածքների կայուն ֆինանսական կայունության խթանում» ծրագիրը, որի շրջանակներում ԿԲՀ (CNF)-ի միջոցով 2010-2017 թթ. իրականացվել է «Խոսրովի անտառ» արգելոցի, «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիք» ազգային պարկերի, «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի աջակցության ծրագրերի ֆինանսավորում՝ կենսաբազմազանության պահպանության, կառավարման պլանների մշակման, մասնագետների



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

վերապատրաստման, պահանջվող նյութատեխնիկական կարիքների համալրման և ենթակառուցվածքների զարգացման միջոցով:

ԳՄՀԸ-ի (GIZ) աջակցությամբ իրականացվող «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, ՀՀ բնապահպանության նախարարության ուղղորդմամբ, սկսվել է Հայաստանում կենսաբազմազանության, էկոհամակարգերի և էԾ-ների տեղեկատվական համակարգի հայեցակարգի սցենարների և ճանապարհային քարտեզի մշակումը (կենսաբազմազանության անձնագրավորման մեթոդոլոգիայի մշակումը): «Խոսրովի անտառ», «Շիկահող» պետական արգելոցներում, «Արևիք» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Զանգեզուր» պետական արգելավայրում ԲՀՀ (WWF) և մի քանի այլ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են խոշոր կաթնասունների (կովկասյան ընձառյուծ, հայկական մուֆլոն, բեզուարյան այծ), անգղների, հայկական իժի, Դարևակու իժի հաշվառման և մոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքներ:

2016 թվականին մեկնարկել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում բեզուարյան այծի պոպուլյացիայի մոնիթորինգ և «Խոսրովի անտառ» պետական արգելոցում ու «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերի մոնիթորինգ» ծրագիրը, որը ֆինանսավորել է ԿԲՀ (CNF) և իրականացվում է ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

ԲՀՀ-ների, բուսական և կենդանական աշխարհի կադաստրների ստեղծման և վարման նպատակով 2016 թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը ESRI ընկերության կողմից տրամադրվել են ArcGIS for Desktop Standard, ArcGIS for Desktop Advanced, ArcGIS 3D Analyst for Desktop, ArcGIS Spatial Analyst for Desktop ծրագրային փաթեթները:

Ընթացքի մեջ են ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման և ԿԲՀ (CNF) կողմից դրա աջակցության աշխատանքները, որը համայնքային կառավարմամբ ԲՀՀ-ների ստեղծման փորձական ծրագրի մոդել է: Մշակվել է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման պլանի նախագիծը: Հարակից համայնքներում կատարվել են սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման աշխատանքներ:

Սյունիքի մարզում Գերմանական զարգացման և վերակառուցման բանկի (KfW) կողմից ֆինանսավորվող «Պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տեխնիկական հզորությունների ուժեղացում, ծրագրի տարածքի 32 համայնքների առաջնահերթ կարիքների գնահատում՝ արագ մեկնարկի միջոցառումների իրականացման համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ բնապահպանության նախարարության և ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից IDeA բարեգործական հիմնադրամի աջակցությամբ 2015 թվականից իրականացվում է «Տաթև» ազգային պարկի ստեղծման ծրագիրը, որի ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը (ազգային պարկի սահմանների նկարագիրը, քարտեզները, կանոնադրությունները, համայնքների ավագանիների որոշումները) 2016 թ. ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում է Իջևանի և Գանձաքարի արգելավայրերի սահմանների վերանայման և տվյալ արգելավայրերի հզորությունների զարգացման ծրագիրը: ԲՀՀ-ներում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովման նպատակով վերանայվել են «Էրեբունի» պետական արգելոցի սահմանները: ՀՀ կառավարության՝ 2015 թ. հոկտեմբերի 1-ի N 1119-Ն որոշման համաձայն՝ արգելոցի տարածքն ընդլայնվել է՝ կազմելով 118.75 հեկտար:

ԿԲՀ (CNF)-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվել են «Սատանի կամուրջ» բնական կամրջի, «Բազալտե երգեհոն» և «Անանուն քարայր» սյունաձև բազալտներում բնության հուշարձանների անձնագրավորման աշխատանքները և անձնագրերը հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարի՝ 2015 թ. N 276-Ն և 2017 թ. N 274-Ն հրամաններով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսավորմամբ KfW բանկի միջոցով, ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող հարավային Հայաստանում (սկսած «Խոսրովի անտառ» պետական արգելոցից մինչև Իրանի Իսլամական Հանրապետության սահման) էկոմիջանցքի ստեղծման ծրագրի շրջանակներում ավարտվել են կովկասյան ընձառյուծի, գորշ արջի, հայկական մուֆլոնի և բեզդարյան այծի հիմնական ապրելավայրերի քարտեզագրման աշխատանքները, կատարվել է էկոմիջանցքի սահմաններում գտնվող թիրախային համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատումը, իրականացվել են ՀՀ Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում գտնվող 26 թիրախային համայնքներում փոքր դրամաշնորհների ծրագրերը համայնքների բնակիչների համար, պատրաստվել և կնքվել է բնապահպանական պայմանագիր Խաչիկ համայնքի հետ, որի արդյունքում համայնքին տասը տարվա ընթացքում տարեկան կտրամադրվի 12 500 եվրոյին համարժեք դրամ՝ բնապահպանական, գյուղատնտեսական և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար, ինչպես նաև գյուղական տեխնիկա 75 000 եվրոյի համարժեք դրամի արժեքով՝ գյուղատնտեսական աշխատանքները խթանելու նպատակով: Նման բնապահպանական պայմանագրեր նախատեսվում է կնքել մնացած թիրախային համայնքների հետ, որոնք հիմնականում սահմանամերձ են:



Որ ԱՆԽ-ին կամ Այիջիի նպատակային խնդրին աջակցում է տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 4, 5, 11
- Այիջիի նպատակային խնդիրներ –11, 12

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացմանը և կառավարման բարելավմանը նպաստող սկզբունքներն ու իրատեսական գործողություններն արտահայտված են 2014 թ. սեպտեմբերի 29-ի N 1059-Ա ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում 2014-2020 թթ. պետական ծրագրում»: 6-րդ Ազգային զեկույցի պատրաստման ընթացքում վերլուծվել է նշված գործողությունների ծրագրի կատարման ընթացքը, որի արդյունքում եզրակացվել է, որ 14.7 % գործողություններ ամբողջությամբ իրականացվել են, 50 %-ն իրականացվել է մասամբ, իսկ 35.3 % գործողությունների իրականացումն ընթացքի մեջ է: Քանի որ, որպես գործողությունների կատարման ավարտական ժամկետ սահմանվել է 2020 թ., ապա մասամբ կատարված և ընթացքի մեջ գտնվող գործողությունների իրականացումը վերջնական կգնահատվի այդ ժամանակ: Ի դեպ, «ԲՀՊՏ-ների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նոր օրենքի ընդունումից հետո ԲՀՊՏ-ՌՊԾ-ում նախատեսված մի շարք միջոցառումներ կարող են կորցնել իրենց արդիականությունը:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.gov.am; www.mnp.am; www.forestcommittee.am; www.epiu.am;
www.reservepark.mnp.am; www.khosrovreserve.am; www.dilijanpark.am; www.zangezurkh.am;
www.sevanpark.am; www.armenia.panda.org; www.sgp.am; www.giz.de/en/worldwide/374.html;
www.caucasus-naturefund.org/tag/armenia/

4. ԴԵԳՐԱԴԱՑՎԱԾ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ԶՐԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕՐԻՆԱԿԻ ՎՐԱ

Սևանա լճի մակարդակի շարունակական բարձրացում: Սևանա լճի մակարդակի մոտ 19 մ իջեցման նպատակներից էր Սևան-Հրազդան կասկադի 7 ՀԷԿ-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

երի համար կատարվող ջրառը: Արդյունքում վատթարացել են էկոհամակարգի բոլոր բաղադրիչների կենսաբանական և ֆիզիկաքիմիական ցուցանիշները, լճի տրոֆայնությունն օլիգոտրոֆից վերածվեց մեզոտրոֆի, էնդեմիկ ձկնատեսակները ապրելավայրերի և ձվադրավայրերի պայմանների փոփոխման պատճառով իրենց տեղը զիջեցին կլիմայավարժեցված սիգին և ծածանազգի ձկներին: Ջրհավաք ավազանից լիճ մուտք գործող մեծ ծավալով հոսքաջրերի և աղբի, ինչպես նաև ջրի բարձր ջերմաստիճանի պայմաններում կապտականաչ ջրիմուռների զանգվածային բազմացման պատճառով լիճը հաճախ «ծաղկում է»: Դա վկայում է էվտրոֆացման երևույթի մասին, որի դեպքում ջրի որակը վատանում է և չի կարող ծառայել որպես խմելու ջրի պաշար:

Սևանա լճի մակարդակի իջեցման պատճառով հիդրոէկոհամակարգում առաջացած բացասական գործընթացները կանխելու և հետևանքները վերացնելու, այդ թվում՝ ձկնային պաշարները վերականգնելու համար, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի (2001 թ.) համաձայն, անհրաժեշտ է բարձրացնել ջրի մակարդակը առնվազն 6 մետրով: 2001 թ.-ից Սևանա լճի մակարդակը բարձրացել է շուրջ 3.94 մետրով, սակայն ոչ միշտ է ապահովվում հիդրոէկոհամակարգի վերականգնման համար անհրաժեշտ տեմպը՝ սահմանված ամենամյա չափը գերազանցող ջրառի և դրա հետ կապված լճի մակարդակի տատանումների պատճառով: Սևանա լճից առավելագույնը 170 մլն. մ³ ջրառը 2012, 2014, 2017 և 2018 թթ. սահմանվել է համապատասխանաբար 320, 270, 270 և 210 մլն. մ³: Եթե 2002-2011 թթ. լճի մակարդակը բարձրացել է միջինը տարեկան 42 սմ, ապա 2012-2018 թթ. բարձրացման տեմպը դանդաղել է 7 անգամ՝ կազմելով միջինը տարեկան ընդամենը 6 սմ, իսկ որոշ տարիների նկատվում է ջրի մակարդակի իջեցում՝ նախորդ տարվա համեմատ:

Գերշահագործվում են ոչ միայն ջրային ռեսուրսները, այլև էկոհամակարգի կենսաբանական պաշարները, մասնավորապես՝ բնակչության պարենապահովության համար մեծ նշանակություն ունեցող ձկան տեսակները, որոնց որսը հիմնականում տեղի է ունենում ապօրինի՝ առանց հաշվի առնելու ձվադրման ժամանակահատվածը: Արդյունքում սիգի ձվադրող վտառները զգալիորեն երիտասարդացել են: Նույն վիճակում է երկարաչանչ խեցգետնի պոպուլյացիան: Այնուհանդերձ, վերջին տարիներին Սևանա լճում նկատելի է ձկնային ընդհանուր պաշարների աճի միտում: 2017 թ. 2016 թ. համեմատ ձկնային ընդհանուր պաշարներն աճել են 16.7 %-ով՝ կազմելով 2281 տ: 2016 թ. ընթացքում Սևանի իշխանի ձվադրավայր հանդիսացող հինգ հիմնական գետերում (Կարճաղբյուր, Լիճք, Ծակքար, Արգիճի, Մասրիկ) բաց է թողնվել 921 000 հատ Սևանի իշխանի մանրածուկ:

ՀՀ կառավարության որոշումներով յուրաքանչյուր տարի հաստատվում է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը», որով սահմանվում են գործողություններ Սևանա լճի մակարդակի բարձրացման և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և արդյունավետ կառավարման ուղղությամբ: Կարևորվում են Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքների անտառմաքրման, շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնիտաժման աշխատանքների իրականացումը, կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառումը, մշտական մոնիթորինգը և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանումը, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրումը, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատումը և դրանց վերականգնման ուղիների մշակումը:

Հարկ է նշել, որ տարեկան ծրագրերի որոշ միջոցառումներ տարեցտարի թերի են իրականացվում: Օրինակ, Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիան, լճի շրջակայքում անտառաշերտի հիմնումը և այլն: Արձանագրվում են էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի պայմանների խախտումներ՝ օրգանական աղտոտվածության, փոքր ՀԷԿ-երի կառուցման ու ոռոգման համար չափաքանակը գերազանցող ջրառի պատճառով:

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» և «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանի գետերի ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրերը միտված են գնահատելու լճում սիգի, իշխանի պաշարները, Սևանա լճի էնդեմիկ վտանգված արդյունագործական ձկնատեսակների՝ կողակի և բեղլուի վիճակը, ինչպես նաև արժեքավոր ձկնատեսակների ձվադրավայր հանդիսացող գետերի էկոլոգիական վիճակը և այստեղ հանդիպող ձկնատեսակներին սպառնացող վտանգները: Լճում գերիշխող ձկնատեսակը սիգն է, որի մասնաբաժինը 2016 թ. համեմատ աճել և 2017 թ. կազմել է ընդհանուր ձկնային պաշարների մոտ 97 %-ը: Էնդեմիկ ձկնատեսակների համար ձվադրավայր հանդիսացող Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիկ, Կարճաղբյուր (Մակենիս) և Մասրիկ գետերի էկոլոգիական վիճակի հետազոտման շնորհիվ բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները: Ընդհանուր առմամբ դեռ վաղ է խոսել լճում ձկնային հանրության լիարժեք վերականգնման մասին:

2013 թ. սկիզբ առած «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի»³ շրջանակներում նախատեսվում է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնում՝ բնական վերարտադրության պայմանների ստեղծման, էկոլոգիապես կայուն արտադրության կազմակերպման և

³ «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի նախագծի պետական բնապահպանական ու անկախ տնտեսական փորձաքննությունների անցկացման և Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ ստեղծելու, հիմնադրամի կանոնադրությունը և դրա անհատական կազմը հաստատելու մասին» 2013 թվականի դեկտեմբերի 19-ի Կառավարության թիվ N 1442-Ն որոշում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ամբողջական արժեշդթայի զարգացման միջոցով: Յուրաքանչյուր տարի լիճ է բաց թողնվել արտադրված մանրածկան քանակի շուրջ 25 %-ը: 2017 թ. ձմռանը լճի սառցակալման հետևանքով վնասված ցանցավանդակներից ձկան լիճ ներթափանցման շնորհիվ իշխանի կենսազանգվածն ավելացել է մինչև 17 տոննա: Այնուամենայնիվ իշխանի բնական վերարտադրությունը, հավանաբար, դեռևս բացակայում է: Հարկ է նշել նաև, որ, Սևանա լճի էկոհամակարգի պահպանության տեսանկյունից, մտահոգիչ է ապրանքային ձկան աճեցումը լճում տեղադրված ցանցավանդակներում, քանի որ անխուսափելի է լրացուցիչ օրգանական նյութի ներթափանցումը լիճ:

Դրական միտումների շարքում կարելի է նշել Սևանա լճի մակարդակի բարձրացման արդյունքում լիթորալում նախկինում լավ զարգացած մակրոֆիտների գոտու վերականգնման միտումը: Այն ջրային էկոհամակարգերի բնական ինքնամաքման գործընթացում ծառայում է որպես հզոր կենսաբանական ֆիլտր, կեր և բնակատեղի է ապահովում ձկների կեր հանդիսացող բազմաթիվ անողնաշար կենդանիների, հատկապես՝ կողալողերի (Gammaridae):

Լճի մակարդակի բարձրացումը հանգեցրել է ջրաճահճային թռչունների, մասնավորապես մեծ ձկնկուլի (Phalacrocorax carbo) կերային բազայի բարելավմանը և ձևավորել բնադրման համար բարենպաստ պայմաններ: Սևանա լճի ավազանում այս տեսակի բնադրող պոպուլյացիայի թվաքանակը հասել է 250-ի: Թռչունների տեսակային կազմի և թվաքանակի դրական դինամիկա նկատվել է նաև Նորաշենի արգելոցային գոտում, որն ընդգրկված է «Սևան» ազգային պարկի և ԿԹՏ-ի կազմում:

Որ ԱՆԽ-ին կամ Այիչիի նպատակային խնդրին աջակցում է տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 4, 5
- Այիչիի նպատակային խնդիրներ –6, 12

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. Չնայած Սևանա լճում արձանագրված որոշ դրական բարեփոխումներին, որոնք ապացուցվում են մոնիթորինգային թվային տվյալներով (լճի մակարդակի շարունակական բարձրացում, ջրի որակի լավացում, ձկնային պաշարների և թռչնաշխարհի ներկայացուցիչների թվաքանակի ավելացման միտումներ), դեռևս տեղ են գտնում կենսաբազմազանության վրա ուժգին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ազդեցություն ունեցող բացասական երևույթները: Օրինակ՝ 2018 թ. Սևանա լճի աննախադեպ համատարած «ծաղկումը», որի հիմնական պատճառներն են ջրի բարձր ջերմաստիճանը և մարդու գործունեության արդյունքում լճում կենսածին տարրերի կամ ազոտի և ֆոսֆորի պարունակության մեծացումը: Զգալի դեր են ունեցել նաև լճի մակարդակի տատանումները՝ օրենքով սահմանված ամենամյա առավելագույն քանակը գերազանցող ջրառի պատճառով: Մեծ չափերի են հասնում ձկնագողությունը, թռչնատեսակների անկանոն որսը, էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի պայմանների խախտումը, մաքրման կայանների բացակայության պատճառով ջրի աղտոտումը, անհրաժեշտ գիտական հետազոտությունների և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում որակյալ մասնագետների պակասը և այլն:

Խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ գիտական, տեխնիկական և այլ կարիքները. Խոչընդոտները հաղթահարելու համար առաջնահերթ նշանակություն ունեն՝

1. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված ամենամյա չափը չգերազանցող ջրառը.
2. ոռոգման համակարգի վերանորոգումը և ջրի կորստի նվազեցումը.
3. նոր ջրամբարների կառուցումը՝ Եղվարդի ջրամբար և այլն.
4. Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների իրականացումը, ինչը ոռոգման համար բավարար քանակի ջրի պայմաններում կնպաստի Սևանա լճի մակարդակի շարունակական բարձրացմանը.
5. լճի շրջակայքի բնակավայրերում մաքրման կայանների կառուցումը.
6. ջրածածկման ենթակա տարածքներում բուսածածկի արդյունավետ մաքրումը.
7. ափամերձ տարածքներում ապօրինի ենթակառուցվածքների ապամոնտաժումը.
8. «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակումը, իրականացումը, ֆինանսական ապահովումը, տեխնիկական միջոցների ձեռքբերումը, կադրերի մասնագիտական որակավորման բարձրացումը և վերահսկողության պատշաճ մակարդակի ապահովումը:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.armstat.am; www.mnp.am; www.epiu.am; www.sevanpark.am;
www.sevanlake.am/en/the-problem-of-lake-sevan/, www.sczhe.sci.am/

5. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Հայաստանում կլիմայի փոփոխությունը կանխարգելելու դիրքորոշումը և միջազգային պարտավորությունների անվերապահ կատարումը տեղի են ունեցել



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԿՓՇԿ-ի ուժի մեջ մտնելուց ի վեր: Կլիմայի փոփոխության կանխարգելմանն ուղղված ազգային մակարդակով սահմանված գործողությունները հիմնված են կանաչ տնտեսության սկզբունքների վրա և համատեղելի են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին, այդ թվում՝ ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակումը, էկոհամակարգային մոտեցմամբ մեղմման և հարմարվողականության գործողությունների կիրառումը և այլն: Այս գործընթացում էկոհամակարգերի և կենսաբազմազանության վիճակի գնահատումը և կանխատեսումները բազմակողմանի վերլուծվելուց հետո ներկայացված են ԿՓՇԿ-ի առաջին և երրորդ հաղորդագրություններում: Գիտակցելով կլիմայի փոփոխության դեմ պայքարի կարևորությունը՝ Հայաստանը վավերացրել է Կիոտոյի արձանագրության Դոհայի ուղղման ու Փարիզյան համաձայնագիրը և ներկայացրել է նախատեսվող գործողությունները: 2015 թ. ստորագրելով Փարիզյան համաձայնագիրը՝ երկիրը պարտավորվել է 35 տարվա ընթացքում սահմանափակել ջերմոցային գազերի արտանետումները 633 միլիոն տոննայի սահմաններում, իսկ անտառապատվածությունը մինչև 2050 թ.-ը հասցնել 20.1 %-ի:

ՀՀ կառավարությունը հնգամյա պարբերականությամբ հաստատել է մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող երկրի պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկ: Վերջինիս շրջանակներում ՀՀ կառավարության 2016 թ. N 49-8 արձանագրային որոշմամբ սահմանվել են ԿՓՇԿ-ից և Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների ու դրույթների կատարման 2017-2021 թթ. միջոցառումների ցանկը և նշանակվել պատասխանատու գերատեսչությունները: Հաշվի առնելով տվյալ միջոցառումների իրականացման կարևորությունը՝ Հայաստանը շարունակում է իր գործունեությունն ազգային և ոլորտային զարգացման քաղաքականությունում կլիմայի փոփոխության խնդիրների ընդգրկման ուղղությամբ:

Տրամաբանական է, որ ներկայումս ԿՓՇԿ-ի ներքո իրականացվող գործողություններն առաջին հերթին միտված են CO₂, CH₄ արտանետումների կրճատմանը՝ էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով: Կլիմայի փոփոխության մեղմման համար կարևոր է նաև ածխաթթու գազի կլանման ավելացումն անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների միջոցով: Այդ նպատակով ԲՀՀ (WWF) և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագրի շրջանակներում 2011-2015 թթ. իրականացվել են տարածքների տրանսֆորմացիա և մոտ 250 000 ծառերի տնկում: Անտառային էկոհամակարգերի տրանսֆորմացիան դիտարկվում է որպես կլիմայի փոփոխության պայմաններում բնական անտառի դիմադրողականության բարձրացման և միատարր անտառների բնապահպանական արժեքի ավելացման միջոց: Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ 2013-2014



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

թթ. շուրջ 184 հա անտառային տարածքներ ենթարկվել են տրանսֆորմացիայի, և տնկվել է մոտ 130 000 ծառ: Իրականացվել է նաև անտառային վնասատուների դեմ պայքար շուրջ 17 000 հա տարածքի վրա:

Հաշվի առնելով, որ Հայաստանը ձգտում է 2050 թվականին հասնել ջերմոցային գազերի արտանետումների այնպիսի մակարդակի, որը էկոհամակարգի համար կհանդիսանա չեզոք, կլիմայի փոփոխության մեղմման եղանակները պետք է կենտրոնանան էկոհամակարգերի ածխածնի կլանման կարողությունների բացահայտման և բարելավման վրա՝ հիմք ընդունելով ածխածնի պաշարների մոնիթորինգի և գնահատման արդի տեխնոլոգիաները:

Որ ԱՆԽ-ին կամ Այիչիի նպատակային խնդրին աջակցում է տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 4, 11
- Այիչիի նպատակային խնդիրներ –10, 15

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. ԿՓՇԿ-ի և Փարիզյան համաձայնագրի ներքո իրականացվող գործողություններն ուղղակի կամ միջնորդված աջակցում են Հայաստանի էկոհամակարգերի կայունացմանը և կենսաբազմազանության պահպանմանը՝ չվերականգնվող ռեսուրսների փոխարինումը վերականգնվող էներգակիրների հաշվին, կլիմայակարգավորման և ածխածնի կուտակման համար անտառվերականգնման աջակցությունը, անտառային հրդեհների և վնասատուների դեմ պայքարը և այլն: Կարևոր է Հայաստանի համար ամրագրված գործողությունների մասով կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության մանրամասնեցված պլանների մշակումը, ինչպես նաև այլ բնապահպանական կոնվենցիաների հետ խաչվող խնդիրների բացահայտումն ու համաձայնեցված գործողությունների իրականացումը: Նկատի ունենալով կլիմայի փոփոխության հիմնախնդրի բազմաճյուղային բնույթը՝ անհրաժեշտ է զարգացնել ու հստակեցնել միջգերատեսչական համագործակցությունը, քաղաքացիական հասարակության մոտիվացված մասնակցությունը և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:



Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.forestcommittee.am; www.am.undp.org/
www.armenia.panda.org; www.sgp.am; www.giz.de/en/worldwide/374.html; www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/3.Armenias-TNC_2015-ARM.pdf

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԱԶ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

«Անցում դեպի կանաչ տնտեսություն» նախաձեռնության շրջանակներում և Հայաստանում կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման նպատակով երկրում իրականացվել են ծրագրեր, որոնք կարող են ի ցույց դնել Հայաստանում էկոլոգիապես մաքուր զարգացման հնարավորությունները:

2017 թ. ՀՀ կառավարության կողմից գերակա խնդիր է ճանաչվել Կանաչ տնտեսության ազգային կենտրոնի ձևավորումը, որը կնպաստի իրավաբանական և ֆիզիկական անձանց (ՓՄՁ-ներ, բիզնեսի, արդյունաբերական, արտադրական ոլորտի ներկայացուցիչներ, ֆերմերային տնտեսություններ և այլն) կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և մաքուր արտադրության կազմակերպմանը: Այս կենտրոնի ստեղծումը բխում է ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի N 49 արձանագրային որոշման 6-րդ կետով հավանության արժանացած «Մաքուր արտադրության հայեցակարգից»՝ հանդիսանալով Հայաստանում կանաչ տնտեսության ներդրման համար անհրաժեշտ պայմաններից մեկը:

ՄԱԿ ԱԶԿ/UNIDO-ն Հայաստանում իրականացնում է Եվրախորհրդի կողմից ֆինանսավորվող «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ծրագրի ցուցադրական բաղադրիչը (ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ ՇՄԾ (UNEP) և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն)՝ «Կանաչ տնտեսություններ արևելյան հարևանության տարածաշրջանում» (EAP Green) նախաձեռնության շրջանակներում: Այս ծրագրի արդյունքները, ի թիվս այլ շահեկան ձեռքբերումների, ցույց են տալիս կենսաբազմազանության վրա բացասական ազդեցության նվազեցման հնարավորությունները և օգուտները: Բարելավվելով թիրախային արդյունաբերական ոլորտների ձեռնարկությունների բնապահպանական գործունեությունը և ռեսուրսների արդյունավետությունը՝ բացահայտվել են սպառման և խնայողության հնարավորությունները: Նշված միջոցառումների բնապահպանական արդյունքները տպավորիչ են՝ 696 ՄՎտ էլեկտրաէներգիայի, 490 մ³ ջրի և 210 տ հումքի (թափոնների կրճատում) սպառման խնայողություն, անխաթառ գազի արտանետումների կրճատում տարեկան 200 տոննայով: Այս ամենը թույլ է տալիս ընկերություններին տարեկան կտրվածքով խնայել ավելի քան 1 մլն. եվրո:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Կանաչ Երևան գործողությունների ծրագրի (2017 թ.) ռազմավարական նպատակներ (2030 թ.) և միջնաժամկետ թիրախներ (2022 թ.), կարճաժամկետ գործողություններ (2017-2020 թթ.) բաժնում ներառված են.

1. «Մաքուր արտադրության» գերազանցության կենտրոնի հիմնումը, որը կհաստատվի որպես կանաչ շրջանաձև տնտեսության, մաքուր արտադրության, արդյունավետ գործառնական կառավարման և ռեսուրսների օգտագործման օպտիմալացման հարցերում գիտելիքների խոշոր հանգույց.
2. «Կանաչ տնտեսության» ներդրման տեսլականը բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով էկոհամակարգային մոտեցման կիրառումն է: Այս տեսլականն ուղղակիորեն առնչվում է կենսաբազմազանության պահպանությանը և վերարտադրության խնդիրներին:

Որ ԱՆԽ-ն կամ Այիչիի նպատակային խնդիրն է աջակցում տվյալ ձեռնարկված միջոցը

- ԱՆԽ – 6
- Այիչիի նպատակային խնդիրներ – 4, 8

Տվյալ ձեռնարկված միջոցի արդյունավետության գնահատումը

- Ձեռնարկված միջոցն արդյունավետ է
- Ձեռնարկված միջոցը մասամբ է արդյունավետ
- Ձեռնարկված միջոցն արդյունավետ չէ
- Հայտնի չէ

Գնահատման հիմնավորումը. Չնայած ձեռնարկված և նախատեսվող քայլերին՝ իրականացված միջոցառումները մասամբ արդյունավետ են, քանի որ դրանք վերաբերվում են միայն մի քանի ծրագրերի արդյունքներին և չունեն համակարգված բնույթ, ինչը դժվարացնում է ազգային մակարդակով միջոցի ազդեցության գնահատումը:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; <http://www.green-economies-eap.org/>; www.recp.am;
www.unece.org/env/eia/about/eap_green.html; www.rec-caucasus.am; <http://www.green-economies-eap.org/resources/EaPGREEN-country-note-Armenia-Jun2015.pdf>;
<https://www.unenvironment.org/resources/report/eap-green-country-updates-series-armenia>;
https://wedocs.unep.org/bitstream/handle/20.500.11822/9446/-EaP_GREEN_country_updates_series_Armenia-2015EaPGREEN-Armenia-update-spring-2015.pdf.pdf?sequence=3&isAllowed=



ԲԱԺԻՆ III.

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԹԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տվյալ բաժնի առաջադրանքները կատարելու համար օգտագործվել է այս զեկույցի առաջին և երկրորդ բաժիններում բերված տեղեկատվությունը, ինչպես նաև թեմատիկ ու վերլուծական հետազոտությունների և հաշվետվությունների տվյալները: Հիմնական շեշտը դրվել է այն տեղեկատվության վրա, որը վերաբերվում է 2014-2018 թթ. արձանագրված կենսաբազմազանության զարգացման միտումներին, կենսաբազմազանության վրա ծանրաբեռնվածության կամ կորստի հանգեցնող երևույթների փոփոխությանը, սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությանը (տեղաբնակների համար կենսաբազմազանության և բնական ռեսուրսների հասանելիությունը, աղտոտման հետ կապված առողջական հնարավոր խնդիրները և այլն): Համաձայն 6-րդ Ազգային զեկույցի պատրաստման ձևաչափի՝ յուրաքանչյուր ԱՆԽ-ի արդյունավետությունը գնահատելու համար սահմանվել են 6 կատեգորիաներ, որոնցից մեկի ընտրության և հիմնավորման միջոցով գնահատվում է տվյալ խնդրի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացը երկրի մակարդակով:

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 1.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրել կենսաբազմազանության և ԷԾ-ների գնային արժեքի գնահատման մեխանիզմները

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

Առանց էական փոփոխությունների

Լրացուցիչ տեղեկատվություն. ԷԾ-ների կարևորության և դրանց արժևորման անհրաժեշտության մասին գաղափարն իր արտացոլումն է ստացել ՀՀ կառավարության կողմից հաստատված կամ հավանության արժանացած մի շարք ռազմավարական ծրագրերում, որոնցով նախատեսված են ԷԾ-ների և դրանց դիմաց վճարումների ներդրման հետ առնչվող գործողություններ: Դրանցից են՝

1. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 215-ի N 1059 որոշումը.
2. «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի N 54 արձանագրային որոշումը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Վերջին փաստաթղթի գործողությունների շարքում նախատեսվում է 2016-2017 թթ. ստեղծել նորմատիվա-մեթոդական հիմքեր կենսաբազմազանության և էԾ-ների արժևորման գործընթացը ներդնելու համար, 2018-2019 թթ. ներառել կենսաբազմազանության և էԾ-ների գնային արժեքը ԲՀՊՏ-ների, անտառտնտեսությունների, արոտավայրերի կառավարման պլաններում, ինչպես նաև Հայաստանի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում: Ենթադրվում է, որ էԾ-ի վճարման սխեմաները կարող են ծառայել կենսաբազմազանության պահպանությանը՝ կայուն հողօգտագործման փորձը տնտեսապես արդյունավետ դարձնելու միջոցով: Ռազմավարական փաստաթղթերում նախատեսված այս գործողությունները մնացել են չիրականացված, ինչը վտանգի տակ է դնում տվյալ նպատակային խնդրի իրականացումը: Որպես մեղմացնող հանգամանք պետք է նշել, որ էԾ-ների և դրանց դիմաց վճարումների ներդրման գաղափարախոսությունը դեռևս լրացուցիչ պարզաբանման, լուսաբանման և հայեցակարգային մոտեցումների ճշգրտման կարիք ունի՝ միջազգային փորձն ավելի խորը և Հայաստանում էԾ-ների դիմաց վճարումների կիրառման համար տեղական առանձնահատկությունների ուսումնասիրության առումով:

Այնուամենայնիվ առ այսօր Հայաստանի գործող օրենսդրությունում բավարար չափով ամրագրված չեն բնական էկոհամակարգերի կամ բնական կապիտալի օգտագործման արդյունքում դրանց կողմից կամ օգնությամբ մատուցվող ծառայությունների տնտեսական կամ արժեքային գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև էԾ գնահատման մեթոդաբանությունը/մեթոդական հիմքերը:

Նշված հարցերի լուծման նպատակով 2015 թ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել է «Էկոհամակարգային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը պարունակում է դրույթներ, որոնք կարգավորում են էԾ-ների հետ կապված իրավահարաբերությունները, այդ թվում՝ սահմանվում են էԾ-ների դասակարգումը և դրանց տնտեսական գնահատման մեթոդաբանությունը, էԾ-ի դիմաց վճարները և վճարումների իրականացման պայմանները, դրանց հետ կապված ֆինանսական մեխանիզմները: Սույն նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2013 թ. նոյեմբերի 14-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգի միջոցառումների ծրագրի 1-ին կետի հանձնարարականի կատարումից: Չնայած խնդրի կարևորությանը՝ տարբեր մակարդակներում օրենքի նախագծի վերաբերյալ իրականացված քննարկումների արդյունքում եզրակացվել է, որ դրա ընդունումը ներկա փուլում ժամանակավրեպ է, քանի որ կավելացնի տնտեսվարողների ֆինանսական բեռը և նպատակահարմար գտնվեց այս խնդրին անդրադառնալ ավելի ուշ: Բացի դրանից, օրենքի ընդունմանը խոչընդոտում են ռեսուրսօգտագործողների և բնապահպանների հակասական շահերը, տարբեր պետական ու ոչ պետական օղակների և հասարակության միջև



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

անբավարար համագործակցությունը, իրազեկվածության ցածր մակարդակը և հավաստի ու հեշտ ընկալելի տեղեկատվության սակավությունը: Հասարակության ներկայացուցիչները, ԷԾ-ներից օգտվողները, որոշումներ ընդունողները կամ անտեղյակ են էկոհամակարգերի նման գործառույթներից, կամ ԷԾ-ները նույնացնում են էկոհամակարգերում առկա ռեսուրսների հետ: Արդյունքում առ այսօր ԷԾ-ի արժեքը հաշվի չի առնվում տնտեսական գնահատումների և որոշումների ընդունման ժամանակ և չի արտացոլվում երկրի տնտեսական ցուցանիշներում:

Հարկ է նշել, որ վերջին հնգամյակում մեկնարկվել են մի շարք ծրագրեր, որոնք կարող են նպաստել ԷԾ-ների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև այդ գաղափարախոսության ներդրմանը:

Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից պատվիրված և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից համաֆինանսավորվող «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի հիմնական նպատակներից է աջակցել կենսաբազմազանության և ԷԾ-ների կայուն կառավարմանը, ԷԾ-ներին ուղղված ռազմավարությունների, միջոլորտային քաղաքականության և օրենքների մշակմանը, ինչպես նաև կենսաբազմազանության և ԷԾ-ների համար մոնիթորինգային համակարգի մշակմանն ու նախարարությունների միջև երկխոսության ոլորացմանը: Ծրագրի շրջանակներում կենսաբազմազանության և էկոհամակարգերի կառավարման համար ստեղծված իրավիճակը բարելավելու նպատակով մշակվում և վերանայվում են ռազմավարություններն ու գործող իրավական ակտերը, այդ թվում՝ ԷԾ-ին առնչվող: 2019 թ. նախատեսվում է նաև Հայաստանում իրականացնել ԷԾ-ների վճարման սխեմայի պիլոտային ծրագրերի իրագործելիության ուսումնասիրություն: Դա թույլ կտա բացահայտել ԷԾ-ների գծով միջազգային փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում՝ վեր հանելով խոչընդոտող կամ խանգարող հանգամանքները և պատճառները:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ ազգային օրենսդրական ակտերի վերլուծություններ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.giz.de/en/worldwide/20319.html



ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 2.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հստակեցնել կենսաբանական պաշարների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները, կատարելագործել կենսապաշարների կառավարման համակարգը

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

Առանց էական փոփոխությունների

Լրացուցիչ տեղեկատվություն.

Կենսաբանական պաշարների գերօգտագործման հետ կապված ռիսկերը պայմանավորված են կառավարման սկզբունքներով և կիրառվող մոտեցումներով, որոնք, որպես կանոն, հիմնված չեն կենսապաշարների հաշվառման ստույգ տվյալների, գիտական հիմնավորումների և կանխատեսումների վրա: Կենսապաշարների հաշվառման և գույքագրման թերի տվյալների, դրանց օգտագործման նորմավորման և չափաքանակների հստակ սահմանման բացակայության պատճառով վայրի բույսերի (դեղատու, ուտելի, տեխնիկական, գեղազարդ) և կենդանիների (որսակենդանիներ, ձկներ) օգտագործման նպատակով տրամադրվող թույլտվությունները պարունակում են օգտագործման ծավալների գերազանցման ռիսկ և, որպես արդյունք, տեսակների պոպուլյացիաների կրճատման վտանգ:

Ներկայումս Հայաստանում կենսաբանական պաշարների գերօգտագործումն առավել ցայտուն արտահայտվում է այնպիսի խոցելի էկոհամակարգերում, ինչպիսիք են ջրաճահճային էկոհամակարգերը: Այսպես՝ Սևանա լճում սիգի պաշարները 1989-1991 թթ. կազմել են 27.7-30.6 հազար տոննա, իսկ 2005 թ. դրանք նվազել են մինչև 0.53 հազար տոննա, այսինքն՝ 20 անգամ պակաս: 2017 թ. նկատվել է սիգի պաշարների աճի միտում, սակայն այն նախկինում գրանցված առավելագույն արժեքներից փոքր է եղել 14 անգամ: Կտրուկ նվազել են կողակի, բեղլուի, կարասի և խեցգետնի արդյունագործական պաշարները (տե՛ս՝ նախորդ բաժնում ձկնային պաշարների, ջրային անողնաշարների և բույսերի վիճակի տվյալները): Լճի կենսաբանական պաշարների նվազումն ազդել է նաև Գեղարքունիքի մարզի բնակչության, հատկապես ձկնորսությամբ և խեցգետնի որսով զբաղվող հատվածի կենսամակարդակի վրա: Մարզում մեծ է արտագնա աշխատանքի մեկնողների քանակը, որի պատճառով բնակչության եկամտի աղբյուր են համարվում դրսից ուղարկվող դրամական փոխանցումները, որոնք կազմում են մեկ շնչի հաշվով 11.1 %:

Յուրաքանչյուր տարի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացնում Սևանա լճի տարբեր ձկնատեսակների և խեցգետնի պաշարների վիճակի, ինչպես նաև թույլատրված տեսակների առավելագույն որսի չափաքանակների վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն այդ տեսակների քվոտաների խախտման, լճում ապօրինի որսի պատճառով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

չի հաջողվում ապահովել ձկնային ռեսուրսների կայուն ծավալները: Էնդեմիկ ձկնատեսակների պաշարների կրճատման պատճառներից են նաև անկառավարելի ջրառը և փոքր ՀԷԿ-երի առկայությունը ձվադրավայրեր հանդիսացող գետերի վրա: Սևանա լճի ձկան և խեցգետնի պաշարների կրճատումը պայմանավորված է ինչպես բնապահպանական վերահսկողության անբավարար մակարդակով, այնպես էլ կենսառեսուրսների օգտագործման կառավարման օրենսդրության անկատարությամբ: Հայաստանի ջրային էկոհամակարգերից միայն Սևանա լճում են իրականացվում կենսաբանական պաշարների գնահատում և մոնիթորինգ:

Գերօգտագործումը սպառնալիք է վայրի դեղատու և ուտելի բույսերի համար, որոնք, ունենալով մեծ պահանջարկ բնակչության կողմից, ձեռք են բերվում բնությունից հավաքի միջոցով: Ոչ կանոնակարգված ժամկետներում և ոչ ճիշտ մեթոդով վայրի ուտելի տերևաբանջարների և հատապտուղների հավաքը հանգեցնում է բնական պաշարների զգալի կրճատման: Վերջին երեք տարում իրականացված գիտարշավների ընթացքում Վայոց ձորի Արենի համայնքի տարածքում գրանցվել է վայրի տերևաբանջարներից Սպանախ քառառէջ (*Spinacea tetrandia*) տեսակի պոպուլյացիայի զգալի կրճատում: Գերօգտագործման հետևանքով կրճատվել են նաև վայրի ճակնդեղի, ճակնդեղ բաժանապտուղ (*Beta lomatogona*) տեսակի պոպուլյացիաներն Արագածոտնի մարզում, որտեղ վաղ գարնանը, մինչև բույսի ծաղկելը, հավաքվում է տեղի բնակչության կողմից՝ սննդի մեջ օգտագործելու նպատակով:

Վերջին տարիների ընթացքում Դսեղ ԿԹՏ-ի անտառների վերին սահմանի մարգագետիններում, մրտավարդի մացառներում ուսումնասիրվել է Կովկասյան մարեհավի թվաքանակը և առկա սպառնալիքները: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ տեսակի արեալը կրճատվում է գերարածեցման և մրտավարդի տերևների ու ընձյուղների չվերահսկվող հավաքի (թեյի նպատակով) հետևանքով:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման 2 (ENPI FLEG 2)» ծրագիրը (2012-2016 թթ.) նպատակաուղղված էր անտառների կառավարման բարելավմանը՝ անտառային քաղաքականության, օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքների արդյունավետության բարձրացման ու պիլոտային մակարդակով անտառների կայուն կառավարման մոդելների իրականացման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է անտառկառավարման գործող փորձի և էկոհամակարգի կայուն կառավարման համեմատական վերլուծություն, մշակվել են անտառկառավարման համակարգում էկոհամակարգերի կայուն կառավարման խթանման և ԷԾ-ների տնտեսական համակարգի ձևավորման առաջարկներ: Վերլուծության արդյունքում մշակվել է ճանապարհային քարտեզ՝ ապագայում օրենսդրության, քաղաքականության և կառավարման համակարգերի վերանայման համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Կայուն անտառկառավարումը, որպես մեխանիզմ, ներկայումս հղկման փուլում է՝ «Հաշվետվողականության համակարգեր անտառի կայուն կառավարման համար Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրի շրջանակներում: Սկսվել է կայուն անտառկառավարման ազգային չափորոշիչների մշակումը, որը հնարավորություն կտա կիրառության մեջ դնել կայուն անտառկառավարման սկզբունքները: Դրանից է բխում նաև մի շարք հանգուցային հարցերի լուծման հնարավորությունը, ինչպիսիք են՝ անտառների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգը:

2015-2016 թթ. ԵՄ-ի և ԲՀՀ (WWF) օժանդակությամբ «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրությանը, քարտեզագրմանն ու գնահատմանն ուղղված պիլոտային ծրագրի» շրջանակներում մշակվել և պիլոտային տարածքում փորձարկվել են Հայաստանում բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող արժեքներ ունեցող անտառների որոշման և գնահատման չափորոշիչները, որոնք կարևոր նշանակություն ունեն անտառային տարածքների կայուն կառավարման և շրջակա միջավայրի պահպանության հարցերում:

Չնայած տվյալ նպատակային խնդրի իրականացման տեսակետից արձանագրվում են որոշ բարեփոխումներ, սակայն 2014-2018 թթ. տեղի ունեցած առաջընթացը չի կարելի համարել բավարար:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մոնիթորինգի փաստացի տվյալներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.sczhe.sci.am; www.sevanpark.am;
www.sevanlake.am/en/the-problem-of-lake-sevan/; www.enpi-fleg.org/activities/armenia/;
www.unece.org/info/open-unece/pmt/regular-budget/1617v-accountability-systems-for-sustainable-forest-management-in-the-caucasus-and-central-asian-countries.html;
wwf.panda.org/wwf_offices/armenia/news2/?286790/A-Practical-Guidelines-on-Selection-and-Separation-of-High-Conservation-Value-Forests

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 3.

Ապահովել գենետիկական պաշարների վերաբերյալ տվյալների մատչելիությունը և տեղեկատվության փոխանակումը

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

Առանց էական փոփոխությունների



Լրացուցիչ տեղեկատվություն. Ներկայումս բույսերի ԳՌ-ների կենտրոնացված տվյալների բազան, որպես ազգային կատալոգ, վարվում և պարբերաբար թարմացվում է ազգային գենետիկական բանկի կողմից՝ ICARDA-ի մշակած և տրամադրված ծրագրով: Այն ներառում է նմուշների անձնագրային և մասամբ բնութագրական ու գնահատման տվյալներ: Համացանցում տեղադրված չլինելու պատճառով այդ կատալոգը հասանելի չէ գիտական կազմակերպություններին, բարձրագույն ուսումնական հաստատություններին, ֆերմերներին, հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին: Հավաքածուներ ունեցող հաստատություններն օգտագործում են փաստաթղթավորման տարբեր սկզբունքներ և ձևաչափեր, որը զգալիորեն դժվարացնում է տեղեկատվության փոխանակումը: Բնութագրման և գնահատման տվյալները, որոնք ստացվում են սելեկցիոն և հետազոտական ծրագրերի իրականացման արդյունքում, չեն ներառվում տվյալների բազաներ և ազգային ու միջազգային գրանցացուցակներ, ինչը սահմանափակում է դրանց մատչելիությունը շահառուների համար և խոչընդոտում գենետիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Տվյալ խնդրի շրջանակներում որոշ առաջընթաց արձանագրվել է անտառային ոլորտում: Անտառկառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումն առաջին քայլն է առավել վստահելի ու թափանցիկ դարձնելու անտառները բնութագրող տեղեկատվությունը, որը տվյալների հզոր շտեմարան կարող է դառնալ: Համակարգը սկսել է մշակվել 2012 թ.-ից գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների ուղղորդմամբ՝ ԳՄՀԸ (GIZ)-ի աջակցությամբ իրականացվող «Կենսաբազմազանության կայուն կառավարում Հարավային Կովկասում» և «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում Հարավային Կովկասում» ծրագրերի շրջանակներում: Ներկայումս այն փորձարկման փուլում է:

Գենետիկական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության տիրապետողների, գիտահետազոտական և հավաքածուներ պահպանող հաստատությունների միջև համապատասխան տվյալների տրամադրման ու փոխանակման մեխանիզմի ստեղծման համար մշակվել է «Բնակամիջավայրից դուրս բուսական և կենդանական տեսակների հավաքածուների պահպանությունն իրականացնող կազմակերպությունների միջև տվյալների փոխանակման և հավաքագրման կարգի» նախագիծ, որը նպատակաուղղված է բարձրացնելու գենետիկական ռեսուրսների մասին տեղեկատվության մատչելիությունը բոլոր շահառուների համար, ինչպես նաև աջակցելու գենետիկական պաշարների վերաբերյալ տվյալներ ունեցող կառույցների միջև փոխշահավետ կապերի ստեղծմանը: Կարգի ընդունումը կապահովի փոխանակման ենթակա տվյալների միասնական բազայի ստեղծումն ու կառավարումը, կկանոնակարգի իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև տվյալների փոխանակումը, կնպաստի Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարմանը և կխթանի ազգային ու միջազգային



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

համագործակցության զարգացումը: Համալրված կատալոգները հիմք կհանդիսանան հավաքածուների արդյունավետ կառավարման և տվյալների մատչելիության ապահովման համար: Հարկ է նշել, որ կարգի հաստատման գործընթացը հնարավոր կլինի իրականացնել «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո, քանի որ դրա իրավական հիմքերն ամրագրվել են այս օրենքների նախագծերում:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; <http://agroecoarm.com/wp-content/uploads/Importance-of-genetic-banks-development-in-Armenia.pdf>

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 4.

Բարելավել կենսաբազմազանության բնակմիջավայրերի պահպանությունը՝ նվազագույնի հասցնելով դրանց դեգրադացումը

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

Առաջընթացն առկա է, բայց տեմպն անբավարար է:

Լրացուցիչ տեղեկատվություն. Ակնհայտ է, որ ներկայիս պայմաններում բնակչության առողջության և բարեկեցության ապահովման համար էական ծառայություններ տրամադրող էկոհամակարգերի դեգրադացման կանխումը և դրանց կենսաբազմազանության պահպանությունը գիտակցվում են որպես երկրի կայուն զարգացման առաջնային խնդիր: 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները՝ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից: Հայաստանում, հաշվի առնելով վերլուծվող ոլորտի թիրախները, հիմնական դերակատարումը կապված է կայուն զարգացման հետևյալ նպատակների հետ.

1. 13-րդ նպատակ՝ ձեռնարկել անհապաղ գործողություններ կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2. 14-րդ նպատակ՝ ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործման ապահովումը.
3. 15-րդ նպատակ՝ պահպանել, վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը:

Այս համատեքստում 4-րդ ԱՆԽ-ի առաջընթացը վերլուծելու և գնահատելու համար դիտարկվել են հետևյալ ենթախնդիրները.

1. որոշել կորստի վտանգի առաջ գտնվող բնակմիջավայրերի վիճակը և այն հիմնական սպառնալիքները, որոնք բերում են էկոհամակարգերի դեգրադացման ու մասնատման.
2. գնահատել կլիմայի փոփոխության պատճառով հիմնական էկոհամակարգերի խոցելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կենսաբազմազանությամբ առավել հարուստ տարածքներում մարդածին գործոնի ազդեցության բնույթին և կլիմայի փոփոխության մեղմման հարցերին.
3. նպաստել կենսաբազմազանության պահպանությանը և ԷԾ-ների ամբողջ ծավալով տրամադրմանը՝ դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման միջոցով:

Ստորև բերվում է այս ենթախնդիրների շրջանակներում իրավիճակը բնութագրող հակիրճ տեղեկատվությունը, որի ամփոփման համար որպես հիմք ծառայել են թեմատիկ հետազոտությունների, ազգային և միջազգային վերլուծական հաշվետվությունների, փորձագետների կարծիքների և գործունեության սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքները, ինչպես նաև մոնիթորինգի տվյալները:

1. Որոշել կորստի վտանգի առաջ գտնվող բնակմիջավայրերի վիճակը և այն հիմնական սպառնալիքները, որոնք բերում են էկոհամակարգերի դեգրադացման և մասնատման:

Ըստ ԿՌԳԱԾ-ի՝ Հայաստանում առավել խոցելի և վտանգված են անտառային, ջրային և արոտավայրային բիոմները, որոնք բուսական և կենդանական տեսակների մեծամասնության բնակության միջավայրեր են և ենթարկվում են բազմապիսի ճնշումների:

Անտառային էկոհամակարգեր - Հայաստանի անտառային բազմազանությունը ներկայացված է ծառերի (125 տեսակ), թփերի (111), թփիկների (30), կիսաթփերի (48) և բնափայտային լիանների (9) արժեքավոր ներկայացուցիչներով: Հայաստանում անտառային համակեցությունները տարածված են նախալեռնային, ստորին և միջին լեռնային գոտիներում՝ 20-25⁰ թեքության լեռնալանջերին:

Համաձայն 2011 թ. GIZ-ի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների՝ Հայաստանում անտառածածկի մակերեսը կազմում է 332 333 հա կամ ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը, այդ թվում՝ մոտ 283 հազ. հա բնական անտառներ են, իսկ մոտ 50 հազ. հա՝ արհեստական: Ներկայացված տվյալների



լիարժեքությունն ապահովելու համար անհրաժեշտ էր դրանց հաստատումը դաշտային հետազոտություններով, սակայն վերջին տասնամյակներում չեն իրականացվել անտառների բազմակողմանի հետազոտություն, հաշվառման ու գույքագրման աշխատանքներ: Անտառկառավարման պլանների կազմման ժամանակ հիմք են ընդունվել նախկինում առկա տվյալները՝ ներառելով որոշակի փոփոխություններ: Ներկա պայմաններում բոլոր անտառտնտեսությունների գործարկման ժամկետներն ավարտվել են և նախատեսվում է նորերի մշակումը:

2016 թ. «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Envi և ArcGIS ծրագրային համակարգերի միջոցով արբանյակային պատկերների վերծանման արդյունքում ստացված անտառածածկի և անտառկառավարման պլաններով սահմանված տվյալների համեմատությունն ի հայտ բերեց մոտ 20 % անճշտություն (ըստ անտառկառավարման պլանների՝ անտառածածկի ընդհանուր մակերեսը կազմել է 254842.1 հա, իսկ ըստ արբանյակային պատկերների վերծանման արդյունքների՝ 203884 հա): Անտառների և կենսաբազմազանության բաղադրիչների պետական հաշվառման ու մոնիթորինգի անբավարար իրականացումը թույլ չի տալիս օպերատիվ արձանագրել էկոհամակարգերի փոփոխությունները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ դրանք կանխելու ուղղությամբ: Այն մասամբ իրականացվում է արբանյակային լուսանկարների համադրությամբ: Անտառային էկոհամակարգերի առանձին բազմաթիվ բաղադրիչների մոնիթորինգ առհասարակ չի իրականացվում:

Հիմք ընդունելով «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տարեկան հաշվետվությունները, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հրապարակած նյութերը, Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալներն ու այլ նյութեր՝ կարելի է փաստել հետևյալ երևույթները, որոնք ներգործում են անտառային էկոհամակարգերի վրա:

ա. Անտառահատումներ. Ներկայումս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները, որի արդյունքում ինտենսիվ բնույթ են կրում անտառի անցանկալի փոփոխությունները՝ անտառի լրիվության նվազում, բարձրարժեք տեսակների (կաղնի, հաճարենի) փոխարինումն առավել ցածրարժեք, բայց դիմացկուն բոխիով: Սերմնային ծագման անտառների մակերեսը պակասում է, իսկ փոխարենն ավելանում են կոճղաշիվային, երկրորդային ծագման անտառները: Արդյունքում նկատվում են անտառների ֆրագմենտացիա, հողմատապալ և ձնատապալ տարածքների ավելացում, հողատարման, ձորակառաջացման, սողանքային ու սելավային, էրոզիոն պրոցեսների ակտիվացում: Որոշ շրջաններում առկա են անտառի վերին սահմանի իջեցում և ստորին սահմանի բարձրացում:

Հետխորհրդային վաղ շրջանում անտառային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցությունը պայմանավորված էր հանրապետությունում ծանր սոցիալ-տնտեսական պայմաններով, էներգետիկ ճգնաժամով և ազգաբնակչության



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

լայն խավերի չքավորության եզրին հայտնվելով: Վերջին ժամանակներում մարդածին ճնշումները բնության վրա դեռևս չեն մեղմացել: Էկոհամակարգերի դեգրադացման տեմպերի աճին նպաստում է նաև տնտեսական գործունեությունը, որն արտահայտվում է կենսառեսուրսների գերօգտագործմամբ, հանքավայրերի շահագործմամբ, կառուցապատված տարածքների ընդլայնմամբ, գյուղատնտեսության ոլորտի աշխուժացմամբ, զբոսաշրջության զարգացմամբ:

2017 թ. ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ին ամրակցված անտառներում պլանավորվել է իրականացնել 90 596 մ³ բնափայտի մթերում, սակայն իրականում մթերվել է միայն 29 926.5 մ³, այդ թվում՝ 2326.8 մ³ շինափայտ: Դրան զուգահեռ անտառտնտեսություններում մթերվել և անտառամերձ համայնքների բնակչությանն անվճար տրամադրվել է 66 614 մ³ թափուկ վառելափայտ: Թափուկի մթերում է իրականացվել նաև «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում:

Վերջին չորս տարվա կտրվածքով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից մթերված փայտանյութի ծավալների ընդհանուր պատկերը հետևյալն է՝ 2014 թ.՝ 29 023 մ³, որից շինափայտ 1986 մ³, 2015 թ.՝ 25 977 մ³, որից շինափայտ 3174 մ³, 2016 թ.՝ 25 641 մ³, որից շինափայտ 2595 մ³, 2017 թ.՝ 29 926.5 մ³, որից շինափայտ 2326.8 մ³:

Աճման պայմաններից և ծառատեսակից կախված՝ վառելափայտի ծավալը կազմում է ընդհանուր մթերված փայտանյութի 65-70 %-ը, բարձրարժեք տեսակների դեպքում, ինչպես կաղնին ու հաճարենին, այն կարող է էապես ավել լինել միջինացված թվից: Հատկապես հաճարենու դեպքում շինափայտի տեսակարար ծավալն ավելանում է անտառի լրիվության հետ մեկտեղ: Հետևաբար՝ նոսր, չխնամված անտառում պակասում է ինչպես արժեքավոր ծառերի թիվը, այնպես էլ առանձին ծառից մթերվող շինափայտի ծավալը:

Միավոր տարածքից դուրս բերվող ընդհանուր փայտանյութի ծավալի աստիճանական պակասի հետ ընդարձակվում են հատատեղերի մակերեսները՝ ներառելով առավել դժվարամատչելի, բայց լավ պահպանված անտառային զանգվածներ: Դրանց հասնելու համար կառուցվում են անտառային ճանապարհներ, որոնք իրենց հերթին բացասական ազդեցություն ունեն էկոհամակարգերի վրա: Հատատեղերի ընդհանուր մակերեսը 2014 թ. կազմել է 1558 հա, 2015 թ.՝ 1501 հա, 2016 թ.՝ 1940 հա, 2017 թ.՝ 2010 հա, այսինքն՝ ակնհայտ է դարձել հատատեղերի մակերեսի աճի միտումը: 2014 թ.-ից մինչև 2018 թ. հոկտեմբերի 1-ը հատումներից մթերված փայտանյութից իրացվել է 10 606 մ³ շինափայտ և 116 980 մ³ վառելափայտ:

Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Որպես էներգետիկ ռեսուրս՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանում վառելիքայտը կենսազանգվածի հետ միասին կազմում է էներգետիկ սեկտորի 5.1 %-ը: Սա մեծ ծանրաբեռնվածություն է անտառների վրա:

«Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բնակչության շրջանում կատարված սոցիալոգումներից պարզվել է, որ կենցաղում սպառված վառելիքայտի պահանջարկը ավելի քան 20 անգամ գերազանցում է օրինական հատումներից իրացված փայտանյութի ծավալը: Վիճակը շտկելու կարևոր միջոցներից է գազի սակագնի կարգավորումը: Գազի գնի համեմատ հատված ծառի արժեքն այսօր մոտ 30 %-ով էժան է: Առավել արդիական է փոխարինել վառելիքայտը այլընտրանքային կոշտ վառելիքով՝ պելետներ, բրիկետներ: Սակայն դրանց ներմուծումը շատ թանկ է, ուստի անհրաժեշտ է ստեղծել տեղական արտադրություն՝ ներգրավելով փոքր և միջին բիզնեսը և խրախուսելով նրանց սուբսիդավորվող վարկերով:

2017 թ. նվազեցին էլեկտրաէներգիայի և գազի սակագները: Սա բացառիկ դեպք էր վերջին տասնամյակների ընթացքում, երբ սակագինը միշտ աճել է: Արդյունքում բնակիչ-բաժանորդների համար 1 մ³ բնական գազն այսօր արժե 139 դրամ (0.29 ԱՄՆ դոլար), իսկ սոցիալապես անապահով (նպաստառու) ընտանիքների համար՝ 100 դրամ (0.21 ԱՄՆ դոլար): Համեմատության համար նշենք, որ 2014 թ. 1 մ³ գազի սակագինն արժե 156 դրամ, իսկ 2007-ին՝ 59 դրամ: Էլեկտրաէներգիայի 1 կվտ/ժ-ի համար նախկին 46.2-ի փոխարեն գործում է 44.98 դրամ, իսկ գիշերային 36.2-ի փոխարեն՝ 34.98 դրամ սակագինը: Որպես համեմատություն՝ 2014 թ. էլեկտրաէներգիայի 1 կվտ/ժ-ը արժե 37.26 դրամ, իսկ 1999 թ.՝ 20.4 դրամ: Էներգակիրների գնի նման փոփոխությունների ազդեցությունն անտառօգտագործման վրա հնարավոր կլինի վերլուծել մի քանի տարի անց:

Որպես սակավանտառ երկիր՝ հատկապես մտահոգիչ է երկրից դուրս փայտանյութի արտահանումը: Վերջին տասը տարիներին Հայաստանից ամենամեծ ծավալի փայտանյութ արտահանվել է 2016 թ., երբ երկրից դուրս է հանվել 5100 մ³ փայտանյութ, որի մաքսային արժեքը կազմել է 890 հազար դոլար: 2017 թ. փայտանյութի արտահանման ծավալը կազմել է 4600 մ³, այն իրականացվել է ավելի թանկ գնով՝ մոտ 1.2 մլն. դոլարի չափով:

Արդիական խնդիր է ապօրինի անտառահատումը: Տարբեր տվյալներով այն 10-20 անգամ գերազանցում է օրինական հատումները: Համաձայն FLEG I ծրագրի տվյալների՝ 2010 թ. հանրապետությունում վառելիքայտի սպառումը կազմել է 457 000 մ³: 2017-2018 թթ. ընթացքում հանրապետությունում սպառված վառելիքայտի ծավալը «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հաշվարկվել է 84 477 մ³: 2013-2016 թթ. ժամանակահատվածում կրկնակի ավելացել է ապօրինի ծառահատումների քանակը: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2013 թ. արձանագրվել է ապօրինի



ծառահատումների 179 դեպք, հետագա 3 տարիներին դեպքերն ավելացել են և 2014 թ. կազմել 231, 2015 թ.՝ 315 և 2016 թ.՝ 513 դեպք:

Լայնածավալ և անվերահսկելի անտառահատումները, հատկապես Հայաստանի հյուսիսային հատվածներում, չեն կարող չարտացոլվել կենդանական աշխարհի, մասնավորապես թռչունների տեսակային և քանակական կազմի վրա: Ընտրովի հատումների արդյունքում (բարձրարժեք կաղնի և հաճարենի) կրճատվում է անտառային տեսակների բազմազանությունը, որն առաջին հերթին վերաբերվում է փչակներում բնադրող տեսակներին՝ փայտփորներ, բվեր, ծվծվիկ, սիտեղ, երաշտահավեր: Համաձայն ոչ կանոնավոր թռչնաբանական դիտարկումների՝ զգալիորեն պակասել է ցախաքլորատրոսի (*Accipiter gentilis*) քանակությունը:

2017 թ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և այժմ քննարկման փուլում է «Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որում սահմանվում են նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ստեղծման սկզբունքները և անտառների պահպանմանն ուղղված ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործման մեխանիզմները:

բ. Անտառային հրդեհներ և անտառային պաթոլոգիաներ: Ինչպես հայտնի է, անտառային էկոհամակարգերի դեգրադացման աստիճանի գնահատման համար չափանիշներ են հրդեհից մասնակիորեն կամ ամբողջովին ոչնչացված, վնասատուների և հիվանդությունների պատճառով բնական դիմադրողականությունը կորցրած, չորացող կամ արդեն չորացած անտառը, բնական վերածի ունակությունից զուրկ, հիմնովին ծառահատված անտառային տարածքները: Վերջին տարիներին ավելացել են անտառային հրդեհների հաճախականությունը և այրված տարածքների մակերեսը: Այսպես, ըստ պաշտոնական տվյալների, անտառային հրդեհների ծավալը 2017 թ. գերազանցել է 3000 հեկտարը, որն ավելին է, քան վերջին տասը տարիների ընթացքում գրանցված հրդեհների մակերեսը՝ 2191 հա: Հատկապես մեծ է եղել «Խոսրովի անտառ» արգելոցին հասցված վնասը: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ում, Seninel-2 արբանյակային պատկերների միջոցով իրականացված վերծանման տվյալների համաձայն, բռնկված հրդեհի արդյունքում այրվել է 1716.3 հա տարածք: Ըստ ԱՄՆ անտառային ծառայության մասնագետների կողմից իրականացված հետազոտության՝ հրդեհը հիմնականում վնաս է հասցրել գիհու նոսրանտառներին ու կիսաանապատային, լեռնատափաստանային գոտու խոտածածկ տարածքներին: Լինելով գերազանցապես գետնատարած հրդեհ՝ էական վնաս է հասցվել հողի մակերեսային շերտին՝ որոշակի խորությամբ այրելով նաև խաշամային և հողի բերրի շերտը: Հաշվի առնելով, որ տարածաշրջանն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ինքնին չորային է, ենթադրաբար վնասվել են բազմաթիվ ծառերի արմատային հատվածներ և: Բնականաբար վնասվել է նաև կաղնու, գիհու և խոտածածկի հետ կապված էնտոմոֆաունան: Առավել տուժել էին ուղղաթևերը: Միջատների մի մասը տարվա այդ ժամանակահատվածում գտնվել են ձմեռման, դիապաուզայի շրջանում և քիչ են վնասվել: 2018 թ. նպատակային դիտարկումներով նկատվել է մոտ 85 % բուսածածկի վերականգնում: Միջատների վերականգնման գործընթացը պայմանավորված է բուսականության աճով, և նրանց թվաքանակը ևս վերականգնվում է, մասնավորապես երկարաբեղ բզեզինը (*Semanotus rusticus*), ոսկեբզեզինը (*Anthaxia caucasica*): Նույնիսկ կարելի է սպասել նախկինի համեմատ դրանց թվաքանակի ավելի մեծ աճ, ինչը բնական է և համապատասխանում է միջատների թվաքանակի փոփոխության պոպուլյացիոն ալիքների հայտնի օրինաչափությանը, սակայն դա չի հանգեցնի պոպուլյացիայի խտության երկարատև ու կայուն փոփոխությանը:

2017-2018 թթ. հրդեհի ավելի փոքրամասշտաբ դեպքեր են արձանագրվել նաև Ամուլսարի հանքավայրի տարածքից դուրս գտնվող հատվածում, Զերմուկում, Արփա գետի ափամերձ շրջանում, «Շիկահող» արգելոցի փոքր տարածքներում, Հրազդանի անտառտնտեսության մասնաճյուղի տարածքում և այլն: Վերջին տվյալներով 2017-2018 թթ. արձանագրվել է անտառային հրդեհների 98 դեպք՝ 1169 հա ընդհանուր մակերեսով, որից 617 հա անտառածածկ և 552 հա ոչ անտառածածկ տարածքների վրա:

Անտառային հրդեհների դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են տեղանքի բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն:

Վնասատուները և հիվանդությունները ևս անտառային էկոհամակարգերի դեգրադացման պատճառ են: Հենվելով Հայաստանի վիճակագրական տարեգրքի տվյալների վրա՝ հատումների ծավալների ավելացման հետ մեկտեղ ավելացել են վարակներից ու վնասատուներից տուժած անտառային մակերեսները: 2014 թ. դրանք զբաղեցրել են 13 900 հա, 2015 թ.՝ 9504 հա, 2016 թ.՝ 9400 հա, 2017 թ.՝ 15 854 հա, իսկ 2018 թ.՝ 13 772 հա ընդհանուր անտառածածկ տարածք: Վնասատուների զանգվածային բազմացման (հատկապես տերևակեր միջատների) և սնկային հիվանդությունների տարածման դեմ իրականացվող պայքարի միջոցառումները սակավ են և հիմնականում չեն ներառում կենսաբանական պայքարի միջոցներ:

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի անտառները լեռնային են, և ունեն պաշտպանական նշանակության, իսկ փայտանյութի պահանջարկը մի քանի անգամ գերազանցում է անտառների արտադրողականությանը և ներքին ռեսուրսների հաշվին չի կարող ամբողջովին բավարարել այդ պահանջարկը, ապա



պետք է անտառի սոցիալ-տնտեսական նշանակությունը ստորադասվի բնապահպանական նշանակությանը: Այս առումով պետական անտառկառավարման համակարգը պետք է դիտվի որպես դոտացիոն, մասնակի ինքնաձախսածածկ, ոչ շահութաբեր ոլորտ և ունենա միջոցների շարունակական ներդրումներ՝ պահպանության և վերականգնման նպատակով:

Ջրաճահճային էկոհամակարգեր. Հանրապետության բոլոր լճերը, գետերը, ջրամբարները, ճահիճներն ու տորֆավայրերը, «Միջազգային կարևորության, հատկապես ջրլող թռչունների բնադրավայրերի, պահպանության մասին» կոնվենցիայի (Ռամսար, 1971) սահմանման համաձայն, համարվում են խոնավ կամ ջրաճահճային տարածքներ: Դրանցից երեքը՝ Սևանա լիճը, Արփի լիճը և Խոր Վիրապ ջրաճահճային տարածքն ունեն ԲՀՊՏ-ի կարգավիճակ և ընդգրկված են Ռամսարի կոնվենցիայի Միջազգային կարևորության խոնավ տարածքների ցանկում:

Հայաստանում ջրաճահճային տարածքները կարևոր դեր են խաղում կենսաբազմազանության պահպանության գործում, քանի որ ջրային և երկկենցաղ կենդանիների համար հանդիսանում են ապրելավայր, իսկ թռչունների ու կաթնասունների բազմաթիվ տեսակների համար՝ բազմացման կամ սնման վայր: Հայաստանի ԿԹՏ-ներից Արմաշի ձկնային ավազանները, Մեծամորի գետավազանը, Արփի լիճը, Սևանա լիճը, Գորհայքը հիմնականում բաց ջրային և ջրաճահճային էկոհամակարգեր են, որոնք ապրելավայր են ապահովում ջրլող թռչունների խոշոր գաղութների համար:

2014-2018 թթ. ընթացքում իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայաստանի ջրային էկոհամակարգերի ճնշող մեծամասնությունը ենթարկվում է մարդածին տարաբնույթ գործոնների և կլիմայի փոփոխության բացասական ազդեցությանը: Զրային էկոհամակարգերի կենսաբազմազանության բնակմիջավայրերի ոչնչացման հիմնական պատճառներն են հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսության և փոքր ՀԷԿ-երի համար կատարվող անկառավարելի ջրառը, անտառահատումները, մելիորատիվ աշխատանքների արդյունքում ջրաճահճային տարածքների չորացումը, ջրերի աղտոտումը կենցաղային, գյուղատնտեսական հոսքաջրերով, կոշտ կենցաղային աղբով, որոնք, գումարվելով կլիմայի տաքացման միտումներին, ավելի են ուժեղացնում դեգրադացման գործընթացները գետերում, ջրամբարներում, ճահճուտներում և լճերում: Դրա ակնառու օրինակն է 2018 թ. Սևանա լճի աննախադեպ համատարած «ծաղկումը», որի հիմնական պատճառները ջրի բարձր ջերմաստիճանն ու մարդու գործունեության արդյունքում լճում ֆոսֆորի պարունակության մեծացումն են: Մեծ դեր են ունեցել նաև լճի մակարդակի տատանումները՝ ամենամյա օրենքով սահմանված առավելագույն քանակը գերազանցող ջրառի պատճառով: Ներկայումս Սևանա լճում ջրի մակարդակի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

բարձրացման հետևանքով ի հայտ են եկել նոր խնդիրներ՝ կապված բուսականությունից և ծառերի բներից լճի ափամերձ տարածքի ոչ բավարար մաքրման հետ, ինչը հանգեցրել է լճի ջրի որակի վատթարացման:

ՀՀ ԳԱԱ ԿՀԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից Սևանա լճի և նրա ավազանի էկոլոգիական վիճակի համալիր գնահատման նպատակով 2016-2017 թթ. զուգահեռաբար իրականացվել են «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման», ինչպես նաև «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանի գետերի ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրերը: Նշված ծրագրերի շրջանակներում կատարվել են Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների համար, որպես ձվադրավայրեր,՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիկ, Կարճաղբյուր, Ծակքար, Մարտունի և Մասրիկ գետերի մանրամասն հետազոտություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ գրեթե բոլոր գետերում էնդեմիկ ձկնատեսակների բնական ձվադրավայրերի պայմանները խախտող գործոններից են օրգանական աղտոտվածությունը (արոտավայրերից և բնակատեղերից գետ թափվող հոսքաջրերի հետևանքով), փոքր ՀԷԿ-երի ու ոռոգման համար կատարվող ջրառը, որոշ դեպքերում նաև՝ գետի հունի բնական կառուցվածքի խախտումը: Եզրակացվել է, որ Սևանի իշխանի և կողակի պոպուլյացիաների վերականգնման ծրագրերը դրական արդյունք կունենան՝ այդ տեսակների համար ապրելավայրերի անհրաժեշտ որակի վերականգնման և որսի վերահսկողության դեպքում:

Հայաստանի այն փոքր գետերը, որտեղ առկա է անկառավարելի ջրառը, ամռան ամիսներին հունի վերին և միջին հատվածները դառնում են սակավաջուր կամ նույնիսկ չորանում են: Դրան գումարվում են վերոհիշյալ պայմանների փոփոխությունները, ինչը հանգեցնում է աղտոտման և թթվածնի պակասի նկատմամբ ցածր տոլերանտություն ունեցող տեսակների թվաքանակի նվազման կամ տվյալ վայրից անհետացման: Աղետալի վիճակում են հատկապես Հայաստանի այն գետերը, որոնց վրա կառուցված են 2-3 ու ավելի ՀԷԿ-եր՝ Եղեգիս, Մեղրի, Մարց, Քաջառու և Ամբերդ գետերը: Այսպես, Արփա գետի Եղեգիս վտակի ավազանում, ներառյալ վերջինիս ջրհավաք ավազանի գետերը, շահագործվում է 17 փոքր ՀԷԿ: Բուն Եղեգիս գետի վրա շահագործվում է 9 փոքր ՀԷԿ: ՀԷԿ-երի ձկնանցարանների վատ վիճակի հետևանքով գետի ձկները հնարավորություն չունեն կատարելու միգրացիա, իսկ ճնշումային խողովակների անցքերով անցնելիս ձկները տուրբիններում ոչնչանում են: 2000 թ. առաջին ՀԷԿ-ի կառուցումից մինչև այժմ գետի ձկների տեսակային կազմը փոխվել է, իսկ թվաքանակը՝ խիստ նվազել : Համեմատության համար նշենք, որ Արփա և Որոտան գետերի վերին հոսանքներում ներկայումս շատ փոքր մարդածին ազդեցության պայմաններում ցամաքային և ջրային էկոհամակարգերի վիճակը գրեթե չի փոխվել, իսկ Սևանա լճի ավազանի Ձկնագետի ստորին հոսանքում, որտեղ Ծովագյուղի համայնքի



կողմից աղբահանություն է կազմակերպվել, գրանցվել է ջրի որակի բարելավման միտում:

Փոքր ՀԷԿ-երի կառուցման ժամանակ շինությունները սովորաբար տեղադրվում են գետերի այն հատվածներում, որոնք բնադրավայր կամ բնակության վայր են կարմիրգրքային թռչնատեսակների համար, ինչը բնականաբար խախտում է դրանց բնակմիջավայրը և սպառնում տեսակների գոյատևմանը: Նմանապես փոքր ՀԷԿ-երի զոհ է դարձել «Արփի լիճ» ազգային պարկը, որտեղ Ախուրյան գետի վրա գործող ՀԷԿ-երի պատճառով նվազել է լճի ջրի մակարդակը, իսկ երկու կղզիները, որոնք հանգրվան են հանդիսանում կարմիրգրքային Գանգրափետուր հավալուսնի (*Pelecanus crispus*) և Հայկական որորի (*Larus armenicus*) համար, վերածվել են թերակղզիների: Շաքիի ջրվեժի պարագայում փոքր ՀԷԿ-ի շահագործման հետևանքով ջուրը չի հոսում դեպի ջրվեժ, այլ վերևից խողովակով մտնում է գեներատորի մեջ՝ չորացնելով հարակից հողատարածքները: Դրա հետևանքով այդ տարածքում այլևս չեն աճում խոնավասեր բույսեր՝ պտերի և մամուռների տեսակներ:

Բաց եղանակով հանքարդյունահանման բացասական ազդեցությունը փոքր գետերի վրա կարող է մի քանի տարում հանգեցնել գետի էկոհամակարգի դեգրադացիայի, բնակմիջավայրի կորուստների և տեսակային բազմազանության փոփոխման, ինչպես տեղի է ունեցել Դեբեդ գետի ավազանի Ախթալա և Շնող վտակների հետ: Շնող գետի միջին և ստորին հատվածներում 2014 թ. գրանցված Շենոն-Վայների կենսաբազմազանության ինդեքսի HN և բիոտիկ ինդեքսի բարձր արժեքները (համապատասխանաբար 2.8 և 10՝ «գերազանց» որակ) 2017 թ. նվազել են մինչև համապատասխանաբար 2.3 և «ոչ բարձր» արժեքների: Տվյալ դեպքում օդային և ջրային ավազանների աղտոտումը ջրային կենդանիների բնադրավայրերի, ապրելավայրերի վերացման պատճառ դարձավ: Հանքարդյունահանման դեպքում հաճախ տեղի է ունենում նաև գետերի հունի փոփոխում՝ պոչամբարների կամ դատարկ ապարների լցակույտերի օգտագործման պատճառով:

Եթե վերջին տարիներին Սևանի ավազանում նկատվում է թռչնաֆաունայի քանակական և տեսակային կազմի դրական դինամիկա, ապա իրավիճակն ամբողջովին հակառակն է Արարատյան հարթավայրում: Արմաշի ձկնաբուծական լճերում և Մեծամոր գետի համակարգում Հայաստանի թռչունների պահպանման միության կողմից անցկացվող ամենամյա հաշվառումները բացահայտում են մտահոգիչ պատկեր ինչպես բնադրման շրջանում, այնպես էլ ձմեռային ամիսներին: Մասնավորապես՝ 2014 թվականին գրունտային ջրերի ոչ ռացիոնալ օգտագործման և դրանց մակարդակի իջեցման պատճառով Արաքս գետի հովտում բազմաթիվ արտեզյան հորեր են փակվել: Դրան հետևած ձմեռային հաշվառումները ցույց տվեցին, որ թռչունների քանակը կախված է ջրային բաց



տարածքների սառցակալման աստիճանից: Եթե անցյալ տարիներին արտեզյան ջրերի շնորհիվ սառցակալած լճերի վրա դեռևս մնում էին բաց ջրային մակերեսներ, որոնց մոտ կուտակվում էին մեծաքանակ ձմեռող թռչուններ, ապա վերջին երկու տարում բաց ջրային մակերեսները գրեթե վերացել են, ինչը հանգեցրել է ձմեռող թռչունների թվաքանակի կտրուկ նվազման (Ամենամյա ջրլող թռչունների ձմեռային հաշվառումներ, IWC 2017): 2017 թ. ձմեռող թռչունների հաշվառման արդյունքները ցույց են տալիս, որ գրանցված թռչունների 95 %-ից ավելին (21 տեսակ) հաշվառվել է Սևանա լճի ավազանում, իսկ Արմաշի ձկնաբուծական լճերում հաշվառվել է մոտ 1 %-ը՝ 15 թռչնատեսակ: Նույն երկույթը դիտվել է Մեծամոր գետային համակարգի տարածքում, որը փաստորեն կորցրել է իր կարևոր նշանակությունը ձմեռող ջրլող թռչնատեսակների համար, քանի որ կենսագործունեության բարենպաստ տարածքների 90 %-ը անցել է սառցաշերտի տակ: Արդյունքում այստեղ հաշվառվել է ջրլող թռչունների 14 տեսակ՝ ընդհանուր թվաքանակի մոտ 3 %-ը:

Արարատյան հարթավայրի գետերի ջրային ռեսուրսների անսահմանափակ և անկանոն օգտագործումը, բետոնապատ ծածկույթով ջրամբարների ստեղծումը խոշոր ձկնաբուծական տնտեսությունների կողմից բացասական ազդեցություն են ունենում գետերի բնական հոսքի դեբետի վրա, իսկ գրունտային ջրերի և բնական ճահճային տարածքների սպառումը բերում է ջրաճահճային թռչնատեսակների կենսամիջավայրերի ոչնչացման: Մասնավոր տնտեսությունների կողմից ջրային ռեսուրսների այդպիսի զանգվածային յուրացման արդյունքում ստեղծվել են պայմաններ նաև թռչունների անվերահսկելի որսի, անհանգստացման գործոնի ուժեղացման և ջրաճահճային ավելի մեծ քանակով տեսակների ուղղակի ոչնչացման համար (ASPB 2017): Կտրուկ նվազել է բադերի քանակը, որոնք օգտվում են բաց ջրային տարածքներից, ինչպես նաև կտցարների (*Charadriiformes*) և արագիլանմանների (*Ciconiiformes*) քանակը, որոնք օգտվում են բնական ափերից:

Մարդածին գործոնի ակնհայտ զոհ դարձավ Մոխրագույն կոունկը (*Grus g. Archibaldi*), որը ներառված է Հայաստանի Կարմիր գրքում՝ որպես «վտանգված» տեսակ: Եթե նախկինում երկրում կար 5-6 բնադրող զույգ, ապա վերջին երկու տարում մնացել է միայն մեկը, որը բնադրում է «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան հատվածում: Մոխրագույն կոունկը բնակվում է Ջավախքի բարձրավանդակում՝ Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի սահմանների հատման տեղում, որտեղ բնադրման համար օգտագործում է ճահճային հատվածները և փոքր լճերը: Ոչ հեռու անցյալում այս տեսակը բնադրում էր Լոռու մարզի ճահճուտներում՝ Ստեփանավան քաղաքի շրջակայքում (Տաշիր ԿԹՏ), իսկ այժմ շատ ճահճուտներ չորացված են և օգտագործվում են որպես տորֆի արդյունահանման վայր: Կոունկի կենսամիջավայրերի չորացման և մասամբ որսի



հետևանքով այս տեսակը Հայաստանում կանգնել է անհետացման վտանգի առաջ: Ներկայումս Հայաստանում հաշվվում է Մոխրագույն կռունկի 1 բնադրող զույգ:

Գետերի և ջրամբարների ապրելավայրերի կորուստն ավելի մեծ վնաս է պատճառում փափկամարմիններին և ճպուռների թրթուրներին: Չկառավարվող ջրառը վտանգի տակ է դնում այդ կենդանիներին, հատկապես այն տեսակներին, որոնք ապրում են փոքրիկ ջրամբարներում: Երկկենցաղ փոքրասիական տրիտոնի (*Ommatotriton ophryticus*) պահպանությունը կախված է Շամլուղ քաղաքի մոտակայքում 0.1 հա մակերես ունեցող Շամլուղի փոքրիկ լճակի, ինչպես նաև Ալավերդի քաղաքի մոտակայքում գտնվող ջրամբարի ջրային ռեժիմից և ջրի որակից: Այս տեսակն իր գեղեցկության պատճառով վաճառքի նպատակով անխնա որսվում է: Տրիտոնի ապրելավայրերը Հայաստանի տարածքում շատ քիչ են և թեպետ, ԲՀՊՏ-ՌՊԾ-ի համաձայն, 2015-2016 թթ. Լոռու լճակները պետք է ընդգրկված լինեին պահպանվող տարածքների համակարգում, որը դեռևս տեղի չի ունեցել, ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Նույն վիճակում է Տխտորագորտ սիրիականի (*Pelobates syriacus*) պոպուլյացիան, որի պահպանումն անարդյունավետ է, քանի որ այս տեսակի ապրելավայրերը ենթարկվում են մարդածին բացասական ազդեցության (ստորերկրյա ջրերի արդյունահանում, ջրի աղտոտում, անասունների արածեցում): Հատկանշական է, որ այս տեսակի ոչ մի ապրելավայր ներառված չէ Հայաստանի ԲՀՊՏ-ների գործող համակարգում: Առաջարկվում է պահպանվող տարածքի կարգավիճակ տալ Ոսկեհատ (Արագածոտնի մարզ) և Չիվա (Վայոց ձորի մարզ) գյուղերի մոտակայքի սխտորագորտի ապրելավայրերին, ինչպես նաև ընդլայնել «Ջրվեժ» անտառապարկի տարածքը մինչև Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի մերձակայք:

Արոտավայրային էկոհամակարգեր. Հայաստանում անասնապահությունը գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է, որի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեն բնական կերհանդակները (արոտավայրեր, խոտհարքներ), որոնք մեծ արժեք են ներկայացնում նաև կենսաբազմազանության առումով: Հանրապետությունում հաշվառված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի շուրջ 59 %-ը կազմում են բնական կերային հանդակները, որոնք զբաղեցնում են շուրջ 1 244 000 հեկտար տարածք:

Վերջին 20-25 տարիների ընթացքում բավականին կրճատվել է գյուղատնտեսական կենդանիների ընդհանուր գլխաքանակը, սակայն կերահանդակների անկանոն օգտագործմամբ պայմանավորված, ինչպես նաև բուսածածկի բարելավման միջոցառումների բացակայության արդյունքում զգալիորեն ակտիվացել են դեգրադացման գործընթացները: Հայաստանում արոտավայրերի դեգրադացիան համարվում է լայն տարածում ունեցող երևույթ, որը հանգեցնում է բնության հավասարակշռության խախտման, հողերի արտադրողականության նվազման: 1950-ական թվականների համեմատությամբ



1.5–2 անգամ նվազել է նաև կենսաբանական արտադրողականությունը, որն ուղղակի վտանգ է գյուղատնտեսության կայուն զարգացման և, որպես հետևանք, սննդամթերքի ինքնաբավության համար: Հետևաբար, հաշվի առնելով, որ Հայաստանը սակավահող երկիր է, սննդամթերքի ինքնաբավության ապահովումը դառնում է ռազմավարական նշանակության խնդիր:

Արոտավայրերի կենսաբազմազանության կորստի պատճառներից են գերարածեցումը, անժամկետ և անկանոն արածեցումը, որոնք շատ դեպքերում հանգեցրել են հողերի էրոզիայի, որի հետևանքով կրճատվել է բուսական բազմազանությունը: Գյուղամերձ արոտների գերարածեցումը հանգեցրել է տեսակային կազմի փոփոխության, մասնավորապես կրճատվել է արժեքավոր կերային բուսատեսակների պոպուլյացիաների քանակը, և տարածվել են ագրեսիվ մոլախոտեր ու թունավոր տեսակներ (գորտնուկը, ուղտափուշը, սողացող իշափուշը, իշակաթնուկը, գազի տարբեր տեսակները):

Առավել անմխիթար է կիսաանապատային և տափաստանային արոտավայրերի վիճակը, որտեղ էկոհամակարգի դեգրադացումը դարձել է գրեթե անդառնալի: Լեռնատափաստանային բուսական ծածկույթում ուրույն տեղ են գրավում տրագականտային տափաստանները, որտեղ աճում են փշատերևուկը, փշաբարձը, ոզնաթուփը, փշամանդիկը, սապնարմատը, եղջերատերևավոր կորնգանը, գազը, որոնք, կենդանիների համար չլինելով կերաբույսեր, տարեցտարի ընդարձակում են իրենց տարածքները: Ընդ որում՝ տափաստանների գենոֆոնդը հարուստ է մշակաբույսերի վայրի ազգակիցներով, էնդեմիկ և հազվագյուտ տեսակներով, որոնց պաշարները զգալիորեն նվազել են նաև մարդկանց կողմից մի շարք տեսակների չափազանց մեծ ծավալով հավաքի պատճառով:

Արոտավայրերի արդյունավետ և կշռադատված կառավարման հիմքում պետք է դրվեն դրանց ներկա վիճակի արդյունավետության բարձրացման, պահպանության, վերականգնման, կենսաբազմազանության խոցելիության ռիսկերի կրճատման, էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովման հարցերը:

Եվրամիության ֆինանսավորմամբ և ՄԱԶԾ-ի աջակցությամբ Հայաստանում «Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում» Կլիմա Իստ պիլոտային ծրագրի (Clima East Pilot Project in Armenia) շրջանակներում աշխատանքներ են իրականացվել դեգրադացված լեռնային արոտավայրերի և անտառների վերականգնման ուղղությամբ: Ծրագրով իրականացվել են նաև տեղական համայնքներում կարողությունների զարգացման և հողերի կայուն կառավարման միջոցով տնտեսական օգուտների խթանման գործողություններ: Ծրագրի արդյունքներից է նաև Գեղարքունիքի մարզի հինգ թիրախ համայնքների համար



հերթափոխային արածեցման պլանների մշակումը, որոնց իրականացումը կնպաստի 7500 հեկտար արոտավայրերի կառավարման բարելավմանը: Ճանապարհների վերանորոգման շնորհիվ ստեղծվեցին պայմաններ՝ կազմակերպելու խոշոր և մանր եղջերավոր անասունների տեղափոխումը համայնքամերձ արոտներից դեպի հեռագնա արոտավայրեր:

«Կենսաբազմազանության կայուն կառավարումը, Հարավային Կովկաս» (GIZ) ծրագրի նպատակն է մշակել հավաստի տվյալների վրա հիմնված ռազմավարություն, որը ոլորտային և վարչական սահմաններում կաջակցի կենսաբազմազանության և էԾ-ների կայուն կառավարմանը: Ծրագրի շրջանակներում մշակվել է արոտավայրերի կայուն կառավարման գործիքակազմ, որը ներառում է արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկը, արոտավայրերի և խոտհարքների կառավարման պլանավորման ուղեցույցը: Միաժամանակ 24 համայնքներ վերապատրաստվել են արոտների մշտադիտարկման և կառավարման պլանների մշակման ու իրականացման բնագավառներում, իրականացվել է արոտավայրերի մոնիթորինգ, 19 համայնքների համար մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ: Մշակվել է նաև «Հայաստանի դեգրադացված բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների բարելավման միջոցառումների ուղեցույց», որը փորձարկվել է Արագածոտնի, Շիրակի և Սիսիանի տարածաշրջանի Համայնքների 20 հա տարածքում:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (CARMAC II) երկրորդ փուլի հիմնական նպատակներն են՝ բարելավել արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը թիրախային համայնքներում և ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեչղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճ: Ծրագրի շրջանակներում մշակված միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2015-2019 թվականների ընթացքում: Այս ծրագրի առաջին փուլում՝ 2016 թ., 63 համայնքների արոտավայրերում իրականացվել են բուսականության և բնապահպանական ցուցանիշների փոփոխության ուսումնասիրություններ տարբեր ուժգնության մարդածին ազդեցության պայմաններում:

- 2. Գնահատել կլիմայի փոփոխության պարզառով հիմնական էկոհամակարգերի խոցելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կենսաբազմազանությամբ առավել հարուստ տարածքներում մարդածին գործոնի ազդեցության բնույթին և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության ուժեղացման հարցերին:** Չնայած կենսաբազմազանության անհետացման հիմնական գործոնը Հայաստանում բնակմիջավայրի կորուստն է և ֆրագմենտացիան (անտառների հատում, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով բնական լանդշաֆտների վերափոխում և այլն), այնուամենայնիվ կլիմայի փոփոխության



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Նշանակությունը տարիների ընթացքում ուժեղանում է: Կենսաբազմազանության վրա փոփոխվող կլիմայի ազդեցության գնահատումը լի է անորոշություններով, որոնց վերացումը պահանջում է ինչպես բնակության միջավայրը, այնպես էլ օրգանիզմները բնութագրող մի շարք չափանիշների իմացություն: Ակնհայտ է, որ բարձր հարմարվողական հատկանիշներով օժտված որոշ տեսակներ կարողանում են դիմակայել կլիմայական նոր պայմաններին՝ ճնշելով և էկոհամակարգից դուրս մղելով ավելի նվազ ճկունություն ունեցող տեսակներին: Առավել խոցելի են դառնում այն տեսակները, որոնք բնակվում են արդեն իսկ կղզիացած/ֆրագմենտավորված վայրերում: Տեսակները, որոնք վտանգի են ենթարկվում մարդու այնպիսի գործունեությունից, ինչպիսին է կենդանիների արածեցումը, նույնպես կունենան գոյատևման խնդիրներ: Ընդհանուր առմամբ տեսակային մակարդակում կենսաբազմազանության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը կարող է ընթանալ հետևյալ 4 սցենարով.

1. որոշակի տեսակների հարմարեցումն անբարենպաստ պայմաններին և դրանց բազմացման, պոպուլյացիաների թվաքանակի և տարածվածության բնական վիճակի պահպանում.
2. բնակության միջավայրի փոփոխություն (տարածվածության կրճատում, մեծացում, վերընթաց տեղաշարժ)՝ պոպուլյացիաների թվաքանակի և առանձնյակների որակական ու քանակական հատկանիշների զուգահեռ փոփոխմամբ.
3. կենդանատեսակների միգրացիա այլ տարածաշրջաններ՝ որոշ էկոլոգակենսաբանական հատկանիշների ճկունության և փոփոխության շնորհիվ նոր ապրելավայրերի յուրացում.
4. անհետացում, երբ տեսակի գենետիկական հատկությունները չեն նպաստում հարմարվողականության բարձրացմանը (ունեն էկոլոգիական նեղ ամպլիտուդա և/կամ բազմացման հատուկ առանձնահատկություններ) կամ միջավայրի փոփոխությունները շատ կտրուկ են եղել:

Նշված սցենարների օրինակ է «Կլիմայի փոփոխության 3-րդ հաղորդագրությունում» զետեղված տեղեկատվությունը Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված 452 տեսակ բարձրակարգ բույսերի մասին: Պարզվել է, որ սպասվող կլիմայի փոփոխությունը զգալի ազդեցություն չի ունենա 238 բուսատեսակի վրա, իսկ 140 ջերմասեր տեսակի վիճակը նոր ստեղծված պայմաններում զգալիորեն կբարելավվի: Կլիմայի կանխատեսվող փոփոխությունը և դրա հետ կապված էկոհամակարգերի սպասվող փոփոխությունները բացասաբար կանդրադառնան 74 բուսատեսակի պոպուլյացիաների վրա՝ հանգեցնելով արեալի կտրուկ կրճատման և նույնիսկ անհետացման: Հետևաբար՝ կլիմայի փոփոխությունն առաջին հերթին կսպառնա հազվագյուտ, նեղ



էկոլոգիական ամպլիտուդա ունեցող բույսերի տեսակների վրա, որոնք չեն գտնի իրենց համար նոր համապատասխան աճելավայրեր:

Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցություններն արդեն զգացվում են: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոմետ ծառայության գնահատականների և կանխատեսումների՝ Հայաստանում նկատվել է ջերմաստիճանի բարձրացման տեմպերի զգալի աճ: Եթե 1929-1996 թթ. ընթացքում միջին տարեկան ջերմաստիճանն աճել է 0.4 °C-ով, 1929-2007 թթ.՝ 0.85 °C-ով, ապա 1929-2016 թթ. աճը կազմել է 1.23°C: Պահպանվում է նաև տեղումների նվազման միտումը՝ 1935-1996 թթ. ընթացքում դիտվել է տարեկան տեղումների միջին քանակի 6 %, իսկ 1935-2016 թթ. ընթացքում՝ 9 % նվազում: Քանի որ Հայաստանի տարածքը բաշխվում է խոնավ Կովկասյան և արիդ Հայ-իրանական ֆլորիստիկ երկրամասերի միջև, կլիմայի փոփոխությունը տարբեր կերպ կազդի այս երկրամասերի կենսաբազմազանության վրա: Կլիմայի չորայնության ավելացումը կնպաստի, որպեսզի Իրանի և Թուրքիայի չոր շրջաններից Հայաստանի հարավային շրջաններ (Հայ-իրանական երկրամաս) ներխուժեն և տարածվեն բույսերի և կենդանիների անապատային և կիսաանապատային տեսակներ: Արդյունքում այդ տարածքների բարձրլեռնային գոտու մի շարք խոնավասեր տեսակների արեալը կկրճատվի, իսկ որոշ հազվագյուտ տեսակներ կարող են անհետանալ: Խոնավ Կովկասյան երկրամասում սպասվում է չորասեր տեսակների ինտենսիվ տարածում, այդ թվում՝ նաև՝ մոլախոտերի և ինվազիվ տեսակների, ինչպես նաև բազմաթիվ խոնավասեր տեսակների արեալի կրճատում:

Ներկայումս կենսաբազմազանության ներկայացուցիչների տարածվածության, պոպուլյացիաների տեսակային կազմի վրա կլիմայի փոփոխության ազդեցության կանխատեսման ուղղությամբ իրականացվող հետազոտությունները սահմանափակ են, որը սպառնալիքների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոն է: Սակայն ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման որոշակի փորձը (CCSM4, GISS, HadGEM, HadGEM2-AO, GISS-E2-R, GFDL-CM3 և GFDL մթնոլորտի ընդհանուր շրջանառության կենսակլիմայական մոդելների օգտագործումը) հնարավորություն է տալիս ընդլայնել կենսաբանական տեսակների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման գիտահետազոտական աշխատանքները, ինչը կարող է հիմք հանդիսանալ երկրում վաղ ազդարարման համակարգի ստեղծման համար՝ կենսաբազմազանության պահպանության արդյունավետ միջոցառումներ նախաձեռնելու նպատակով: Այսպես, Հայաստանի ԿԲՏ և «Էմերալդ» էկոլոգիական ցանց ընդգրկված «Ջաջուրի ռելիկտային տափաստան» և «Սոսու պուրակ» հազվագյուտ էկոհամակարգերում Հայաստանի բույսերի Կարմիր գրքում գրանցված համապատասխանաբար 11 և 22 տեսակների համար համակարգչային մոդելավորման մեթոդների կիրառմամբ իրականացվել են կլիմայի փոփոխության հետևանքով խոցելիության գնահատում և բուսական համակեցությունների կազմի



ու կառուցվածքի փոփոխությունների կանխատեսում: «Ջաջուռի ռեյկտային տափաստանի» տարածքում կատարված կանխատեսումների համաձայն՝ կլիմայի փոփոխությունը կարող է լրջագույն վտանգ հանդիսանալ այստեղ աճող Սոխ ժայռի (*Allium rupestre* Steven), Սինձ հայկական (*Tragopogon armeniacus* Kuthath.) և Գետնասող ցեղակից (*Asperula affinis* Boiss. et Huet), հազվագյուտ բուսատեսակների համար, որոնց աճման բարենպաստ տարածքներն ապագայում կտրուկ կկրճատվեն, իսկ Կատվախոտ բրդատերև (*Valeriana eriophylla* (Ledeb.) Utkin) տեսակի համար աճման բարենպաստ տարածքները կարող են իսպառ վերանալ: «Սոսու պուրակի» տարածքում աճող և Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված Բոշխ կախված (*Carex pendula* Huds.), Իլենի թավշային (*Euonymus velutina* Fisch. et C.A.Mey.), Հիրիկ նեղգծային (*Iris lineolata* (Trautv.) Grossh.), Տափուրո կասսիայի (*Lathyrus setifolius* L.), Սոսի արևելյան (*Platanus orientalis* L.), Արծվապտեր տավրիական (*Pteridium tauricum* V. Krecz. ex Grossh.), Տանձենի Ռադդեի (*Pyrus raddeana* Woronow), Գորտնուկ ցիկուտային (*Ranunculus cicutarius* Schlecht.) տեսակների համար սպասվում են աճման բարենպաստ տարածքների զգալի կրճատում և նույնիսկ բնակմիջավայրի կորուստ: Այս էկոհամակարգում առկա չորադիմացկուն տեսակների մեծամասնության համար ապագայում աճման պայմանները կլինեն բարենպաստ, իսկ որոշ բուսատեսակների արեալները կընդլայնվեն: Հաշվի առնելով, որ բուսական աշխարհի ներկայացուցիչների համար գոյություն ունեն մի շարք այլ լուրջ սպառնալիքներ (պայմանավորված մարդածին գործոնով)՝ կլիմայի փոփոխությունը դառնում է առավել խոցելի, ինչը կարող է վճռորոշ դեր խաղալ տեսակների գոյատևման գործում:

Պետք է հստակ պատկերացնել, որ տարբեր տեսակների խոցելիության ձևերը նույնպես տարբեր են, և հետևաբար՝ չի կարող լինել անհետացման ռիսկի նվազեցման մեկ ռազմավարություն: Մի շարք դեպքերում առանձին տեսակների պահպանությունը բնական պայմաններում անհնար կդառնա և կպահանջվի, որ պահպանությունն իրականացվի ex-situ պայմաններում:

Կլիմայի փոփոխության ազդեցությունն առավել ցայտուն կարող է արտահայտվել էկոհամակարգերի մակարդակում՝ էԾ-ների դրական կամ բացասական միտումների առումով: Անտառային հրդեհների քանակի ավելացումը և վնասատուների զանգվածային բազմացումը կլիմայի չորացման հետևանքներ են: Ի տարբերություն 2014-2016 թթ. անտառային հրդեհների համեմատաբար սակավության՝ աննախադեպ էր 2017 թ. հրդեհների քանակը: Ենթադրվում է, որ դա պայմանավորված է կլիմայի փոփոխության այն գլոբալ սցենարով, որը նախատեսում է անտառի բնական վերականգնման վատթարացում հատկապես ստորին լեռնային գոտում (550-1200 մ), որտեղ տարեկան տեղումների քանակը չի գերազանցում 600 մմ-ը: Կլիմայի սպասվող չորայնության միտումների հետ



կապված Հայաստանում անտառային հրդեհների վտանգն առավել սպառնում է կենտրոնական, հարավային և հարավ-արևելյան անտառապատ շրջաններին:

Միջատների կենսաբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ կանխատեսվում է, որ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում նրանց զանգվածային բազմացման տարածքը կընդլայնվի և կհասնի 70-75 հազ. հա-ի: Առավել խոցելի կլինեն հարավ-արևելյան անտառապատ շրջանները:

Փոթորիկների, հորդառատ անձրևների, կարկտահարության աճն արդեն հանգեցրել է էրոզիայի գործընթացների խորացման, ինչի հետևանքով ավելացել է սողանքի և սելավների ենթարկվող խոցելի տարածքների մակերեսը՝ բարձրացնելով բնակմիջավայրի կորստի ռիսկը:

Ըստ «Կլիմայի փոփոխության առաջին հաղորդագրության»՝ հողի խոնավության կանխատեսվող նվազումը մոտ 10-30 %-ով զգալիորեն կիջեցնի մշակաբույսերի բերքատվությունը: 2030 թ. Հայաստանում սպասվում է ենթալայան և ալպյան գոտիների առավել արժեքավոր արոտավայրերի մակերեսի և բերքատվության կրճատում 19-22 %-ով: Հավանական է խոտհարքների բերքատվության նվազում 7-10 %-ով, որն իր հերթին կհանգեցնի կերարտադրության ծավալների կրճատման: Հաշվի առնելով, որ արոտավայրեր կներխուժեն նոր ինվազիվ քսերոֆիլ տեսակներ (մոլախոտեր, փշոտ ու թունավոր բույսեր), և կնվազի հողերի բերրիությունը, դրանց բիոտիկ և աբիոտիկ կազմը՝ կարելի է կանխագուշակել բնակիչների սննդապահովության և եկամուտների անկում:

Կլիմայի տաքացումը կազդի Հայաստանի գետային հոսքերի ձևավորման վրա, որոնք մեծ կախվածություն ունեն ձյան ծածկույթից: 1961-1990 թթ. բազային ժամանակահատվածի համեմատությամբ ձյան մեջ ջրային պաշարների պարունակությունն ընդհանուր առմամբ արդեն իսկ նվազել է 5-10 %-ով: Սևանա լճի ջրային հաշվեկշիռը զգալիորեն տուժել է մակերևույթից տեղի ունեցող գոլորշացման ծավալների աճի պատճառով:

Վերջին տարիների ընթացքում գրանցված բարձր ջերմաստիճանների, հիդրոէներգետիկայի և ոռոգման համար կատարվող ջրառի, ջրի սակավության, օրգանական և անօրգանական աղտոտման գործոնի ավելի մեծ ազդեցության պայմաններում դեգրադացման գործընթացները գետերում, ջրամբարներում, ճահճուտներում և լճերում ակտիվացել են: Օրինակ՝ 2018 թ. Սևանա լճի համատարած «ծաղկումը» Անաբաենա կապտականաչ ջրիմուռ (*Anabaena flos-aquae*) էվտրոֆացման ինդիկատոր-տեսակով: Դա ջրի ջերմաստիճանի կտրուկ աճի (մինչև 24°C), ֆոսֆատ և ամոնիում իոնների բարձր կոնցենտրացիաների և լճից բաց թողնված ջրի մեծ ծավալների ազդեցության արդյունք էր: Այս օրինակը վկայում է, որ բնական էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա կլիմայի փոփոխության ու մարդածին գործոնների ազդեցությունները գումարային էֆեկտ են



տալիս՝ ակտիվացնելով շրջակա միջավայրում ընթացող բացասական գործընթացները:

Հայաստանի այն փոքր գետերում, որտեղ առկա է անկառավարելի ջրառը, ամռան ամիսներին վերին և միջին հատվածները դառնում են սակավաջուր կամ նույնիսկ չորանում են: Դրան գումարվում են հարակից տարածքներում գյուղատնտեսական և/կամ հանքարդյունաբերական գործունեությամբ առաջացած մարդածին վտանգները, ինչը հանգեցնում է աղտոտման և թթվածնի պակասի նկատմամբ ցածր տոլերանտություն ունեցող տեսակների թվաքանակի նվազման կամ անհետացման: Այդպիսի իրավիճակ է ստեղծվել վերջին 3 տարիների ընթացքում Սևանա լճի ավազանի ուսումնասիրված ինը գետերից չորսում:

2018 թ. ջրամբարներում զգալիորեն պակասել է առավելագույն լցվածությունը՝ տեղումների և ձյան շերտի ավելի քան երկու անգամ կրճատման, փոքր ՀԷԿ-երի շահագործման համար ջրի չարտոնված բացթողումների ավելացման պատճառով: 2018 թ. մարտի 31-ի դրությամբ ջրամբարների լցվածությունը կազմել է՝ Ախուրյանի ջրամբարում 60 %, Արփի լճի ջրամբարում 22 %, Ազատի ջրամբարում 56 %, Մարմարիկի ջրամբարում 33 %, Ապարանի ջրամբարում 27 %: Ընդ որում՝ ջրի ցածր մակարդակի պայմաններում չորանում է ջրամբարի ափամերձ գոտին, ոչնչանում են ջրային բուսականությունը և այդ համակեցությունում ապրող կենդանիները: Բացահայտվել է, որ փափկամարմինների և ճպուռների թրթուրների համար գետերի և ջրամբարների ապրելավայրերի կորուստն ավելի մեծ վնաս է հանդիսանում, քան ուղղակի ոչնչացումը: Չկառավարվող ջրառը վտանգի տակ է դնում հատկապես այն տեսակները, որոնք ապրում են փոքր ջրամբարներում:

Կլիմայի փոփոխությունը որոշակիորեն արտացոլվում է թռչունների սեզոնային երևույթների վրա, ինչպիսիք են՝ բազմացման և միգրացիայի ժամկետները, արեալի լայնացումը և այլն: Օրինակ՝ արագիլների պոպուլյացիայի վարքագիծը Սուրենավան և Արմաշ գյուղերում (Արարատի մարզ): Կլիմայի փոփոխության հետևանքով 1970-ական թվականներից նկատվել են սպիտակ արագիլների նստակյաց առանձնյակներ, որոնց թվաքանակը 2000 թ.-ից սկսել է աճել և 2014-2015 թթ. արագիլների շուրջ 90 %-ը արդեն վարում էր նստակյաց կենսակերպ: Սպիտակ արագիլի պոպուլյացիայի զգալի մասը չի չվում երկրից և դարձել է ձմեռող տեսակ Հայաստանի համար: Չնայած երկրում թռչունների նպատակային ֆենոլոգիական հետազոտություններ չեն անցկացվել, և անհրաժեշտ են երկարաժամկետ ուսումնասիրություններ, սակայն դիտարկումները ցույց են տվել, որ Հայաստանում թռչունների տեսակային և քանակական կազմը 2014-2018 թվականների ընթացքում որոշակի փոփոխություններ է կրել՝ ավելացել է 10-ը տեսակով, և այժմ հաշվվում է 372 թռչնատեսակ, որոնցից 235-ը համարվում են բնադրող, իսկ 137-ը՝ չվող տեսակներ: Որոշ թռչնատեսակների մոտ նկատվում է



արեալի փոփոխության դինամիկա, սակայն բացակայում են հավաստի տվյալներ կլիմայի տաքացման հետ կախվածության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ նոր ձևավորվող էկոհամակարգերի հատկություններն այսօր դժվար է կանխագուշակել, սակայն պարզ է, որ դրանք կազմված կլինեն բարձր հարմարվողականություն և ճկունություն ունեցող համակեցություններից և տեսակներից: Այսպիսի բազմաբնույթ փոփոխությունները բնականաբար խոր ազդեցություն են թողնում ինչպես բնական ռեսուրսների վիճակի, այնպես էլ հասարակության առողջ ապրելակերպի վրա: Այս ազդեցությունների նվազեցման համար կպահանջվեն էկոհամակարգերի դիմակայության ավելացում և հարմարվողականության միջոցների կիրառում՝ կապված ջրերի և անտառների կառավարման, հողօգտագործման, սննդամթերքի արտադրության և մարդկանց առողջության հետ:

Կենսաբազմազանության կորստի արագությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է ծրագրել և իրագործել հարմարվողականության ուժեղացմանը միտված միջոցառումներ, որոնք պետք է ունենան ինտեգրատիվ բնույթ և տարածվեն բոլոր էկոհամակարգերի վրա՝ ներառյալ ջրերի ու անտառների կառավարումը, գյուղատնտեսության և ենթակառուցվածքների զարգացումը:

Կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա կլիմայական բացասական ազդեցության նվազեցման արդյունավետ եղանակներից է կենսաբազմազանությամբ հարուստ տարածքների և որակով ԷԾ ապահովող էկոհամակարգերի (ԿԲՏ, ԿԹՏ, Կենսաբազմազանության թեժ կետեր, «Էմերալդ» ցանցի սայթեր, մշակովի բույսերի վայրի ազգակիցներ պարունակող տեղամասեր) ընդգրկումը ԲՀՊՏ-ների համակարգ: Կայուն կառավարվող ԲՀՊՏ-ներում պահպանության համապատասխան ռեժիմի շնորհիվ բնական վիճակին մոտ գտնվող ու ածխածնի կուտակման բարձր ներուժ ունեցող էկոհամակարգերում (անտառներ, ջրաճահճային տարածքներ, մարգագետիններ) պահպանվում են ածխածնի ակտիվ կուտակման պրոցեսները՝ ապահովելով մթնոլորտում ջերմոցային գազերի քանակության կրճատումը: ԲՀՊՏ-ները կարող են «կլիմայական ապաստանների» դեր խաղալ կենդանիների շատ տեսակների համար, որոնք ապրելավայրի սովորական պայմանների փոփոխության դեպքում ԲՀՊՏ-ներում կստեղծեն նոր կայուն պոպուլյացիաներ, ինչպես նաև կարող են արդյունավետ պահպանել այն գենետիկական նյութը, որը կապահովի կլիմայի տաքացմանը հարմարեցված ջերմադիմացկուն, չորադիմացկուն նոր սելեկցիոն սորտերի ստացումը: Այդ պատճառով կարևորվում են այն գործողությունները, որոնք նպատակաուղղված են կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ խոցելի և կենսաբազմազանությամբ հարուստ տարածքների բացահայտմանն ու քարտեզագրմանը և դրանց ընդգրկմանը ԲՀՊՏ-ների համակարգում:



3. Նպաստել կենսաբազմազանության պահպանությանը և էկոհամակարգային ծառայությունների ամրոց ծավալով տրամադրմանը ղեգրադացված էկոհամակարգերի վերականգնման միջոցով.

Անտառային էկոհամակարգերի ղեգրադացիայի կանխում, անտառվերականգնում. Անտառի ղեգրադացումը, մասնատումը, անտառային կենսաբազմազանության կորուստը Հայաստանում դեռևս չլուծված հիմնախնդիրներից են: Անտառի ղեգրադացիայի և մասնատման հետևանքներն առավել ցայտուն են դրսևորվում խոշոր կաթնասունների դեպքում, ինչպիսիք են՝ գորշ արջը (*Ursus arctos*), լուսանը (*Lynx lynx*), որոնց երկարաժամկետ պահպանման համար հարկավոր են ընդարձակ բնական տարածքներ: Բացի այդ, անտառի մասնատումը զգալիորեն նվազեցնում է անտառային ծառայությունների որակը և քանակական ցուցանիշները, օրինակ՝ ջրային պաշարների մատակարարումը, հողի պահպանությունը և ածխածնի կուտակումը:

Անտառները հիմնականում տեղակայված են բարձր թեքությամբ լանջերին և կախված լանջի թեքությունից, բնակլիմայական պայմաններից ու սեյսմիկ իրավիճակից՝ ակտիվացել են սողանքները, էրոզիոն-սելավային գործընթացները, ավելացել են հողմատապալ և ձնատապալ տարածքները: Բնական աղբյուրների և գետերի զգալի մասը դարձել է սակավաջուր, որն էական վնաս է հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: 2015 թվականի տվյալներով Հայաստանի տարածքի 43 %-ը ենթարկվում է անապատացման երևույթների ազդեցությանը:

Հայաստանում մեկ շնչին հասնում է 0.1 հա անտառապատ մակերես, որը բավականին ցածր ցուցանիշ է: Հաշվարկված է, որ շրջակա միջավայրի և մարդու բարօրության համար միջինում մեկ շնչին պետք է ընկնի 0.65 հա տարածք: Բացի դրանից, սակավաթիվ են այն անտառները, որոնք լիարժեք ծավալով և որակով ապահովում են մի շարք էԾ-ներ: Հետևաբար՝ անտառների ղեգրադացման կանխման և վերականգնման խնդիրը գերակա նշանակություն ունի երկրի համար:

Անտառների վիճակի բարելավման ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկվում են միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում: «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» (2015-2020 թթ. ՄԱԶԾ-ԳԷՀ) ծրագիրը նպատակաուղղված է հյուսիս-արևելյան Հայաստանում հողերի և անտառների կայուն կառավարման ապահովմանը՝ երաշխավորելով էԾ-ների տրամադրման շարունակական ընթացքը և նպաստելով կարևոր նշանակություն ունեցող կենսաբազմազանության պահպանությանը: 2017 թ. իրականացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լավար անտառտնտեսության անտառների վերականգնման (կոճղաշիվային վերածի օժանդակման աշխատանքներ) տեխնիկական նախագիծը, որը ներառել է 93 հա ղեգրադացված անտառային տարածք: Արդվի համայնքում



կառուցվել է 260 մ² պասիվ արևային ջերմատուն, որը նպաստելու է անտառից կախված համայնքի եկամտի բարձրացմանը և մոտակա անտառների վրա ճնշման նվազեցմանը: Ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ մոնիթորինգային աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ Go Pro տեսախցիկներ, GPS ընդունիչներ, Arcpad, կապի միջոցներ և այլն: Դրանք տրամադրվել են «Հայանտառ» և «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ներին: 2018-2019 թթ. ընթացքի մեջ է Տավուշի և Լոռվա մարզերի 1000 հա դեգրադացված անտառային և համայնքային արոտավայրերի վերականգնումը, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի անտառի բնական վերածի համար: Բնակչության կախվածությունը վառելափայտից նվազեցնելուն են ուղղված այս ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվող փոքր դրամաշնորհային հետևյալ ծրագրերը.

- «Արևային էներգիայի օգտագործումն ի նպաստ էներգետիկ անկախությանը և անտառների պահպանմանը Տավուշի մարզում» ծրագիրը, որի նպատակն է արևային էներգիայի տեխնոլոգիաների կիրառման միջոցով ստեղծել անտառների վրա հարակից համայնքների ճնշման նվազեցման հնարավորություններ: Արևային ֆոտովոլտային համակարգերի և ջրատաքացուցիչների տեղադրման արդյունքում կբացառվի ջեռուցման համար վառելափայտի օգտագործումը:
- «Էներգաարդյունավետ վառարանների ներդրումը Տավուշի մարզում անտառային ռեսուրսների պահպանության համար» ծրագիրը, որի նպատակն է նվազեցնել անտառային էկոհամակարգերի վրա ճնշումը Տավուշի մարզի համայնքներում՝ բարձր արդյունավետության փայտի վառարանների տեղական արտադրության և առևտրայնացման միջոցով: Ծրագրի արդյունքում, առնվազն 250 շահառու տնային տնտեսությունների համար փայտի էներգաարդյունավետ վառարանների նախագծման, տեղական արտադրության կազմակերպման և առևտրայնացման միջոցով ակնկալվում է անտառահատման ծավալների կրճատումը տարեկան 30-35 %-ով:

Եվրահանձնաժողովի և Ավստրիայի զարգացման համագործակցության կողմից 2015-2017 թթ. ֆինանսավորվել է «Կանաչ էներգիա հանուն «կանաչ» սոցիալ-տնտեսական զարգացման Հայաստանի Շիրակի մարզի գյուղական համայնքների և բնակչության սոցիալ-տնտեսական դժվարությունների մեղմում՝ վերականգնվող էներգետիկայի բազմագործառույթ համակարգերի և «կանաչ» եկամտի աղբյուրների խթանմամբ» ծրագիրը:

Անտառային էկոհամակարգերի դեգրադացման աստիճանի նվազեցման կարևոր քայլերից է կրճատել անտառային հրդեհների հաճախականությունը և ծավալը, ինչպես նաև արդյունավետ պայքար մղել անտառային վնասատուների դեմ: Անտառային հրդեհների առաջացրած խնդիրների լուծումը կապված է մի շարք կազմակերպչական և տեխնիկական հարցերի, առաջին հերթին ծրագրված



հակահրդեհային և պրոֆիլակտիկ աշխատանքների հետ: Խոշորամասշտաբ հրդեհների պատճառների թվում նշվում է նաև բուսական մնացորդների այրումը մարդկանց կողմից, որը Հայաստանի օրենսդրությամբ արգելվում է, և զգալի տուգանքներ են սահմանված, սակայն եզակի են դեպքերը, երբ մեղավորները պատասխանատվության են ենթարկվել: 2017 թ. սկիզբ առավ ՄԱԶԾ «Անտառային և դաշտային հրդեհների կառավարման ծրագիրը» (2017-2020 թթ.), որի շրջանակներում վերանայվել են անտառների և դաշտային հրդեհների կառավարման քաղաքականությունը և իրավական փաստաթղթերը: Իրականացվել են նաև համայնքների և առանձին տնտեսությունների կարողությունների բարելավում և տեխնոլոգիական նորությունների ներդրում: Նախատեսվում է մշակել կլիմայի փոփոխության հարմարվողականության նորարարական լուծումներ:

ԵՄ/ՄԱԶԾ «Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում» (2013-2016 թթ.) ծրագրի շրջանակներում իրականացվել են անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունների հզորացման, անտառային վնասատուների մոնիթորինգի և դրանց դեմ բնապահպանական տեսակետից անվտանգ պայքարի, անտառվերականգնման աշխատանքներ: Հիմնվել է 34.2 հա նոր անտառաշերտ (տնկվել են 35 000 տնկիներ, այդ թվում՝ տեղական և վայրի մրգատու տեսակներ):

Հայաստանի անտառների վիճակի բարելավմանը և բնապահպանական հատկանիշների ապահովմանը միտված կայուն անտառկառավարման գործողությունները պետք է նախատեսեն պահպանության ենթակա արժեքավոր տարածքների առանձնացումը և դրանց կառավարման համար համապատասխան ռեժիմների կիրառումը: Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառները բնության պահպանության և մարդկանց սոցիալական բարեկեցության տեսակետից առավել արժեքավոր անտառային էկոհամակարգեր են, որոնց կորուստը կարող է սպառնալիք հանդիսանալ ողջ երկրի համար: Նման տարածքների օգտագործումը պետք է հիմնվի անտառների ու դրանց գործառույթների մասին ժամանակակից գիտելիքների վրա, որպեսզի հստակ որոշվեն նվազագույն ռիսկայնություն ունեցող անտառօգտագործման եղանակները:

2015-2016 թթ. իրականացված «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրությանը, քարտեզագրմանն ու գնահատմանն ուղղված պիլոտային ծրագրի» (ԵՄ/ԲՀՀ(WWF) շրջանակներում մշակվել են Հայաստանում բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող անտառների որոշման և գնահատման չափորոշիչները, պատրաստվել է «Հայաստանում բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույց» (2016 թ.), որը մեթոդական հիմքեր է ստեղծում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

կենսաբազմազանության պահպանության և տեղական բնակչության համար կարևոր դեր ունեցող արժեքավոր անտառային տարածքների որոշման ուղղությամբ: Ուղեցույցում կիրառված չափորոշիչները փորձարկվել են 11 425 հա մակերեսով պիլոտային տարածքում, որն ընդգրկել է Տավուշի մարզի 3 անտառապետությունների անտառաձածկ լանդշաֆտները:

2015 թ. Հայաստանը ստորագրել է Կլիմայի փարիզյան համաձայնագիրը՝ պարտավորվելով 35 տարվա ընթացքում ջերմոցային գազերի արտանետումները սահմանափակել 633 միլիոն տոննայի սահմաններում և անտառապատվածությունը մինչև 2050 թ.-ը հասցնել 20.1 %-ի: Հետևաբար՝ անտառի ազգային քաղաքականության հիմքում պետք է դրվեն կայուն անտառկառավարման հստակ սկզբունքներ՝ չափելի և պարզ ցուցանիշներով, ինչը հնարավոր կդարձնի միջազգային պարտավորությունների և պահանջների կատարումը:

Անտառավերականգնման աշխատանքների ծավալները Հայաստանում դեռևս մեծ չեն և, ըստ Հայաստանի պետական վիճակագրական ծառայության տվյալների, 2014-2016 թթ. ընթացքում նույնիսկ տարեցտարի նվազել են: Այսպես, 2014 թ.՝ 57 հա, 2015 թ.՝ 9 հա, 2016 թ.՝ 0.5 հա: Ինչ վերաբերվում է անտառմշակույթների փոխադրման անտառի շարք, ապա դինամիկան հակառակն է. 2014 թ.՝ 21 հա, 2015 թ.՝ 35 հա, 2016 թ.՝ 58 հա, 2017 թ.՝ 26 հա: Ընդհանուր առմամբ 2004-2016 թթ. անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներն իրականացվել են 3174.2 հա, իսկ 2017 թ.՝ 423 հա տարածքի վրա: Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի տվյալների՝ անտառտնտեսության մասնաճյուղերում ծառատնկման աշխատանքներն իրականացվել են 120.3 հա-ի վրա, հիմնականում միջազգային կազմակերպությունների ուժերով և ֆինանսական միջոցներով:

ԲՀՊՏ-ներում 2017 թ. ընթացքում անտառավերականգնման աշխատանքներն իրականացվել են 23.98 հա տարածքի վրա (տնկարանի հիմնում և խնամք՝ 8 հա, տնկանյութի աճեցման աշխատանքներ, այդ թվում՝ սերմնաբուսակներ՝ 3300 հատ և տնկիներ՝ 58 700 հատ):

Ջրային էկոհամակարգերի վերականգնում. Քաղցրահամ խմելու ջրի մատչելիությունը և ջրային ռեսուրսներով սոցիալ-տնտեսական ոլորտների ապահովումը կարևոր խնդիր են Հայաստանի բնակչության առողջ և բարվոք կյանքի համար:

Հայաստանի ջրային հաշվեկշռում մեծ դեր է հատկացված Սևանա լճին, որը կազմում է հանրապետության ջրային պաշարների մոտ 80 %-ը, ինչը 5 անգամ ավել է հոսքային ջրերից և 35 անգամ ավել ամբարված ջրերից: Ընդ որում՝ մակերևութային ջրերի պաշարները 2016 թ. գնահատվել են 7.7 մլրդ. մ³, ստորգետնյա ջրերի պաշարները՝ 4.017 մլրդ. մ³: Լինելով բարձրլեռնային եզակի գեոհամակարգ, իր ինքնատիպ ֆլորայով ու ֆաունայով, Սևանա լիճն ապահովում է հարակից ընդարձակ տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, մեղմում է



կլիմայական պայմանները և տնտեսական զարգացման հիմնասյունն է: Հայաստանի, թերևս նաև ամբողջ Հարավային Կովկասի համար, Սևանա լիճը դիտարկվում է որպես քաղցրահամ ջրի ռազմավարական շտեմարան, որից ինքնահոս կարող են խմելու ջուր ստանալ ավազանում ընդգրկված տարածքները: Լիճ է թափվում 28 գետ, և միայն Հրազդան գետն է սկիզբ առնում լճից: Հետևաբար՝ Սևանա լճի էկոհամակարգը պահանջում է առանձնահատուկ ուշադրություն և պահպանության համակարգային ինտեգրված մոտեցումներ:

Սևանա լճի մակարդակի 3.94 մետրով բարձրացումը (որը պայմանավորված է լճի ջրի մակարդակի՝ տասնյակ տարիների ընթացքում 19.9 մ իջեցման հետևանքների վերացմամբ) դրական ազդեցություն է ունեցել ձկնատեսակների և այլ ջրային կենդանիների ապրելավայրերի վերականգնման առումով: Սևանա լճում տարեցտարի գրանցվում է սիգ ձկնատեսակի պաշարների աճի միտում: Դրական միտումների շարքում կարելի է նաև հիշատակել Սևանա լճի մակարդակի բարձրացման արդյունքում լիթորալում նախկինում լավ զարգացած մակրոֆիտների գոտու վերականգնումը: Մակրոֆիտների գոտին ծառայում է որպես հզոր կենսաբանական ֆիլտր ջրային էկոհամակարգերի բնական ինքնամաքման գործընթացում, բնակատեղի է ապահովում ձկների կեր համարվող բազմաթիվ անողնաշար կենդանիների, հատկապես կողալողերի (*Gammaridae*) համար:

Լճի մակարդակի բարձրացումը հանգեցրել է ջրաճահճային թռչունների կերային բազայի և բնադրման համար բարենպաստ պայմանների բարելավմանը: Մասնավորապես դա վերաբերում է Մեծ ձկնկուլի (*Phalacrocorax carbo*) բնադրող պոպուլյացիայի թվաքանակի ավելացմանը, ինչը Հայաստանում 50 տարվա ընթացքում չէր գրանցվել (ASPB 2013): Նորաշենի արգելոցային գոտում, որն ընդգրկված է «Սևան» ազգային պարկի և ԿԹՏ-ի կազմում, նկատվել է թռչունների տեսակային կազմի և թվաքանակի դրական դինամիկա: Քանի որ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով լճափերը վերածվել են ծանծաղուտների, ապա բազմաթիվ ջրլող տեսակների համար ստեղծվել են բարենպաստ բնակմիջավայր և հարուստ կերային բազա: Լիճքի արգելոցային գոտին, որը ներառում է երկու ոչ մեծ լճեր և դրանց սնուցող գետը, Սևանա լճի ավազանի այն հիմնական վայրերից է, որտեղ հավաքվում է ջրաճահճային թռչունների մեծ զանգված: Գարնանային-ամառային շրջանում ջրաճահճային բուսականության խիտ մացառուտները Լիճքը դարձնում են բարենպաստ վայր մի շարք թռչունների բնադրման համար, ինչպիսիք են՝ սուզաբադերը (Կարմրազլուխ բադ (*Aythya ferina*) և Կարմրակտուց սուզաբադ (*Netta rufina*)), տառեղները, ձկնկուլներն ու կտցարները (Մորակտցար (*Gallinago gallinago*) և Սևուկ կտցար (*Tringa ochropus*)): Սակայն չկանոնակարգվող անասնապահությունը (անասունների ջրումը լճում) մշտական անհանգստացնող գործոն է և առաջացնում է բնակմիջավայրի կորուստ, ինչը խաթարում է վերը նշված թռչնատեսակներից շատերի բնադրման ընթացքը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ներկայումս բարձր է ճնշումը լճի ջրերի որակի վրա, ինչը պայմանավորված է ջրածածկ անտառների քայքայմամբ և լճում սնուցիչ նյութերի տարրալուծմամբ ու տարածմամբ, կոմունալ-կենցաղային կեղտաջրերի անարգել ներհոսքով, կենցաղային աղբի մնացորդներով և անասնապահությունից օրգանական ու ոչ օրգանական թափոններով ջրի աղտոտմամբ:

Ջրի որակի բարելավման համար նախատեսված գործողությունները միտված են Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկ տարածքների մաքրմանը և լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնմանը, ինչն իրականացվում է պետբյուջեի հաշվին: Ընդհանուր առմամբ 2015-2017 թթ. ընթացքում մաքրվել է 300.33 հա անտառածածկ տարածք: 2017 թ. պետական բյուջեից հատկացվել է 83 875 միլիոն դրամ՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից Սևանա լճի ջրածածկվող 64.0 հա տարածքների մաքրման համար: Ընդ որում՝ «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման 2017 թվականի միջոցառումների տարեկան ծրագրով» 2017 թ. լճի շրջակայքի շուրջ 93 հա անտառաշերտերի մաքրման համար նախատեսվել էր 125 400.0 հազար դրամ:

Վիճակը շրջադարձային ձևով փոխելու համար անհրաժեշտ է հաշվարկել և գնահատել նախատեսվող փոփոխությունների հետևանքները, հետազոտությունների արդյունքները ներկայացնել որոշում կայացնողներին և հանրությանը:

2018 թ. մշակվեց և 23.08.18 թ. ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը ներառում է փոքր ՀԷԿ-երի կառուցման համար ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման նոր մոտեցումներ: Այսպես՝ կարգելվի փոքր ՀԷԿ-երի կառուցումը ԲՀՊՏ-ների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում, ինչպես նաև այն գետերի վրա, որոնցում առկա են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր: Օրենքի ընդունումը կնպաստի ջրաէկոհամակարգի պահպանությանը և հավասարակշռության ապահովմանը:

«Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և Հայաստանի բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» 2014-2016 թթ. ՄԱԶԾ/ԳԷՀ ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել փոքր ՀԷԿ-երի հետ կապված բնապահպանական խնդիրների որոշման և դրանց լուծման առաջարկների մշակման ուղղությամբ՝ նպատակաուղղված լանդշաֆտների, կենսաբազմազանության, հողային և ջրային ռեսուրսների պահպանության



ապահովմանը: 75 չափանիշի կիրառմամբ ուսումնասիրվել են 87 փոքր ՀԷԿ-եր, վեր են հանվել բնապահպանական խնդիրներ, ներկայացվել դրանց լուծման առաջարկներ: Հիմնական ռիսկերն են՝ ջրի դեֆիցիտը, գետային ձկնապաշարների կորուստը, ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ընթացքում բնապահպանական ռիսկերի անտեսումը, տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների խախտումը, էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում փոքր ՀԷԿ-երի ազդեցության թերի գնահատումը: Ծրագրի շրջանակներում մշակված «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման և «Փոքր ՀԷԿ-երի բնապահպանական անձնագրի վարման կարգը և ձևանմուշը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը դեռևս ընթացք չեն ստացել:

Արարատյան դաշտի ձկնաբուծարանների արտադրողականությունը սերտ կապված է հորատանցքերի հետ: Պոմպակայանով աշխատող արտեզյան հորից առավելագույնը կարելի է դուրս մղել վայրկյանում 60-100 լիտր ջուր, իսկ ինքնաբուխ հորից վայրկյանում դուրս է մղվում 250-600 լիտր ջուր: Ձկնարդյունաբերության զարգացումը բերեց այնպիսի իրավիճակի, երբ օգտագործվող օրինական հորերից տարեկան դուրս էր մղվում 300-400 միլիոն մ³ ջուր, ինչը հանգեցրեց ստորերկրյա ջրային ավազանի մակարդակի իջեցման: ԱՄՆ-ի ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագրի շրջանակներում Արարատյան դաշտում գույքագրվել է ընդամենը 2807 հորատանցք, այդ թվում՝ շահագործվող 1795, չշահագործվող՝ 700, կոնսերվացված՝ 123, գույքագրված, բայց հետազայում լուծարված՝ 4, լցված՝ 158, կապարակնքված՝ 27: Արարատյան դաշտում 235 ձկնային տնտեսություններն իրենց կարիքների համար օգտագործում են 570 հորատանցք: Գույքագրման պահին գործել է 135 տնտեսություն՝ 336 հորատանցքով: Գործող տնտեսությունների ընդհանուր ջրառը կազմում է 25 652 լ/վրկ, իսկ հեռացվող ջրաքանակը՝ 22 057.5 լ/վրկ:

Ձկնաբուծության ոլորտում բնապահպանական ռիսկերի նվազեցման նպատակով «Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2017 թվականի մայիսի 6-ի N 413-Ն ՀՀ վարչապետի որոշման համաձայն մշակվել է ապօրինի ինքնաթափ հորատանցքերի լուծարման կամ կոնսերվացման գործընթացը: 2017 թ. իրականացվել է ձկնաբուծական տնտեսությունների 584 խորքային հորերի իրավիճակի ուսումնասիրություն, որի արդյունքում լուծարվել է 1, կոնսերվացվել 16 և փականային ռեժիմի է բերվել 150 հորատանցք: Մոնիթորինգի արդյունքում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի կայունացում և որոշ հատվածներում



բարձրացման միտում՝ միջինում 2 մ-ով: Ստորերկրյա ջրերի բարձրացումը կհանգեցնի բուսատեսակների համար ապրելավայր համարվող ջրաճահճային տարածքների վերականգնմանը:

2016-2017 թթ. մշակվել և հաստատվել են Արարատյան, Հարավային և Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանները: Հաշվի առնելով Հայաստանում վերջին տարիներին ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանության վրա ազդող անկառավարելի ջրառի նվազեցման կարևորությունը՝ ջրավազանային կառավարման պլաններում նախատեսված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված է ջրօգտագործման պայմանների վերանայումը՝ ներառյալ ջրառի ծավալի և ռեժիմի համապատասխանեցումը բնապահպանական պահանջներին, որը կնպաստի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և կենդանիների ապրելավայրերի պահպանմանը:

Սպառնալիքի թուլացման գործում որոշակի դեր կարող է ունենալ բնական պաշարների կառավարման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագրով նախատեսված մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակումը, որի արդյունքում ստացված մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների կատարելագործված քանակական և որակական տվյալները կնպաստեն ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ողջամիտ որոշումների ընդունմանը:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

- www.arlis.am;
- www.mnp.am;
- www.epiu.am;
- www.forestcommittee.am;
- forest-monitoring.am;
- www.armstat.am;
- www.mes.am;
- www.minagro.am;
- www.ramsar.org/wetland/armenia;
- www.sczhe.sci.am/;
- www.sevanlake.am/en/the-problem-of-lake-sevan/;
- www.wrma.am;
- www.dilijanpark.am;
- www.sevanpark.am;
- www.khosrovreserve.am;
- http://un.am/en/p/sdgs-and-armenia;
- www.un.am/up/file/SDGs_Targets_Indicators_ARMENIAN_FINALIZED.pdf;
- http://mes.am/hy/meteo-reports/;
- www.scws.am;
- www.abcc-am.org/projects.html;
- www.iucn.org/content/armenian-society-protection-birds-becomes-first-iucn-member-armenia;
- www.climaeast.eu/clima-east-activities/pilot-projects/pilot-project-in-armenia;
- www.arspiu.com/CARMAC-II-



PROJECT.55.0.html?&L=0%20Environmental%20Compliance%20Manager;www.giz.de/en/worldwide/20319.html;
http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/3.Armenias-TNC_2015-ARM.pdf;
http://www.nature-ic.am/Content/announcements/7345/First-National-Report_resume_Arm1.pdf; www.sgp.am/en/Projects?id=91;
http://agtc.am/wp-content/uploads/2016/08/645_Community-Needs-Assessment-Report_11.05.2016_FINAL_ENG.pdf;
www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/mainstreaming-sustainable-land-and-forest-management-in-mountain.html;
www.am.undp.org/content/armenia/en/home/projects/addressing-climate-change-impact-through-enhanced-capacity-for-w.html
www.am.undp.org/content/dam/armenia/docs/5195_ARMEU_Clima%20East_UNDP%20ProDoc_arm_final_28%2005%202013_full.pdf;
www.enpi-fleg.org/site/assets/files/2174/practical_guide_on_hcvfs_armenia.pdf;
www.sgp.am/am/Projects?id=60;
www.aspired.wadi-mea.com/hy/%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%AB-aspired/eeas.europa.eu/delegations/armenia/48439/eu-supports-sustainable-economic-development-rural-mountainous-areas-armenia_en

Գնահատման մակարդակի հավաստիությունը

հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը

Հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում տվյալների սահմանափակ քանակով

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը

Տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը

Ազգային նպատակային խնդիր 5.

Բարելավել կենսաբազմազանության in-situ և ex-situ պահպանությունը:

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիա.

Իրականացմանը նպաստող ընթացք

Լրացուցիչ տեղեկատվություն. Կենսաբազմազանության in-situ պահպանությունը Հայաստանում իրականացվում է ԲՀՊՏ-ներում, որտեղ



կենտրոնացված է ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի մոտ 60-70 %-ը, այդ թվում՝ հազվագյուտ, կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը: Կարևորվում է նաև էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանությունը ԲՀՊՏ-ներից դուրս՝ ԿԲՏ-ներում, ԿԹՏ-ներում, էմերալդ ցանցի սայթերում, կենսաբազմազանության «թեժ» կետերում, բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառներում, էկոմիջանցքներում և կենդանիների միգրացիոն ուղիներում:

1. Զարգացնել և ընդլայնել ԲՀՊՏ-ների համակարգը՝ լանդշաֆտների ու էկոհամակարգերի հիմնական տիպերի և Հայաստանի Կարմիր գրքում ներառված տեսակների լիարժեք ընդգրկման համար, բարելավել ԲՀՊՏ-ների կառավարումը և ֆինանսական կայունությունը, սրբեղծել էկոլոգիական ցանցի հիմնական բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմքերն ու ներդնել համապատասխան պիլոտային ծրագրեր:

ԲՀՊՏ-ների ներկա համակարգի պահպանումն ու զարգացումը Հայաստանի բնապահպանական քաղաքականության իրականացման, ինչպես նաև երկրի կայուն և երկարաժամկետ զարգացման կարևոր բաղադրիչն ու երաշխիքն են: Հայաստանի ԲՀՊՏ-ները կառավարվում են պետական կառույցների կողմից և զբաղեցնում են 387084.4 հա, կամ երկրի ընդհանուր տարածքի 13.1 %-ը (ներառյալ Սևանա լճի հայելին): 2009 թ.-ից, այսինքն՝ ԿԲԿ-ի ռազմավարական պլանի ընդունումից հետո, ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսն ավելացել է 88.6 հազար հա-ով:

ԲՀՊՏ-ների արդյունավետ գործունեությանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները բավարար չեն: Հիմնականում ուսումնասիրվել են Հայաստանի Կարմիր գրքում ներառված տեսակները: Այսպես՝ բույսերի Կարմիր գրքում գրանցված 452 տեսակի բարձրակարգ բույսերից ԲՀՊՏ-ներում ներկայացված են 166-ը (36.7 %), գլխարկավոր սնկերի 40 տեսակներից՝ 33-ը (82.5 %), 155 տեսակի անողնաշարներից՝ 95-ը (61.3 %), 153 տեսակի ողնաշարավորներից՝ 96-ը (62.7 %):

Հայաստանում ձևավորված ԲՀՊՏ-ների համակարգում էկոհամակարգերի/լանդշաֆտների տիպերի ներկայացվածությունը բավականին անհավասարաչափ է: Լիովին ընդգրկված չեն կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության առումով կարևոր ու մարդածին ազդեցության տակ գտնվող, հարուստ կենսաբազմազանությամբ կիսաանապատային, տափաստանային, մարգագետնային էկոհամակարգերը, մշակովի բույսերի վայրի ազգակիցներով հարուստ բարձրլեռնային տարածքները: Այսպես՝ ԲՀՊՏ համակարգը հիմնականում ընդգրկում է անտառային (ԲՀՊՏ-ների 28.5 %-ը) և ջրաճահճային լանդշաֆտները (համարյա 33 %, որում մեծ տեղ է գրավում Սևանի ակվատորիան), այն դեպքում, երբ օրինակ՝ անապատային-կիսաանապատային լանդշաֆտները կազմում են ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսի 0.2 %-ը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր պահպանվող տարածքներ, ինչն ամրագրված է ԲՀՊՏ-ԳՊԾ-ում: Հայաստանի բնապահպանության նախարարության և ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից, IDeA բարեգործական հիմնադրամի աջակցությամբ, 2015 թվականից իրականացվում է «Տաթև» ազգային պարկի ստեղծման ծրագիրը, որի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը 2016 թ. ներկայացվել է Հայաստանի բնապահպանության նախարարություն: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում է Իջևանի և Գանձաքարի արգելավայրերի սահմանների վերանայման և հզորությունների զարգացման ծրագիրը: Նախատեսվում է Հայաստանի Տավուշի մարզում ստեղծել «Իջևանի անտառային» արգելավայրը՝ առկա երեք անտառային արգելավայրերի («Իջևանի», «Գանձաքարի» և «Արջատխլենու») սահմանների վերանայման և օպտիմալացման աշխատանքների արդյունքում: Կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովման նպատակով վերանայվել են «Էրեբունի» պետական արգելոցի սահմանները: ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի N 1119-Ն որոշմամբ արգելոցի տարածքը ընդլայնվել է՝ կազմելով 118.75 հեկտար: Աշխատանքներ են տարվում «Խոսրովի անտառ» պետական արգելոցի սահմանների սեպաձևությունները վերացնելու և տարածքն ընդլայնելու ուղղությամբ: 2016 թ. «Զերմուկ» ազգային պարկի ստեղծման նպատակով Հայաստանի բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է «Զերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի բազայի վրա ստեղծել նոր՝ «Զերմուկ» ազգային պարկ: Փոխըմբռնման հուշագրով նախատեսված միջոցները միտված են կենսաբազմազանության պահպանմանը, էկոտորիզմի զարգացմանն ու հարակից համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, «Զերմուկ» ազգային պարկի կայուն զարգացման ապահովմանը:

Հարկ է նշել, որ նոր պահպանվող տարածքների ստեղծման ուղղությամբ նախաձեռնված գործողությունները չեն կարող ապահովել Այիչիի 11-րդ նպատակային խնդրի պահանջը՝ մինչև 2020 թ. յուրաքանչյուր երկրում պահպանվող տարածքները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 17 %-ը: Հեռանկարում Հայաստանում պետք է ընդլայնել պահպանվող տարածքների քանակը ի հաշիվ խոցելի և կարևոր ջրային էկոհամակարգերի, ինչպիսիք են՝ Մեծամոր գետի ավազանում Հայաստանի Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակների ապրելավայրերը, սիրիական սխտորագորտի Ոսկեհատ (Արագածոտնի մարզ) և Չիվա (Վայոց ձորի մարզ) գյուղերի մոտակայքի ջրային և ցամաքային ապրելավայրերը, Լոռու լճակները, ԿԲՏ-ները և կենսաբազմազանության «թեժ» կետերը:

Հայաստանում բոլոր ԲՀՊՏ-ները կառավարվում են պետական կառույցների կողմից կենտրոնաձիգ և ուղղահայաց կառավարման մոդելի սկզբունքներով և դրան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

բնորոշ թերություններով: Վերջինիս անճկուն լինելը, տեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների պակասը խոչընդոտում են ԲՀՊՏ-ների կառավարման համակարգի տարբեր մակարդակների միջև կապերի ամրացումը և գործառույթների ներդաշնակեցումը: 2018 թ. հունվար ամսից բոլոր ԲՀՊՏ-ների կառավարումը վերապահվել է բնապահպանության նախարարությանը:

ԲՀՊՏ-ների գործունեության ժամանակակից սկզբունքների համաձայն՝ դրանց ստեղծման և կառավարման ընթացքում բնապահպանական և սոցիալ-տնտեսական ծրագրերի հավասարաչափ զարգացման հենքի վրա պետք է ապահովվի ոչ միայն պետության, այլև հասարակության ակտիվ մասնակցությունը մի շարք ուղղություններով՝ էկոհամակարգերի ինքնակարգավորման հատկություններին աջակցություն, կայուն բնօգտագործման հնարավորության ցուցադրում, կառավարման մասնակցային և համայնքային մոդելների, փոխհատուցման և խրախուսման համակարգի ներդրում, տնտեսական մեխանիզմների և ֆինանսական տարբեր աղբյուրների օգտագործում, ստացված եկամուտների արդարացի բաշխում, ազգային էկոլոգիական ցանցի ստեղծում՝ բնության բնականոն վիճակին և մարդկանց կայուն կենսակերպին սատարելու համար:

2015 թ.-ից սկսվել են աշխատանքներ համայնքային կառավարմամբ առաջին պահպանվող տարածքի ստեղծման ուղղությամբ: Ծրագրի փորձնական մոդել ընտրվել է Վայոց ձորի մարզում «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը, որը ԿԲՀ-ի (CNF) աջակցությամբ իրականացնում է ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղը: Մշակվել է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման պլանը: Դրա պահպանման գոտում գտնվող Արենի և Խաչիկ համայնքներում իրականացվել են սոցիալ-տնտեսական և կարողությունների զարգացման մի շարք ծրագրեր:

ԲՀՊՏ-ների կառավարման պլանների առկայությունն առաջնային խնդիր է տարբեր կատեգորիաների ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարման համար: 2015 թ. Հայաստանի բնապահպանության նախարարի N 392-Ա հրամանով հաստատվել են ԲՀՊՏ-ների կառավարման պլանների մշակման մեթոդական ցուցումները, որով վերանայվել են որոշ դրույթներ և ավելացվել է կառավարման պլաններում ներառվող ենթածրագրերի օրինակելի կառուցվածքը՝ գործառնական, պահպանության, գիտական ուսումնասիրությունների, մոնիթորինգի, էկոտուրիզմի և այցելությունների սպասարկման, էկոկրթության և իրազեկման, գոտևորման և այլ ենթածրագրեր:

2016 թ. մեկնարկել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանի մշակման ծրագիրը, որը ֆինանսավորվել է ԿԲՀ-ի (CNF) կողմից, իրականացնում է ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղը՝ համագործակցելով բնապահպանության նախարարության հետ:

2017 թ. փետրվարի 23-ի N 190-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին», որը ֆինանսավորվել է ԿԲՀ-ի (CNF) կողմից:

Գերմանական զարգացման և վերակառուցման բանկի (KfW) կողմից ֆինանսավորվող «Պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող ԲՀՊՏ-ների կառավարման պլանների մշակման աշխատանքները:

Բանակցություններ են ընթանում մի շարք միջազգային բնապահպանական կազմակերպությունների հետ այլ արգելոցների և ազգային պարկերի կառավարման պլանների մշակման համար դրամաշնորհներ ձեռք բերելու ուղղությամբ:

2014 թ. Հայաստանի բնապահպանության նախարարի հրամաններով հաստատվել են Լոռու մարզի 9 և Տավուշի մարզի 15 բնության հուշարձանների անձնագրերը, իսկ 2015-2018 թթ.' ևս 7-ի: Ընդհանուր առմամբ Հայաստանում բնության հուշարձանի կատեգորիան սահմանվել է 232 օբյեկտի համար, անձնագրավորված հուշարձանների քանակը՝ 31:

Ազգային էկոլոգիական ցանցի ստեղծման գործողություններն իրականացվում են Գերմանական զարգացման և վերակառուցման բանկի (KfW) կողմից ֆինանսավորվող «ԲՀՊՏ-ների միջև էկոլոգիական միջանցքների ստեղծում» ծրագրի շրջանակներում: ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղը հարավային Հայաստանում (սկսած «Խոսրովի անտառ» պետական արգելոցից մինչև Իրանի Իսլամական Հանրապետության սահման) իրականացվող էկոմիջանցքի ստեղծման ծրագրի շրջանակներում ավարտել է կովկասյան ընձառյուծի, գորշ արջի, հայկական մուֆլոնի և բեզուարյան այծի ապրելավայրերի քարտեզագրման աշխատանքները, կատարվել է էկոմիջանցքի սահմաններում գտնվող թիրախային համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում: Հայաստանի Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում գտնվող 26 թիրախային համայնքներում իրականացվել են մի շարք փոքր դրամաշնորհների ծրագրեր: Խաչիկ համայնքի հետ կնքվել է բնապահպանական պայմանագիր, որի արդյունքում բնապահպանական, գյուղատնտեսական և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար տասը տարվա ընթացքում համայնքին ամեն տարի կտրամադրվեն ֆինանսական աջակցություն և գյուղական տեխնիկա՝ գյուղատնտեսական աշխատանքները խթանելու նպատակով: Նման բնապահպանական պայմանագրեր նախատեսվում է կնքել թիրախային այլ՝ հիմնականում սահմանամերձ համայնքների հետ:

«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ԳՄՀԸ (GIZ) ֆինանսական աջակցությամբ սկսվել են ԲՀՊՏ-ներում տեղեկատվական բազայի և մոնիթորինգային համակարգի ստեղծման աշխատանքները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

«Խոսրովի անտառ», «Շիկահող» պետական արգելոցներում, «Արևիք» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Ջանգեզուր» պետական արգելավայրում ԲՀՀ (WWF) և մի քանի այլ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են խոշոր կաթնասունների (կովկասյան ընձառյուծ, հայկական մուֆլոն, բեզուարյան այծ), անգղների, հայկական իժի, Դարևակու իժի հաշվառման և մոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքներ:

Վերջին տարիներին ազգային պարկերի ստեղծումը դրական ազդեցություն է թողել թռչնաֆաունայի վրա: Այսպես՝ Հայաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող «Արփի լիճ» ազգային պարկի հիմնադրումը մեծ նշանակություն ունեցավ բնադրող և չվող ջրաճահճային թռչնատեսակների համար: «Արևիք» ազգային պարկի ստեղծման շնորհիվ հատկապես բարելավվել է հավազգիների վիճակը, կայունացել է Ուլարի (*Tetraogallus caspius*) և Կովկասյան մարեհավի (*Lyrurus mlokosiewiczii*) պոպուլյացիաների թվաքանակը: Բացի այդ, տարածքում բնադրում են անտառաբնակ և ժայռաբնակ այնպիսի գիշատիչ թռչուններ, ինչպիսիք են՝ Փոքր արծիվը (*Clanga pomarina*), Կրետակերը (*Pernis apivorus*), Քարարծիվը (*Aquila chrysaetos*), Մորուքավոր անգղը (*Gypaetus barbatus*), Սապսանը (*Falco peregrinus*): Վերջին տարիներին աճել է նաև Սև անգղի (*Aegypius monachus*) թվաքանակը, որի եզակի բնադրող պոպուլյացիան պահպանվել է «Խոսրովի անտառ» արգելոցում: Վերջին տասնամյակում բնապահպանական միջոցառումների շնորհիվ հաջողվեց խթանել սև անգղի պոպուլյացիայի աճը և հասցնել այն մինչև 14 զույգ:

2016 թ. մեկնարկել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում բեզուարյան այծի պոպուլյացիայի մոնիթորինգ, ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերի մոնիթորինգ» ծրագիրը, որը ֆինանսավորել է ԿԲՀ-ն (CNF) և իրականացվում է ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ համագործակցելով բնապահպանության նախարարության հետ:

ԲՀՀ-ների, Հայաստանի բուսական, կենդանական աշխարհի կադաստրների ստեղծման և վարման նպատակով 2016 թվականին Հայաստանի բնապահպանության նախարարությանը ESRI ընկերության կողմից տրամադրվել են ArcGIS for Desktop Standard, ArcGIS for Desktop Advanced, ArcGIS 3D Analyst for Desktop, ArcGIS Spatial Analyst for Desktop ծրագրային փաթեթները: Բանակցություններ են ընթանում մի շարք միջազգային բնապահպանական կազմակերպությունների հետ՝ ԲՀՀ-ներում տեղեկատվական բանկի ստեղծման և կադաստրների վարման աշխատանքներն ապահովելու նպատակով:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում 2012 թվականից ներդրված է Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական (ARPIS) համակարգը, որի միջոցով իրականացվում են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

գործառույթները: Կոմիտեն պատրաստակամություն է հայտնել 2018 թ. անվճար դասընթացներ կազմակերպել՝ ARPIS համակարգից օգտվելու համար:

ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարումն ապահովելու համար անհրաժեշտ է լուծել տարածքների պահպանության կայուն և նպատակային ֆինանսավորման հարցը: ԳԷՀ/ՄԱԶԾ «Հայաստանում պահպանվող տարածքների կայուն ֆինանսական կայունության խթանում» ծրագրով (2009-2017 թթ.), որի նպատակն է ամրապնդել Հայաստանի պահպանվող տարածքների երկարաժամկետ ֆինանսական կայունությունը, ՀՀ կառավարության միջկառավարական ֆինանսական և տեխնիկական համագործակցության համաձայնագրերի շրջանակներում և միջազգային ու դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ԿԲՀ (CNF) միջոցով մշակվում և կնքվում են դրամաշնորհային պայմանագրեր՝ ԲՀՊՏ-ներին ֆինանսապես աջակցելու համար:

«Պահպանվող տարածքների աջակցության ծրագրերի» ֆինանսավորման միջոցով իրականացվում են կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ, մշակվում են կառավարման պլաններ, կազմակերպվում են մասնագետների վերապատրաստման դասընթացներ, տրամադրվում են նյութատեխնիկական միջոցներ: Միայն 2018 թվականին ԿԲՀ-ն մոտ 950 հազար եվրոյին համարժեք գումար է ներդրել պահպանվող տարածքներում կառավարման ու պահպանության ժամանակակից, նորարարական տեխնոլոգիաների ու լուծումների ներդրման, էկոտորիզմի զարգացման խթանման ու կենսաբազմազանության մոնիթորինգի գործընթացներում: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աջակցության ծրագրի» (2015-2017 թթ.) ֆինանսական ռեսուրսները տրամադրվում են պահպանվող տարածքում հիմնական գործառույթների իրականացման, աշխատավարձերի բարձրացման, տեխնիկական միջոցների և հակահրդեհային սարքավորումների ձեռքբերման, զբոսաշրջային ծրագրերի, մոնիթորինգի և հանրային իրազեկման համար: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աջակցության ծրագրի (2016-2018 թթ.) ֆինանսական ռեսուրսները տրամադրվում են ազգային պարկի երկարաժամկետ գործունեության պլանի մշակման, պարկի գոտևորման, կենսաբազմազանության մոնիթորինգի, զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման, աշխատակիցների խրախուսման, պահանջվող նյութատեխնիկական կարիքների համալրման համար: «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աջակցության ծրագրի (2016-2018 թթ.) ֆինանսական ռեսուրսները տրամադրվում են ազգային պարկի կայացման, տրանսպորտային միջոցների և սարքավորումների ձեռքբերման, մասնագիտական վերապատրաստման, աշխատակիցների խրախուսման համար: «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի դրամաշնորհային պայմանագրի (2014-2017 թթ.) ֆինանսական ռեսուրսները տրամադրվում են գործառնական ծախսերի,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

մասնագիտական վերապատրաստման, ՊՈԱԿ-ի աշխատակիցների խրախուսման, պահանջվող նյութատեխնիկական կարիքների համալրման համար:

Ակնհայտ է, որ ԲՀՊՏ-ների երկարաժամկետ կառավարումն ավելի շատ ծախսեր է պահանջում, քան եկամտի հնարավորություններ տալիս: Տնտեսական շահույթներ, որոնք կարող են լինել ուղղակի կամ անուղղակի, մշտական կամ միանգամյա, հնարավոր է ձեռք բերել ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարումից: Տնտեսական շահույթի ստացման օրինակ է զբոսաշրջության և կանոնակարգված ռեկրեացիայի կազմակերպումը:

ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղը Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS) ֆինանսական աջակցությամբ սկսել է ԲՀՊՏ-ներում և հարակից տարածքներում էկոտուրիզմի զարգացման և շուկայավարման ուղեցույցի մշակման աշխատանքները:

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ում 2016 թվականից սկսվել են էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոնի ստեղծման աշխատանքները, որի նպատակն է Հայաստանի ԲՀՊՏ-ների մասին համապատասխան տեղեկատվության տրամադրումը զբոսաշրջիկներին: Կենտրոնն ամբողջովին կահավորված է, առկա են ԲՀՊՏ-ների քարտեզները, բրոշյուրներ, տուրիստական ուղեցույցներ և էկոտուրիզմի մատուցման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Հայաստանի բնապահպանության նախարարի հանձնարարությամբ մշակվել և նախարարության ստորաբաժանումների քննարկմանն է ներկայացվել «Հայաստանում էկոտուրիզմի զարգացման հայեցակարգի» նախնական տարբերակը, որտեղ վեր են հանվել առկա խնդիրները, լուծման ուղիները, զարգացման հնարավորությունները, անհրաժեշտ ֆինանսական միջոցները և տեսլականը: Նախագծի վերաբերյալ արված դիտողությունների հիման վրա նախագիծը կլրամշակվի և կներկայացվի որպես ամբողջական փաստաթուղթ:

ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղի միջոցով «Դիլիջան» ազգային պարկի տարածքում ավարտվել են կովկասյան ազնվացեղ եղջերուների պահման համար 10 հա տարածքով ազատավանդակի կառուցման աշխատանքները, որը հետագայում կծառայի որպես զբոսաշրջիկների այցելության վայր: Սկսվել են եղջերուների պահման և բազմացման կենտրոնի գրասենյակի (ներառյալ տեղեկատվական կենտրոնը) կառուցման աշխատանքները:

Բոլոր արգելիցներում և ազգային պարկերում իրականացվել են անձնակազմի ունակությունների բարձրացման և վերապատրաստման աշխատանքներ՝ սեմինարներ, մոնիթորինգի ներդրման համար կիրառական դասընթացներ: Հզորությունների զարգացման նպատակով ԲՀՊՏ-ներն ապահովվել են անհրաժեշտ սարքավորումներով, ամենագնաց ավտոմեքենաներով, համակարգիչներով և այլն: ԲՀՊՏ-ների հարակից համայնքներում իրականացվել են բնակչության իրազեկվածության բարձրացման աշխատանքներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Կենսաբազմազանության In-situ պահպանության խնդիրները լուծում են ստանում «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» (Բեռն, 1979թ.) կոնվենցիայի շրջանակներում բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքների՝ Էմերալդ ցանցի սայթերի առանձնացման միջոցով: Նման տարածքների որոշումը և առանձնացումը նպատակ ունեն հատուկ պահպանության ռեժիմների միջոցով ստեղծել Եվրոպայի տարածաշրջանում պահպանության համընդհանուր ցանց՝ վայրի բուսական և կենդանական տեսակներին սպառնացող վտանգները մեղմացնելու համար: 2013 թ. Հայաստանում մեկնարկել է «Էմերալդ ցանց-Փուլ II» ծրագիրը, որը նպատակաուղղված էր ցանցի վերջնական ձևավորմանը: Ներկայումս գնահատվել և վերանայվել են նախկինում առաջարկված բոլոր պոտենցիալ տարածքները, և առանձնացվել են 23 տարածքներ: Ճշգրտվել են, Բեռնի կոնվենցիայի 4-րդ բանաձևի պահանջներին համապատասխան, Հայաստանի «Էմերալդ ցանցի» պոտենցիալ տարածքներում ընդգրկված բնակմիջավայրերը, իսկ 6-րդ բանաձևին համապատասխան՝ բույսերի և կենդանիների տեսակները: 2018 թ. դրությամբ Հայաստանից առաջարկված 23 տարածքները զբաղեցնում են 1033719.5 հա մակերես (երկրի տարածքի 34.7 %-ը) և ներառում են մեկ պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ», 4 ազգային պարկ, 4 արգելավայր, 8 ԿԹՏ, նախատեսվող «Ջերմուկ» և «Տաթև» ազգային պարկերը, 4 տարածք, որոնք չունեն պահպանման կարգավիճակ, Բեռնի կոնվենցիայի 4-րդ բանաձևում ընդգրկված բնակմիջավայրերից Հայաստանում առկա են 65-ը, Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևում ընդգրկված տեսակներից Հայաստանում առկա են 148 տեսակ, այդ թվում՝ անոթավոր բույսեր՝ 8 տեսակ, անողնաշար կենդանիներ՝ 8 տեսակ, սողուններ՝ 3 տեսակ, թռչուններ՝ 109 տեսակ, կաթնասուններ՝ 6 տեսակ:

ԿԹՏ-ի որոշումը և առանձնացումը Հայաստանում կատարվել են «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի բույսերի պաշտպանության գլոբալ ռազմավարության պահանջների իրականացման նպատակով 2010-2012 թթ., որի ընթացքում, հաշվի առնելով ԿԹՏ-ի որոշման միջազգային չափանիշները, երկրում առանձնացվել է 18 ԿԹՏ:

ԿԹՏ-ները միջազգային կարևորության տարածքներ են, որոնք ընդգրկում են մեկ կամ մի քանի թռչնատեսակների պոպուլյացիայի նշանակալի մասը: ԿԹՏ-ների որոշումը և առանձնացումը Bird Life International միջազգային կազմակերպության կողմից առաջարկված խոշոր միջազգային ծրագրի նպատակային խնդիրներն են: ԿԹՏ-ները թռչունների բնադրման, ծմեռման և չուի ժամանակ հանգրվանի տեղանքներն են: Դրանք կարող են ընդգրկել տարբեր չափի տարածքներ՝ մի քանի հազար հեկտարից մինչև հարյուր հազարավոր հեկտարներ, կարող են չունենալ պահպանվող տարածքի կարգավիճակ: Հայաստանում առանձնացված են 18 ԿԹՏ-ներ, որոնցից 12-ը կապված են անտառային լանդշաֆտների հետ:



ԲՀՊՏ-ների համակարգից դուրս գտնվող և Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակների առավելագույն ընդգրկումը ԲՀՊՏ-ների համակարգ կարևոր խնդիր է: Հաշվի առնելով Հայաստանի ԲՀՊՏ-ներում կենսաբազմազանության առկա ներկայացվածությունը և ԲՀՊՏ-ների համակարգից դուրս Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների բնակավայրերը՝ առանձնացվել են խտացված արեալներով և կենսաբազմազանության հարստությամբ աչքի ընկնող մի շարք տարածքներ, որոնք նպատակահարմար է ապագայում ընդգրկել ԲՀՊՏ-ների համակարգ: Հատկանշական է, որ նման կուտակումներ հայտնաբերվել են հանրապետության այն տարածքներում, որտեղ ԲՀՊՏ-ներ գոյություն չունեն, ինչն առավել արդիական է դարձնում դրանց ստեղծման անհրաժեշտությունը: Ապագայում Հայաստանի ԲՀՊՏ-ների այսպիսի համակարգի առկայությունը ոչ միայն կապահովի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների առավելագույն ընդգրկումը և էկոհամակարգերի ամբողջականությունը, այլև հիմքեր կստեղծի ազգային էկոլոգիական ցանցի հիմնման համար:

2. Բարելավել կենսաբազմազանության ex-situ պահպանությունը գենբանկերի և այլ հավաքածուների ընդլայնմամբ, վայրի կենդանիների և բույսերի բազմացումն իրականացնող տնտեսությունների ստեղծմամբ՝ համապատասխան տեխնոլոգիաների կիրառման միջոցով

Երկրի համար մեծ կարևորություն ունեցող ագրոկենսաբազմազանության պահպանությունը կենսաբազմազանության ex-situ պահպանության հիմնական թիրախն է: Այն նպատակաուղղված է գենետիկական բազմազանության՝ տեսակների, սորտերի և գենետիկական նյութի վերարտադրության համար բնական միջավայրից դուրս այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք կապահովեն գենետիկ ռեսուրսների կայուն քանակը և բնական վիճակին մոտ որակը:

«Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» սահմանել է պետական ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները: Բուսաբուծության ճյուղի զարգացման գերակայությունների թվում է այգեգործության զարգացումը՝ ինտենսիվ պտղատու այգիների ստեղծմամբ, խաղողի մշակովի և վայրի գենետիկական ռեսուրսների պահպանմամբ, գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ցեղակիցների գենետիկական ռեսուրսների պահպանությամբ ու կայուն օգտագործմամբ:

Պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության և օգտագործման ոլորտում իրականացվող ծրագրերի, կենդանի և սերմնային հավաքածուներում, գենբանկերում պահպանվող տեսակների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 8-րդ նպատակային խնդրում:

Վայրի կենդանիների և բույսերի բազմացումն իրականացնող տնտեսությունների ստեղծումը և դրանց գործունեության խթանումը նպատակ ունեն ապահովել անհետացման եզրին գտնվող վայրի բույսերի և կենդանիների քանակների



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

վերականգնումն ու վերարտադրությունը, վայրաճ և պտղատու տեսակներով տարածքների անտառապատումն ու բնակավայրերի կանաչապատումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և մշակութային նշանակություն ունեցող տեսակների արտահանումը/վաճառքը: Այսպես՝ 2015 թ. ԲՀՀ (WWF)-Շվեյցարիայի ֆինանսավորած ծրագրի շրջանակներում Երևանի բուսաբանական այգում հիմնվել է տնկարան՝ հազվագյուտ և վտանգված անտառատեսակների աճեցման նպատակով, և հետագայում տնկիները վերատնկվել են Հայաստանի բնական անտառային տարածքներում: Հայաստանի Ծառատունկ ծրագիրն ունի 4 ժամանակակից տնկարան՝ 18 հա տնկարանային տարածքով, որտեղ աճեցվում են գեղազարդային, մշտադալար, պտղատու շուրջ հիսուն ծառատեսակ, ընդհանուր առմամբ՝ մոտ 200 հազար տնկի, որոնցում կան նաև Հայաստանի Կարմիր գրքում գրանցված ծառատեսակներ: Կազմակերպվում է դրանց վերատնկումը Հայաստանի 70 վայրերում՝ համայնքային կենտրոնների, դպրոցների, եկեղեցիների և հարյուրավոր գյուղերի հողատարածքներում: Ուրցածորի Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի տնկարանում տնկիներն աճեցվում են պտղատուների վայրի էնդեմիկ ցեղատեսակներից հավաքված սերմերից, ինչն ապահովում է կենսաբազմազանության անխաթարությունը դրանց վերատնկման ժամանակ:

Անտառային ծառաթփատեսակների արհեստական բազմացումն իրականացվում է մի շարք պետական և մասնավոր տնկարաններում, օրինակ՝ Հրազդան քաղաքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ին պատկանող տնկարանում տնկանյութն աճեցվում է փակ արմատային համակարգով, ինչն ավելի բարձր կաշտոկանություն է ապահովում, քան սովորական եղանակը:

Հայաստանի կրթության և գիտության նախարարության «Խաղողապտղագինեգործության» գիտական կենտրոնի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում 2016 թ. Արարատի մարզի Այգավան գյուղի ֆերմերային տնտեսությունում հիմնվել է տնկարան՝ մոտ 195 խաղողի սորտերի, կլոնների և ձևերի ներգրավմամբ: Փոքր տնկարան է հիմնվել նաև Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Մերձավան համայնքի ֆերմերային տնտեսությունում՝ մոտ 15 սորտերի ներգրավմամբ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը նպատակաուղղված են կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ գյուղատնտեսական մշակաբույսերի, գեղազարդային և դեղատու բույսերի արժեքավոր սորտերի, ձևերի առողջ տնկանյութի արագ ու զանգվածային արտադրության գործընթացի ապահովմանը: Բազային ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի արդյունքում կազմակերպվել է կարտոֆիլի մոտ 30 սորտերի վիրուսազերծ տնկանյութի ստացում, վերականգնվել են խաղողի 10 ավանդական սորտեր, որոնք աստիճանաբար դուրս են մղվում մշակությունից և ներկայումս հանդիպում են առանձին վազերի տեսքով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Կենդանատեսակների ex-situ պահպանությունն իրականացվում է մի քանի ուղղություններով: Առավել զարգացած է ձկնաբուծությունը, որը լայնորեն տարածված է հանրապետությունում և ունի տնտեսական մեծ նշանակություն: Հիմնականում Արմավիրի և Արարատի մարզերի բնական և արհեստական ջրամբարներում պահվում և բազմացվում են թառափազգիներ, ծածանազգիներ, ծիածանափայլ իշխան, կարմրախայտ, Սևանի իշխան (գեղարքունի, ամառային բախտակ): «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի» նպատակն է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնումը, որն իրականացվում է ցանցավանդակներում էնդեմիկ իշխանի աճեցման և համապատասխան փուլում դրա որոշակի քանակը լճում վերաբնակեցնելու միջոցով: Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքում «Սևանի իշխան» ՓԲԸ-ն հիմնել է ձկնարտադրության համալիր՝ մանրածկան արտադրության նպատակով: Ըստ հաստատված ծրագրի՝ հիմնադրամը յուրաքանչյուր տարի լիճ է բաց թողնելու արտադրված մանրածկան քանակի շուրջ 25 %-ը:

Կտրուկ պակասել են Սևանա լճի էնդեմիկ ձկների՝ կողակի և բեղլուի պաշարները՝ գետերի վերին հոսանքներում ձվադրավայրերի գրեթե իսպառ վերացման պատճառով: Կողակի պահպանությունը հատկապես կարևոր է, քանի որ այն Սևանա լճում էվորոֆագումը զսպող գործոն է: «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման ռազմավարությունից բխող 2018-2023 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում 2018 թ. Հայաստանի պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցների ֆինանսավորմամբ բնապահպանության նախարարության կողմից սկսվել են կողակի վերարտադրման ծրագրի համար նախնական հետազոտությունները:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում ստեղծվել է «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»՝ կենդանատեսակի պոպուլյացիայի վերականգնման համար: 2018 թ. մարտին Իրանից Հայաստան բերված երեք եղջերուներից երկուսը էգ են, մեկը՝ որձ: Եղջերուների հաջորդ խմբի տեղափոխությունը Հայաստան նախատեսվում է 2018 թ. երկրորդ կեսին: 2018 թ. հունիսին կենտրոնում ծնվել է առաջին ծագը: Ծրագրի ֆինանսական աջակիցներն են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը՝ KfW Զարգացման բանկի միջոցով, ԲՀՀ (WWF) Գերմանիան, ԿԲՀ (CNF), Անդրսահմանային միացյալ քարտուղարությունը (TJS) և HSBC բանկ Հայաստանը:

2017 թ.-ից Հայաստանի ԳԱԱ ԿՀԳԿ-ի և ԱՄՆ-ի Սենթ Լուիսի կենդանաբանական այգու միջև կնքված պայմանագրի շրջանակներում ստեղծվել է հազվագյուտ և անհետացող սողունների տեսակների պահման և բազմացման կենտրոն, որը նախատեսում է հետագայում ռեինտրոդուկցիայի միջոցով վերականգնել սողունների վտանգված պոպուլյացիաները:

2017 թ. ՀՀ կառավարության N 53 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել «ՀՀ-ում տավարի հոլշտին և շվից ցեղերի, կիսանրբագեղմ կորիդելի



տիպի և մուֆֆոլկ ցեղի ոչխարների տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման» ծրագրերը, ինչը թույլ կտա ստանալ բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված զտարյուն կենդանիներ՝ տրամադրելով հանրապետության այլ տավարաբուծական տնտեսությունների:

Հայաստանի ԳԱԱ ԿՀԳԿ-ում, հազվադեպ և անհետացող կենդանիների պահպանման և վերարտադրման նպատակով, ստեղծվել է մուֆլոնի և ընտանի ոչխարի հիբրիդային պոպուլյացիա, մշակվել է արարատյան որդան կարմիրի (*Porphirophora hamelii* Brandt) արհեստական պայմաններում բազմացման եղանակ, ինչը կարող է հիմք հանդիսանալ տեսակի օգտագործումն ապահովելու համար: 2018 թ. «Vordan Karmir: Safeguarding of the Armenian Cochineal, Transmission of Knowledge, Skills and Practices Related to it» անվանումով հայտ է ներկայացվել Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (UNESCO)՝ տեսակի վերաբերյալ տվյալների թարմացման, պահպանության և տնտեսական օգտագործման հնարավորությունների գնահատման նպատակով:

Հայաստանում մյուս հեռանկարային տեսակը թթենու մետաքսագործն է՝ Շերամը, որը Հայաստան է ներմուծվել VI–VIII դարերում: Մինչև անցած դարի 80-ական թվականները Հայաստանում գործել են շերամապահական կայաններ: Այժմ անհատ-ձեռներեցների կողմից նորից հետաքրքրություն է առաջացել այս միջատի և նրա հյուսած մետաքսաթելի նկատմամբ: Նույնիսկ ստեղծվել է գրահակայուն բաճկոնի փորձնական նմուշ: Սակայն պետական մակարդակով հարցի կարևորությունը դեռ ուշադրության չի արժանացել:

3. Որոշել և դասակարգել օտարածին բուսա-կենդանաբուսականները, գնահատել դրանց ներկա վիճակը, բացահայտել կարևոր բնական էկոհամակարգերի համար առաջացած վտանգները, ներթափանցման ճանապարհները և տեղաշարժման վերահսկման միջոցները:

Օտարածին բուսա- և կենդանաբուսականների, ինչպես նաև միկրոօրգանիզմների, մարդու գործունեության արդյունքում բնական համակեցություններ ներթափանցումը կենսաբանական աղտոտում է, որի հետևանքները, ի տարբերություն այլ ազդեցությունների, գրեթե անդառնալի են: Օտարածին տեսակներից շատերը բնութագրվում են բարձր հարմարվողականությամբ, որը թույլ է տալիս ներխուժել նոր էկոհամակարգեր: Բազմացման մեծ արագության շնորհիվ կտրուկ աճում է դրանց քանակը, որը բերում է աբորիգեն տեսակների ճնշմանը կամ դրանց դուրս մղմանը:

Հայաստանում վերջին տարիների հետազոտությունների արդյունքում բացահայտված է, որ ինվազիվ տեսակների պոպուլյացիաների խտությունը բարձրացել է: Օտարածին տեսակների ներխուժման հետևանքով բնական համակեցություններում տեղի է ունենում կենսաբազմազանության տեսակային կազմի փոփոխություն՝ աբորիգեն տեսակների դուրս մղումը բնական աճելավայրերից: Ըստ գիտական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

եզրակացությունների՝ օտարածին տեսակների ներթափանցմանը նպաստում են տարածքների մարդածին փոխակերպումը և ջերմաստիճանի բարձրացման միտումները:

Հայաստանի տարբեր էկոհամակարգեր օտարածին տեսակների ներթափանցման և դրանց տարածվածության սպառնալիքի պատճառն անմշակ, լքված հողատարածքների առկայությունն է, դրանց արագ բազմացման համար բարենպաստ պայմանները, շատ դեպքերում կլիմայի փոփոխության հետևանքը և մոնիթորինգի ու հսկողության համակարգերի անբավարար իրականացումը: Սպառնալիքների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոններն են՝ վնասի տնտեսական և բնապահպանական գնահատման բացակայությունը, օտարածին տեսակների ներթափանցման դեմ միջոցառումների ծրագրի բացակայությունը:

1960 թ.-ից ի վեր Հայաստանի ձկնատեսակների թիվը 24-ից հասել է մինչև 40 տեսակի: 2010 թ. առաջին անգամ Սևանա լճում հայտնաբերվել են ինվազիվ հայկական տառեխիկ (*Alburnoides bipunctatus armeniensis*) և ամուրյան նրբաձկնիկ (*Pseudorasbora parva*) տեսակները: Օտարածին արծաթափայլ կարասը (*Carassius auratus*), թեփուկավոր ծածանը (*Cyprinus carpio*) լիճ են ներթափանցել 20-րդ դարում: Այս տեսակները լճում էնդեմիկ ձկնատեսակների կերային մրցակիցներ են: Սակայն Սևանա լճում նշված օտարածին ձկներով և նրանց մանրաձկներով սնվում է իշխանը: Այսպիսով, պատահական ներմուծված ձկնատեսակներն էկոհամակարգի համար ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական նշանակություն: Սևանի ջրհավաք ավազանի գրեթե բոլոր գետերում արդեն հանդիպում են տառեխիկի առանձնյակներ, որը դարձել է դոմինանտ տեսակ և զբաղեցնում է բեղլուի և կողակի գետային ու գետալճային ձևերի էկոլոգիական խորշերը: Սևանա լճի ջրհավաք ավազանում գործող ձկնաբուծական տնտեսություններում բուծվում կամ պահվում է ծիածանափայլ իշխանը (*Parasalmo mikissa*), որը Սևանա լիճ կամ ավազանի գետեր ներթափանցման դեպքում կարող է մրցակցության մեջ մտնել էնդեմիկ ձկնատեսակների հետ:

Արաքս գետում 2012 թ. գրանցվել են Հայաստանի համար նոր երեք ձկնատեսակներ՝ կասպիական կարմրակնը (*Rutilus caspicus*), անդրկովկասյան գուստերան (*Blicca bjoerkna transcaucasica*) և սուդակը (*Sander lucioperca*): Նշված տեսակներից 2014 թ. «Արևիք» ազգային պարկով հոսող Մեղրի գետի վերին հոսանքում հանդիպել են անդրկովկասյան գուստերան և սուդակը: Կասպիական կարմրակնի և անդրկովկասյան գուստերա տեսակների ներթափանցումը Արաքսի գետավազանի Մեծամոր գետ կամ Ախուրյանի ջրամբար կարող է Հայաստանի էնդեմիկների՝ հայկական գուստերայի (*Blicca bjoerkna derjavini*) և հայկական կարմրակնի (*Rutilus rutilus schelkovnikovi*) հետ խաչասերման պատճառ դառնալ: Անհրաժեշտ է պահպանվող տարածքի կարգավիճակ տալ Մեծամոր գետում հայկական կարմրակնի հիմնական ապրելավայրի և ձվադրավայրի հատվածներին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2017 թ. Հայաստանի ջրերում առաջին անգամ հայտնաբերվել է գետային օձաձուկ (*Anguilla anguilla*) տեսակը: Ենթադրվում է, որ այն Կասպից ծովից Հայաստանի ջրակալներ ներթափանցել է ինքնուրույն ճանապարհով:

Հայաստանի ջրային էկոհամակարգերի մեծ մասի ձկնաշխարհը վերջին տասնամյակներում շարունակում է կրել էական քանակական և որակական փոփոխություններ, որոնց արդյունքում ընդհանուր կենսաբազմազանության աճի հետ միասին փոխվում է ձկնային վտառների որակական կազմը: Տեղաբնակ տեսակները հաճախ զիջում են իրենց արդյունագործական նշանակությունն այնպիսի էվրիբիոնտ տեսակներին, ինչպիսիք են՝ արծաթափայլ կարասը, ամուրյան նրբաձկնիկը և այլ տեսակներ: Այսպես, 20-րդ դարի 70-ական թվականներին հյուսիսային Հայաստանի Աղստև և Դեբեդ գետավազաններում բնակվել է ձկան ընդամենը 7 տեսակ: Հետագայում՝ 1990-2005 թթ., կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձկնային բազմազանությունը փոխվել է՝ հասնելով մինչև 13 տեսակի, իսկ 2017 թ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձկնատեսակների քանակն աճել է մինչև 19 տեսակ: Դրա պատճառը մասնավոր փոքր ֆերմաների կողմից ներկրված ձկների պատահական ներթափանցումն է բնություն կամ սիրողական ձկնորսությամբ զբաղվող մարդկանց կողմից նոր ձկնատեսակների տարածումը դրանց համար ոչ բնորոշ գետերում: Հարկ է նշել, որ գետերում արժեքավոր ձկնատեսակների ապրելավայրերի քանակը հիմնականում կրճատվել է՝ ապօրինի ձկնորսության, փոքր ՀԷԿ-երի շահագործման, կենցաղային կեղտաջրերով աղտոտման և գյուղատնտեսական նպատակներով օգտագործման պատճառով:

Գյուղատնտեսական նպատակներով յուրացվող տարածքների, առևտրի մասշտաբների մեծացման շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ինչպես ինվազիվ, այնպես էլ տեղաբնակ որոշ տեսակների տարածման համար: Այսպես՝ 2016 թ. Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքում գրանցվել է զատկաբզեզը (*Harmonia axyridis* Pall.), որի ներթափանցման ուղիները հայտնի չեն: Ենթադրվում է, որ դա տեղի է ունեցել Վրաստանից մրգեղենի ներմուծման միջոցով: Ներկայումս բզեզն արագորեն տարածվում է Հայաստանում: 2018 թ. դիտարկումներով այն հայտնաբերվել է նաև Հայաստանի կենտրոնական և հարավային շրջաններում (Սևանա լճի ավազան, Գոռավան, Նորավանք): 2018 թ. Թեղուտի հանքավայրի շրջակայքում գրանցվել է տեսակի զանգվածային բռնկում: Այսպիսով, արձանագրվել է, որ տեղի է ունենում ինվազիվ այդ տեսակի արագ տարածում:

Ինվազիվ տեսակների ներթափանցման և տարածման գործընթացի կանխարգելման անհրաժեշտությունը և հնարավոր միջոցները դեռևս պատշաճ չեն գիտակցվում տարբեր մակարդակներում, այդ թվում՝ որոշում ընդունողների շրջանակներում: Որոշ չափով մաքսային կետերում վերահսկվում է միայն կարանտինային տեսակների և գյուղատնտեսական մակարույծների ներխուժումը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանում կարանտինային միջատների ցանկն ընդգրկում է 8 տեսակ, իսկ ենթադրվող քանակությունը պահպանվող մթերքների համար ևս 8 տեսակ է, ջերմատնային բույսերի պոտենցիալ վտանգավոր կարանտին վնասատուները 7 տեսակ են: Յուրաքանչյուր տարի Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հրամանով մարզային տեսուչները երկրի ամբողջ տարածքում իրականացնում են բուսասանիտարական իրավիճակի մոնիթորինգ, որի շրջանակներում կատարվում են շուրջ 6000 նմուշառում և նմուշների լաբորատոր փորձաքննություն: Բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների նոր օջախներ հայտնաբերելու դեպքում նշված տարածքում Հայաստանի կառավարության կողմից հայտարարվում է կարանտին, սահմանազծվում է վնասակար օրգանիզմներով վարակված տարածքը, և Հայաստանի գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում են տվյալ վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ:

Վերջին տարիներին Հայաստանի բուսաբանների կողմից ինվազիվ և էքսպանսիվ բույսերի առաջնային գնահատման և ներկա տարածման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքները վկայում են որոշ տեսակների տարածման սահմանների զգալի ընդլայնման և դրանց պոպուլյացիաների խտության բարձրացման մասին: Առավել տագնապալի է 77 ազրեսիվ տեսակների տարածումը, որոնցից 38-ն արդեն ներթափանցել են բնական էկոհամակարգեր և սպառնում են տեղական բուսական բազմազանությանը:

Հայաստանի բուսաբանության ինստիտուտում իրականացվող ինվազիվ և էքսպանսիվ առավել մտահոգիչ և վտանգավոր բուսատեսակների ուսումնասիրությունները նպատակաուղղված են Հայաստանի տարածքում դրանց հետագա տարածումը գնահատելու և մոդելավորելու, ինչպես նաև բնական էկոհամակարգերի համար վտանգները գնահատելու և վերահսկելու միջոցառումներն առաջարկելուն: 2015 թվականին Հայաստանում որպես նոր ցեղ հայտնաբերվել է *Grindelia squarrosa* (Pursh) Dunal տեսակը, որը, լինելով լայն տարածված ԱՄՆ-ում և Հարավային Կանադայում, ներխուժել է Բալկանյան թերակղզի, Մերձբալթյան երկրներ, Նախակովկաս, Հարավային Ասիա և համարվում է ինվազիվ տեսակ Հայաստանի համար: Կարմիրգրքային տեսակ Հոտոտ խաղողատերևը (*Clematis vitalba*) վերջին տարիներին դրսևորում է ինվազիվ պոտենցիալ՝ արագ տեմպերով տարածվելով Իջևանի տարածաշրջանում: Նշված երկու տեսակները պետք է ներառվեն Հայաստանի բույսերի ինվազիվ տեսակների ցանկ:

2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումը Եվրասիական տնտեսական միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկի հաստատման մասին, համաձայն որի, Եվրասիական տնտեսական միության տարածքում սահմանափակ տարածում ունեցող կարանտինային վնասակար օրգանիզմների ցանկ ներառվել են Դառնախոտ սողացող (*Acroptilon repens* (L.) DC.), Ամրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*



L.) և Գաղձ ցեղին (*Cuscuta* spp.) պատկանող տեսակներ: Դառնախոտ սողացող և Ամրոզիա օշինդրատերև տեսակները հանդիպում են Հայաստանի խախտված էկոհամակարգերում, սակայն ինվազիվ պոտենցիալ դեռ չեն ցուցաբերում: Գաղձ ցեղին պատկանող և Հայաստանի տարածքում հանդիպող երեք տեսակներից երկուսը՝ Գաղձ մերձեցված (*Cuscuta approximate* Bab.) և Գաղձ սովորական (*Cuscuta erithymum* (L.) Nath.), հանդիսանալով վտանգավոր ինվազիվ տեսակներ այլ երկրների համար, Հայաստանում շատ լայն տարածում չունեն: Գաղձ մերձեցվածը հանդիպում է մի շարք ֆլորիստիկ շրջաններում, իսկ Գաղձ սովորականը՝ միայն Լոռու և Իջևանի ֆլորիստիկ շրջաններում և ինտենսիվ տարածման միտում դեռ չեն ցուցաբերում, սակայն դա չի բացառում դրանց տարածվածության մոնիթորինգի անհրաժեշտությունը: Ինչ վերաբերում է երրորդ տեսակին՝ Գաղձ դաշտային (*Cuscuta campestris* Yunck.), ապա այն համարվում է ինվազիվ տեսակ և ներկայումս ինտենսիվ տարածվում է լեռնային գոտում՝ որպես պարագիտային բույս: Բոլոր տեսակների վերաբերյալ անհրաժեշտ է տարածվածության մոնիթորինգի անցկացում և դրանց ընդգրկումը սահմանափակ տարածում ունեցող կարանտինային վնասակար օրգանիզմների ցանկ, ինչը սննդամթերքի անվտանգության պետական ծառայության բուսասանիտարիայի տեսչության կողմից պատշաճ հսկողություն իրականացնելու դեպքում կնպաստի դրանց հետագա տարածվածության կանխարգելմանը:

Այսպիսով, չնայած ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածվածության և կենսաբանական հատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքներին, որոնք վկայում են օտարածին բուսական տեսակների տարածման վտանգի մասին, այդ տեսակների ներխուժման կանխարգելման և/կամ դրանց վերացնելու կամ սահմանափակելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները շատ սահմանափակ են և չեն նպաստում դրանց ներմուծման լիարժեք կանխմանը:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

- www.arlis.am; www.mnp.am; www.epiu.am; www.forestcommittee.am; forest-monitoring.am; www.armstat.am; www.mes.am; www.minagro.am; www.edu.am; www.cadastre.am; www.anau.am; www.ramsar.org/wetland/armenia; www.sczhe.sci.am/; www.sevanlake.am/en/the-problem-of-lake-sevan/; http://www.stf.am/; www.wrma.am; www.armmonitoring.am; www.dilijanpark.am; www.sevanpark.am;



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

www.khosrovreserve.am/; www.zangezurkh.am/; www.reservepark.mnp.am/; <http://smn.am/>;
<http://www.sczhe.sci.am/>; <http://www.botany.sci.am/>
www.mnp.am/images/files/nyuter/2014/july/Gnishik_Management-Plan_2014-2018_Oct_2013%20compressed.pdf; www.sgp.am/en/Projects?id=75;
http://www.enpi-fleg.org/site/assets/files/2173/ijevan_sanctuary_mp_-_arm.pdf;
<http://biodivers-southcaucasus.org/uploads/files/5b461247216e9.pdf>;
www.giz.de/en/worldwide/20319.html; www.mnp.am/am/post/1064;
www.mnp.am/uploads/1/1532697351Project_2018.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793715Xosrov-Paymanagir-DSH-18-07.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793551Dilijan-Paymanagir-DSH-18-04.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793752Arpi-Lich-Paymanagir-DSH-18-08.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793668Zangezur-Paymanagir-DSH-18-06.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793629APH-Paymanagir-DSH-18-05.pdf;
www.mnp.am/uploads/1/1519793504Sevan-Paymanagir-DSH-18-03.pdf;
www.kfw-entwicklungsbank.de/PDF/Evaluierung/Ergebnisse-und-Publikationen/PDF-Dokumente-E-K_EN/Kaukasus_TJS_2018_E.pdf; <https://tjsarmenia.blogspot.com/>;
<https://rm.coe.int/16806a6b73>, <https://www.epiu.am/naxagcer/irakanacvac-naxagcer/>;
http://ahpc.am/wp-content/uploads/2014/09/AHPC_Sevan-project.pdf;

Գնահատման մակարդակի հավաստիությունը

հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը

Հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում տվյալների սահմանափակ քանակով

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը

տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը

Ազգային նպատակային խնդիր 6.

Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կրճատելու կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշումները

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան

Առանց էական փոփոխությունների



Լրացուցիչ տեղեկատվություն. Յուրաքանչյուր երկրի համար տնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը և բնակչության սոցիալական խնդիրների լուծումն առաջացնում են բնապահպանական որոշ խնդիրներ, որոնց լուծման ուղիները կարող են լինել տարբեր՝ կախված կայուն զարգացման և կանաչ էկոնոմիկայի գաղափարներին պետության, համապատասխան կառույցների ու հանրության նվիրվածության աստիճանից և քաղաքական կամքից:

Հայաստանում բնապահպանական հիմնախնդիրները, մասնավորապես՝ կապված կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման հետ, տասնամյակների ընթացքում մնում են արդիական, քանի որ մեր երկրում հստակ արտահայտված է բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի կախվածությունը բնական ռեսուրսների մատչելիությունից: Չնայած արդյունաբերության ծավալների կրճատման հետևանքով նվազել է օդի, հողի և ջրի աղտոտման մակարդակը, սակայն շարունակվում են մեծ չափերի հասնող էկոհամակարգերի դեգրադացումը, կենսառեսուրսների գերօգտագործումը և տեսակների անհետացումը: Վերջին ժամանակներում կենսաբազմազանության վրա ուղղակի ճնշումների աճը պայմանավորված է կենսառեսուրսների (հատկապես՝ անտառների) գերշահագործմամբ, հողերի դեգրադացմամբ, հիդրոէներգետիկայի զարգացմամբ, հանքարդյունաբերական, գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների ծավալների զգալի ընդլայնմամբ, տուրիզմի զարգացմամբ: Նշված ճնշումների ազդեցությունն էլ ավելի է ուժեղանում, որը պայմանավորված է հասարակական-քաղաքացիական գործոններով՝ բնակչության կենսամակարդակի անկում, միջգերատեսչական համագործակցության պակաս, անկատար օրենսդրություն, հասարակության մեջ համապատասխան հոգեբանաբարոյական մթնոլորտի բացակայություն, էկոլոգիական դաստիարակության և կրթության ցածր մակարդակ:

Հիդրոէներգետիկա. Սպառնալիքի պատճառներն են.

1. փոքր՝ մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ընթացքում բնապահպանական ռիսկերի անտեսումը.
2. տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների խախտումը.
3. էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում փոքր ՀԷԿ-երի ազդեցության թերի գնահատումը:

2016 թ. դեկտեմբերի 29-ի N 53-36 ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ Հայաստանի հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգը, որը միտված է երկրում հիդրոէներգետիկ պաշարներն առավելագույնս և արդյունավետ օգտագործելուն: Թեև ընդունված հայեցակարգը սահմանում է հիդրոէներգետիկայի զարգացման ուղիները, սակայն չի անդրադառնում փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման ընթացքում բնապահպանական ռիսկերի կառավարմանը: Հանրապետությունում նախագծվող, կառուցվող և շահագործվող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

փոքր ՀԷԿ-երի մեծ մասը բնական ջրահոսքերի վրա տեղակայված դերիվացիոն տիպի կայաններ են:

2018 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրել 187 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմել է մոտ 366 ՄՎտ: 2017 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը փոքր ՀԷԿ-երի կողմից կազմել է շուրջ 862 մլն. կՎտժ, որը Հայաստանում արտադրված ամբողջ էլեկտրաէներգիայի (7762 մլն. կՎտժ) մոտ 11 %-ն է: Ըստ տրամադրված լիցենզիաների՝ 2018 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կառուցման փուլում են գտնվում ևս 31 փոքր ՀԷԿ՝ նախագծային մոտ 57 ՄՎտ գումարային հզորությամբ և 200 մլն. կՎտժ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ:

Հիդրոէներգետիկ ռեսուրսների օգտագործումը, թեև նպաստում է երկրում վերականգնվող էներգետիկայի ճյուղի զարգացմանը, ապահովում է CO₂ ջերմոցային գազերի դեպի մթնոլորտ արտանետումների կրճատումը, սակայն առաջացնում է բազմաթիվ ռիսկեր՝ կապված կենսաբազմազանության ներկայացուցիչների բնական ապրելավայրերի կորստի, ջրային ռեսուրսների գերօգտագործման, լանդշաֆտների փոփոխության, ոռոգման ջրի պակասելու հետևանքով վարելահողերի չմշակման և գետային էկոհամակարգերի կենսաբազմազանության հետ: Ազդեցությունն ավելի ցայտուն արտահայտվում է ձկնաշխարհի բազմազանության վրա, քանի որ որոշ փոքր ՀԷԿ-երի ձկնանցարանների կառուցվածքը չի ապահովում գետերում բնակվող ձկնատեսակների ազատ տեղաշարժը, ինչի պատճառով փոքր ՀԷԿ-երից վերև ընկած հատվածներում ձկնաշխարհը հիմնականում ներկայացված է համեմատաբար աղքատ բազմազանությամբ և քանակական կազմով, քանի որ ձկնատեսակները բնակվելու և բազմանալու համար գետի հոսանքն ի վեր բարձրանալու հնարավորություն չունեն: ՀԷԿ-երի կառուցումը նաև սողանքների պատճառ է դառնում, քանի որ այն իրականացվում է՝ առանց հաշվի առնելու տվյալ վայրում սողանքային գործընթացների հնարավորությունը և հողի փխրունությունը: Ինտենսիվ շինարարական աշխատանքներից, պայթյուններից, խողովակների և ճանապարհների անցկացումից հետո սողանքային գործընթացներն հաճախ ակտիվանում են: Այս ամենին ավելանում է նաև սոցիալական բաղադրիչը: Փոքր ՀԷԿ-երը մեծ լարվածություն են առաջացնում համայնքներում, համայնքը թողնելով առանց ոռոգման ջրի՝ մասամբ կամ ամբողջությամբ ցամաքեցնելով գետերը:

Փոքր ՀԷԿ-երը, ունենալով գլոբալ տեսանկյունից էկոլոգիական առավելություններ, տեղական և երկրի մակարդակով առաջացնում են բազմաթիվ ուղղակի և անուղղակի հետևյալ բացասական ազդեցությունները.

1. կենսապայմանների վատթարացում.
2. ձկների թվաքանակի անկում՝ խողովակների և տուրբինների անկատար կառուցվածքի, ձվադրավայրերի անհասանելիության (գետի ֆրագմենտացիայի) հետևանքով.



3. բնական հոսքերի խախտում.

4. ավամերձ գոտում չորային պայմանների ձևավորում և այլն:

Հիդրոէներգետիկայի բնագավառում կենսաբազմազանության վրա ճնշումների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոնները պայմանավորված են օրենսդրության անկատարությամբ և առկա օրենսդրական նորմերի խախտմամբ: Լիարժեք գնահատված չէ փոքր ՀԷԿ-երի ազդեցությունը ջրային կենսաբազմազանության վրա, քանի որ չեն կատարվում մասնագիտական էկոլոգիական փորձաքննություններ և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Ստեղծված բնապահպանական խնդիրները լուծելու, ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունը և հավասարակշռությունն ապահովելու համար անհրաժեշտ է սահմանել փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար չափորոշիչներ, որոնք կկանխարգելեն կամ կնվազեցնեն շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները:

2018 թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին, որը սահմանում է փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար արգելված գոտիները և գետերի ցանկը: Համաձայն օրինագծի՝ նոր փոքր ՀԷԿ-ի կառուցման համար ջրօգտագործման թույլտվություն չի տրամադրվի, եթե այն նախատեսվում է կառուցել այն գետերի վրա, որոնցում առկա են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր, ինչպես նաև կարգելվի ՀԷԿ-երի կառուցումը ԲՀՊՏ-ների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում: Օրինագծի հաստատումը կնպաստի ջրաէկոհամակարգի պահպանությանը և հավասարակշռության ապահովմանը: «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և Հայաստանի բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում մշակվել և գործադիրի քննարկմանն է ներկայացվել փոքր ՀԷԿ-երի կանաչ անձնագրի նմուշը, որը ներառում է ցուցանիշներ հիդրոլոգիական, էկոլոգիական, տեխնիկական, սոցիալական բնութագրերի վերաբերյալ: Կանաչ անձնագրի նմուշի հաստատման դեպքում դրանք կլրացվեն ոչ միայն նախագծային և պաշտոնապես հաստատված ցուցանիշներով, այլև տեղերում անցկացված մոնիթորինգի արդյունքներով:

Բաց եղանակով հանքերի շահագործման հետևանքով խախտվում են լանդշաֆտներ և էկոհամակարգեր, նոր հողատարածքների օտարման պատճառով վերանում են բուսատեսակների ու կենդանատեսակների բնակմիջավայրեր, արդյունքում դրանց պոպուլյացիաները մասնատվում և նվազում են:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում, պոչամբարներում և լցակայաններում, կուտակված թափոնների մեծ ծավալներ զբաղեցնում են զգալի տարածություններ և բնական միջավայրի երկարատև աղտոտման աղբյուրներ են:

Տնտեսությունում հանքահումքային ոլորտի դերն օրեցօր աճում է (օրինակ՝ պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանման ծավալները 2014 թ. կազմել են 22 222.0 հազ.տ, իսկ 2016 թ.՝ 29 712.9 հազ.տ), սակայն բնապահպանության հետ կապված ռիսկային խնդիրները դեռ լիարժեք լուծում չեն գտնում: Հանքարդյունաբերության պատճառով Հայաստանում խախտվել է շուրջ 8000 հա հողային տարածք, ևս 1500 հա գտնվում է պոչամբարների տակ: Ներկայումս Հայաստանի տարածքում հաշվառված 21 պոչամբարներում կուտակված են շուրջ 220 մլն .մ³ արդյունաբերական թափոններ, որոնք բացասական ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի բաղադրիչների և էկոհամակարգերի՝ հողային, ջրային ռեսուրսների, օդային ավազանի, կենսառեսուրսների և այլնի վրա: Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի վերջին տվյալներով (09.2018 թ.) Հայաստանի 16 գետ ունի 5-րդ աստիճանի ամենաբարձր աղտոտվածություն: Հանքարդյունաբերության հետևանքով աղտոտված գետերով առանձնանում են Սյունիքի և Լոռու մարզերը: Սյունիքի մարզում հոսող Աճանան (Նորաշենիկ) գետն ունի 5-րդ դասի աղտոտվածություն: Հիմնական աղտոտիչներն են՝ մոլիբդենը, վանադիումը, կալիումը, ծարիրը, սուլֆատ իոնը, որոնք Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Արծվանիկի պոչամբարի արդյունք են: Կոմբինատն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև Ողջի գետի վրա, որը Քաջարանից Կապան հատվածում մոլիբդենի բարձր պարունակության հետևանքով ունի 5-րդ դասի աղտոտվածություն: 5-րդ դասի աղտոտվածություն ունեն նաև Կարճևան և Մեղրիգետ գետերը, որոնք աղտոտվում են Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի և այլ հանքարդյունաբերական օբյեկտների գործունեության արդյունքում: Լոռու մարզում 5-րդ դասի աղտոտվածություն ունեն Դեբեդ, Շնող, Ախթալա, Փամբակ գետերը: Դեբեդի, Շնողի ու Ախթալայի վրա ազդեցություն են գործում Ախթալայի լեռնահարստացման և Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատները:

Սպառնալիքի պատճառ են բնապահպանական ռիսկերի անտեսումը և շրջակա միջավայրի վրա ազդեցության անկատար փորձաքննությունն ու մոնիթորինգը, պլանավորման փուլում թիրախ հանդիսացող համայնքների բնակչության հետ նախատեսվող գործունեության մասին անբավարար քննարկումները:

Հանքարդյունաբերության բնագավառում բնապահպանական ռիսկերի սպառնալիքների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոնները պայմանավորված են ոլորտում գերիշխող ցածր արտադրողականություն ու շահագործման բարձր էներգատարություն ունեցող տեխնոլոգիաների կիրառմամբ, երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից տվյալ ոլորտի (ՀՆԱ-ի 5.4 %) զարգացման



կարևորությամբ, որոշ դեպքերում (Քարաբերդի ոսկու հանքավայրի տարածք) գնահատումների համար հանքավայրի տարածքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ ելակետային մանրակրկիտ տվյալների բացակայությամբ⁴:

Սպառնալիքի մեղմման ուղղությամբ նախաձեռնված միջոցառումներից է բուսական աշխարհի օբյեկտների, հատկապես կարմիրգրքային բուսատեսակների և դրանց աճելավայրերի պահպանությունն ապահովող միջոցառումների անցկացման վերաբերյալ իրավական ակտի ընդունումը: 2014 թ. հուլիսի 31-ի ՀՀ կառավարության N 781-Ն որոշմամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը», որը սահմանում է տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի պահպանությունն ապահովող միջոցառումները: Սահմանվել է ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակների տեղափոխումը տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ (ԲՀՊՏ կամ բուսաբանական այգիների տարածք, կամ Կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք)՝ բույսերի բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով: Իրավական ակտով սահմանված գործողություններն արդեն կիրառվել են Ամուլսարի ոսկու հանքի տարածքում հայտնաբերված մատնունի ծիրանավորի նկատմամբ (բուսատեսակի մոտ 2 000 առանձնյակ տեղափոխվեց Սևանի բուսաբանական այգի):

Հանքարդյունաբերության ոլորտում էԾ-ների ուսումնասիրություններ իրականացվել են միայն Ամուլսար ոսկու հանքի ծրագրի շրջանակներում Լիդիան ընկերության կողմից, որի նպատակը մարդկանց կողմից էկոհամակարգերի օգտագործման ու կախվածության վերաբերյալ պատկերացման կազմումը և հանքարդյունահանման տեղամասի վրա ծրագրի ազդեցության գնահատումն է: Օրինակ, երբ Ամուլսար ոսկու հանքի տարածքի ուսումնասիրության ժամանակ բացահայտվեց համար նախատեսված տեղամասում հայտնաբերվել է կարմիրգրքային տեսակի բնակմիջավայր, Լիդիանը փոխել է ենթակառուցվածքի տեղադիրքը՝ խուսափելով այս կենսամիջավայրի վրա ազդեցություններից:

Վտանգների մեղմման ուղղությամբ նախաձեռնված միջոցառումներից են նաև 2017 թ. ընդունված ՀՀ կառավարության հետևյալ որոշումները.

1. «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին»⁵: Որոշումը կարգավորում է ընդերքօգտագործողների

⁴ Ecosystem Services and their Role in Poverty Alleviation in Armenia - A Case Study of Karaberd Gold Mine, UNDP/UNEP “Economic Valuation of Ecosystem Services” Technical Assistance Project

⁵ ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 15 N674-Ն որոշում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

կողմից ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններում կատարված փոփոխությունները՝ բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման ժամկետները, ձևերն ու միջոցները, համաձայնության մերժման դեպքերը:

2. «Լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները սահմանելու մասին»⁶, որը նպաստում է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման միջոցով թափոնների գոյացման ծավալների և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցմանը:
3. «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանն ու վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին»⁷, որն ապահովում է թափոնների գոյացման ծավալների և դրանց հնարավոր վտանգի նվազեցում լավագույն տեխնոլոգիաների ներդրման և վերամշակման միջոցով, ընդերքօգտագործման թափոններով աղտոտումից շրջակա միջավայրի պահպանություն, արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացում:
4. «Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը սահմանելու մասին»⁸, որով կարգավորվում է ընդերքօգտագործողների կողմից նախատեսվող ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեությունը:

2017 թ. օգոստոսի 24-ի N 36-21 ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը», որտեղ վեր են հանվել ոլորտի զարգացումը խոչընդոտող հիմնական խնդիրները՝ համապարփակ քաղաքականության և ռազմավարության բացակայությունը, ինստիտուցիոնալ դաշտում առկա բացերը, կառավարման ոլորտում բացթողումները, սոցիալ-տնտեսական, ֆինանսական դաշտում առկա խնդիրները, պատասխանատու ներդրումների ներգրավման պակասը, պետական երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման բացակայությունը և այլն:

Այնուհանդերձ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում բացակայում է պետական պատասխանատու կառույցների կամ կառավարության կողմից մշակված ռազմավարությունը, որից հնարավոր կլինեք հետևություն անել երկարաժամկետ հեռանկարում ոլորտի զարգացման և կառավարման վերաբերյալ: Չկա միասնական քաղաքականություն հանքարդյունաբերության տնտեսական օգուտների և վնասների գնահատման, առանձին մարզերում դրա սոցիալ-տնտեսական և մշակութային նպատակահարմարության վերաբերյալ: Չկան բավարար հիմնավորումներ, որ

⁶ ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 15 N666-Ն որոշում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ներկայումս հանքարդյունաբերությունը երկրի տնտեսական զարգացման համար ունի գերակա նշանակություն, ինչը հռչակել է կառավարությունը:

Օրենսդրությունը հիմնականում կարգավորում է ընդերքահագործման թույլտվությունների և բնապահպանական ռիսկերի գնահատման գործընթացը, ինչպես նաև դրա համար պատասխանատու պետական մարմինների շրջանակը: Ի դեպ, օրենսդրությունում առկա են սոցիալ-տնտեսական և զուտ բնապահպանական բնույթի թերի կարգավորումներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում համարժեք տնտեսական գնահատական տալու հանքարդյունաբերական նախագծերի օգտակարությանը՝ հանրության լայն շերտերի սոցիալական բարեկեցության և պետության տնտեսական զարգացման տեսանկյունից: Չկան էկոլոգիական վնասի տնտեսական գնահատման և հատուցման, հանքարդյունաբերական թափոնների առաջացրած հետևանքների համար նյութական պատասխանատվության, կենսաբազմազանությունը ոչնչացնելու կամ վնասելու համար հատուցման պարտավորություն նախատեսող նորմեր:

Գյուղատնտեսության բնագավառում կենսաբազմազանության բացասական փոփոխությունների, էկոհամակարգերի դեգրադացման և բուսատեսակների աճելավայրերի կորստի պատճառներից են նաև.

1. երկրագործության վարման կանոնների խախտումը.
2. մասնատված հողակտորներում ցանքաշրջանառության կիրառման անհնարինությունը.
3. հողային ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործումը.
4. անկատար ոռոգման համակարգերի կիրառումը, որոնք առաջացնում են հողերի էրոզիա և երկրորդային աղակալում (ներկայումս շուրջ 25 000 հա): Երկրորդային աղակալման հողերում գրանցվել է քլորիդների տոքսիկությամբ պայմանավորված մշակաբույսերի բերքատվության անկում (Արարատի և Արմավիրի մարզի համայնքներ):

Հայաստանում վարելահողերի կեսը՝ մոտ 220 000 հա, ենթարկվում է ջրային էրոզիայի՝ ոռոգման և տեղումների ազդեցության հետևանքով ժամանակի ընթացքում հողի բերրի շերտը լվացվում է: Եթե այդ գործընթացները մնան անկառավարելի, ապա հողն աստիճանաբար կկորցնի իր դրական հատկանիշները՝ դառնալով ոչ պիտանի: Հողի էրոզիան սուսկ նեղ գյուղատնտեսական խնդիր չէ, քանզի հողերի բերրիության նվազեցման հետ մեկտեղ ակտիվանում են բազմաթիվ էկզոգեն գործընթացներ՝ լանջերի կտրատում, փլուզում, գետերի աղտոտում, բուսական և կենդանական օրգանիզմների կենսապայմանների վատթարացում:

Մշակման համար միջոցների բացակայության, ոռոգման անբավարարության, ներքին և արտաքին միգրացիայի պատճառով մեծ թվով հողեր չեն օգտագործվում կամ թերի են օգտագործվում: Լքված, անմշակ հողերը ծածկվելով արագ տարածվող մոլախոտերով՝ վտանգում են վայրի բույսերի բազմազանությունը: Համաձայն 2017 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

հողային հաշվեկշռի՝ հանրապետության 446.0 հազ. հեկտար վարելահողերից չի մշակվում կամ նպատակային չի օգտագործվում շուրջ 34.0 %-ը կամ 151.4 հազ. հեկտարը: Ընդհանուր առմամբ մեր երկրի հողային ֆոնդի 80 %-ը ենթարկվում է տարբեր աստիճանի դեգրադացման, որի պատճառով վերանում են հողի կենսաբանական և տնտեսական հատկությունները: Հողը, որպես բնական միջավայր, բնորոշվում է բազմազան անողնաշար կենդանիների և մանրէների առկայությամբ, որոնք առաջնային դերակատարում ունեն կենսաբանական այնպիսի կարևոր գործընթացներում, ինչպիսիք են՝ հումուսագոյացումը, ազոտի ֆիքսումը, նիտրիֆիկացումը, դենիտրիֆիկացումը և այլն:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը: Պետական ծրագրերի միջոցով հողօգտագործողներին տրամադրվում է աջակցություն՝ ցանքատարածություններն արդյունավետ օգտագործելու և գյուղատնտեսական համակարգերը զարգացնելու նպատակով: Այդպիսի ծրագրերը վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման, լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման և մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով նպաստում են գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը, ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների ընդլայնմանը: Իրականացվող պետական օժանդակության ծրագրերի շնորհիվ պակասել է անմշակ հողերի տարածքը: 2014 թ. համեմատ պտղատու և հատապտղատու այգիների տարածություններն ավելացել են 381 հեկտարով՝ 2016 թ. կազմելով 40 510 հեկտար: Հատկապես աչքի է ընկնում կորիզավոր պտղատուների տարածվածության ավելացումը, որը 2017 թ. կազմել է 23 012 հեկտար՝ 2014 թ. 20 618 հեկտարի փոխարեն:

Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրմանն ուղղված ծրագիրը նպաստում է անարդյունավետ և ջրային էրոզիայի պատճառ հանդիսացող ավանդական ոռոգման եղանակի փոխարինմանը ջրախնայողական և բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիայով: Թեք լանջերի վրա ավանդական ակոսային եղանակով ոռոգումը հանգեցնում է մշակվող տարածքից դուրս ջրի կուտակմանը և ճահճացման երևույթների առաջացմանը, որն իր հերթին վտանգում է բուսատեսակների բնական ապրելավայրերը: Կաթիլային եղանակով թեք լանջերի վրա ոռոգման կազմակերպումը կանխում է ճահճացման երևույթները և պահպանում բուսատեսակների աճելավայրերը: Ըստ մարզպետարաններից ստացված տվյալների՝ ներկայումս հանրապետության տարածքում կաթիլային ոռոգման համակարգերը կիրառվում են 1740 հեկտարի վրա: 2018 թ. հոկտեմբերի դրությամբ կաթիլային ոռոգման համակարգերը ներդրվելու են ևս 62.6 հեկտարի վրա:



Արոտավայրերի դեգրադացիայի հնարավոր հետևանքները և պոտենցիալ կառավարման միջոցառումները որոշելու համար առաջնային ու կարևոր քայլ է համարվում տարբեր տարածական և ժամանակային մասշտաբներում հողերի դեգրադացիայի աստիճանի գնահատումը: Զարգացած երկրներում այս խնդիրների լուծման համար լայնորեն կիրառվում են հեռազննման տեխնոլոգիաները, որոնք, ի տարբերություն ավանդական մեթոդների, ապահովում են քանակական, պարբերական, հավաստի և մատչելի տեղեկատվություն մեծ տարածքների համար: Նման տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանի պայմաններում ևս արդիական է:

Անտառտնտեսության բնագավառում մարդածին մեծ ճնշումների պայմաններում սակավանտառ ռեսուրսների ոչ պատշաճ կառավարման հետևանքով անտառների հատումներն առաջացնում են հողի էրոզիա, սելավների և սողանքների ակտիվացում, էվտրոֆացում, որոնք պատճառ են դառնում խոնավասեր բուսատեսակների քանակական և որակական փոփոխությունների և բնական աճելավայրերի կորստի: Ըստ վիճակագրական տվյալների՝ ընդհանուր անտառահատումների (սանիտարական, նոսրացման, անցումային) ծավալները երկրում շարունակում են աճել: 2017 թ. անտառահատումների ծավալները (29 %) գերազանցում են 2014 թ. գրանցված նույն ցուցանիշը: Անտառների հատումների հիմնական պատճառներից է բնակչության ծանր սոցիալական վիճակը, ինչի հետևանքով անտառամերձ բնակչությունը մեծ ճնշում է գործադրում անտառի վրա՝ օգտագործելով բնափայտը որպես վառելանյութ: Ապօրինի ծառահատումները մնում են բուսական աշխարհի նշանակալի սպառնալիքներից մեկը: Արդյունքում՝ հանրապետությունում անտառահատումները դեռևս անհամեմատ գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Անտառների դեգրադացիայի և կենսաբազմազանության վրա անտառահատումների ազդեցության մանրամասն նկարագրությունը ներկայացված է այս բաժնի 4-րդ նպատակային խնդրում:

Անտառտնտեսության բնագավառում բնապահպանական ռիսկերի սպառնալիքների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոնները պայմանավորված են բնակչության ցածր վճարունակությամբ, համեմատաբար էժան վառելափայտի նկատմամբ բարձր պահանջարկով, շինարարական բիզնեսի զարգացման բարձր տեմպերով և դրա համար օգտագործվող բնափայտի մթերման եղանակների անվերահսկելիությամբ, բնակչության՝ անտառի օգտակար ծառայությունների և բարիքների մասին թերի գիտելիքներով:

Այդ սպառնալիքի վերացման ուղղությամբ նախաձեռնվող միջոցառումները միտված են անտառային ոլորտում օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացմանը, այլընտրանքային և վերականգնվող էներգետիկ աղբյուրների լայն կիրառմանը, անտառների կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը, անտառների մոնիթորինգի համակարգի զարգացմանը, բնակչության իրազեկվածության բարձրացմանը:



Շինարարություն. Վերջին տարիներին շինարարության ծավալի փոփոխություններն ունեն հետևյալ դինամիկան՝ 2014 թ. շինարարության ծավալները կազմել են 463858,0 մլն. դրամ, 2015 թ.՝ 481 496.9, 2016 թ.՝ 410 602.9 մլն. դրամ, իսկ 2017 թ.՝ 429 931.6 մլն. դրամ⁷:

Շինարարության արդյունքում օտարվում են հողատարածքները, խախտվում են լանդշաֆտներ և բնական էկոհամակարգեր՝ առաջացնելով բնակվայրերի կորուստ: Օրինակ՝ Հրազդան գետի երևանյան հատվածի երկարությամբ իրականացված ճանապարհաշինարարությունը բացասաբար է անդրադարձել տարածքում աճող բուսատեսակների վրա: Վերջին տասը տարում այստեղ չի հաջողվում գտնել նախկինում հանդիպող Այծակն հաստ (*Aegilops crassa* Boiss.) տեսակը, իսկ Գարի հրազդանյան (*Hordeum hrazdanicum*) տեսակի պոպուլյացիաները զգալիորեն կրճատվել են:

Կենսաբազմազանության վրա շինարարության ուղղակի ճնշումն առաջանում է էկոլոգիական ռիսկերի թերազնահատման պատճառով: Այնուամենայնիվ, պլանավորման ժամանակ շինարարական բոլոր նախագծերը պարտադիր պարունակում են կենսաբազմազանության կառավարման պլաններ, որոնց կատարումը պետք է խստորեն վերահսկվի համապատասխան կառույցների կողմից:

Շրջակա միջավայրի աղտոտում. Հայաստանում ջրի և հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերը, ձնհալի և անձրևների ժամանակ գյուղատնտեսական դաշտերից տեղափոխվող պարարտանյութերը և պեստիցիդները, ինչպես նաև կոշտ կենցաղային թափոնները:

2017 թ. Հայաստանի մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգն իրականացվել է 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 17 դիտակետից: Այդ թվում իրականացվել է Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ:

Հիմնական վտանգն առաջանում է հանքարդյունաբերական թափոնների կուտակման և սխալ պահպանման դեպքում, որտեղից աղտոտված հոսքաջրերը թափանցում են ցամաքային էկոհամակարգեր ու ջրային ավազաններ՝ վտանգելով ցամաքային ու ջրային կենսաբազմազանությունը: Հանքարդյունաբերության կազմակերպությունները գերշահույթ ստանալու համար խուսափում են շրջակա միջավայրի աղտոտման նվազեցման ուղղությամբ ներդրումներ անելուց: Օրինակ՝ տարեկան Մեղրիգետի գետավազան է լցվում հանքարդյունաբերական ընկերությունների 1 607 000 մ³ արտադրական կեղտաջուր, իսկ Ողջի գետավազան՝ 681.1 հազար մ³ արդյունաբերական կեղտաջուր:

Ջրաքիմիական մոնիթորինգային հետազոտությունների հիման վրա կատարված ջրի որակի գնահատումը ցույց է տվել, որ 2012-2013 թթ. Հայաստանի գետերի մոտ 20 %-ի ջրի որակը համապատասխանել է աղտոտվածության 4-րդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

դասին (ցածր որակ), իսկ 2017 թ. ավելի քան 35 %-ը համապատասխանել են աղտոտվածության 5-րդ (վատ որակ) դասին:

Ներկայումս Հայաստանի տարածքում հաշվում են 21 պոչամբարներ, որոնցում կուտակված են շուրջ 220 մլն. մ³ ապարներ: Պոչամբարների հետևանքով աղտոտված գետ է համարվում Ողջին, որի հովտում մոտավոր հաշվարկներով առկա են 150 մլն. տ պոչանք, որոնք պարունակում են թելուր, սելեն, բիսմութ, ռենիում, գալիում, պղինձ, մոլիբդեն և այլն: Էկոլոգիական ճգնաժամային վիճակում է նաև Դեբեդ գետը, որի աղտոտման պատճառ են դառնում Ալավերդու պղնձածուլական և Ախթալայի լեռնահարստացման կոմբինատները: Այս և այլ աղտոտված գետերի ֆաունան միանշանակ կրճատվել է, իսկ գետային և ցամաքային էկոհամակարգերի աղետալի վիճակը խորանում է տարեցտարի:

Սպառնալիքի պատճառներն են՝ հանքարդյունաբերական թափոնները, էկոլոգիապես անվտանգ չեզոքացման, վերաշրջանառության և ռեկուլտիվացիոն աշխատանքների ոչ լիարժեք կատարումը, արդյունահանված տարածքներում վերականգնման կամ հողաբարելավման աշխատանքների ոչ լիարժեք համակարգումը: Այս խնդրի լուծման ուղիներից են օրենսդրական փոփոխությունները՝ ուղղված խախտված հողերի վերականգնմանը:

Ոլորտի սպառնալիքները թուլացնելու և բնական պաշարների կառավարումն արդյունավետ կազմակերպելու նկատառումներից ելնելով՝ 2018 թ. ընդունվել է Հայաստանի բնական պաշարների կառավարման ռազմավարությունը⁹, որի նպատակները ներառում են առաջացած ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների ապահովումը և ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից, սպառումից զերծ պահումը և պահպանությունը: Ռազմավարությունը սահմանում է բնական պաշարների կառավարման հետևյալ հիմնական սկզբունքները.

1. ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նորագույն տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան կրճատելու ընդերքօգտագործման թափոնների ծավալները.
2. ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների անվտանգ շահագործումը.
3. շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու միջոցառումների իրականացումը.
4. բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանությունը:

Բնական պաշարների կառավարման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը ներառում է

⁷ ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10 N985-Ն որոշում

⁸ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 27 N906-Ն որոշում

⁹ ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 22-ի նիստի N 7 արձանագրային որոշում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ընդերքօգտագործման թափոնների գույքագրումը՝ աղտոտվածության նվազեցման և չեզոքացման նպատակով (2018-2025 թթ.), ինչպես նաև ընդերքօգտագործման արդյունքում հողերի աղտոտվածության և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի իրականացումը (2019 թ. և շարունակական):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ Հայաստանի գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «գերազանց» և «լավ» է (1-ին և 2-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո դիտվում է աղտոտվածության աճ՝ չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը գետերին խառնվելու հետևանքով և ջրի որակը «միջակից» դառնում է «վատ» (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Հայաստանի ջրերն աղտոտող նյութերի և կենսածին տարրերի արտահոսքը կանխելու ուղղությամբ իրականացվել են փոքր ծրագրեր, որոնց ներդրումը ջրային ռեսուրսների աղտոտման կանխման գործում մեծ չէ: Այսպես՝ «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրով», որը մեկնարկել է 2011 թ. ԵՄ-ի ու «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ստորագրած համաձայնագրի շրջանակներում, Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36 %-ով, Մարտունի քաղաքում՝ 47 %-ով, Վարդենիս քաղաքում՝ 41 %-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում նախատեսվում է մինչև 2019 թ. կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան, որի արժեքը կազմում է 3.87 մլն. եվրո: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն նույն ծրագրի շրջանակներում 2014 թ. կառուցել է կեղտաջրերի մաքրման երկու կայան Ջերմուկում և 2015 թ. Դիլիջանում: Բոլոր նշված մաքրման կայաններում կատարվում է միայն մեխանիկական մաքրում:

Գյուղական համայնքներում վիճակն էլ ավելի բարդ է, քանի որ դրանց մեծ մասը միացված չեն մաքրման համակարգերին և չունեն կոյուղու ցանց: Կեղտաջրերը ինֆիլտրվում են հողի մեջ և ներթափանցում գրունտային ջրեր՝ աղտոտելով դրանք: Բնակավայրերի և գյուղերի կենցաղային, որոշ քաղաքներում նաև արտադրական կեղտաջրերն առանց մաքրվելու լցվում են մակերևութային ջրային օբյեկտներ՝ աղտոտելով ջրային ռեսուրսները, դեգրադացիայի են ենթարկում ջրային ու ցամաքային էկոհամակարգերը, անվերադարձ փոխում դրանց կողմից տրամադրվող ծառայությունների քանակական և որակական հատկանիշները:

Մակերևութային հոսքերը և լանդշաֆտներն աղտոտվում են նաև կոշտ կենցաղային թափոններով: Հայտնի է, որ աղբավայրերը կայուն օրգանական աղտոտիչների տարածման աղբյուր են: Որոշ վայրերում այդ աղտոտիչների գումարային կոնցենտրացիան գերազանցում է նրանց շարքին պատկանող ամենաբարձր նորմատիվային արժեք ունեցող պատրաստուկի հիգիենիկ նորմը 13-60



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

անգամ: Արարատ, Հրազդան, Սևան քաղաքների աղբավայրերի տարածքի հողում հայտնաբերվել է պոլիքլորացված երկբենզոլների առկայություն, իսկ Արարատ քաղաքի աղբավայրում դիտվել է դրանց գումարային կոնցենտրացիայի նորմից գերազանցում: ՀՀ կառավարության կողմից հաստատված «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2018 թվականի տարեկան ծրագրում» նախատեսվում է իրականացնել «Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում», «Աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում» կարևոր միջոցառումները, որոնք առաջին անգամ են ընդգրկված Սևանա լճի տարեկան ծրագիրում և նպատակաուղղված են նվազեցնել ջրի աղտոտման աղբյուրների քանակը:

Թեպետ Սևանա լճի ֆիտոպլանկտոնի քանակական ցուցանիշները 2016-2018 թթ. գտնվում են օլիգոտրոֆ ջրերին բնորոշ արժեքների տիրույթում, այնուհանդերձ լճի էկոհամակարգի տրոֆայնության մակարդակի նվազման միտում չի գրանցվել: 2016 թ. աշնանն արձանագրված ջրի «ծաղկումը» կապտականաչ ջրիմուռների էվտրոֆացման ինդիկատոր-տեսակ Անաբաենաով (*Anabaena flos-aquae*) ապացուցեց այդ եզրակացությունը: 2018 թ. հուլիսին տեղի ունեցավ նույն տեսակի ավելի բուռն բազմացումը, ինչն ապացուցում է հիդրոէկոհամակարգի էքստրեմալ էկոլոգիական վիճակը, որի ժամանակ այն դրսևորում է սթրեսային ռեակցիա: Սևանա լճի 2018 թ. «ծաղկման» պատճառը ջրի ջերմաստիճանի կտրուկ աճն է (մինչև 24°C), ֆոսֆատ և ամոնիում իոնների բարձր կոնցենտրացիաները և լճից բաց թողնված ջրի մեծ ծավալների ինտեգրալ ազդեցությունը: Օրգանական նյութերի առկայությունը, ֆոսֆորի, նիտրիտների և ամոնիումի իոնների աճը հավանաբար պայմանավորված է նաև ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ տարածքում գտնվող թփուտների, հատված ծառերի մնացորդների՝ ջրի տակ անցնելու պատճառով: Վերջիններիս հետագա փտման հետևանքների կանխարգելման նպատակով կատարվում է ջրածածկ տարածքների մաքրում: Ընդհանուր առմամբ «Սևան» ազգային պարկի ջրածածկ 5000 հա տարածքներից 2005-2017 թթ. ընթացքում մաքրվել է 2164.17 հա, որից 1840.23 հա պետական բյուջեի միջոցներով, 323.94 հա՝ ֆիզիկական անձանց կողմից: Ձկնային պաշարների արագացված վերականգնումը նույնպես կարևոր խնդիր է, քանի որ լճում առկա է կերային հսկա պաշար, որի չօգտագործման դեպքում կզարգանան լճի էֆտրոֆացման գործընթացները:

Մյուս կարևոր գործոնը գյուղատնտեսական դրենաժային ջրերը և անասնապահական կեղտաջրերն են, որոնք, ներհոսելով գետավազանի մակերևութային ջրեր, նույնպես հանգեցնում են ազոտի, ֆոսֆորի և օրգանական ածխածնի պարունակությունների աճի: Գյուղատնտեսական ջրերի միջոցով գետեր են



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ներհոսում նաև թունաքիմիկատներ և քիմիական միացություններ, որոնք հակում ունեն կուտակվելու սննդային շղթայի որևէ օղակում՝ հանգեցնելով առողջության անուղղակի ռիսկերի առաջացման:

Գյուղատնտեսության կողմից շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր են հանքային պարարտանյութերն ու պեստիցիդները, որոնք ոչ չափավոր ծավալների օգտագործման հետևանքով կուտակվում են հողերում և աղտոտում ստորերկրյա ջրերն ու գետերը՝ առաջացնելով բուսատեսակների աճի, զարգացման և վերարտադրության պայմանների խախտում, ագրոցենոզների տեսակային կազմի փոփոխություն, արժեքավոր և հազվագյուտ տեսակների պոպուլյացիաների կրճատում:

Առանձնակի վտանգ է ներկայացնում ժամկետանց թունաքիմիկատների կիրառումը, որը հանգեցնում է հողային կենսաբազմազանության ոչնչացման, իսկ ժամկետանց պեստիցիդների պաշարների կուտակումը կարող է բացասաբար ազդել բնակչության առողջության վրա: Սպառնալիքի պատճառներն են՝ անկատար օրենսդրությունը, գյուղատնտեսական նշանակության հողերի մշակությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտավորությունների կատարման վերաբերյալ ոչ պատշաճ վերահսկողությունը: Անհրաժեշտ է բարձրացնել ֆերմերների իրազեկվածությունն ագրոտեխնիկական կանոնների, ժամանակակից տեխնոլոգիաների և խախտումների հետևանքների վերաբերյալ և իրականացնել հողերի տեխնաձին աղտոտվածության համակարգված մոնիթորինգ:

Գյուղատնտեսությունում շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված սպառնալիքի թուլացման նպատակով իրականացվում են օրգանական գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ծրագրեր: Օրգանական գյուղատնտեսությունում թուլանում է մարդածին ճնշումը միջավայրի վրա, կիրառությունից հանվում են հանքային պարարտանյութերն ու պեստիցիդները, համակարգը հիմնվում է օրգանական պարարտանյութերի, բնական մելիորանտների, կանաչ պարարտացման, ակտիվ ցանքաշրջանառության, ջրային ռեսուրսների խնայողության, ագրոլանդաֆտների էկոլոգիական օպտիմալացման և այլ միջոցառումների վրա:

ԳԷՀ-ի ֆինանսավորմամբ և ՄԱԶԾ-ի աջակցությամբ իրականացվող «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տարածքների աղտազերծում» ծրագրով (2015-2019 թթ.) փորձ է արվում լուծել վտանգավոր թափոնների և ժամկետանց պեստիցիդների կուտակման հիմնախնդիրը՝ օգտագործման համար ոչ պիտանի պեստիցիդների ոչնչացման և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տեղանքների աղտազերծման ճանապարհով: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ոչնչացնել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում պարփակված մոտ 900 տոննա թունաքիմիկատներ և երկրի մյուս 24



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

պահեստներում գտնվող այլ քիմիական թափոններ, ինչպես նաև վնասազերծել Նուբարաշենի գերեզմանոցի մոտ 7100 տոննա աղտոտված հող: Ծրագրի իրականացումից ակնկալվում է նաև կարողությունների հզորացումը՝ կայուն օրգանական աղտոտիչներով թունաքիմիկատներն արդյունավետ գործածությունից դուրս բերելու և դրանց արտանետումները կրճատելու համար:

Ավտոտրանսպորտը մթնոլորտի աղտոտման աղբյուր է: Մեքենաների քանակն անընդհատ աճում է, և դրա հետ մեկտեղ աճում են մթնոլորտում վնասակար արտանետումները: 2016 թ. ցուցանիշներով ավտոտրանսպորտի արտանետումները հանրապետությունում կազմել են ընդհանուր արտանետումների 52 %-ը, իսկ Երևանում՝ 76 %-ը (ըստ Երևան քաղաքում հաշվառված տրանսպորտային միջոցների քանակի փորձագիտական գնահատման): Հիմնական աղտոտիչներն են՝ ազոտի երկօքսիդը, ածխածնի օքսիդը, ծծմբի երկօքսիդը, կախված մասնիկները, բենզոլը և արոմատիկ ածխաջրածիններն ու կապարը, որոնք թափանցում են մթնոլորտ՝ առաջացնելով հողերի, օդային և ջրային ավազանների աղտոտում: Ծծմբի երկօքսիդի արտանետումներն ավտոտրանսպորտից կազմում են ընդհանուր արտանետումների մոտ 35 %-ը, իսկ ազոտի օքսիդների արտանետումները՝ 90 %-ը: Հատկապես բացասական ազդեցություն է ունենում օդի որակի վրա շարժակազմի տարիքը, որը, ըստ գնահատումների, ընդհանուր առմամբ 16-ից բարձր է: Հասարակական տրանսպորտի շարժակազմի վիճակն ավելի վատ է: Բնակչության և շրջակա միջավայրի վրա, ներառյալ կենսաբազմազանության բաղադրիչները, այդ գործոնների ազդեցության հետևանքով ագրոցենոզներում տեղի է ունենում վնասակար նյութերի կուտակում, որն իր հերթին հանգեցնում է բուսատեսակների պոպուլյացիաների կրճատման:

Սպառնալիքների վերացմանը/մեղմմանը խոչընդոտող գործոն է բնակչության սոցիալական վիճակը, որով պայմանավորված են մասնավոր ավտոտրանսպորտային միջոցների արդիականացման դանդաղ գործընթացը և ոլորտի բարելավման համար պահանջվող մեծ ֆինանսական ներդրումները:

Վիճակը բարելավելու և սպառնալիքը մեղմելու առաջին քայլերից է Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» 2017-2030 թթ. գործողությունների ծրագիրը, որի շրջանակներում ավտոտրանսպորտի վնասակար արտանետումների նվազեցման նպատակով նախատեսվում է ավտոբուսների նոր ցանցի մոդելի ներդնումը և հասարակական տրանսպորտի արդիականացումը՝ մինչև 2020 թ. վերջը շարժակազմում 10 էլեկտրամոբիլի ներդնումը:

2016 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի նախագծին, որում ամրագրված են օդի որակի գնահատման չափանիշները և արտանետումների սահմանափակման նպատակով զարգացած երկրներում լայնորեն կիրառվող «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման դրույթները:



Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնախնդիրներին անդրադառնում է 2018 թ. ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը»¹⁰, որն առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների շարքում դասում է հողերի տեխնածին աղտոտվածության ուսումնասիրության մոնիթորինգային ցանցի ստեղծումը, կենսաբազմազանության վրա ուղղակի ծանրաբեռնվածության կրճատումը, խախտված բնակմիջավայրերի վերականգնումը:

Ռեկրեացիա և զբոսաշրջություն. Ռեկրեացիայի և զբոսաշրջության բացասական ազդեցությունը կենսաբազմազանության վրա դրսևորվում է հիմնականում բուսածածկի ռեկրեացիոն տրորմամբ և գեղազարդ ծաղիկների հավաքով՝ հանգեցնելով հանգստյան վայրերում որոշ բուսատեսակների պոպուլյացիաների կրճատման և համակեցությունների տեսակային կազմի փոփոխության:

Չկանոնակարգված զբոսաշրջության հետևանքով Սևանա լճի ամբողջ ափամերձ գոտին պատված է տարբեր տիպի տնակների, հյուրանոցների, ռեստորանների շինություններով, լողափերը ցանկապատված են, աղբահանությունը վատ է կազմակերպված, չկան կեղտաջրերի մաքրման կայաններ: Այս ամենի պատճառով ջուրն աղտոտվում է, լանդշաֆտները խախտված են, իսկ ափամերձ գոտին դառնում է անհրապույր:

Այս ոլորտում ներգրավված զբոսաշրջային գործակալությունները հաճախ չեն տիրապետում տեղանքի կենսաբազմազանության խնդիրներին և երթուղիներ նախագծելիս չեն դիմում մասնագետներին, որպեսզի ստանան պատշաճ տեղեկատվություն տվյալ տարածքի խոցելիության մասին: Մշակվում են այն **մայիսի** երթուղիներ, որոնք ընդգրկում են վտանգված տեսակների, հատկապես թռչունների համար խոցելի տարածքներ՝ բնադրավայրեր: Զբոսաշրջության ոլորտում աշխատող խումբը պարտադիր պետք է իրազեկ լինի, թե ինչպիսի կենսամիջավայր է ընդգրկում երթուղին, որպեսզի հնարավոր լինի խուսափել վայրի բնության համար պոտենցիալ սպառնալիքներից: Շատ են դեպքերը, երբ արշավախմբերի մասնակիցների քանակը գերազանցում է տվյալ վայրի համար ծանրաբեռնվածության նորմերը, ինչն ավելացնում է բուսածածկի ռեկրեացիոն տրորումը և անհանգստություն պատճառում կենդանիներին: Այսպես՝ «Սևան» ազգային պարկի կազմում գտնվող «Նորաշեն» արգելոցային գոտու համար վտանգ են ներկայացնում այն զբոսաշրջիկները, որոնք ձվադրման կամ թխսակալման շրջանում մոտորանավերով մոտենում են Հայկական որորի գաղութին՝ խաթարելով նրանց բազմացումը:

¹⁰ ՀՀ կառավարության 2018 թ. մարտի 22-ի նիստի N 11 արձանագրային որոշում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի հյուսիսային անտառների վերին եզրերում, Կովկասյան մարեհավի-Lyrurus mlokosiewiczii կենսամիջավայրերում, անասնապահությունն առաջացնում է ձագերի մեծ թվով մահացություն: Վերջին տարիներին Դսեղ ԿԹՏ անտառների վերին սահմանի մարգագետիններում՝ մրտավարդի մացառներում բնակվող Կովկասյան մարեհավի թվաքանակը և արեալը կրճատվում են գերարածեցման և մրտավարդի (թեյի նպատակով) տերևների և ընձյուղների չվերահսկվող մթերման հետևանքով: Սպառնալիքների թվում են նաև որսագողությունը և ձվերի ոչնչացումը:

2000 թ.-ից սկսած՝ Հայաստանի թռչնաֆաունայի հանդեպ հետաքրքրությունն աճել է, և խոշոր եվրոպական զբոսաշրջային ընկերությունների կողմից կազմակերպված խմբերում կամ ինքնուրույն այցով Հայաստան են ժամանում թռչունների սիրահարներ (թռչնադիտարկողներ): Նրանց օգնությամբ նույնպես հաջողվում է տվյալներ հավաքագրել Հայաստանում հանդիպող հազվագյուտ բնադրող և չվող տեսակների վերաբերյալ: Թեպետ որոշ ԲՀՊՏ-ներում իրականացվում են ծրագրեր խոշոր կաթնասունների մշտադիտարկման ուղղությամբ, թռչնաֆաունայի մասով տվյալների հավաքագրումը դժվարանում է՝ տեղերում օրնիթոլոգ-մասնագետների և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Նույն պատճառով 18 ԿԹՏ-ներից միայն մի քանիսում է իրականացվում պարբերական մոնիթորինգ: Հաճախ թռչունների տեսակային կազմի և դրանց պոպուլյացիաների թվաքանակի ուսումնասիրություններն իրականացվում են հասարակական կազմակերպությունների ջանքերով, ինչպես նաև Հայաստանի ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցների կողմից:

Սպառնալիքի հիմնական պատճառն է կենսաբազմազանության բաղադրիչների արժեքի վերաբերյալ համապատասխան կառույցների և հասարակության իրազեկվածության, ԷԾ-ների մասին տեղեկատվության և էկոլոգիական նախաձեռնությունների պակասը, ինչպես նաև էկոտուրիզմի իրական նպատակների թերի ընկալումը: Չնայած էկոտուրիզմի զարգացման և եկամուտների ապահովման հարցում Հայաստանի շահագրգիռ կողմերի հետաքրքրվածությանը՝ կայուն էկոտուրիզմի ոլորտում գաղափարների և ռազմավարությունների մշակման և իրականացման փորձը մեծ չէ: Այդ է պատճառը, որ էկոտուրիզմին վերաբերող առաջարկը շուկայում առկա պահանջարկին չի համապատասխանում: Ավելին՝ պլանավորման ոչ պատշաճ մակարդակի պատճառով նույնիսկ էկոտուրիզմը բնապահպանական առումով կարող է վտանգավոր լինել:

Սպառնալիքի մեղմման ուղղությամբ նախաձեռնվող միջոցառումներից են բնապահպանական պետական ու միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը՝ ուղղված էկոտուրիզմի և ագրոտուրիզմի զարգացմանը, էկոհամակարգերի դերի ու արժեքի մասին բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Անդրսահմանային միացյալ քարտուղարություն-III-ը նպատակ ունի զարգացնել պահպանվող տարածքներում և դրանց շուրջ հանրապետական և մարզային մակարդակով կայուն զբոսաշրջությունը, ինչպես նաև աջակցել փաստաթղթերի ձևակերպմանը և ծառայությունների մշակմանը: Այդ նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

1. ԲՀՊՏ-ներում կայուն զբոսաշրջության չափանիշների և ուղեցույցների մշակում.
2. կադրերի պատրաստում.
3. կայուն զարգացմանը նպաստող ծառայությունների մշակում.
4. ԲՀՊՏ-ների՝ որպես էկոտուրիզմի ուղղություններ, տարածաշրջանային և անդրսահմանային ցանցերի ձևավորում.
5. տեղական և միջազգային շուկայում առաջարկների առաջխաղացում:

Կարևորվում է նաև անդրսահմանային զբոսաշրջային ծառայությունների զարգացման աջակցությունը ԲՀՊՏ-ների միջև միջսեկտորային համագործակցության և տուրօպերատորների ու համայնքների մասնակցության միջոցով, ինչը նախադրյալներ կստեղծի պահպանվող տարածքների ցանցի ձևավորման համար:

ԳԷՀ ՓԴԾ-ի շրջանակներում իրականացվող «Սպորտային և արկածային տուրիզմի զարգացում Ստեփանավանում» ծրագիրը (2018-2019 թթ.) նպատակ ունի բարեկարգել Ստեփանավանի անտառային տարածքներում հանգստի գոտիները՝ զբոսաշրջության ծառայություններից եկամտի ստացման հնարավորությունների օգտագործման միջոցով: Նախատեսվում է բնապահպանական ուղղվածության տեղեկատվական վահանակների և ցուցանակների տեղադրում, բնապահպանական հարցերի վերաբերյալ դասընթացների և սեմինարների կազմակերպում: Մեկ այլ ծրագիր՝ «Համայնքահեն էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում» (2018-2020 թթ.), ուղղված է Դսեղի և հարակից համայնքների բնակչության անտառից կախվածության նվազեցմանը՝ էկոտուրիզմի ներուժի օգտագործման և էկոկրթության միջոցով: Այն ներառում է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի դպրոցահասակ երեխաների համար տեղեկատվական և կարողությունների զարգացման դասընթացների իրականացումը, ագրոտուրիզմի զարգացման համար փառատոնների կազմակերպումը և ավանդական գիտելիքների հավաքագրումը:

Որսագողություն և չկանոնակարգված որս. Դեռևս 2007 թ. ընդունվել է «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է որսի և որսորդական տնտեսության ոլորտի հասարակական հարաբերությունները՝ ապահովելով որսի կենդանիների պահպանության, պաշտպանության, վերարտադրության ու կայուն օգտագործման, որսահանդակների պահպանության ու բարելավման, որսի և որսորդական տնտեսության վարման իրավական հիմունքները: Ելնելով այս օրենքի պահանջներից՝ ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 18-ի N 860-Ն որոշմամբ հաստատվել է «Կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

որսահանդակների ցանկը»: Այն սահմանել է կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) որոշման, պահպանման և օգտագործման սկզբունքները, որսահանդակների ցանկը, որսակենդանիների տեսականին: Որսահանդակների տարածքները որոշվում են՝ հիմք ընդունելով տվյալ տարածքում առկա որսի կենդանիների տեսակները և դրանց քանակը, որոնք գրանցված չեն Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում:

Թեպետ օրինական որսի իրականացման համար ստեղծվել են իրավական հիմքեր, բայց շատ դեպքերում դրանց կիրառումը չի իրականացվում պատշաճ մակարդակով: Սկսած 2011 թ.-ից գարնանային որսաշրջանի ժամկետները կրճատվել են մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը: Բացի այդ, վերջին տարիների ընթացքում կլիմայական սեզոնային տատանումների պայմաններում, որոնք ազդում են բնադրման ժամկետների վրա, պարբերաբար կատարվել են գիտականորեն հիմնավորված շտկումներ ինչպես որսաշրջանի ժամկետների, այնպես էլ թույլատրված որսակենդանիների տեսակային կազմի և քանակների վերաբերյալ:

Որսորդները հիմնականում չեն տիրապետում տեսակը որոշելու հմտություններին, որի արդյունքում կրակի տակ հաճախ հայտնվում են ԲՊՄՄ-ի կարմիր ցուցակում և Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Տաշիր ԿԹՏ-ում՝ Լոռու բարձրավանդակում, մանր լճերի և ջրաճահճային տարածքների (որոնք ջրլող թռչնատեսակների համար ծառայում են որպես բնադրատեղի և կուտակման վայր) սեփականացման և չկանոնակարգված որսի ակտիվացման արդյունքում արձանագրվել են թռչունների թվաքանակի նվազման միտումներ: Նման պատկեր է գրանցվել նաև Մեծամոր գետի համակարգում և Արմաշի ձկնաբուծարաններում: Անօրինական որսի պատճառով խիստ տուժում են չվող գիշատիչ թռչունները, քանի որ նրանց միգրացիան սկսվում է որսաշրջանի բացումից մեկ ամիս անց: Վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում անօրինական որսի պատճառով խիստ կրճատվել է Քարարծվի և Փոքր ենթարծվի թվաքանակը:

Դեռևս 2004 թ. իրականացվել է փորձնական ծրագիր՝ որսորդական տնտեսության ստեղծման նպատակով: ՀՀ կառավարության որոշմամբ Վայոց ձորի մարզի Եղեգիսի կիրճի 2400 հա և Սյունիքի մարզի Գեղիի ու Դարմանաձորի 495 հա տարածքներում գործում է «Սաֆարի Ինտերնացիոնալ» ՍՊԸ-ն, որն իրականացնում է խոշոր կաթնասունների պահպանություն, հաշվառում և մոնիթորինգ: Վայոց ձորի մարզի տարածքներում հաշվառման տվյալները ցույց են տվել, որ մասնավոր կազմակերպության կողմից պատշաճ պահպանության աշխատանքների իրականացման շնորհիվ կրկնապատկվել և եռապատկվել են բեզուարյան այծի, հայկական մուֆլոնի և գորշ արջի թվաքանակները: Ընկերությունը կազմակերպում և իրականացնում է կենդանիների (թռչունների) հաղթանշանային ու գիտական որս (բեզուարյան այծ, հայկական մուֆլոն, գորշ արջ)՝ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ձկնորսությունը և խեցգետնի որսն առավել զարգացած է Սևանա լճում և տեղի է ունենում անարդյունավետ վերահսկման պայմաններում: Վերջին երկու տարվա ընթացքում Սևանա լճում սիգի պաշարների վերականգնման միտումի հետ մեկտեղ սկսել է ակտիվանալ նաև ապորինի որսը: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ 2014 թ. ընթացքում ապորինի որսի չափը կազմել էր 80 տ, իսկ հետագա տարիներին, ձկնային պաշարների աճին զուգահեռ, ապորինի որսի ծավալը նորից սկսել է աճել: Անկառավարելի ձկնորսության հետևանքով լճում որսվող սիգի գիրացող և ձվադրող վտանգներում տարեցտարի նկատվում է զգալի երիտասարդացում, քանի որ հիմնականում որսվում է ձկների մայրական կազմը, ինչն անուղղելի վնաս է հասցնում ձկնային պաշարներին:

2018 թ. սեպտեմբերին արգելվել է 50 մմ-ից պակաս ցանցավանդակի չափ ունեցող պատրաստի ձկնորսական ուռկանների (ցանցերի) ներմուծումը Հայաստան, որպեսզի բացառվի ոչ արդյունազորական մեծության ձկան որսը:

Ի դեպ, սիրողական ձկնորսության համար 2018 թ.-ին ֆիզիկական անձանց տրամադրված թույլտվությունների քանակն աննախադեպ մեծ է եղել (2000-ից ավել):

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.epiu.am; www.forestcommittee.am; forest-monitoring.am; www.armstat.am; www.mes.am; www.minagro.am; www.edu.am; <http://www.minenergy.am>; <http://www.scws.am/>; www.sczhe.sci.am/; www.sevanlake.am/en/the-problem-of-lake-sevan/; www.wrma.am; www.armmonitoring.am; www.sevanpark.am; <http://www.sczhe.sci.am/>; www.sgp.am/am/Projects?id=60; <http://www.sgp.am/am/Projects?id=97>
www.mnp.am/images/files/naxagic/2014/01_23_04_2014_pesticid_cragir_tex.doc

Գնահատման մակարդակի հավաստիությունը

Հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում սահմանափակ քանակով:

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը.



- Տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը:

Ազգային նպատակային խնդիր 7.

Սահմանել խրախուսման մեխանիզմներ կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործման համար

Ազգային նպատակային խնդրի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

- Իրականացմանը նպաստող ընթացք:

Կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստող դրական խթանների արդյունավետությունը կապված է ԷԾ-ների վճարումների համակարգի ներդրման հետ, որը Հայաստանում օրենսդրական և տնտեսական մեխանիզմների բացակայության պատճառով ներկայումս չի գործում: Ինչ վերաբերում է Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգի զարգացմանը նպաստող փոխհատուցման և խրախուսման մեխանիզմներին, ապա դրանց հիմքում պետք է դրվեն ԲՀՊՏ-ների կառավարման ոլորտում հանրության մասնակցության ուժեղացումը և բնական ռեսուրսների կառավարման կարողությունների ձևավորումը: Գործող ԲՀՊՏ-ների սահմանների ընդլայնման, նոր ԲՀՊՏ-ների և էկոլոգիական միջանցքների ստեղծման գործընթացներում չի բացառվում, որ դրանց հարակից հողօգտագործողներն արդյունավետ վերահսկողության միջոցների բացակայության դեպքում կարող են ուժեղացնել ճնշումը բնական ռեսուրսների վրա՝ իրենց եկամտի կորուստները փոխհատուցելու համար: Նման դեպքերում կարելի է օգտագործել այնպիսի միջոցներ, որոնք միջնորդված աջակցում են հիմնական նպատակներին հասնելու գործողություններին: Այդպիսի միջոցառումներից է կենսաբազմազանությունից կախյալ ապրանքների և ծառայությունների զարգացման ու առևտրայնացման աջակցությունը, ինչպիսիք են՝ կայուն զբոսաշրջությունը կամ էկոտուրիզմը և ոչ բնափայտային անտառային ռեսուրսների օգտագործումը: Անուղղակի խրախուսման միջոցներից են նաև համայնքային ռեսուրսների կառավարման ծրագրերը կամ ԲՀՊՏ-ների մասնակցային կառավարման մոդելները, ինչը, մեծացնելով տեղաբնակների իրազեկվածությունը դրական ազդեցություն է ունենում բնական ռեսուրսների օգտագործման վրա: Այս դեպքում խրախուսման մեխանիզմների ներդրումը կնպաստի ինչպես ԲՀՊՏ-ների կառավարման իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետությանը, այնպես էլ ԲՀՊՏ-ների մասնակցային կառավարման գործընթացներում շահագրգիռ կողմերի մասնակցության բարձրացմանը: Նման խրախուսման մեխանիզմների կիրառումը նախատեսված է ԲՀՊՏ-ՌՊԾ-ով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ազրոկենսաբազմազանության պահպանության և կայուն գյուղատնտեսության բնագավառներում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են փոխհատուցման լծակների կիրառմանը: Այսպես, հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը նպաստելու և սահմանամերձ շրջաններում գյուղատնտեսական համակարգերը զարգացնելու նպատակով՝ Հայաստանի գյուղնախարարությունը նախաձեռնել է «Փաստացի ցանված աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար պետական աջակցության տրամադրում» ծրագիրը, որի համաձայն, սահմանամերձ 37 բնակավայրերի հողօգտագործողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն աշնանացան հացահատիկային մշակաբույսերի փաստացի ցանված ցանքատարածությունների համար (60000 դրամ յուրաքանչյուր հեկտարի հաշվով): Ծրագիրն իրականացման փուլում է, որի արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել ծրագրի ավարտից հետո: Ըստ կանխատեսումների՝ տրամադրվող աջակցության շնորհիվ վարելահողերի վար, նախացանքային մշակություն և ցանք կատարվելու է 33 հեկտարի վրա:

Պտղաբուծության զարգացման, ոլորտում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի մեղմման, բնական աղետների պատճառած վնասների նվազեցման նպատակով հանրապետությունում իրականացվում է «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը, որի շրջանակներում նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ տնտեսվարողների կողմից ներդրվում են կարկտապաշտպան ցանցեր: Վերջիններս որակյալ բերքի ստացման կայուն երաշխիք են և գրեթե 100 %-ով պաշտպանում են այգիները կարկտահարությունից, ինչպես նաև քամիներից, թռչունների վնասներից: Ներկայումս հանրապետությունում կարկտապաշտպան ցանցերը տեղադրված են շատ սահմանափակ տարածքների վրա: 4 հեկտար պտղատու և 5 հեկտար խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցեր տեղադրվել են ՄԱԿ-ի ՊԳԿ-ի (FAO) տեխնիկական օժանդակությամբ, իսկ ԵՄ-ի կողմից՝ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացում» ծրագրի ֆինանսավորմամբ մոտ 100 հեկտար տարածքի վրա: Ծրագրի արդյունքում ակնկալվում է տարեկան շուրջ 395 հեկտար խաղողի և պտղատու այգիներում կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրումը: Վանաձոր քաղաքում արդեն շահագործվում է տարածաշրջանում միակ կարկտապաշտպան ցանցերի և դրանց ներդրման ողջ համակարգի արտադրամասը, որը հնարավորություն է տալիս խթանել կարկտապաշտպան ցանցերի կիրառումը՝ ապահովելով բնական աղետներից բերքի երաշխավորված պաշտպանություն:

2017 թ. մշակվել և իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիրը, որը նպատակ ունի մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկույզների խթանմամբ հանրապետությունում զարգացնել պտղաբուծությունը, ավելացնել պտղի և հատապտղի արտադրության ծավալները, փոխարինել ներմուծումներն ու ավելացնել արտահանման ծավալները:

Հաշվի առնելով աշխարհում ֆիլոքսերայի հանդեպ քիմիական պայքարի որևէ արդյունավետ միջոցի բացակայությունը՝ ՄԱԿ-ի ՊԳԿ-ի (FAO) կողմից մշակվել և իրականացվում է «Տեխնիկական աջակցություն խաղողի ֆիլոքսերադիմացկուն հավաստագրված տնկանյութի արտադրությանը» ծրագիրը (2018-2020 թթ.), որի նպատակն է նպաստել ֆիլոքսերայի հետագա տարածման կանխարգելմանն ու ազդեցության վնասների մեղմմանը: Նախատեսվում է կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ արտադրել խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութ՝ կանխելով արտերկրից ներկրվող տնկանյութի հետ ֆիլոքսերայի լրացուցիչ օջախների, այլ վնասատուների ու պաթոգենների հետագա տարածումը: Ծրագրի իրականացումը կնպաստի կանխարգելել արտերկրից ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների ներկրումը և, հետևաբար՝ ֆիլոքսերայի լրացուցիչ օջախների և այլ վտանգավոր վնասատուների ու պաթոգենների հետագա տարածումը: Կենսատեխնոլոգիական եղանակով արտադրված խաղողի պատվաստացուների և ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների բույսերը կպահպանվեն in vitro գենբանկում և մատչելի կլինեն բոլոր շահագրգիռ անձանց համար:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.minagro.am; www.edu.am

www.un.am/hy/news/791; [http://minagro.am/AB- /](http://minagro.am/AB-/);

<https://eeas.europa.eu/delegations/armenia/52997/node/52997> hy;

Գնահատման մակարդակի հավաստիությունը

Հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի և ճշգրտության սահմանափակ լինելով:



Ազգային նպատակային խնդիր 8.

Բարելավել մշակովի բույսերի և ընտանի կենդանիների վայրի ցեղակիցների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսակետից արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանության պահպանությունը

Ազգային նպատակային խնդրի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիան.

ԱՆԽ-ի իրականացմանը նպաստող ընթացք:

Հայաստանը համաշխարհային կարևորություն ունեցող մշակաբույսերի գենետիկական բազմազանության շտեմարան է, որում ներկայացված են տնտեսական արժեք ունեցող տարբեր մշակաբույսերի սելեկցիոն և ավանդական սորտեր, մշակաբույսերի վայրի ցեղակիցներ և վայրի ուտելի բույսեր: Թվարկված ԳՌ-ները, որպես երկրի ագրոկենսաբազմազանության կարևոր բաղադրամասեր, նպաստում են գյուղատնտեսական արտադրության կայունությանը և առանցքային դեր ունեն պարենային ապահովության ու բնակչության բարեկեցության համար՝ համարվելով ազգային ժառանգության և ինքնիշխանության մի մաս: ԳՌ-ները ծառայում են որպես ելանյութ մշակաբույսերի նոր՝ միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարված, բարձրարժեք սորտերի ստացման համար, նպաստում են էկոհամակարգերի կայունությանը, ԷԾ-ների պահպանությանը և կլիմայի փոփոխության դիմակայմանը:

Հաշվի առնելով Հայաստանի ԳՌ-ների նշված դերը՝ դրանց պահպանությունը, կայուն ու շարունակական օգտագործումը ձեռք են բերում հարաճուն կարևորություն, որպես գյուղատնտեսական և բնապահպանական քաղաքականությունների էական բաղադրիչ: ԳՌ-ների պահպանումն ու օգտագործումն իրականացվում է գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ սահմանված առաջնությունների համաձայն, որում առանձնակի ուշադրություն է դարձվում մշակաբույսերի տեղական հին սորտերի և նրանց վայրի ցեղակիցների պահպանմանը, գենետիկական բանկի հնարավորությունների ընդարձակմանը, տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների և բուծարանների ստեղծմանն ու բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործմանը:

«Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» ուրվագծում է գյուղատնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները և սահմանում խնդիրներ, որոնց թվում են բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման հիմնահարցերը, որոնց լուծման համար Հայաստանում իրականացվում են մի շարք գործողություններ և ազգային ու միջազգային ծրագրեր՝ բխելով ԿԲԿ-ի նպատակներից, որոնց շրջանակներում Հայաստանը ստանձնել է



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

պարտավորություններ ԳՌ-ների պահպանության և կայուն օգտագործման, դրանց մատչելիության ապահովման համար:

Բուսաբուծության ճյուղի կայունությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 22-ի N 7-17 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, ոլոռի, սիսեռի, գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի և հնդկացորենի արտադրության զարգացման» ծրագիրը, որը միտված է հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, դրանց ներկրման քանակի նվազեցմանը, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը:

Հաշվի առնելով մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում սերմնաբուծական համակարգի ստեղծման ռազմավարական նշանակությունը՝ իրականացվում է հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի պետական սերմնաբուծության ու սերմարտադրության ծրագիրը, որի նպատակն է ավելացնել երկրում արտադրված, բարձր որակ ապահովող սերմանյութի արտադրական ծավալները, հարստացնել մշակաբույսերի սորտային կազմը, որն իր հերթին կնպաստի մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Նախատեսված է կատարել շուրջ 10.5 հազ. հեկտար աշնանացան ցորենի և գարնանացան գարու, 500 հեկտար հատիկաընդեղեն և 450 հեկտար կերային մշակաբույսերի ցանք:

Հայաստանի գյուղատնտեսության նախարարության բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի և երկրագործության գիտական կենտրոններում իրականացվող ծրագրերի շրջանակներում վերջին երեք տարում ստեղծվել և շրջանացվել են բանջարաբուստանային 18 մշակաբույսերի 130 տեղական սորտեր և հիբրիդներ, շրջանացվել է աշնանացան ցորենի՝ 14, աշնանացան գարու՝ 4, սիսեռի՝ 9, սոյայի՝ 2, ոլոռի և գետնանուշի՝ մեկական սորտ: Ներկայումս պետական սորտափորձարկման մեջ են գտնվում աշնանացան ցորենի՝ 3, գարու՝ 2 և սոյայի 1 սորտ, ինչպես նաև բանջարաբուստանային մշակաբույսերի 24 հեռանկարային սորտեր և հիբրիդներ:

Բուսաբուծության ճյուղի զարգացման գերակայությունների թվում է այգեգործության զարգացումը, որը ներառում է 420 հազ. հա վարելահողերի լիարժեք օգտագործումը, դրանից առնվազն 400 հազ. հա ինտենսիվ մշակության և գյուղատնտեսական մշակաբույսերի ու դրանց վայրի ցեղակիցների գենետիկական ռեսուրսների պահպանությունն ու կայուն օգտագործումը: Ներկա պայմաններում, հաշվի առնելով նաև մասնատված փոքր հողատեսքերի առկայությունը, արդիական է դառնում ինտենսիվ այգեգործության զարգացումը: Ինտենսիվ այգիները, ի տարբերություն ավանդական այգիների, հնարավորություն են տալիս կարճ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ժամանակում հասնել բարձր բերքատվության, որակյալ բերք ունենալ և ապահովել ներդրումների արագ վերադարձելիությունը: 2017 թ. մշակվել և իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիրը, որից ակնկալվում է մինչև 2022 թ. ինտենսիվ այգիների տեսակարար կշիռն ընդհանուր այգետարածքում հասցնել 15-20 տոկոսի: 2016 թ. դրությամբ Հայաստանի տարածքում հիմնված ինտենսիվ այգիների տարածությունը կազմում էր 242 հեկտար, 2017 թվականին այն ավելացել է 294 հեկտարով, իսկ 2018 թվականին՝ ևս մոտ 190 հեկտարով:

Հայաստանի կրթության և գիտության նախարարության խաղողապտղագինեգործության գիտական կենտրոնի կողմից իրականացվում են աշխատանքներ՝ ուղղված խաղողի և պտղատու տեսակների արժեքավոր սորտերի հավաքագրմանը, տնկանյութի աճեցմանը, նոր կոլեկցիոն և մայրուտային այգիների հիմնմանն ու գոտիականության բաշխվածության ճշգրտմանը: Ծրագրի շրջանակներում 2016 թ. Արարատի մարզի Այգավան գյուղի ֆերմերային տնտեսությունում հիմնվել է տնկարան՝ մոտ 195 խաղողի սորտերի, կլոնների և ձևերի ներգրավմամբ: Փոքր տնկարան է հիմնվել նաև Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Մերձավան համայնքի ֆերմերային տնտեսությունում՝ մոտ 15 սորտերի ներգրավմամբ: «Հայաստանի մշակովի և վայրի խաղողի կենսաբազմազանության նշանակությունը բնապահպանական հաշվեկշռում» ծրագրի շրջանակներում բացահայտվել են մշակովի և վայրի խաղողի դեռևս պահպանված գենետիկական այն ռեսուրսները, որոնք դիմացկուն են հիվանդությունների և պաթոգենների ու շրջակա միջավայրի փոփոխվող պայմանների նկատմամբ ցուցաբերում են առավել հարմարվողականություն, ներկայացվել է խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանման կայուն ռազմավարություն, որն ունի բնապահպանական կարևոր նշանակություն:

Խաղողի յուրահատուկ գենետիկական ռեսուրսների պահպանությունը չափազանց կարևոր է երկրի համար ինչպես ագրոկենսաբազմազանության պահպանման, այնպես էլ գինեգործության զարգացման համար: Այդ նպատակով ՄԱԿ-ի ՊԳԿ-ի ֆինանսավորմամբ իրականացվել է «Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում» ծրագիրը (2015-2016 թթ.), որի նպատակն էր ապահովել Հայաստանում խաղողի արտադրության կայուն զարգացման համար խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանությունը և այդ նպատակով հիմնել խաղողի կոլեկցիոն այգի: Ծրագրի արդյունքում Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանում հիմնվել է խաղողի ցուցադրական այգի՝ սպիտակապտուղ տեխնիկական սելեկցիոն կանգուն (0.5 հա) և սեղանի աբորիգեն վարդագույն Երևանի (կարմիր քիշմիշ – 0.5 հա) սորտերով: Վերոհիշյալ այգու հարևանությամբ հիմնադրվել է խաղողի կոլեկցիոն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

(ամպելոգրաֆիական) այգին (1.3 հա)՝ մոտ 300 սորտերի ներգրավմամբ: Նույն ծրագրի շրջանակներում ֆիլոքսերադիմացկուն 6 սորտ-պատվաստակալների և եվրոպական խաղողի 6 սորտերի կտրոնների արտերկրից ներկրման շնորհիվ հիմնվել են 2.0 հա ֆիլոքսերադիմացկուն սորտ-պատվաստակալների մայրուտային այգի և 0.1 հա տնկարան: Արդյունքում՝ խաղողի մշակությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունները կապահովեն խաղողի բարձրակարգ պատվաստված տնկանյութ:

Խաղողի հարուստ գենոֆոնդի պահպանության և հետագա օգտագործման տեսանկյունից կարևորվում են Երևանի պետական համալսարանի կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնում իրականացված խաղողի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրությունների շնորհիվ հայտնաբերվել և նկարագրվել են խաղողի անտեսված և մոռացված մի շարք տեղական սորտեր, հետազոտվել է դրանց գենետիկական, ձևաբանական և էնոլոգիական բազմազանությունը: Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու մարզերում իրականացվել է Հայաստանի խաղողի արորիգեն սորտերի, ինչպես նաև վայրի *Vitis vinifera* L. subsp. *silvestris* տեսակի պոպուլյացիաների գենետիկական ուսումնասիրություն, որի ընթացքում նույնականացվել են սորտերը, որոշվել են նոր սորտեր և կենսաձևեր:

Գենետիկական եղանակով ուսումնասիրվել է Վայոց ձորի Արենի-1 քարայրից հայտնաբերված խաղողի ընծյուղը, որի տարիքը ռադիոածխածնային եղանակով ընդունվել է որպես զարգացած միջնադար (780-1000 թթ.): Պարզվել է, որ այն Գնիշիկաձորում, Նորավանքի երբեմնի վանքապատկան այգիներում մինչ օրս պահպանված Սև Արենի սորտի հետ գենետիկական որոշակի նմանություն ունի, ինչն էլ թույլ է տալիս նախնական պատկերացում կազմել Արենի սորտի հնարավոր նախնիների վերաբերյալ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի ծրագրերը նպաստում են տեղական ծագման մշակաբույսերի և դրանց վայրի ցեղակիցների վտանգված տեսակների ex-situ պահպանությանը և in vitro տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ պահպանության արդյունավետության մեծացմանը: Մասնավորապես վերականգնվել և ներկայումս պահպանվում են in vitro հավաքածուում խաղողի մոտ 10 ավանդական սորտեր, որոնք ֆերմերային տնտեսություններում հանդիպում են առանձին վազերի տեսքով: Ստեղծվել է կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի հավաքածուն՝ մոտ 30 սորտերի ներգրավմամբ, որը պատրաստ է՝ բազմացման և արտադրության մեջ օգտագործելու համար: Ներկայումս կենտրոնի գենետիկական բանկի սերմերի հավաքածուի նմուշների թիվը կազմում է 3135, որը 2014 թ. համեմատ ավելացել է 522 նմուշով (20 %-ով): Գենբանկի նմուշների հիմնական քանակը ներկայացված է հացահատիկային (962 նմուշ), հատիկաընդեղեն (550 նմուշ) և բանջարային (750 նմուշ) մշակաբույսերի սելեկցիոն, ավանդական սորտերով և դրանց վայրի ցեղակիցներով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

«Հազարամյակի սերմերի բանկ» ծրագրի շրջանակներում Մեծ Բրիտանիայի Քյուի թագավորական բուսաբանական այգու, Բեռլին-Դաիլեմի բուսաբանական այգու և բուսաբանական թանգարանի աջակցությամբ Հայաստանի ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում ստեղծվել է սերմերի բանկ, ձեռք են բերվել սարքավորումներ սերմերի երկարաժամկետ պահպանման համար, մասնագետներն անցել են վերապատրաստման դասընթացներ սերմերի հավաքի, ծլունակության որոշման և այլ հարցերի վերաբերյալ: Աստիճանաբար ընդլայնվում է սերմերի առկա հավաքածուն, մշակվում է սերմերի նմուշների տվյալների շտեմարան: Ներկայումս սերմերի հավաքածուն ընդգրկում է 51 ընտանիքի 251 ցեղի 552 տեսակի նմուշներ: Առավել ներկայացված են Լոբազգիներ (Fabaceae) (22 ցեղ, 64 տեսակ) և Հացազգիներ (Poaceae) (29 ցեղ, 64 տեսակ) ընտանիքները: 2018 թ.-ից «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում իրականացվում է «Հայաստանի ֆլորայի որոշ վտանգված տեսակների ex-situ պահպանությունը միկրոբազմացման և սերմերի հավաքածուների ստեղծման եղանակներով» ծրագիրը, որը կնպաստի ex-situ պայմաններում երկրի վտանգված տեսակների արդյունավետ պահպանության ապահովմանը:

Գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում» ուսումնասիրվում և պահպանվում է բանջարաբուստանային մշակաբույսերի տեղական սորտերի և պոպուլյացիաների հարուստ գենոֆոնդ, որն ընդգրկում է 3800-ից ավելի նմուշ. այն 2014 թվականի համեմատ ավելացել է 45 %-ով:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայում պահպանվում է երկրում սերմերի առաջին հավաքածուն, որը ստեղծվել է 1981 թ.: Հայաստանի մշակաբույսերի վայրի ազգակիցների եզակի գենոֆոնդը պահպանելու նպատակով: Ներկայումս լաբորատորիայում պահվում է մշակովի և վայրի հացահատիկային մշակաբույսերի, վայրի բանջարային բույսերի (ճակնդեղ, գազար, սոխ և այլն), համեմունքային (գինձ, մաղադանոս, կոտեմ, ծիտրոն և այլն) և հատիկաընդեղեն բույսերի (տափուղո, ոսպ, վիկ, երեքնուկ, առվույտ և այլն) 5523 նմուշ, որից 2523-ը (46 %) մշակաբույսերի վայրի ցեղակիցների նմուշներն են: Սերմերի հավաքածուն ներկայացված է վայրի և մշակովի հացահատիկային մշակաբույսերի 22 , կերային, բանջարային և պտղատու մշակաբույսերի 35 տեսակով: Լաբորատորիայի հավաքածուն 2014 թ. համեմատ ընդլայնվել է 1203 նմուշով (22 %-ով):

Կենսաբազմազանության բաղադրիչ հանդիսացող պարենի արտադրության և գյուղատնտեսության վարման համար բույսերի ԳՌ-ների սպառնալիքների շարքում է նաև գենետիկական էրոզիան, որը տեղի է ունենում ավանդական սորտերի հիբրիդային և ժամանակակից սորտերով արագընթաց փոխարինման հետևանքով: Այդ սպառնալիքի թուլացման նպատակով Հայաստանի ԿՌԳԱԾ-ով նախատեսված է մշակաբույսերի հին, ավանդական, մասնավորապես մշակությունից դուրս մղված



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

սորտերի, գենոֆոնդի վերականգնման և պահպանման գործողությունների ծրագրի մշակումը, որը թույլ կտա ծրագրված միջոցառումների իրականացման շնորհիվ պահպանել ավանդական սորտերի արժեքավոր գենոֆոնդը:

Մշակաբույսերի վայրի ցեղակիցների on-farm պահպանությանն ու կառավարմանն ուղղված ծրագրերի թվում է նաև ԳԷՀ ՓԴԾ-ի շրջանակներում իրականացվող «Բերդ Բերրի. վայրի հատապտուղների մշակության ու արտադրության խթանումը բարձրլեռնային համայնքներում՝ տեղական ագրո-էկոլոգիական համակարգի պահպանման համատեքստում» 2016-2018 թթ. ծրագիրը, որի նպատակն է աջակցել վայրի հապալասի (*Vaccinium uliginosum*), ալոճենու (*Crataegus*) և ծորենու (*Berberis vulgaris* L.) մշակությանն ու դրանց հիման վրա էկոարտադրության զարգացմանը: Ծրագրով ներդրվել է վայրի հապալասի, ալոճենու և ծորենու մշակություն գյուղացիական փոքր տնտեսությունների պայմաններում՝ վերջիններիս վայրի հավաքների ծավալը կրճատելու ու տեսակների պահպանմանը նպաստելու նպատակով: Միաժամանակ անցկացվել են վայրի բույսերի հավաքի պրակտիկ ուսուցումներ՝ արդյունավետ և ճիշտ հավաքի կանոնների, հատապտուղներ հավաքող սարքի գործածման և հավաքի կանոնակարգման վերաբերյալ:

Կենդանի բույսերի հավաքածուները կազմում են բուսաբանական այգիների ու դենդրոպարկերի հիմքը: Երևանի բուսաբանական այգում, բացի բաց գրունտում աճող շուրջ 1070 տեսակ ծառաթփային և մոտ 2000 տեսակ ծաղկային բույսերից, ջերմատնային պայմաններում պահպանվում են արևադարձային և մերձարևադարձային բույսերի շուրջ 500 տեսակ, որոնք պատկանում են 74 ընտանիքի և 150 ցեղի: «Հայաստանի ֆլորա և բուսականություն» մշտական էքսպոզիցիոն հողամասի հավաքածուն ներառում է մոտ 1000 բուսատեսակ, ինչը կազմում է Հայաստանի ֆլորիստիկ ֆոնդի մեկ երրորդը: Հողամասում ներկայացված են ինչպես լայն տարածում ունեցող և բուսաաշխարհագրական տեսանկյունից հետաքրքիր, այնպես էլ հազվագյուտ և անհետացող տեսակներ, տնտեսական հետաքրքրություն ներկայացնող (դեղատու, եթերայուղատու, գեղազարդային և այլն) մշակաբույսերի վայրի ցեղակիցներ և շատ այլ բուսատեսակներ:

Հայաստանը նաև գյուղատնտեսական կենդանիների բուծարանային և էնդեմիկ ցեղերի ու դրանց վայրի նախնիների բազմազանության, դրանց ծագման, ստեղծման և պահպանման մշակութային հնագույն կենտրոններից է: Հայաստանի գյուղատնտեսական կենդանիների բուծման կարևոր օջախ լինելու մասին է խոսում նաև ընտանի կենդանիների վայրի ցեղակիցների առկայությունը: Երկրում մինչև օրս կան վայրի ոչխար, այծ, խոզ, որոնցից համապատասխանաբար առաջ են եկել դրանց ժամանակակից ընտանի տեսակները: Հայաստանում բուծվող ոչխարների էնդեմիկ ցեղերը սերվում են հայկական մուֆլոնից, որը փաստորեն ընտանի ոչխարների հեռավոր ազգակիցն է, իսկ պարենային ապահովության և կենսաբազմազանության պահպանության տեսակետից կարևոր նշանակություն ունեցող ձկնատեսակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

(կողակ, կարմրախայտ, Սևանի իշխան) մեր երկրի էնդեմիկներ են: Անցյալ դարի քսանական թվականներից սկսված Սևանա լճի ջրի մակարդակի իջեցումը կտրուկ փոխեց էնդեմիկ ձկնատեսակների ապրելավայրերի և ձվադրավայրերի վիճակը: Այդ ժամանակից մինչև այժմ Սևանի իշխանի գենետիկական ռեսուրսի պահպանությունը հաջողվում է իրականացնել ձկնաբուծարաններում միայն արհեստական վերարտադրության շնորհիվ:

Հայաստանը 2010 թ.-ից ի վեր «Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կենտրոնական Ասիայում և Կովկասում ձկնաբուծության և ակվակուլտուրայի տարածաշրջանային հանձնաժողովի (CACFish)» անդամ է: Արդյունագործական ձկնորսության և ակվակուլտուրայի, ինչպես նաև ջրային էԾ-ների ամբողջ ծավալով տրամադրումը հիմնված է ՋԳՌ-ի վրա: ՋԳՌ-ի օգտագործումը և փոխանակումը եղան այն կարևոր տարրերը, որոնք թույլ տվեցին ակվակուլտուրային դառնալ սննդի արդյունաբերության ամենաարագ աճող և եկամտաբեր ոլորտը: Այնուամենայնիվ, մեր տարածաշրջանում ՋԳՌ-ի պահպանումը դեռևս առաջնային խնդիր չի համարվում, քանի որ ձկան պաշարների գենետիկ վերակառուցման համար անհրաժեշտ են հատուկ և երկարաժամկետ ազգային ծրագրեր էկոհամակարգերի և ապրելավայրերի վերականգնման, սելեկցիոն բուծման և գենային բանկերի ստեղծման առումով:

Սոցիալ-տնտեսական տեսակետից արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանության պահպանությունը մի կողմից, գյուղատնտեսության զարգացումը մյուս կողմից՝ բնապահպանական ռազմավարությունների խաչմերուկում գտնվող թիրախ են: Այս երկու բնագավառներին բնորոշ մի շարք հիմնահարցեր իրենց լուծումը կարող են ստանալ երկրում օրգանական գյուղատնտեսության զարգացման միջոցով, որը գյուղատնտեսական արտադրության բարելավմանն ու խրախուսմանը նպատակաուղղված համակարգ է: Օրգանական գյուղատնտեսության ոլորտում չեն կիրառվում տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ, քիմիական պարարտանյութեր, այլ օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում գոմաղբ), և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով: Արդյունքում չի խաթարվում վայրի կենսաբազմազանությունը, պահպանվում են առողջ ագրոէկոհամակարգերը, կենսաբանական շրջափուլերը և երկրի գենետիկական ռեսուրսները: Օրգանական գյուղատնտեսությունն առաջնորդվում է կենդանի օրգանիզմներին բնորոշ տրամաբանությամբ և սկզբունքներով, որտեղ բոլոր տարրերը (հող, բույս, գյուղատնտեսական կենդանիներ, միջատներ, ֆերմերի գործունեություն և տեղական պայմաններ) սերտորեն կապակցված են:

Հայաստանում ներուժային մեծ հնարավորություն կա օրգանական գյուղատնտեսության զարգացման համար, որի հետ կապված մեծ աշխատանքներ են տարվում տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից: Հարկ է



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

նշել «Էկոգլոբ», «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն», «Կանաչ արահետ», «Կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» և այլ կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները: Մասնավորապես՝ «Էկոգլոբ» ՍՊԸ-ն միջազգային ճանաչում ունեցող օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության սերտիֆիկացման մարմին է, որը տարբեր շուկաների համար իրականացնում է օրգանական հավաստագրում հողի, բուսական և կենդանական արտադրության մթերքների, ինչպես նաև վայրի պտուղների հավաքի, մեղվապահության ու գինու ոլորտներում: Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպությունը, նպատակ ունենալով նպաստել Հայաստանում կայուն գյուղատնտեսության զարգացմանը, համագործակցում է գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների հետ՝ իրականացնելով բազմաթիվ ծրագրեր ու նախաձեռնություններ և աջակցելով էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությանը: «Էկոգլոբ» օրգանական հավաստագրման մարմնի վիճակագրական տվյալների համաձայն՝ 2014 թ. որպես օրգանական տնտեսություն հավաստագրված է եղել 17 գյուղացիական տնտեսություն, օրգանական երկրագործության տակ ընդհանուր հողատարածքը կազմել է 500 հեկտար, իսկ 2017 թ. հավաստագրված տնտեսությունների թիվը կազմել է 36, օրգանական երկրագործության վարման ընդհանուր հողատարածքը՝ 730 հեկտար: 2018 թ. հոկտեմբերի դրությամբ բուսաբուծության ոլորտի ևս 21 տնտեսություն գտնվում է հավաստագրման անցումային փուլում:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով 2015 թ. սեպտեմբերից մեկնարկել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որը համաֆինանսավորվում և իրականացվում է Ավստրիայի զարգացման գործակալության կողմից: Բարելավելով օրենսդրությունը և տրամադրելով համապարփակ մարքեթինգային աջակցություն՝ ծրագիրը հանգեցնում է օրգանական արժեչղթայի մասնակիցների և ծավալների զգալի աճին՝ նպաստելով երկրում հանքային պարարտանյութերի և պեստիցիդների կիրառման ծավալների կրճատմանը և բնական էկոհամակարգերի ու կենսաբազմազանության պահպանմանը:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:



Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am/; www.minagro.am/; www.edu.am/; <http://www.botany.sci.am/>;
<http://rcvc.agro.am/>; www.un.am/hy/news/791; http://minagro.am/AB-_____/;
<http://www.sgp.am/am/Projects?id=73>;
https://eeas.europa.eu/delegations/armenia/52997/node/52997_hy;
https://cdn2-eeas.fpfis.tech.ec.europa.eu/cdn/farfuture/5T3Djh0Zbsc5WUOrQqCUQPDrrpgs0dh7AReK4FOv7eqQ/mtime:1519816819/sites/eeas/files/oasi_fs_arm_final.pdf
<http://dcf.am/en/projects/136>; <http://www.fao.org/armenia/news/detail-events/en/c/428505/>
<http://www.fao.org/armenia/programmes-and-projects/success-stories/tcparm3302-project/en/>; www.ecoglobe.com; <https://greenlane.am/en/home/>

1. N.A. Hovhannisyanyan, M.V. Dallakyan. Esoyan, I.M. Manukyan, A.H. Yesayan, Preliminary data on morphological, genetic and enological diversity of neglected autochthonous, S.S grape varieties of Armenia, Biolog. Journal of Armenia, 4 (68), 2016, 98-104

Գնահատման մակարդակի հավաստիությունը.

Հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում քանակի սահմանափակ լինելով:

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը.

Տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը:

Ազգային նպատակային խնդիր 9.

Ուժեղացնել համագործակցությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև, բարձրացնել բնակչության իրազեկվածությունը կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիա.

Առաջընթացն առկա է, բայց տեմպն անբավարար է:

Լրացուցիչ տեղեկատվություն. Երկրի զարգացման ներկա փուլում նկատվում է որոշակի դրական առաջընթաց՝ որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության, համայնքային խնդիրների նկատմամբ բնակիչների



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

շրջանում անտարբերության նվազման առումով, սակայն դեռևս շատ են դեպքերը, երբ բնակչության մասնակցությունը շրջակա միջավայրի, կենսաբազմազանության պահպանության ծրագրերին և միջոցառումներին կրում է ձևական բնույթ: Հանրապետությունում դեռևս արձանագրվում է տարբեր ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ԿԲԿ-ի սկզբունքների անտեսում, երկրում ընթացող գործընթացների միջև փոխկապվածության բացակայություն, կոնվենցիայի հիմնախնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունող մարմինների ցածր իրազեկվածություն, բնակչության էկոլոգիական կրթվածության ցածր մակարդակ, էկոլոգիական մշակույթի բացակայություն:

Վերջին տարիներին Հայաստանի օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ազգաբնակչության էկոկրթության և դաստիարակության, ինչպես նաև բնապահպանական տեղեկատվության տարածման և իրազեկվածության բարձրացման բնագավառում կատարվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնցից կարևորվում է ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 22-ի N 7 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությունը»: Ռազմավարության նպատակն է Հայաստանում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումը, այդ բնագավառում պետության, հասարակության և միջազգային կառույցների միջև համագործակցության ընդլայնումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, հասարակության էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որը կապահովի անհատների և հասարակության գործունեության բոլոր ձևերում պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ: Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության կատարման նպատակով Հայաստանի բնապահպանության նախարարության կողմից մշակվել է ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիր:

Ակնհայտ է, որ էկոլոգիական խնդիրներին բնակչության ճիշտ արձագանքման և հանրության ու պետության միջև փոխվստահելի հարաբերությունների ձևավորման համար անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվության առկայություն, որի արդյունավետ օգտագործումը ենթադրում է ուսուցանված և իրազեկված մարդկային ռեսուրսներ: Ներկայումս տարբեր ոլորտների մասնագետների ոչ ֆորմալ կրթությունը հիմնականում կատարվում է դրանց մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով՝ անտեսելով համամոլորակային կարևորություն ունեցող էկոլոգիական հիմնախնդիրները, որոնց ազդեցությունը երկրի կայուն զարգացման գործընթացների վրա անվիճելի է:

ԳԷՀ-ի ֆինանսավորմամբ և ՄԱԶԾ-ի կողմից համաֆինանսավորվող «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության և իրազեկման բարձրացման միջոցով» (2015-2019 թթ.) ծրագրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

առանցքային նպատակներից են էկոլոգիական կրթությունը և հանրային իրազեկվածության բարձրացումը: Ծրագիրը միտված է ընդլայնել երկրի կարողությունները՝ օգտագործելով էկոլոգիական կրթությունը և գիտելիքների բարձրացումը որպես գլոբալ և ազգային բնապահպանական օգուտների մշակման գործիքներ, ինչպես նաև Ռիո-յի կոնվենցիաների ռազմավարությունները իրականացնելու համար: Ծրագրի շրջանակներում մշակվել են բնապահպանական կրթության վերապատրաստման դասընթացների փաթեթներ՝ նախարարություններում, պետական մարմիններում, տարածաշրջանային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում որոշում կայացնողների համար: Փաթեթները ներառում են բնապահպանական թեմաների լայն շրջանակ, այդ թվում՝ Հայաստանի բնապահպանական մարտահրավերներ և հնարավորություններ, կայուն գյուղատնտեսություն, կայուն քաղաքներ, կայուն անտառներ, կենսաբազմազանություն և այլն:

2018 թ. «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կատարվել է «Կանաչ» աշխատաշուկայի գնահատում, որի ընթացքում պարզ դարձավ, որ առկա է առանցքային անհամապատասխանություն գործատուների ակնկալիքների, պահանջների և կրթական համակարգի կողմից կենսաբանական ոլորտում ձևավորվող հմտությունների միջև: «Կանաչ» աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև առկա ոչ բավարար կապերը չեն կարող ապահովել կայուն և նշանակալի արդյունքներ, և դրանց թափ հաղորդելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ազդակներ: Ուսումնական հաստատությունները, աշխատաշուկայում ներկայացված միավորները, կառավարությունը կամ այս երեք միավորները համատեղ կարող են խթանել համագործակցությունը նոր ծրագրերի, նախաձեռնությունների և նոր քաղաքականությունների մշակման միջոցով:

Վերջին տարիների ընթացքում միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող տարբեր ծրագրերի շրջանակներում անցկացվել են դասընթացներ և իրազեկվածության բարձրացման աշխատանքներ, որոնց թեմաները նվիրված են բնապահպանական հարցերի լուսաբանմանը (անտառօգտագործում, պահպանվող տարածքներ, էկոտուրիզմ, Կիոտոյի արձանագրություն, կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության խոցելիության նվազեցում և այլն): Սակայն կենսաբազմազանության պահպանության և հատկապես կենսաբազմազանության գնային արժեքավորման հետ կապված ոլորտային խնդիրները անբավարար են ընդգրկված բնակչության հետ տարվող աշխատանքներում, ինչպես նաև էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգում ու ԶԼՄ-ների կողմից իրականացվող քարոզչական արշավներում: Արդյունքում ճիշտ որոշումների ընդունման համար իրազեկվածության ցածր մակարդակը, անհրաժեշտ ուսումնասիրությունների ու տեղեկատվական բազայի ոչ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱՐՔԱՉԱՐԱՋԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

լիարժեքությունը, կենսաբազմազանության ու էԾ-ների կարևորության թերի ընկալումը խոչընդոտում են այն գործընթացների ծավալումը, որոնք կարող են սահմանափակել կենսաբազմազանության հետագա կորուստը և բնական կապիտալի ոչնչացումը:

Կենսաբազմազանության արժեքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը միտված միջոցառումներն իրականացվել են ԳԷՀ/ՄԱԿ-ի ՇՄԾ «Հայաստանյան գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավումը» տարածաշրջանային ծրագրով 2016-2019 թթ.: Մասնավորապես՝ պատրաստվել է հանրային իրազեկման և ուսումնական նյութերի լայն շրջանակ, ներառյալ «Բույսերը շրջակա միջավայրում», «Ագրոկենսաբազմազանության պահպանում», «Բույսերի աճելավայրերի կորուստ և տարաբնակեցում», «Տեղական ինքնակառավարման մարմնի որոշում ընդունելու գործընթացում մասնակցելու իրավունք», «Ավանդական երկրագործություն», «Մարզերում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման լավագույն փորձը», «Վայրի պտղատուներ և թփեր», «Գենետիկական բանկերի զարգացման կարևորությունը Հայաստանում», «Բարձրարժեք մշակաբույսերի և վայրի ազգակիցների մշակման ուղեցույց», «Պարենի, սննդառության և գյուղատնտեսության հետ կապված հազարամյակի զարգացման նպատակները» վերնագրերով ուսումնական նյութեր և բուկլետներ: Կազմակերպվել են ուսումնական դասընթացներ «Ագրոկենսաբազմազանության համար արժեշտային զարգացում» թեմայով:

Կենսաբազմազանության մասին գիտելիքների, կենսաբազմազանության գնային արժեքի ու գործունեության, կարգավիճակի և այդ բնագավառում միտումների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ են իրականացնում նաև մի շարք հասարակական և միջազգային կազմակերպություններ: Դրանցից են.

1. ԲՀՀ (WWF) հայաստանյան մասնաճյուղը, որի իրականացրած ծրագրերն ուղղված են Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացմանն ու հզորացմանը, վտանգված տեսակների պահպանությանը, էկոհամակարգերի վերականգնմանը, տեղական համայնքներում տնտեսական մեխանիզմների ներդրման և այլընտրանքային կենսամիջոցների ստեղծման միջոցով բնական պաշարների կայուն օգտագործմանն ու կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև բնապահպանական իրազեկվածության և էկոլոգիական կրթության մակարդակի բարձրացմանը:
2. 2002 թ.-ից Հայաստանի բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի օժանդակությամբ ստեղծվել են 15 բնապահպանական հասարակական տեղեկատվական կենտրոններ (Օրիու-կենտրոններ): Կենտրոնների առաքելությունն է պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի (տեղական



ինքնակառավարման մարմիններ, բիզնես սեկտոր, գիտնականներ, ՁԼՄ-ներ) միջև կապի և անհրաժեշտ այլ մեխանիզմների ստեղծումը՝ էկոլոգիական տեղեկատվության տարածման, ինչպես նաև բնապահպանական խնդիրների շուրջ քննարկումներին հասարակության մասնակցությունն ապահովելու համար: Որպես Օրիուսի կոնվենցիայի դրույթների կիրառման օրինակ կարող է ծառայել Մելիքոյուղի հարևանությամբ գտնվող Թուխմանուկի ոսկու բազմամետաղային հանքավայրը, որի շահագործումն առաջ էր բերել մի շարք բնապահպանական, սոցիալական և արտադրական անվտանգության խնդիրներ, ինչպես նաև համայնքի բնակիչների բացասական դիրքորոշումը հանքի հետագա գործունեության վերաբերյալ: Իրազեկվելով Օրիուսի կոնվենցիայով սահմանված բնապահպանական խնդիրների առնչությամբ տեղեկատվություն ստանալու և որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրենց իրավունքի մասին՝ բնակիչները պայքարեցին առողջ ու անվտանգ միջավայրում ապրելու իրենց իրավունքի համար: Ներկայումս հանքավայրի շահագործումը դադարեցված է:

3. 2004 թվականին ստեղծված «ԷկոԼուր» (www.ecolur.org) տեղեկատվական հասարակական կազմակերպության հիմնական առաքելությունն է բարձրացնել էկոլոգիական խնդիրների մասին հասարակության իրազեկվածության մակարդակը, իրականացնել առողջ կյանքի և առողջ շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների հավասար հասանելիության իրավունքների պաշտպանության հանրային քարոզարշավ, նպաստել էկոլոգիական/սոցիալական որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությանը: Կազմակերպությունն այն եզակի կառույցներից է, ով տրամադրում է հավաստի տեղեկատվություն՝ հիմնված դաշտային ուսումնասիրությունների, էկոլոգիական թեժ կետերի մոնիթորինգի, պաշտոնական փաստաթղթերի վերլուծության և գիտական շրջանակների հետ համագործակցության վրա:
4. Էկոնյուզ բնապահպանական համացանցային կայքը (www.econews.am) հիմնադրվել է 2012 թվականին: Կայքի նպատակն է վերհանել և հանրությանը ներկայացնել բնապահպանական խնդիրները, տեղեկատվական աջակցություն ցուցաբերել բնապահպանական խնդիրներով մտահոգված, հասարակական կամավորական գործունեություն իրականացնող բնապահպանական նախաձեռնությունների ներկայացուցիչներին և կազմակերպություններին:
5. Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բազայի հիման վրա գործող «Էկոլոգիական իրավունքի գիտակրթական կենտրոնը» կազմակերպում է համալսարանի, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, լրագրողների, բնապահպանական տեսչության, դատավորների համար ուսուցման դասընթացներ՝ կապված ազգային էկոլոգիական իրավունքի և բնապահպանական կոնվենցիաների դրույթների հետ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

6. Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության առաքելությունն է կրթական, խորհրդատվական, ներդրումային ծրագրերի միջոցով բարելավել գյուղատնտեսական, բնապահպանական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Հայաստանի համայնքներում:
7. Օրգանական գյուղատնտեսության զարգացման նկատառումներով բնապահպանական հասարակական կազմակերպությունները բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպում հանրապետության բոլոր մարզերում՝ ծանոթացնելու օրգանական գյուղատնտեսության հիմնական սկզբունքներին ու առանձնահատկություններին, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանքի առավելություններին, իրազեկելու ավանդականից օրգանական գյուղատնտեսության անցման համար անհրաժեշտ քայլերի, օրգանական տնտեսության վարման պայմանների ու պահանջների, բնական միջոցներով հողի բերրիության պահպանման, հողում սննդատարրերի պաշարների համալրման, հիվանդությունների ու վնասատուների կառավարման մասին:
8. Նագոյայի արձանագրության վավերացման համար նախադրյալներ ստեղծելու նպատակով աշխատանքներ են տարվում՝ շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը բարձրացնելու, արձանագրության վերաբերյալ ազգային մոտեցումները քննարկելու համար: Հաշվի առնելով տվյալ հարցում ողջամիտ որոշում կայացնելու դրական և բացասական կողմերի մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ Հայաստանի բնապահպանության նախարարությունը մտադիր է այդ վերլուծությունը կատարելու համար դիմել միջազգային կառույցներին՝ տեխնիկական աջակցություն ստանալու խնդրանքով:
9. Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում ստեղծվել է «Կենսաբազմազանության պահպանություն և կայուն օգտագործում» էջը, որը ներկայումս գտնվում է տվյալների հավաքագրման, մշակման և տեղադրման փուլում: Դպրոցականների համար կազմակերպում է կենսաբազմազանության ոլորտում գիտելիքների ձեռքբերման դասընթացներ տարբեր ԲՀՊՏ-ներում: Միայն մեկ տարվա ընթացքում էկոկրթական դասընթացներ են անցկացվել ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների դպրոցների մոտ 800 աշակերտների հետ:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:



Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.edu.am; <http://www.mnp.am/am/post/1888>;
<https://www.giz.de/en/worldwide/20319.html>;
http://mnp.am/uploads/1/1526479251Bnutyun_oct.pdf;
<https://greenlane.am/en/home/>; <http://www.elrc.yzu.am/>; <https://aarhus.osce.org/armenia>;
<http://armenia.panda.org/>

Գնահատման մակարդակի հավաստիությունը.

Հիմնված է մասնակի տվյալների վրա:

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում նաև՝ քանակի սահմանափակ լինելով:

Ազգային նպատակային խնդիր 10.

Միջոցներ ձեռնարկել տնտեսության միջճյուղային հարաբերություններում ներդնել մեխանիզմներ, որոնք կբացառեն բնական ռեսուրսների օգտագործման հետևանքով էկոլոգիական կայունության խախտումները

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիա.

Առանց էական փոփոխությունների

Լրացուցիչ տեղեկատվություն. Որպեսզի Հայաստանում տնտեսական աճի հետ զուգահեռ հնարավորինս նվազեցվեն բնապահպանական ռիսկերը, որոնք կենսաբազմազանության պահպանության տեսակետից առաջանում են մի շարք ճյուղերի (գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, արդյունաբերություն, էներգետիկա և շինարարություն) բնության վրա ներգործության պատճառով, անհրաժեշտ է կիրառել համագործակցության ճկուն մեխանիզմներ, որոնք ի վիճակի են նվազեցնելու սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացման պայմաններում առաջ եկած սպառնալիքները: Հանքարդյունաբերության ոլորտի ընդլայնման առաջանցիկ տեմպերը, անտառահատումները, ջրային ռեսուրսների գերշահագործումը (պայմանավորված տորերկրյա ջրային ռեսուրսներ օգտագործող ենթաճյուղերի արագ զարգացմամբ և կլիմայի փոփոխությամբ) և անապատացման վտանգի աճն ապացուցում են, որ երկրի կայուն զարգացումը կարող է տեղի ունենալ միայն պետության, հանրության և միջազգային կառույցների համագործակցության ճանապարհով՝ «կանաչ» նորամուծությունների ներդրման, համապատասխան տնտեսաիրավական մեխանիզմների կիրառման, այդ թվում՝ ԷԾ-ների գնահատման պայմաններում:



Շահագրգիռ կողմերի միջև ինստիտուցիոնալ կապերի ձևավորումը մեծ դեր է խաղում ԲՀՊՏ-ների համակարգված կառավարման և սոցիալ-տնտեսական համակարգերում դրանց ինտեգրման համար: Այս բնագավառի ռազմավարական խնդիրները չեն կարող լիովին իրականացվել միայն Հայաստանի բնապահպանության նախարարության կամ ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների ներուժով: Անհրաժեշտ է պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր սեկտորի գործողությունների ներդաշնակեցում ու համակարգում:

Ներկայումս Հայաստանում բացակայում են միջճյուղային համագործակցության հստակ մեխանիզմները, կենսաբազմազանության և էկոհամակարգերի կառավարման բնագավառում սահմանված չեն կորպորատիվ պատասխանատվության, ռիսկերի և հնարավոր կոնֆլիկտների հաղթահարման համատեղ գործողությունների կանոնները: Ընդ որում՝ գիտակցված, կայուն և արդյունավետ ինստիտուցիոնալ կապերի ձևավորումից առաջ անհրաժեշտ է համատեղ որոշել առկա խնդիրների լուծման ուղիները և համապատասխան գործողությունների շրջանակը: Ինստիտուցիոնալ կապերի հաստատման ուղի կարող է հանդիսանալ Հայաստանի բնապահպանության նախարարությունում կենսաբազմազանության պահպանության և ԲՀՊՏ-ների կառավարմանն աջակցող խորհուրդների իրատեսական գործունեությունը, ինչը կնպաստի փոխհամագործակցության ապահովմանը և ընդունված որոշումների արդյունավետ իրականացմանը:

Ակնհայտ է, որ էկոլոգիական խնդիրներին բնակչության ճիշտ արձագանքման և հանրության ու պետության միջև փոխվստահելի հարաբերությունների ձևավորման համար անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվության առկայությունը, որի արդյունավետ օգտագործումը ենթադրում է ուսուցանված և իրազեկված մարդկային ռեսուրսներ: Ապահովելով շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ հնարավոր կլինի նպաստել հետևյալ խնդիրների լուծմանը.

1. բնապահպանության ոլորտի կառավարման միասնական քաղաքականության իրականացում.
2. օրենսդրության պահանջների արդյունավետ կատարում.
3. միջգերատեսչական հակասությունների հաղթահարում և առկա խնդիրների համակարգված լուծում.
4. տեղեկատվության մատչելիություն և համակարգված փոխանակություն:

Հայաստանում քիչ չեն օրինակները, երբ տարբեր ոլորտային քաղաքականություններում, ռազմավարություններում, և ծրագրերում առկա են անհամապատասխանություններ, պլանավորման և իրագործման փուլերում համակարգված չեն սոցիալ-տնտեսական և բնապահպանական գործողությունները, ինչն էական ռիսկեր է առաջացնում շրջակա միջավայրի, հետևաբար նաև՝ բնակչության համար: Դրա օրինակներից է Հայաստանում էներգետիկայի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

զարգացման ռազմավարությունը, որը մեծ տեղ է տալիս փոքր ՀԷԿ-երի շահագործման պրակտիկային՝ հաշվի չառնելով դրանց հետ կապված բնապահպանական խնդիրները, մասնավորապես՝ լանդշաֆտների, կենսաբազմազանության, հողային և ջրային ռեսուրսների պահպանության ապահովումը: Հետևաբար՝ կարևոր է տարբեր ոլորտների ռազմավարություններում և ծրագրերում գործողությունների պլանավորման հենց առաջին քայլերից բացահայտել շրջակա միջավայրին և կենսաբազմազանությանը սպառնացող վտանգներն ու նախանշել դրանց մեղմման ուղիները: Այդ հարցերը միանշանակ կարգավորվում են Հայաստանի օրենսդրությամբ, սակայն փորձաքննության տրված փաստաթղթերի վերլուծությունը և դրա արդյունքում արված եզրակացությունները միշտ չէ, որ հաշվի են առնում գործի բոլոր հանգամանքները, պոտենցիալ ռիսկերը:

Համագործակցության ձևերը կարող են ունենալ տարբեր դրսևորումներ: Այսպես՝ բնական կերհանդակների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման նպատակով «Բազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ իրականացվող «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ ու Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող CARMAC II ծրագրի համատեղ նախաձեռնությամբ 2018 թ. ստեղծվել է համագործակցության հարթակ, որի նպատակն է ապահովել Հայաստանում կերհանդակների կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցություն և աշխատանքների համակարգում: Այն միտված է բարձրացնել անասնապահության ոլորտում իրականացվող ծրագրերի և ներդրումների արդյունավետությունը, որն էլ իր հերթին կբարելավի ֆերմերների բարեկեցությունն ու կնպաստի գյուղական տարածքներում սոցիալ-տնտեսական աճին: Բնական կերհանդակների կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգումը ստեղծում է ոլորտի շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների համագործակցության և առկա խնդիրների բացահայտման ու լուծման համար նախադրյալներ՝ նպատակ ունենալով ապահովել համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումն ու նպաստել բնական կերհանդակների բնապահպանական խնդիրների լուծմանը:

Կայուն զարգացման նպատակներին խոչընդոտող մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է կառավարության, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և այլ դերակատարների սերտ համագործակցությունը: 2017 թ. ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի համատեղ նախաձեռնությամբ հիմնադրվեց կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնը, որպեսզի խթանվի Հայաստանում կայուն զարգացման նպատակների իրագործումը: Կայուն զարգացման 17 նպատակները սերտորեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

փոխկապակցված են Հայաստանում իրականացվող ազգային բարեփոխումների գործընթացներին: Կենտրոնը ծառայելու է որպես փորձարարության, համագործակցության և վերլուծությունների իրականացման ու բարձրակարգ մասնագետների կարողությունների զարգացման հարթակ՝ բացահայտելու Հայաստանի զարգացման ներուժը: Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնը ներկայացրել է իր 3 տարվա տեսլականը, որը նախատեսում է աշխատանքներ հետևյալ 4 հիմնական ուղղություններով.

1. կրթության, մասնավոր ոլորտներում և կառավարությունում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստում.
2. վարքագծային փորձարկումներ և իրական փաստարկների վրա հիմնված քաղաքականության մշակում.
3. հանրային-մասնավոր համագործակցություն՝ հանրագուտ ներդրման մեխանիզմների միջոցով.
4. ազդեցության չափում նոր, մեծ և քաղաքացիների կողմից գեներացված տվյալների օգտագործման միջոցով:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, փորձագիտական եզրակացություններ, գործունեություն ծավալող սուբյեկտների հետ խորհրդատվությունների արդյունքներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; <https://www.giz.de/en/worldwide/20319.html>;
www.arspiu.com/CARMAC-II-PROJECT.55.0.html?&L=0%20Environmental%20Compliance%20Manager;
https://www.un.am/up/file/ARMENIA_SDG_VNR_2018_Highlights-ARM.pdf

Գնահատման մակարդակի հավաստիությունը.

Հիմնված է մասնակի տվյալների վրա:

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի և որոշ դեպքերում՝ քանակի սահմանափակ լինելով:

Ազգային նպատակային խնդիր 11.

Կատարելագործել կենսաբազմազանության վիճակի և միտումների, դրա գնային արժեքի, ինչպես նաև կորստի հետևանքների հետ կապված գիտելիքները, գիտական բազան և տեխնոլոգիաները

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիա.



Առաջընթացն առկա է, բայց տեմպն անբավարար է:

Լրացուցիչ տեղեկատվություն. Կենսաբազմազանության տեսակային կազմի որոշումը, բուսական և կենդանական աշխարհի փոփոխություններն ու դրանց առաջացման պատճառները և կորստի հետևանքները, այդ թվում՝ ԷԾ-ների որակական և քանակական հատկությունների փոփոխությունները, բնորոշում են կենդանի բնության կայունության և հավասարակշռության աստիճանն ու բնակչության բարեկեցությունն ու առողջ կենսակերպը: Կենսաբազմազանության ոլորտում հիմնախնդիրներ ծնող պատճառների բացահայտումը և գնահատումը, դրանց արդյունավետ լուծմանն ուղղված գիտական հետազոտությունների արդյունքներն այն կարևոր նախադրյալներն են, որոնք հիմք են էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը/մեղմմանը նպատակաուղղված գործողությունների իրականացման համար: Երկրի հիմնախնդիրներին համահունչ, թեմատիկ գիտական հետազոտությունները և ժամանակակից տեխնոլոգիաները պետք է միտված լինեն հատկապես կիրառական հարցերի լուծմանը, որոնք կապված են բարձրակարգ բույսերի բոլոր տեսակների, մակրոմիցետների, ողնաշարավոր և անողնաշար կենդանիների վիճակի ու սպառնալիքների գնահատման, էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, ԷԾ-ների լիարժեք ապահովման, էկոլոգիական մոնիթորինգի իրականացման հետ:

Տվյալ նպատակային խնդրի հետ կապված Հայաստանում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. տեսակների բնակության միջավայրերի պահպանություն ու վերականգնում.
2. հատուկ սպառնալիքների դեմ պայքարի ուժեղացում (որսագողություն, կլիմայի փոփոխություն).
3. in-situ և ex-situ պահպանություն, որոնց մանրամասն նկարագրությունը տրված է այս բաժնի 4-րդ, 5-րդ և 6-րդ ԱՆԽ-ները ներկայացնող բաժիններում.
4. մշակվել և իրականացվում են գործողությունների պլաններ՝ հիմնական վտանգված տեսակների վերականգնման համար (ներառյալ՝ հայկական մուֆլոն, հովազ, Սևանի իշխան և այլն):

Անհրաժեշտ է նման աշխատանքների ընդարձակումը՝ հիմք ընդունելով վտանգված և կրճատվող տեսակների ընտրության համար հուսալի տեղեկատվությունը, որը զետեղված է Հայաստանի Կարմիր գրքում (2010 թ.): Պետք է հաշվի առնել, որ բարձրակարգ տաքսոնները հետազոտված են շատ անհավասարաչափ: Այսպես, եթե Հայաստանի Կարմիր գրքում համեմատաբար լիարժեք ներկայացված են բարձրակարգ բույսերը, մակրոմիցետները և ողնաշարավոր կենդանիները, ապա անողնաշարներից ներառվել է 1 % -ից պակաս: Սակայն հենց այդ հավաքական խմբում ներկայացված է էնդեմիկների մեծամասնությունը, որոնք a priori ավելի զգայուն են էկոհամակարգերի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

դեգրադացման նկատմամբ: Անհրաժեշտ է շարունակել նախկինում չգնահատված տեսակների և այլ խոշոր տաքսոնների (մամուռների, քարաքոսերի, ջրիմուռների) գնահատման գործընթացը՝ ստացված տվյալները հաշվի առնելով Կարմիր գրքի հաջորդ հրատարակություններում: Փոփոխվող պայմաններում անհրաժեշտ է նաև իրականացնել Կարմիր գրքում ներառված տեսակների վերագնահատման մշտական գործընթացը: Այս հարցին վերաբերող տեղեկատվությունը զետեղված է 7-րդ բաժնում:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի կենդանիների Կարմիր գրքի հրատարակությունից ի վեր Հայաստանում գրանցված որոշ թռչնատեսակների համար փոխվել է միջազգային կարգավիճակը՝ համընդհանուր մակարդակում հիմնախնդիրների առաջացման կամ ավելի սրման պատճառով: Մասնավորապես՝ կարգավիճակի բարձրացում է տեղի ունեցել յոթ թռչնատեսակների համար: Հատկապես տափաստանային հողմավար բազեի կարգավիճակը փոխվեց շնորհիվ պահպանության միջոցառումների, ոչ միայն Եվրոպայում, այլև Հայաստանում: Հայաստանը եվրոպական բոլոր գործողությունների անբաժանելի մասն է կազմում, որի նպատակն է վերականգնել այդ տեսակի պոպուլյացիան: Նախկինում Հայաստանում հայտնի էր այս փոքր գիշատչի միայն մեկ բնադրող պոպուլյացիա Սյունիքի մարզում գտնվող Գորհայք ԿԹՏ-ից: Սակայն, շնորհիվ ASPB-ի կողմից իրականացված պահպանության միջոցառումների և արհեստական բնադրավայրի տեղադրման, տափաստանային հողմավար բազեի թվաքանակն աստիճանաբար մեծացավ այնքան, որ յուրացրեց նոր տարածքներ և նույնիսկ սկսեցին բնադրել Սիսիան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքներին:

Հատուկ ջանքեր պետք է ներդնել վտանգված տեսակների տարածքային պահպանման կատարելագործման ուղղությամբ, ինչը փաստորեն այսօրվա դրությամբ կենսաբազմազանության պահպանության միակ արդյունավետ ձևն է: Ներկայումս ԲՀՊՏ-ներում պահպանվող բուսակենդանական տեսակների քանակն ակնհայտորեն չի ընդգրկում երկրի բիոտայի բավարար մասը: Օրինակ՝ Կարմիր գրքերում գրանցված 452 տեսակի բարձրակարգ բույսերից ԲՀՊՏ-ներում ներկայացված չեն 286-ը, 155 տեսակի անողնաշարներից՝ 60-ը և 153 տեսակի ողնաշարավորներից՝ 57-ը: Հետևաբար՝ Հայաստանում պահպանությունից դեռևս դուրս են գտնվում մի շարք արժեքավոր տարածքներ, որոնք բնականաբար պետք է ստանան կամ նոր պահպանվող տարածքների կարգավիճակ, կամ հնարավորության դեպքում ներառվեն գործող ԲՀՊՏ-ներ՝ դրանց սահմանների ընդլայնման շնորհիվ: Նոր ԲՀՊՏ-ների ստեղծումը և գործող ԲՀՊՏ-ների գոյություն ունեցող սահմանների ընդլայնումը զգալիորեն կնպաստեն ապագայում ազգային էկոլոգիական ցանցի ստեղծմանը, որը հիմնված կլինի լանդշաֆտային պլանավորման սկզբունքների վրա (տե՛ս 5-րդ նպատակային խնդրի նյութերը):

Կենսաբազմազանության վիճակը և տեղի ունեցած փոփոխությունները վեր հանելու, վերլուծելու և գնահատելու համար հավաստի տվյալների ստացումը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

պահանջում է շարունակական ուսումնասիրությունների և մոնիթորինգի առկայություն, ինչը հիմնվում է համապատասխան մասնագետների, կառույցների, մեթոդաբանության, նյութատեխնիկական ռեսուրսների և ֆինանսական միջոցների բավարար մակարդակի վրա:

Տվյալ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է անցկացնել զգալի ծավալով հետազոտություններ, որոնք պահանջում են լայնածավալ մոնիթորինգային համակարգված աշխատանքներ, տեղեկատվական բազաների առկայություն, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, ինչպես նաև ֆինանսական աջակցություն: Այս տեսակետից կարևոր դեր կարող են խաղալ պետքյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի հյուսիսային շրջանների կենսաբազմազանության վրա մարդածին գործոնի ազդեցության ուսումնասիրությունը» (2015-2017 թթ.) և «Հայաստանի պահպանվող տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգային ծրագրերի իրականացման համար կենսացուցիչների որոշում» (2018-2020 թթ.) գիտական թեմաները:

Անտառային և ջրային էկոհամակարգերում բնակմիջավայրերի պահպանության համար առաջին հերթին կարևոր է կազմակերպել կանոնավոր մոնիթորինգ: Դա հնարավորություն կտա գնահատել վտանգները, դրանց պատճառները և մշակել համապատասխան միջոցառումների պլան: Հայաստանում վերջին 15 տարիների ընթացքում լայնածավալ և անվերահսկելի անտառահատումների, ոլորտի կառուցվածքային փոփոխությունների պայմաններում անտառային կենսաբազմազանությանն ուղղված հետազոտությունների քանակը մեծ չէ: Տվյալների հավաքագրումը չի իրականացվել մի շարք պատճառներով: Այսպես՝ անտառային մակերեսի մեկ երրորդը գտնվում է մեծ թեքությունների վրա և դժվար հասանելի է, ԲՀՊՏ-ներում կամ անտառտնտեսություններում սակավաթիվ են ֆաունայի և ֆլորայի մասնագետները, ինչպես նաև բացակայում է անտառային տեսակների պարբերական հետազոտություններին աջակցող ֆինանսավորումը:

ԳՄՀԸ-ի (GIZ) «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ են տարվել բացահայտելու կենսաբազմազանության մոնիթորինգի աշխատանքներում ներգրավված հիմնական շահագրգիռ կողմերին ու դրանց կարողությունները: Ուսումնասիրվել են կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման հնարավոր կիրառելի մեթոդները՝ ինդիկատորների ընտրության և տվյալների հավաքի ընդունված միջազգային փորձի հիման վրա:

ՄԱԶԾ/ԳԷՀ-ի «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը էապես նպաստել է անտառային տնտեսությունների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը: Այն միտված է արմատական հարցերի լուծմանը, ներառյալ՝ բազային



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

տեղեկատվության հավաքագրման ու մշակման տեխնոլոգիաները: Այս կտրվածքով էական արդյունքներն են.

1. երկրատեղեկատվական համակարգերի օժանդակությամբ անտառի գույքագրման ու քարտեզագրման իրականացում՝ ներառելով կառավարման պլանավորման ու մոնիթորինգի աշխատանքներում: Այդ կապակցությամբ Նոյեմբերյանի և Իջևանի անտառային տնտեսությունների համար ձեռք են բերվել արբանյակային բարձր հստակության լուսանկարներ: Համեմատական վերլուծություններ են կատարվել դաշտային տվյալների և արբանյակային լուսանկարների միջև: Արժվաբերդի, Գուգարքի ու Եղեգնուտի անտառտնտեսությունների համար հստակեցվել են սահմանները:
2. Ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ մոնիթորինգային աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ Go Pro տեսախցիկներ, GPS ընդունիչներ, Arcpad, կապի միջոցներ և այլն: Դրանք տրամադրվել են «Հայանտառ» և «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ներին:
3. Լաբորատոր սարքավորումներ են տրամադրվել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին՝ դենդրո-քրոնոլոգիական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Անտառկառավարման տեղեկատվական համակարգը (NFMIS) հասանելի է հիմնական շահառուներին, ովքեր կարող են լինել անտառկառավարման գործընթացի ակտիվ կամ պասիվ օգտատերեր: Այն տվյալների հզոր շտեմարան է և աջակցում է անտառկառավարման գործընթացի կանոնակարգմանը: Համակարգը մշակվել է Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության նախաձեռնությամբ և ներկայումս փորձարկման փուլում է:

ԿԲՀ-ի (CNF) կողմից 2018 թ. սկսվել են նախապատրաստական աշխատանքներ բնափայտի մթերման էլեկտրոնային համակարգի մշակման վերաբերյալ: Այն նախատեսված է անտառային տնտեսությունների և ԲՀՊՏ-ների համար, որոնք իրականացնում են թափուկ վառելիքային մթերում: Համակարգի հիմնական նպատակն է մթերվող բնափայտի ծավալների հաջորդական հաշվեկշիռը պահել հաշվառումից սկսած մինչև դուրսբերում: Այս համակարգը դեռևս մշակման փուլում է և նախատեսված է փոխկապակցել ժամանակակից տեխնոլոգիաների հետ:

Ընթացքում են նաև սիրողական որսի ու ձկնորսության թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի մշակման աշխատանքները: Այն իրականացվում է Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության միջոցներով՝ Հայաստանի բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության հետ համատեղ:

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (2015-2019 թթ.) ԱՄՆ ՄԶԳ ծրագրի նպատակն է նվազեցնել Արարատյան դաշտի ստորգետնյա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ջրերի արդյունահանման աճը, աջակցել Հայաստանի կառավարությանը կառավարման համակարգի հարցում, բարելավված տվյալների հավաքագրման և վերլուծության միջոցով ապահովել գործիքներ, որպեսզի տեղեկացնի ստորգետնյա ջրերի տեղաբաշխման և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին՝ հիմնվելով ժամանակակից գիտական մոտեցումների վրա:

ՄԱԿ-ի ՇՄԾ և Դանիական տեխնիկական համալսարանի «Տեխնոլոգիաների կարիքների գնահատում» (2015-2017 թթ.) ծրագիրը նպատակաուղղված է աջակցել երկրներին տեխնոլոգիաների կարիքների գնահատման գործընթացի առաջնղմանը և մշակել իրագործելի տեխնոլոգիայի գործողությունների ծրագրեր՝ բացահայտելով կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության համար գերակա ոլորտներում էկոլոգիապես հիմնավոր առաջնային տեխնոլոգիաների կարիքները:

2018 թ. Հայաստանի բնապահպանության նախարարության կողմից մշակված «Զրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգի» ընդունումը և առաջարկվող տեխնոլոգիաների կիրառումը կօգնեն մեղմել կլիմայի փոփոխման պայմաններում ջրի անընդհատ աճող պահանջարկը: Կլիմայի փոփոխության հարմարվողականության նորարարական լուծումների մշակում և առաջնղում, հատկապես գյուղատնտեսության և անտառային տնտեսության ոլորտներին վերաբերող գործողություններն իրականացվում են 2017 թ. մեկնարկած ՄԱԶԾ-ի «Անտառային և դաշտային հրդեհների կառավարման ծրագրի» շրջանակներում: Կլիմայական մոդելների կիրառմամբ հետազոտությունների արդյունքում Զաջուռի ռելիկտային տափաստանում և Սոսու պուրակում կանխատեսվել է Կարմիր գրքում ընդգրկված մի շարք հազվագյուտ տեսակների աճման պայմանների փոփոխությունը:

ԿԹՆ-ներում, որոնք ներառում են նաև Ռամսարի տարածքները, ամենամյա մոնիթորինգի ընթացքում անցկացվում է թռչունների տեսակային կազմի, պոպուլյացիաների, կենսամիջավայրերի վիճակի և վտանգների հաշվառում՝ ներառելով ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ ազդեցությունները: Գոյություն ունի տվյալների բազա (ինչպես 2014-2018 թթ., այնպես էլ անցյալ տասնամյակների համար), ինչը թույլ է տալիս իրականացնել գիտական վերլուծություն երկրում թռչնաֆաունայի ընդհանուր վիճակի, ինչպես նաև պոպուլյացիայի քանակական դինամիկայի և վերջիններիս կենսամիջավայրերի վրա արտաքին գործոնների ազդեցության վերաբերյալ: Որպես անհրաժեշտ նյութերի կարևոր տեղեկատվական բազա է նաև Եվրոպայի բնադրող թռչունների Ատլաս 2-ը (EBBA2) (2013-2020 թթ.):

2018 թ. ԲՀՀ-ի (WWF) Կովկասյան ծրագիրը և հայաստանյան գրասենյակը նախաձեռնել են Հայաստանի՝ որպես Կովկասյան կարևոր էկոտարածաշրջանի, կարևոր կենսաբազմազանության տարածքների վերանայում՝ Կովկասի էկոտարածաշրջանի պահպանության ծրագրի թարմացման նպատակով: Այն ներառում է ԲՊՄՄ-ի (IUCN) Կարմիր ցուցակում ընդգրկված միջազգայնորեն վտանգված տաքսոնների վերանայում՝ ներառյալ թռչունները և ԿԹՏ-ները: Որպես



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

արդյունք՝ որոշվեցին միջազգայնորեն վտանգված կատեգորիայում նոր ներառված տեսակների տեղակայման վայրերը, կազմվեցին Հայաստանում առաջնահերթ էկոլոգիական միջանցքների և նոր կարևոր կենսաբազմազանության տարածքների նախնական սահմանները՝ շուրջ 10 500 կմ² մակերեսով, որը կազմում է Հայաստանի տարածքի 35 %-ը, իսկ առանց Սևանա լճի հայելու՝ 31 %-ը:

Կենսաբազմազանության վերաբերյալ ժամանակակից տեղեկատվություն զետեղված է «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում կենդանական աշխարհի մոնիթորինգ» (ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ, 2013-2018 թթ.), «Վալեքս Գրուպ» և «Ամուլսարի ոսկու հանքավայրի կենսաբազմազանության կառավարման պլան» (2018 թ.), «Լիդիան Հայաստան» ՓԲԸ-ի հաշվետվություններում:

Գյուղատնտեսական բնագավառի զարգացմանը նպաստող ծրագրերում օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք միտված են գյուղմթերքի ավելացմանը, հողային ռեսուրսների բարելավմանը և գենետիկ ռեսուրսների պահպանությանը (տե՛ս՝ նպատակային խնդիր 8): Դրանցից կարելի է հիշատակել «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրերը: Կարևորվում է 2018 թ. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Պոմիդորի հայկական արժեքավոր հինավուրց սորտերի վերականգնում և նորագույն տեխնոլոգիաներով նրանց մշակության կառավարման արդյունավետ մեթոդների մշակում» գիտական ծրագիրը (2018-2020 թթ.): Ծրագրով նախատեսվում է վերականգնել պոմիդորի հին արժեքավոր սորտերը, ինչն այսօր ժողովրդի կողմից գրեթե հրամայական պահանջ է, և մշակության նորագույն տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ապահովել այդ սորտերից բարձր բերքի ստացումը: Այդ խնդրի լուծման համար Ն.Ի. Վավիլովի անվան համառուսաստանյան բույսերի գենետիկական ռեսուրսների ինստիտուտից կներմուծվեն գենբանկում պահպանվող հայաստանյան ծագման ավանդական և հայկական սելեկցիայի արժեքավոր սորտերը, որոնք կենսաբանական և տնտեսական արժեքավոր հատկությունների ուսումնասիրության, ներսորտային տրամախաչումների և սերմերի բազմացման արդյունքում կդրվեն արտադրության մեջ, իսկ բանջարային մշակաբույսերի սերմերի հավաքածուն կավելանա նոր նմուշներով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2018 թվականի հունվարի 25-ի ՀՀ կառավարության նիստի N 3 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման հայեցակարգը», որի հանձնարարականի կատարման համար մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման 2018-2021 թվականների միջոցառումների ծրագիրը»:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական վիճակագրական տվյալներ, պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ, գիտական հոդվածներ, թեմատիկ հետազոտություններ, փորձագիտական եզրակացություններ, մասնակի հարցերի մոնիթորինգի փաստացի տվյալներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր

www.arlis.am; www.mnp.am; www.armstate.am; <http://ysu.am/science/hy/1463467779>;
<http://www.ysu.am/news/hy/Biodiversity-monitoring-program>;
<http://www.scs.am/files/cank.pdf>; <https://www.giz.de/en/worldwide/20319.html>;
http://www.am.undp.org/content/armenia/en/home/operations/projects/environment_and_energy/mainstreaming-sustainable-land-and-forest-management-in-mountain.html;
<http://www.aspired.wadi-mea.com/hy/5%AB-aspired/>;
<https://www.epiu.am/naxagcer/irakanacvac-naxagcer/A1/>;
<http://1067656943.n159491.test.prositehosting.co.uk/wp-content-sec/uploads/2016/09/Vardan-Melikyan-31.08.2016.pdf>;
<http://1067656943.n159491.test.prositehosting.co.uk/wp-content-sec/uploads/2017/01/12.1TNA-Mitigation-component-31-01-2017.pdf>
<https://www.abcc-am.org/>; <http://www.ebcc.info/art-480/>;
<https://www.abcc-am.org/downloads.html>
<http://wwf.panda.org/?205437/ecoregion-conservation-plan-for-the-caucasus-revised>;
<https://ecolur.org/files/uploads/pdf/teghutplan.pdf>;
<https://www.lydianarmenia.am/resources/mainFiles/pdf/1df8910b1e9df943edbe92e055e542f0.pdf>;
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=93181>;
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=93247>;
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=93248>;
http://www.scs.am/files/Hraman_tematik_2018-04.09-36A-cankov-577158ea456c24ada58ad584eed0b43b.pdf;



Գնահատման մակարդակի հավաստիությունը.

Հիմնված է մասնակի տվյալների վրա

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի, ճշգրտության և որոշ դեպքերում՝ քանակի սահմանափակ լինելով:

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը

Տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը:

Ազգային նպատակային խնդիր 12.

Ուժեղացնել կենսաբազմազանության ուսումնասիրության ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացը և բարձրացնել որակավորումը

ԱՆԽ-ի իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացի կատեգորիա.

Առանց էական փոփոխությունների:

Լրացուցիչ տեղեկատվություն. Հայաստանն անդամակցելով մի շարք բնապահպանական կոնվենցիաների՝ ստանձնել է հետևյալ միջազգային պարտավորությունները.

1. բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացումը.
2. բնապահպանության ոլորտում առկա կադրերի պատրաստումը և վերապատրաստումը.
3. էկոլոգիական կրթվածության սատարումը և այլն:

Այդ տեսակետից արդյունավետ բնապահպանական ռազմավարությունների և միջոցառումների մշակման ու իրականացման համար կարևոր է, որ պետական, մարզային և տեղական ինքնակառավարման աշխատակիցները, տնտեսավարող սուբյեկտները քաջատեղյակ լինեն բնապահպանության կառավարման էությանն ու բովանդակությանը, գիտակցեն գլոբալ և ազգային մակարդակներում բնությանը սպառնացող մարտահրավերները, դրանց առաջացնող պատճառներն ու հետևանքները, ձեռք բերեն անհրաժեշտ ռազմավարական և մեթոդական հմտություններ՝ ինքնուրույն վերլուծելու առկա իրավիճակը, հաստատելու արդյունավետ և համագործակցային հարաբերություններ շահագրգիռ կողմերի հետ: Հարկ է նշել, որ երկրում իրականացված և այժմ էլ իրականացվող բազմաթիվ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ազգային և միջազգային ծրագրերում բնապահպանության ոլորտում գործող կադրերի կարողությունների զարգացման բաղադրիչները մշտապես առկա են:

Բնապահպանական կարիքների ուսումնասիրությունում գրեթե միշտ նշվում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման և դրանց անձնակազմի գիտելիքների ու հմտությունների հզորացման անհրաժեշտության մասին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրեր ներառելու նպատակով տարիներ շարունակ իրականացվում է «Շրջակա միջավայր» վերապատրաստման ծրագիրը, որն անհրաժեշտ է հարմարեցնել ներկա պայմաններին ու բնապահպանական մարտահրավերներին: Առավել մտահոգիչ է վիճակը մարզային և համայնքային մակարդակներում: Տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը ներառում են միայն համայնքների ղեկավարների լիազորությունների, համայնքային ծառայության, տեղեկատվության ազատության, հակակոռուպցիոն, ինչպես նաև կառավարչական հմտությունների հետ կապված թեմաներ: Բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծմանն ուղղված համայնքային ծրագրերի մշակման վերաբերյալ որոշակի անդրադարձ է կատարված միայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրում (սոցիալական հարցերի բնագավառ): Համացանցը և օնլայն հարթակները բավարար չափով չեն օգտագործվում, չկան հայոց լեզվով էլեկտրոնային դասընթացներ և ուսումնական այլ ռեսուրսներ:

Արձագանքելով այս պահանջին՝ ԳԷՀ/ՄԱԶԾ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության և իրազեկման բարձրացման միջոցով» (2015-2019 թթ.) ծրագրի «Բնապահպանական դասընթաց քաղաքացիական ծառայողների և համայնքային ծառայողների համար» բաղադրիչի շրջանակներում նախարարությունների, պետական մարմինների, տարածաշրջանային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր մակարդակների քաղծառայողների համար մշակվել են բնապահպանական վերապատրաստման դասընթացների փաթեթներ, որոնք ներառում են բնապահպանական 11 մոդուլ, որոնցից, կենսաբազմազանության պահպանության առումով, կարելի է հիշատակել հետևյալները՝ Գլոբալ բնապահպանական մարտահրավերներ, Հայաստանի բնապահպանական մարտահրավերներ, Բնապահպանական կառավարում (գլոբալ և Հայաստանում), Կենսաբազմազանություն և կայուն անտառներ, Վերականգնվող էներգետիկա, Կայուն գյուղատնտեսություն: Յուրաքանչյուր մոդուլի մշակման ժամանակ հայաստանյան իրողություններին համապատասխանության ապահովումը դիտարկվել է երեք հարթություններում.

1. համապատասխանություն հայաստանյան բնապահպանական խնդիրներին.



2. համապատասխանություն բնապահպանության կրթության կարիքներին.
3. համապատասխանություն Հայաստանի քաղաքացիական և համայնքային ծառայության համակարգերի առանձնահատկություններին:

Թվարկված մոդուլների ներդրման համար մրցույթային կարգով ընտրված և համապատասխան դասընթացներ անցած դասվարների միջոցով արդեն 2019 թ. կմեկնարկի վերապատրաստման դասընթացների շարք՝ ուղղված պետական և տեղական ինքնակառավարման հաստատությունների զարգացմանը և դրանց անձնակազմի գիտելիքների ու հմտությունների հզորացմանը:

Ակնհայտ է, որ ԲՀՊՏ-ները էկոհամակարգերի կողմից ծառայություններ մատուցելու միջոցով բնությանը չվնասող ձեռնարկատիրական գործունեություն ծավալելով, զբոսաշրջության և հանգստի համար հնարավորություններ ստեղծելով, պետք է նպաստեն բնակչության կյանքի որակի բարձրացմանը: ԿԲԿ-ով ստանձնած պարտավորությունների շարքում մեծ տեղ է տրված ԲՀՊՏ-ների անձնակազմի անհատական, տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ մակարդակով կարողությունների ստեղծմանը, որոնք հնարավորություն կընձեռեն համաձայնեցված և արդյունավետ որոշումների կայացման համար: Առաջադրված խնդիրների լուծմանը համակարգված մոտեցում ցուցաբերելու համար հատուկ պահանջներ են ներկայացվում կենտրոնական և տեղական կառավարման մարմինների աշխատողներին, ԲՀՊՏ-ների ղեկավարներին և աշխատակազմին՝ համապատասխան գիտելիքների, աշխատանքային փորձի և ստեղծագործական մտքին տիրապետելու առումով: Այս նպատակով կարևորվում են ԲՀՊՏ-ների ղեկավար օղակների և անձնակազմի համար համապատասխան բնապահպանական ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակումն ու իրականացումը: 2018-2019 թթ. Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգի բարելավում՝ միջազգային համագործակցության և ՊՈԱԿ-ների կառավարող անձնակազմի կարողությունների հզորացման միջոցով» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ԲՀՊՏ-ներում կենսաբազմազանության պահպանության բարելավմանը, որին կարելի է հասնել անձնակազմի կարողությունների զարգացման և հասարակության լայն շրջանակներին պահպանվող արժեքների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության բարձրացման միջոցով: Կենսաբազմազանության ներկայացուցիչների կարգավիճակի, դրանց տնտեսական օգտագործման, կանոնակարգված զբոսաշրջության և պահպանման վերաբերյալ առկա օրենսդրական հիմունքների, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իմացության, մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ տվյալների հավաքման մեթոդների յուրացման ու կայուն կառավարման, ինչպես նաև զբոսաշրջության և ռեկրեացիայի գաղափարների կարևորության և պոտենցիալ զարգացման այլ կարևոր թիրախների մասին անհրաժեշտ գիտելիքներ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ձեռք բերելու միջոցով ծրագիրը կնպաստի ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կադրերի կարողությունների զարգացմանը:

Առաջընթացի գնահատման համար օգտագործված միջոցները՝ պետական և միջազգային ծրագրերի հաշվետվություններ, վերլուծական ակնարկներ:

Համապատասխան վեբ-կայքեր, վեբ-հղումներ, ֆայլեր.

www.arlis.am; www.mnp.am:

Գնահատման մակարդակի հավաստիությունը.

Հիմնված է մասնակի տվյալների վրա:

Հավաստիության մակարդակի մեկնաբանումը.

Հավաստիության մակարդակը հիմնավորվում է օգտագործված տեղեկատվության ներկայացուցչության, ծածկույթի սահմանափակ լինելով:

Գնահատման աջակցության համար մոնիթորինգի տվյալների համարժեքությունը

Տվյալ ԱՆԽ-ի հետ կապված մոնիթորինգը լիարժեք չէ. ընդգրկված է տարածքի կամ խնդրի միայն մի մասը:

ԲԱԺԻՆ IV.

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԻԶԻԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Նպատակային խնդիր 1.

Ոչ ուշ, քան 2020 թ., մարդիկ իրազեկված են կենսաբազմազանության գնային արժեքի և այն միջոցների մասին, որոնք նրանք կարող են ընձեռել կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար

Կենսաբազմազանության կարևորության, դրա արժեքի, պահպանման և կայուն օգտագործման միջոցների վերաբերյալ բնակչության շրջանում տարբեր թիրախային լսարանների համար կազմակերպվում են հանրային իրազեկման միջոցառումներ, կլոր սեղաններ, իրազեկման արշավներ, ստեղծվել են տեղեկատվական առցանց ռեսուրսներ, որոնց արդյունավետությունը թերևս գնահատման կարիք ունի:

«Հեռանկարային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության «Բնապահպանական խնդիրների իրազեկումը որպես առկա խնդիրների կարգավորման գրավական» ծրագրի շրջանակներում 2015 թ. ստացված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ բնապահպանական խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը և հետաքրքրվածությունը բավականին ցածր է: Հարցմանը մասնակցած 1600 քաղաքացիներից (560-ը մայրաքաղաքում և 1040-ը մարզերում) շրջակա միջավայրի աղտոտվածության մասին իրազեկված է եղել 75.8 %-ը, ոռոգման ջրի բաշխման և սակավության՝ 64.8 %-ը, օդի աղտոտվածության՝ 64.1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

%-ը և անտառների տարածքների կրճատման՝ 55.9 %-ը: Հարցվողների 70.0 %-ը քիչ են իրազեկված Հայաստանի տարածքների անապատացման, 69.4 %-ը՝ Արարատյան արտեզյան ջրային ռեսուրսների գերշահագործման, 67.8 %-ը՝ փոքր ՀԷԿ-երի շահագործման, 65.8 %-ը՝ արգելոցներում կենդանական և բուսական տեսակների պահպանման խնդիրների մասին: Տեղեկատվության հիմնական աղբյուր են ծառայում ՁԼՄ-ները՝ հատկապես հեռուստատեսությունը և լրատվական կայքէջերը: Որպես հարցի լուծում առաջարկվում է հեռուստատեսությամբ հեռարձակել բնապահպանական հարցերի վերաբերյալ հաղորդաշար, որը կանդրադառնա ոչ միայն բնապահպանական խնդիրներին, այլև կառաջադրի դրանց կարգավորումը՝ փոխանցելով համապատասխան գիտելիք:

Այիջիի տվյալ նպատակային խնդրի իրականացումը սերտ կապակցված է ազգաբնակչության էկոլոգիականության և մատաղ սերնդի դաստիարակության հարցերի, ինչպես նաև բնապահպանական տեղեկատվության տարածման և իրազեկվածության բարձրացմանը սատարող օրենսդրության կատարելագործման հետ: Այս նպատակով հաշվետու ժամանակահատվածում ընդունվեցին հետևյալ իրավական ակտերը.

1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-42-Ն, 2017 թ. փետրվարի 7), որի նպատակն է էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական անընդմեջ կրթության պետական քաղաքականության հիմնական սկզբունքների հստակեցումը.
2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110-Ն, 2014 թ. հունիսի 21), որով սահմանվել են հանրային լուծման անցկացման նոր կարգը և ժամանակացույցը.
3. «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարություն» (ՀՀ կառավարության՝ 2018 թ. փետրվարի 22-ի նիստի N 7 արձանագրային որոշման 11-րդ կետ), որի նպատակն է ստեղծել կայուն հիմքեր էկոլոգիական կրթության, որակի բարելավման, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման, և հասարակության էկոլոգիական գիտակցության ձևավորման համար:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպոյի և «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրիուսի կոնվենցիաների պահանջներին համահունչ 2015-2017 թթ. մշակվել է կենսաբազմազանության վրա ազդեցության վերաբերյալ տեղեկատվության տարածման մասին հանրության իրազեկվածության բարձրացման



օրենսդրական բարեփոխումների և առաջարկությունների փաթեթ՝ ներառյալ շրջակա միջավայրը:

Կենսաբազմազանության գնային արժեքի գնահատումը դեռևս նախնական փուլում է և իրականացվում է որոշ միջազգային ծրագրերի շրջանակներում դասընթացների, կլոր սեղանների և այլ միջոցներով: Հանքարդյունաբերության ոլորտում ԷԾ-ների վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացվել են միայն Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի շրջանակներում Լիդիան ընկերության կողմից, որի նպատակը էկոհամակարգերի օգտագործման վերաբերյալ մարդկանց պատկերացումների ձևավորումն ու հանքարդյունահանման տեղամասի վրա ծրագրի ազդեցության գնահատումն է:

Ներկայումս նկատելի է նաև ազգային ծրագրերում և պլաններում ԷԾ-ի գաղափարախոսության ներառման որոշակի դրական և շոշափելի միտում՝ չնայած ՀՀ օրենսդրության անկատարությանն ու բացթողումներին: Պետական կառույցների և համապատասխան գործակալությունների կողմից ԷԾ-ի ավելի լավ ըմբռնման և կարևորման համար արդյունավետ միջոց է համարվել հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացումը:

Իրազեկվածության ուժեղացման և բնակչության կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններ պարունակում են կենսաբազմազանության պահպանության ուղղված իրականացված կամ իրականացվող ավելի քան 40 փոքր և մեծ ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում հասարակության ներկայացուցիչներն իրազեկվել, վերապատրաստվել, կրթվել և տեղեկացվել են երկրի բնապահպանական հիմնախնդիրների, մասնավորապես՝ կենսաբազմազանության պահպանության և էկոհամակարգային ծառայությունների մասին (տե՛ս՝ այս զեկույցի 2-րդ և 3-րդ բաժինները):

Նպատակային խնդիր 2.

Ոչ ուշ, քան 2020 թ., կենսաբազմազանության գնային արժեքն ընդգրկվել է ազգային և տեղական զարգացման ու աղքատության կրճատման ռազմավարություններ, ինչպես նաև պլանավորման գործընթացներ և համապատասխան դեպքերում ընդգրկվում է ազգային հաշվառման ու հաշվետվությունների համակարգեր

Այիջիի այս նպատակային խնդրի իրականացումը Հայաստանում առաջին հերթին կապված է ազգային օրենսդրությունում ԷԾ-ների հասկացության, դրանց դասակարգման և գնային արժեքի գնահատման մեթոդաբանության ամրագրման հետ: 2016 թ. ՀՀ հարկային օրենսգրքում կատարվել են որոշակի փոփոխություններ բնօգտագործման վճարների մասով, որոնք կապված են նաև ԷԾ-ների տնտեսական արժեքի հետ և պետք է ինտեգրվեն երկրի տնտեսության ընդհանուր համակարգում: Այսպես, փոփոխության է ենթարկվել «Բնօգտագործման վճարը» 10-րդ բաժնի 40- 41-



րդ և 43-44-րդ գլուխները, ինչպես նաև «Կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը»՝ 208-րդ հոդվածը:

ԳՄՀԸ-ն (GIZ) ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացվող «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում, Հարավային Կովկաս» ծրագրի շրջանակներում 2018 թ. նոյեմբերին մեկնարկել է Հայաստանում ԷԾ-ների վճարման սխեմայի պիլոտային ծրագրերի իրագործելիության ուսումնասիրություն, որի արդյունքում կմշակվի ճանապարհային քարտեզ՝ երկու պիլոտային տարածքներում ԷԾ-ների վճարման սխեմայի ներդրմանը նպաստող նախադրյալների ստեղծման համար: Ծրագիրը կներառի կենսաֆիզիկական հետազոտություն, տնտեսական և սոցիալական առումով իրագործելիության գնահատում, իրականացման կառավարման ասպեկտները և ԷԾ-ների վճարման սխեմաների իրավական կարգավորումների հիմնավորումները, ինչը թույլ կտա փորձարկել ստացված արդյունքներն ազգային և տեղական ռազմավարություններում, մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման պլաններում, ինչպես նաև ԲՀՊՏ-ների և անտառային տնտեսությունների կառավարման պլաններում՝ ներառելով դրանց մեջ ԷԾ-ներից ստացված օգուտների հաշվարկները:

Նպատակային խնդիր 3.

Ոչ ուշ, քան 2020 թ., նվազագույնի հասցնելու կամ բացասական ազդեցությունները կանխելու նպատակով վերացվել են, փուլ առ փուլ չեղյալ են համարվել կամ ձևափոխվել են խթանները, այդ թվում՝ սուբսիդիաները, որոնք վնաս են հասցնում կենսաբազմազանությանը, և մշակվում ու օգտագործվում են կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման դրական խթաններ՝ համաձայն ու համահունչ կոնվենցիայի և այլ համապատասխան միջազգային պարտավորությունների՝ հաշվի առնելով ազգային սոցիալ-տնտեսական պայմանները

Կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստող դրական խթանների գործնական կիրառումը հնարավոր է ԷԾ-ների վճարների համակարգի ներդրման, ԲՀՊՏ-ների համակարգի զարգացմանը նպաստող փոխհատուցման և խրախուսման մեխանիզմների կիրառման, կառավարման ոլորտում հանրության մասնակցության ուժեղացման և բնական ռեսուրսների կայուն կառավարման կարողությունների ձևավորման միջոցով: ԷԾ-ների դիմաց վճարները համարվում են ուղիղ և ճկուն խրախուսման մեխանիզմ, որը նախատեսում է օգտագործողի կողմից անմիջական դրամական փոխհատուցման վճարում այն ԷԾ տրամադրող ֆիզիկական անձին կամ համայնքին, որի որոշումներից է կախված բնօգտագործման բնագավառում ԷԾ-ների տրամադրումը: Հայաստանի համար առաջին հերթին արդիական են վերարտադրվող ռեսուրսների խթանման մեխանիզմները, մասնավորապես՝ անտառների վերականգնման առումով, որոնք կարևոր են և՛ որպես տեսակների բնակության վայր, և՛ որպես ԷԾ-ների աղբյուր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանում տարբեր միջազգային ծրագրերի ֆինանսական աջակցությամբ կիրառվում են կենսաբազմազանության պահպանության ու կայուն օգտագործմանն անուղղակի կամ միջնորդված աջակցող գործողություններ, խրախուսման և փոխհատուցման մեխանիզմներ, որոնցից են.

1. կենսաբազմազանությունից ու էկոհամակարգերից կախյալ ապրանքների և ծառայությունների զարգացման, պահպանման և առևտրայնացման աջակցությունը, «Շիկահող» պետական արգելոցին հարակից 4 համայնքներում վառելիքայտի կարիքների բավարարումը.
2. կայուն զբոսաշրջության կամ էկոտուրիզմի զարգացումը մի շարք ԲՀՊՏ-ներում.
3. համայնքային ռեսուրսների կառավարման աջակցությունը՝ անտառամերձ համայնքներում անտառային թափուկի անվճար տրամադրումը (2017 թ. անտառամերձ համայնքների բնակչությանն անվճար տրամադրվել է 66 614 մ³ թափուկ վառելիքայտ).
4. ԲՀՊՏ-ների մասնակցային կառավարման մոդելների կիրառումը՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի օրինակով.
5. պահպանվող տարածքները կապող էկոմիջանցքների սահմաններում գտնվող թիրախային համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը՝ ՀՀ Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում գտնվող 26 թիրախային համայնքների համար:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը: Պետական օժանդակության ծրագրերի միջոցով հողօգտագործողներին տրամադրվում է աջակցություն՝ ցանքատարածություններն արդյունավետ օգտագործելու և գյուղատնտեսական համակարգերը զարգացնելու նպատակով: Կիրառվող լծակներն են.

1. վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում.
2. վարկավորման պայմանների բարելավում.
3. լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում.
4. մատչելի նպատակային վարկերի տրամադրում:

Նշված մեխանիզմների կիրառմամբ իրականացվում է.

1. սահմանամերձ շրջաններում գյուղատնտեսական համակարգերի զարգացում՝ պետական աջակցության միջոցով սահմանամերձ 37 բնակավայրերի հողօգտագործողներին աշնանացան հացահատիկային մշակաբույսերի անհատույց տրամադրում.
2. պտղաբուծության զարգացման ոլորտում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի մեղմման, բնական աղետների պատճառած վնասների նվազեցման համար որակյալ բերքի ստացման կայուն երաշխիք հանդիսացող



կարկտապաշտպան ցանցերի կիրառում՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների օգտագործմամբ.

3. տարեկան շուրջ 395 հեկտար խաղողի և պտղատու այգիներում կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրում՝ ԵՄ-ի ֆինանսավորմամբ.
4. մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանում, որը նպաստում է պտղաբուծության զարգացմանը, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացմանը, ներմուծման փոխարինմանը, արտահանման ծավալների ավելացմանը, ինչպես նաև անմշակ հողատարածքների նվազեցմանը՝ օրինակ, 2014 թ. համեմատ պտղատու և հատապտղատու այգիների տարածություններն ավելացել են 381 հեկտարով.
5. խաղողի այգիներում ֆիլոքսերայի հետագա տարածման կանխարգելում ու ազդեցության վնասների մեղմում:

Նշված գործողությունների և ծրագրերի մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 3-րդ բաժնի ԱՆԽ 4-8-ում:

Նպատակային խնդիր 4.

Ոչ ուշ, քան 2020 թ., կառավարությունները, գործարար օղակները և գործունեության սուբյեկտները բոլոր մակարդակներում միջոցներ են ձեռնարկել կամ պլաններ են ներդրել արտադրության կայունության ձեռքբերման (նվաճման) և սպառման նպատակով և չեն թույլատրում, որպեսզի բնական ռեսուրսների օգտագործման հետևանքները խախտեն էկոլոգիական կայունությունը

Այս կարևոր նպատակային խնդիրն ընդգրկում է տնտեսական գործունեության գրեթե բոլոր ոլորտները և ներառում է կանաչ տնտեսության անցմանն ուղղված գործողություններ՝ ռեսուրսների արդյունավետ կառավարում, մաքուր արտադրության ստեղծում:

2014 թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ձեռնարկողների իրավունքներն ու պարտականությունները, ձեռնարկատիրական գործունեության պլանավորման և իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա օբյեկտները, որոնցից են «...բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը և գոյության պայմանները, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, Հայաստանի կենդանիների կամ բույսերի Կարմիր գրքերում գրանցված կենդանիների, բույսերի առկայությունը»: Օրենքի կիրարկումը թույլ է տալիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ձեռնարկատիրական գործունեության նախնական փուլում խուսափել ռեսուրսների ոչ կայուն օգտագործման ռիսկերից, ինչպես նաև կանխել գործունեության համապատասխան ձևերը (հանքերի շահագործում և այլն) այն տարածքներում, որտեղ առկա են կենսաբազմազանության բարձրարժեք ներկայացուցիչներ, լանդշաֆտներ, ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

2014 թ. շրջակա միջավայրի աղտոտվածության և բնական պաշարների շահագործման հետևանքով առաջացած վնասի դրամական արժեքի գնահատման մեթոդները վերլուծվել են տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից՝ Կովկասյան տարածաշրջանում պատասխանատվության ռեժիմների հզորացման համատեքստում, «Բնապահպանական վնաս և պատասխանատվություն, տնտեսական արժեքի գնահատում՝ մեթոդաբանություններ, կառուցվածք, չափանիշներ, կիրարկում» զեկույցի շրջանակում:

Այիջիի այս նպատակային խնդրին համահունչ, օգտագործելով ստուգված կանխարգելիչ բնապահպանական մոտեցումները, ինչպիսիք են՝ նվազեցված բնապահպանական ազդեցությունը և բարելավված հանրային առողջությունն ու անվտանգությունը (ավելի քիչ թափոններ, արտանետումներ և աղտոտում), կանաչ տնտեսության, ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մաքուր արտադրության սկզբունքները ներդրվել են 90-ից ավել ՓՄՁ-ներում, ֆերմերային տնտեսություններում, գյուղմթերքի, քիմիական, շինարարական նյութերի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններում: Կարևորելով խնդրի արդիականությունը՝ 2017 թ. ՀՀ կառավարության կողմից Կանաչ տնտեսության ազգային կենտրոնի ձևավորումը գերակա խնդիր է ճանաչվել: Այն կնպաստի իրավաբանական և ֆիզիկական անձանց (ՓՄՁ-ներ, արդյունաբերություն, արտադրական ոլորտի ներկայացուցիչներ, ֆերմերային տնտեսություններ և այլն) կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մաքուր արտադրության կազմակերպմանը: Մշակվել է նաև կանաչ տնտեսության ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մաքուր արտադրության կենտրոնի հայեցակարգը:

Նպատակային խնդիր 5.

Ոչ ուշ, քան 2020 թ., բնակության բոլոր միջավայրերի, այդ թվում՝ անտառների, կորուստները նվազագույնը կհսով կրճատված են, իսկ այնտեղ, որտեղ հնարավոր է՝ համարյա զրոյին է հասցված, իսկ դեգրադացումը և մասնատումը զգալիորեն նվազել են

Հայաստանի համար կարևորություն ունեցող էկոհամակարգերի դեգրադացումը նվազեցնելու, վիճակը բարելավելու և անտառների կայուն կառավարման մոտեցումները ներդնելու նպատակով Հայաստանում ազգային և միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվել են գործողություններ, որոնք մանրամասնորեն ներկայացված են զեկույցի 2-րդ և 3-րդ բաժիններում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Համաձայն 2011 թ. ԳՄՀԸ-ի (GIZ) կողմից հեռահար գոնդավորման մեթոդով ստացված տվյալների՝ Հայաստանում անտառածածկի մակերեսը կազմում է 332 333 հա կամ ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը, այդ թվում՝ մոտ 283 հազ. հա բնական անտառներ, իսկ մոտ 50 հազ. հա՝ արհեստական: 2017 թ. սկիզբ են առել Հայաստանի անտառային համակարգի բարեփոխումներին ուղղված գործողությունները, այդ թվում՝ անտառների պահպանության և կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կատարելագործումը: 2018 թ. կատարվել է անտառային համակարգի պետական լիազոր մարմնի փոփոխություն՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը հանձնվել է բնապահպանության նախարարության ենթակայությանը, ստեղծվել է Անտառային պետական կոմիտե, իսկ նախարարության աշխատակազմում՝ Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն: Բնապահպանության նախարարության լիազորությունների ընդլայնման ու հստակեցման միջոցով նախատեսվում է միջազգային սկզբունքներին համահունչ կայունացնել, կատարելագործել և զարգացնել անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգը, բարձրացնել ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետությունը, ապահովել էկոհամակարգային մոտեցմամբ անտառների համապարփակ կառավարումը: Բարեփոխումները ներկայումս շարունակվում են:

Անտառային համակարգում առկա սպառնալիքի վերացման ուղղությամբ նախաձեռնվող միջոցառումները միտված են օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացմանը, այլընտրանքային և վերականգնվող էներգետիկ աղբյուրների լայն կիրառմանը, անտառների կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը, անտառների մոնիթորինգի համակարգի զարգացմանը, բնակչության իրազեկվածության բարձրացմանը: Հատկապես կարևորվում են անտառների և արոտավայրերի կառավարումը բարելավող հետևյալ ծրագրերը.

1. Երկրատեղեկատվական համակարգերի օժանդակությամբ անտառի գույքագրման ու քարտեզագրման աշխատանքների իրականացում՝ բարձր հստակության արբանյակային լուսանկարների ձեռքբերում, որոնց օգնությամբ կատարվել են համեմատական վերլուծություններ դաշտային տվյալների և արբանյակային լուսանկարների միջև, հստակեցվել են որոշ անտառտնտեսությունների սահմաններ.
2. անտառկառավարման տեղեկատվական համակարգի ներդրում, որը տվյալների հզոր շտեմարան է և աջակցում է անտառկառավարման գործընթացի կանոնակարգմանը.
3. նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ստեղծման սկզբունքներին և անտառների պահպանմանն ուղղված ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործման մեխանիզմների մշակում և ներդրում.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

- անտառների մոնիթորինգային աշխատանքների ընդլայնում՝ ժամանակակից սարքավորումներով ապահովելու միջոցով (Go Pro տեսախցիկներ, GPS ընդունիչներ, Arcpad, կապի միջոցներ և այլն)։
- բնակչության կախվածությունը վառելիքայտից նվազեցնելու նպատակով արևային էներգիայի տեխնոլոգիաների կիրառում, ինչը ստեղծում է անտառների վրա հարակից համայնքների ճնշման նվազեցման հնարավորություններ։
- անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունների հզորացում, անտառային վնասատուների մոնիթորինգի և դրանց դեմ անվտանգ պայքարի միջոցների կիրառում։
- Հայաստանում բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող անտառների որոշման և գնահատման չափորոշիչների մշակում, ինչը մեթոդական հիմքեր է ստեղծում կենսաբազմազանության պահպանության և տեղական բնակչության համար կարևոր դեր ունեցող արժեքավոր անտառային տարածքների որոշման համար։
- անտառվերականգնման աշխատանքների ընդլայնում՝ 2004-2016 թթ. անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներն իրականացվել են 3174.2 հա, իսկ 2017 թ.՝ 423 հա տարածքի վրա։
- Հայաստանի կողմից ստորագրված Փարիզյան համաձայնագրի (2015 թ.) պարտավորությունների կատարում՝ ջերմոցային գազերի արտանետումները սահմանափակել 633 միլիոն տոննայի սահմաններում և անտառապատվածությունը մինչև 2050 թ. հասցնել 20.1 %-ի։

Նպատակային խնդիր 6.

Ոչ ուշ, քան 2020 թ., ձկան պաշարների և անողնաշարների որսը, ջրային բույսերի հավաքը կարգավորված են, իրականացվում են կայուն, իրավական հիմքերով և էկոհամակարգային մոտեցումների օգտագործմամբ ձկան պաշարների շահագործում, ներդրված են հազվագյուտ տեսակների վերականգնման ծրագրերը, ձկնորսությունն անբարենպաստ ազդեցություն չի թողնում վտանգված տեսակների և խոցելի էկոհամակարգերի վրա

Հայաստանի արդյունագործական ձկնորսության հիմնական ջրավազանը Սևանա լիճն է, որի ձկնային պաշարները կարևոր ռեսուրս են տեղի բնակչության համար, քանի որ առևտրի, սննդի արտադրության և զբոսաշրջության զարգացման համար անփոխարինելի միջոց են։ Սևանա լճում 2017 թ. նկատվել է սիգի պաշարների որոշակի ավելացում, սակայն այն նախկինում գրանցված առավելագույն արժեքներից փոքր է եղել 14 անգամ։ Կտրուկ նվազել են կողակի, բեղլուի և ծածանի, ինչպես նաև խեցգետնի արդյունագործական պաշարները։ Լճի կենսաբանական պաշարների նվազումն ազդել է նաև Գեղարքունիքի մարզի բնակչության, հատկապես՝ ձկնորսությամբ և խեցգետնի որսով զբաղվողների բարեկեցության վրա։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ձկան որսապաշարների հաշվառման և ձկնորսության հիմնական օբյեկտ հանդիսացող տեսակների (սիգ, խեցգետին, իշխան) վերարտադրության պայմանների գնահատման համար իրականացվող մոնիթորինգի և ծրագրային հետազոտությունների շնորհիվ բացահայտվել է հետևյալը.

1. վերջին տարիներին Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգահեռ նկատելի է ձկնային ընդհանուր պաշարների աճի միտում (2017 թ. 2016 թ. համեմատ ձկնային ընդհանուր պաշարներն աճել են 16.7 %-ով՝ կազմելով 2281 տ).
2. լճում գերիշխող ձկնատեսակը սիգն է, որի մասնաբաժինը 2016 թ. համեմատ աճել է և 2017 թ. կազմել ընդհանուր ձկնային պաշարների մոտ 97 %-ը.
3. 2016 թ. ընթացքում Սևանի իշխանի ձվադրավայր հանդիսացող հինգ հիմնական գետերում (Կարճաղբյուր, Լիճք, Ծակքար, Արգիճի, Մասրիկ) բաց է թողնվել 921 000 հատ Սևանի իշխանի մանրածուկ.
4. Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների (Սևանի իշխան, բեղլու և կողակ) համար ձվադրավայր հանդիսացող գետերում բնական ձվադրավայրերի պայմանները խախտող գործոններից են՝ օրգանական աղտոտվածությունը (արոտավայրերից և բնակատեղերից գետ թափվող հոսքաջրերի հետևանքով), փոքր ՀԷԿ-երի ու ոռոգման համար կատարվող ջրառը, ինչպես նաև որոշ դեպքերում գետի հունի բնական կառուցվածքի խախտումը:

2016 թ. սկիզբ առած «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի» շրջանակներում նախատեսվում է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնում՝ էնդեմիկ ձկնատեսակների բնական վերարտադրության պայմանների ստեղծման, էկոլոգիապես կայուն արտադրության կազմակերպման և ամբողջական արժեշղթայի զարգացման միջոցով: Գեղարքունիի և Ամառային իշխանի պաշարների վերականգնումն ապահովելու նպատակով լճում տեղակայվող տնտեսությունների միջոցներով յուրաքանչյուր տարի լիճ բաց կթողնվի շուրջ 25 %-ի չափով մանրածուկ:

Որոշակի սահմանափակումներ են մտցվել Հայաստանի ջրային տարածքներում 2018 թ. ընթացքում արդյունագործական որսի վերաբերյալ¹¹ որոշ կենդանատեսակների (ծածան, խեցգետին՝ մինչև 500 տոննա) և դրանց չափաքանակների վերաբերյալ: Ձկան և խեցգետնի արդյունագործական որսի իրականացման համար սահմանվել են գործիքների նոր չափանիշներ և ժամկետներ: Խեցգետնի ձվադրման և բազմացման ժամանակահատվածում Սևանա լճում խեցգետնի որսը ժամանակավորապես դադարեցվում է:

¹¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱՄԱՆ.

19 հունվարի 2018 թվականի N 10-Ն, 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93751>



ՀՀ ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հաստատման արդյունքում կարգելվի փոքր ՀԷԿ-երի կառուցումն այն գետերի վրա, որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր, ԲՀՊՏ-ների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում:

Նպատակային խնդիր 7.

Մինչև 2020 թ. գյուղատնտեսական, ջրային կուլտուրաներով զբաղված տարածքներն ու անտառտնտեսությունները պետք է կայուն կառավարվեն՝ ապահովելով կենսաբազմազանության պահպանումը

Հայաստանում գյուղատնտեսական ոլորտ ընդգրկված և բնապահպանական տեսակետից առավել մեծ կարևորություն ու կայուն կառավարման անհրաժեշտություն ունեցող տարածքներն են բնական կերհանդակները՝ արոտավայրերը և խոտհարքները: Հանրապետությունում հաշվառված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի շուրջ 59 %-ը կազմում են բնական կերհանդակները, որոնք զբաղեցնում են շուրջ 1 244 000 հեկտար տարածք, որոնք տարածված են Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի մարզերում: Բազմամյա ոչ արդյունավետ օգտագործման և խնամքի բացակայության հետևանքով շուրջ 150 հազ. հա դուրս են մնացել գյուղատնտեսական օգտագործումից:

Վերջին տարիներին կատարված հետազոտությունները և միջազգային ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի արդյունքները վկայում են հետևյալը.

1. արոտավայրերի արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն կապված է արդյունավետ և կշռադատված կառավարման հետ.
2. արոտավայրերի պահպանությունը, վերականգնումը, կենսաբազմազանության խոցելիության ռիսկերի կրճատումը գյուղատնտեսության, մասնավորապես՝ անասնապահության զարգացման երաշխիքն են.
3. արոտավայրային էկոհամակարգերի հարուստ գենոֆոնդը՝ մշակաբույսերի վայրի ազգակիցները, էնդեմիկ և հազվագյուտ տեսակները երկրի ագրոկենսաբազմազանության կարևոր բաղադրամասն են, որոնց պաշարների զգալի նվազումը պայմանավորված է կերհանդակների ծանրաբեռնվածությամբ և մարդկանց կողմից մի շարք տեսակների գերօգտագործմամբ:

Այս ոլորտում սպառնալիքների նվազեցմանն ուղղված գործողություններից են.

1. ՀՀ համայնքներում արոտների կառավարման բարելավմանն ուղղված գործառույթային մոդելի մշակումն ու փորձարկումը (արոտների կառավարման պլանավորման և իրականացման եղանակների բարելավման նպատակով կատարվել են 63 համայնքների արոտավայրերում բուսականության և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

բնապահպանության ցուցանիշների փոփոխության ուսումնասիրություններ տարբեր ուժգնության մարդածին ազդեցության պայմաններում)։

2. Սյունիքի մարզի 24 համայնքների ներկայացուցիչներ վերապատրաստվել են արտոների մշտադիտարկման և կառավարման պլանների մշակման ու իրականացման բնագավառներում, իրականացվել է արտավայրերի մոնիթորինգ, 19 համայնքների համար մշակվել են արտավայրերի կառավարման պլաններ։
3. Հայաստանում կերհանդակների կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության և աշխատանքների համակարգման ու անասնապահության բնագավառում իրականացվող ծրագրերի և ներդրումների արդյունավետության բարձրացման համար ստեղծվել է համագործակցության հարթակ։

Մոտ 10 տարի առաջ ՀՀ կառավարությունը գյուղատնտեսության ոլորտում զերակա ճյուղ ճանաչեց ձկնարդյունաբերությունը։ Ակվակուլտուրայի եկամտաբերությունը բերեց այս ճյուղի շատ արագ զարգացման։ Եթե ձկան արտադրության ծավալը 2009 թ. կազմել է 6.0 հազար տոննա, ապա 2013 թ.՝ 15.6 հազար տոննա։ Ներկայումս հանրապետությունում տարեկան արտադրվում է շուրջ 16.0-17.0 հազար տոննա ապրանքային ձուկ, որի շուրջ 20-30 %-ն արտահանվում է։ Արտադրվող ձկան 65-70 %-ը կազմում են արժեքավոր ձկնատեսակները (սաղմոնազգիներ, թառափազգիներ)։

Ձկնաբուծության կայուն կառավարումը սերտ կապված է ձկնատնտեսությունների ջրապահովության հետ, ինչը կատարվում է ինքնաբուխ հորատանցքերի միջոցով։ Պոմպակայանով աշխատող արտեզյան հորից առավելագույնը կարելի է դուրս մղել վայրկյանում 60-100 լիտր ջուր, իսկ ինքնաբուխ հորից վայրկյանում դուրս է մղվում 250-600 լիտր ջուր։ Ձկնարդյունաբերության անկայուն զարգացման պայմաններում օգտագործվող օրինական հորերից տարեկան դուրս էր մղվում 300-400 միլիոն մ³ ջուր, ինչը հանգեցրեց ստորերկրյա ջրային ավազանի մակարդակի իջեցման։ «Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2017 թ. մայիսի 6-ի N 413-Ն ՀՀ վարչապետի որոշման համաձայն՝ մշակվել է ապօրինի ինքնաթափ հորատանցքերի լուծարման կամ կոնսերվացման գործընթացը (տե՛ս՝ նախորդ բաժիններում), որի արդյունքում այսօր Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի մակարդակը միջինում ավելացել է 2 մետրով։

2017 թ. մշակվեց «Ձկնաբուծության ոլորտում ջրային ռեսուրսների այլընտրանքային օգտագործումը Հայաստանում» ծրագիրը, որը նպատակաուղղված է տեղական պայմաններին համապատասխան ջրօգտագործման համակարգի տեխնիկական պլանավորմանը, ջրային ռեսուրսների կրկնակի օգտագործման համակարգի ներդրմանը՝ ապահովելով ավանդական ֆերմային տնտեսությունները տեխնիկական աջակցությամբ։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ակվակուլտուրայի մի այլ ձև է «Սևանի իշխան» ընկերության կողմից 2014 թ. մեկնարկած «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագիրը», որը իրականացման փուլում է: Այս ծրագրի մանրամասները ներկայացված են նախորդ բաժնում:

Ջրի խնայողությունը, բացի ապօրինի հորատանցքերի լուծարումից, կարելի է իրականացնել նաև ներդնելով «Բիգամա-Ֆրուտ» կազմակերպության կողմից արդեն կիրառվող ջրի խնայողության համակարգը: Վերջինս հնարավորություն է ստեղծում միևնույն ջրառի պայմաններում ավելացնել ձկան արտադրության ծավալները:

Անտառների կայուն կառավարման նպատակով սահմանվել է անտառի հատումների կրճատում, ինչը խիստ անհրաժեշտ է ոչ միայն կենսաբազմազանության պահպանության, այլև կլիմայի փոփոխության հարմարվողականության տեսակետից: Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուր, ինչին նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների բարձր գները, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Որպես էներգետիկ ռեսուրս՝ Հայաստանում վառելափայտը կենսազանգվածի հետ միասին կազմում է էներգետիկ սեկտորի 5.1 %-ը: Սա մեծ ծանրաբեռնվածություն է անտառների վրա: Արդիական է փոխարինել վառելափայտը այլընտրանքային կոշտ վառելիքով (պելետներ, բրիկետներ)՝ ներգրավելով փոքր և միջին բիզնեսը և խրախուսելով նրանց սուբսիդավորվող վարկերով:

2014-2018 թթ. ընթացքում ընդունված մի շարք իրավական ակտեր նախադրյալներ են ստեղծում Հայաստանի անտառների և անտառային կենսաբազմազանության կայուն կառավարման համար, դրանց շարքում են.

1. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (2017 թ.), որը սահմանել է Կարմիր գրքում գրանցված բուսա- և կենդանատեսակների որսի և (կամ) ոչնչացման դեպքում յուրաքանչյուր առանձնյակի համար վնասի հատուցման սակագները: Օրենքը նախատեսում է տուգանքներ ոչ միայն ողնաշարավոր, այլև անողնաշար կենդանիների համար, ինչը լավ գործիք է հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանման տեսակետից: Անտառների կայուն կառավարման ապահովման համար պահպանության և ապօրինի անտառահատումների նկատմամբ վարչական միջոցների խստացման շնորհիվ նախատեսվել են անտառից դուրս գտնվող տարածքներում կամ տեղափոխման ժամանակ հայտնաբերված ապօրինի մթերված փայտանյութի և դրանից արտադրված արտադրատեսակների վնասի հատուցման սակագները:
2. ՀՀ կառավարությունը 2016 թ. օգոստոսի 18-ի N 860-Ն որոշմամբ հաստատել է կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկն ու



համապատասխան սխեմաները՝ ըստ մարզերի հստակեցվել են որսահանդակների ցանկում ընդգրկված որսի իրականացման համար նախատեսվող տարածքները՝ իրավական հիմքեր ստեղծելով այլ տարածքներում կենսաբազմազանության վրա ճնշումը նվազեցնելու համար:

Միջազգային ծրագրերի և համագործակցության իրականացման արդյունքում իրականացվել են անտառների կայուն կառավարմանն ուղղված գործողություններ, այդ թվում.

1. ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք Արևելյան երկրներում. անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման 2 (ENPI FLEG 2)» ծրագիրն իրականացրել է անտառների կառավարման բարելավում՝ անտառային քաղաքականության, օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքների արդյունավետության բարձրացման ու պիլոտային մակարդակով անտառների կայուն կառավարման մոդելների իրականացման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է անտառկառավարման գործող պրակտիկայի և էկոհամակարգի կայուն կառավարման համեմատական վերլուծություն, մշակվել են գործող անտառկառավարման համակարգում էկոհամակարգերի կայուն կառավարման խթանման և ԷԾ-ների տնտեսական համակարգի ձևավորման համապատասխան առաջարկներ: Վերլուծության արդյունքում մշակվել է ճանապարհային քարտեզ՝ ապագայում օրենսդրության, քաղաքականության և կառավարման համակարգերի վերանայման համար:
2. Կայուն անտառկառավարումը որպես մեխանիզմ մշակվում է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Հաշվետվողականության համակարգեր անտառի կայուն կառավարման համար Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրով: Սկսվել է կայուն անտառկառավարման ազգային չափորոշիչների մշակումը, որոնք օրենքով հաստատման դեպքում հնարավոր կլինի կիրառության մեջ դնել կայուն անտառկառավարման սկզբունքները:
3. 2015-2016 թթ. ԵՄ/ԲՀՀ (WWF) «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրությանը, քարտեզագրմանը ու գնահատմանն ուղղված պիլոտային ծրագրի» շրջանակներում մշակվել և պիլոտային տարածքում փորձարկվել են Հայաստանում բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող արժեքներ ունեցող անտառների որոշման և գնահատման չափորոշիչները, ինչը կապահովի կարևոր նշանակություն ունեցող անտառային տարածքների կայուն կառավարումը:
4. Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության նախաձեռնությամբ ստեղծվում է Անտառկառավարման տեղեկատվական համակարգը՝ առավել



վստահելի ու թափանցիկ դարձնելու անտառները բնութագրող բազմատեսակ տեղեկատվությունը, որն անկասկած տվյալների հզոր շտեմարան է¹²:

Նպատակային խնդիր 8.

Մինչև 2020 թ. նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի աղտոտումը, այդ թվում՝ մեծ քանակի բիոգեն նյութերի արտանետումները հասցնել այն մակարդակներին, որոնց դեպքում էկոհամակարգերի գործունեությանը և կենսաբազմազանությանը վնաս չի հասցվում

Հայաստանում ջրային և հողային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ արդյունաբերական, հատկապես հանքարդյունաբերության և կենցաղային կեղտաջրերը, ձնհալի և անձրևների ժամանակ գյուղատնտեսական դաշտերից տեղափոխվող պարարտանյութերը և պեստիցիդները, ինչպես նաև կոշտ կենցաղային թափոնները: 2017 թ.-ին ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգն իրականացվել է 43 գետում՝ 103 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 17 դիտակետից, իրականացվել է նաև Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ: Խնդրի լուծման ուղիներից են օրենսդրական փոփոխությունները, որոնք ուղղված են.

1. խախտված հողերի ռեկուլտիվացմանը և վերականգնմանը.
2. ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների ապահովմանը.
3. ստորերկրյա ջրերն ու ջրատար հորիզոնները հանքավայրերի կողմից աղտոտման կանխարգելմանը:

Բնական պաշարների կառավարման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը (2018-2025 թթ.) ներառում է ընդերքօգտագործման թափոնների գույքագրումը՝ աղտոտվածության նվազեցման և չեզոքացման նպատակով, ինչպես նաև ընդերքօգտագործման արդյունքում հողերի աղտոտվածության և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի իրականացումը:

Բիոգեն աղտոտվածության հիմնական պատճառը կոմունալ-կենցաղային կեղտաջրերն են: Աղտոտող նյութերի և կենսածին տարրերի արտահոսքը կանխելու հիմնական միջոցը կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումն է հատկապես Գեղարքունիքի մարզի քաղաքներում և զբոսաշրջային գոտիներում:

ՀՀ կառավարության կողմից հաստատված Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների՝ 2018 թ. տարեկան ծրագրում նախատեսվում է իրականացնել «Ապօրինի աղբավայրերի գոյացման գործընթացի կանխման և վերահսկողության իրականացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, գույքագրման

¹² Հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել զեկույցի 2-րդ և 3-րդ գլուխներում:



տվյալների համաձայն լուծարման ենթակա աղբավայրերի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարում», «Աղբավայրերի բարեկարգում և կանոնավոր աղբահանության կազմակերպում» միջոցառումները, որոնք նպատակաուղղված են ջրի աղտոտման աղբյուրների քանակը նվազեցնելուն:

Գյուղատնտեսության մեջ շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված սպառնալիքի թուլացման նպատակով իրականացվում են օրգանական գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ծրագրեր:

«Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տարածքների աղտազերծում» ծրագրով (ԳԷՀ/ՄԱԶԾ, 2015-2019 թթ.) փորձ է արվում լուծել վտանգավոր թափոնների և ժամկետանց պեստիցիդների կուտակման հիմնախնդիրը օգտագործման համար ոչ պիտանի պեստիցիդների ոչնչացման և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տեղանքների աղտազերծման ճանապարհով: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ոչնչացնել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում պարփակված մոտ 900 տոննա թունաքիմիկատներ և երկրի մյուս 24 պահեստներում գտնվող այլ քիմիական թափոններ, ինչպես նաև վնասազերծել Նուբարաշենի գերեզմանոցի մոտ 7100 տոննա աղտոտված հող:

Նպատակային խնդիր 9.

Մինչև 2020 թ. ինվազիվ օտարածին տեսակները և դրանց ներմուծման ուղիները նույնականացված և դասակարգված են ըստ գերակայության, առաջնային տեսակները կարգավորվում են կամ ոչնչացված են, իսկ տեղափոխման ուղիների համար ձեռնարկվում են կարգավորման միջոցներ՝ դրանց ներմուծման և ներխուժման կանխման նպատակով

Հայաստանում վերջին տարիների հետազոտությունները բացահայտել են, որ ինվազիվ տեսակների պոպուլյացիաների խտությունը բարձրացել է: Օտարածին տեսակների ներթափանցմանը նպաստում են տարածքների մարդածին փոխակերպումը և ջերմաստիճանի բարձրացման միտումները: Դրանց ներխուժման հետևանքով բնական համակեցություններում տեղի է ունենում կենսաբազմազանության տեսակային կազմի փոփոխություն, իրենց բնական աճելավայրերից դուրս են մղվում աբորիգեն տեսակները:

1960 թ.-ից ի վեր Հայաստանի ձկնատեսակների թիվը 24-ից հասել է մինչև 40 տեսակի: 2010 թ. առաջին անգամ Սևանա լճում հայտնաբերվել են ամուրյան նրբաձկնիկ (*Pseudorasbora parva*) և ինվազիվ հայկական տառեխիկ (*Alburnoides bipunctatus armeniensis*) տեսակները: Վերջինիս առանձնյակները դարձել են դոմինանտ և զբաղեցնում են էնդեմիկ տեսակների գետային ու գետալճային ձևերի էկոլոգիական խորշերը: 2017 թ. Հայաստանի ջրերում առաջին անգամ հայտնաբերվել է գետային օձաձուկ (*Anguilla anguilla*) տեսակը:



Նկատվում է նաև միջատների ֆաունայի փոփոխություն: 2016 թ. Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքում գրանցվել է զատկաբզեզը (*Harmonia axyridis* Pall.), որի ներթափանցման ուղիները հայտնի չեն: Հայաստանում կարանտինային միջատների ցանկն ընդգրկում է 8 տեսակ, իսկ բացակայող, բայց ակնկալվող միջատների քանակությունը պահպանվող մթերքների համար ևս 8 տեսակ է, ջերմատնային բույսերի պոտենցիալ վտանգավոր կարանտին վնասատուները 7 տեսակ են: Բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների նոր օջախներ հայտնաբերելու դեպքում նշված տարածքում Հայաստանի կառավարության կողմից հայտարարվում է կարանտին, սահմանազծվում է վնասակար օրգանիզմներով վարակված տարածքը և իրականացվում են տվյալ վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ:

Ինվազիվ և էքսպանսիվ բույսերի դեպքում առավել տագնապալի է 77 ագրեսիվ տեսակների տարածումը, որոնցից 38-ն արդեն ներթափանցել են բնական էկոհամակարգեր: 2015 թ. Հայաստանում, որպես նոր ցեղ, հայտնաբերվել է *Grindelia squarrosa* (Pursh) Dunal տեսակը, որը, լինելով լայն տարածված ԱՄՆ-ում և Հարավային Կանադայում, ներխուժել է Բալկանյան թերակղզի, Մերձբալթյան երկրներ, Նախակովկաս, Հարավային Ասիա և համարվում է ինվազիվ տեսակ Հայաստանի համար: Կարմիրգրքային տեսակ *Clematis vitalba*-ն վերջին տարիներին դրսևորում է ինվազիվ պոտենցիալ՝ արագ տեմպերով տարածվելով Իջևանի տարածաշրջանում: Նշված երկու տեսակները պետք է ներառվեն Հայաստանի բույսերի ինվազիվ տեսակների ցանկում:

Այս թիրախային խնդրի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է 3-րդ բաժնի ԱՆԽ 5-ում:

Նպատակային խնդիր 10.

Մինչև 2020 թ. իրենց ամբողջականության և գործունեության պահպանման համար նվազագույնի են հասցված կորալային ոռոգման, ինչպես նաև կլիմայի փոփոխության կամ օվկիանոսների թթվայնացման ազդեցության տակ գտնվող այլ խոցելի էկոհամակարգերի վրա ազդող մարդածին ճնշումները

Հայաստանը ԿՓՇԿ-ին միանալուց ի վեր ակտիվ դիրքորոշում է որդեգրել կլիմայի փոփոխության կանխարգելման և երկրի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված քաղաքականության և ռազմավարության իրականացման գործում: Էկոհամակարգերի և կլիմայի փոփոխության վիճակի գնահատման արդյունքում կատարվել են բազմակողմանի վերլուծություններ, որոնց արդյունքում կանխատեսվել են բազմաթիվ փոփոխություններ՝ մերձալպյան բուսականության և գերխոնավ վայրերի տարածքների փոքրացում, ալպյան մարգագետինների անցում մարգագետնատափաստանների, չոր տափաստանների վերափոխում ֆրիգանոիդների, անապատային էկոհամակարգերի տարածքների ընդլայնում և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

հողերի աղակալում: Կլիմայի կանխատեսվող փոփոխությունը նաև ներգործում է անտառային էկոհամակարգերի վրա՝ բացասաբար անդրադառնալով սանիտարական պայմանների վատթարացման, վնասատուների և հիվանդությունների զանգվածային տարածման, հրդեհավտանգավորության ավելացման վրա:

Կլիմայի փոփոխության արդյունքում Սևանա լճի ջրի ջերմաստիճանի 3-4°C կանխատեսվող բարձրացումը ջրային էկոհամակարգում կարող է հանգեցնել ձկների սեզոնային միգրացիայի, ձվադրման և կերակրման վայրերի խախտման, ջերմասեր ցածրարժեք տեսակների գլխաքանակի աճի՝ վնասելով բնիկ այլ ձկնատեսակներին:

ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 8-ի N 49-Ց արձանագրային որոշմամբ սահմանվել է ԿՓՇԿ և Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների ու դրույթների կատարման 2017-2021 թթ. միջոցառումների ցանկը, և նշանակվել են պատասխանատու գերատեսչությունները: Հայաստանը շարունակում է իր գործունեությունը՝ ուղղված կլիմայի փոփոխության խնդիրների ընդգրկմանն ազգային և ոլորտային զարգացման քաղաքականություն:

ԿՓՇԿ-ի ներքո իրականացվող ազգային գործողություններն առաջին հերթին միտված են ածխածնի երկօքսիդի՝ CO₂ և ածխաջրածնի՝ CH₄, արտանետումների կրճատմանը՝ էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով: Նման գործողությունները սատարելու համար 2018 թ. իրականացվող անտառային ոլորտի բարեփոխումները միտված են միջազգային չափանիշների համաձայն՝ անտառների պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի կայունացմանն ու զարգացմանը: Հատկապես թիրախավորվել են ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետությունը և էկոհամակարգային մոտեցմամբ անտառների համապարփակ կառավարումը: Իրականացված ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվությունը զետեղված է 3-րդ բաժնի ԱՆԽ 5, 7, 11, 15-ում:

ԿՓՇԿ-ի և Փարիզյան համաձայնագրի ներքո իրականացվող գործողությունները նպատակաուղղված են.

1. չվերականգնվող ռեսուրսների փոխարինմանը՝ վերականգնվող էներգակիրներով.
2. կլիմայակարգավորման և ածխածնի կուտակման համար անտառվերականգնման աշխատանքների ընդլայնմանը.
3. անտառային հրդեհների և վնասատուների դեմ պայքարի ուժեղացմանը.
4. միջգերատեսչական համագործակցության ու համակարգման հնարավորությունների զարգացմանը.
5. ընթացող գործընթացներում քաղաքացիական հասարակության մոտիվացված մասնակցության ուժեղացմանը և այլն:

Կարևորվում են Հայաստանի համար ամրագրված գործողությունների մասով կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված



պլանները, ինչպես նաև այլ բնապահպանական կոնվենցիաների հետ խաչվող խնդիրների բացահայտումը և համաձայնեցված գործողությունների ձևավորումը:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները, ներառյալ 13-րդ նպատակը՝ «Գործողություններ ի նպաստ կլիմայի», սերտորեն փոխկապակցված են Հայաստանում իրականացվող ազգային բարեփոխումների գործընթացներին, այդ թվում՝ այժմ մշակվող Հայաստանի 2030 զարգացման ռազմավարությանը: Նպատակները չափազանց հավակնոտ են, խնդիրները՝ բարդ ու փոխկապակցված, և պահանջում են նոր մոտեցումներ, նոր մեթոդներ, նոր կառույցներ՝ փոխակերպող ազդեցություն ունեցող նորարարական լուծումներ առաջարկելու նպատակով: Այնուամենայնիվ, բնակչության առողջության և բարեկեցության ապահովման համար էական ծառայություններ մատուցող էկոհամակարգերի դեգրադացման կանխումը և դրանց կենսաբազմազանության պահպանությունը երկրի կայուն զարգացման մարտահրավերներից են:

Նպատակային խնդիր 11.

2020 թ. ցամաքային և ներքին ջրերի առնվազն 17 %-ը, մերձափնյա և ծովային տարածքների 10 %-ը և մասնավորապես այն տարածքները, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն կենսաբազմազանության ու ԷԾ-ների պահպանման համար, պահպանվում են արդյունավետ և հավասարաչափ, նաև էկոլոգիապես ներկայացուցչական ու պահպանվող տարածքները համակցված համակարգերի և այլ բնապահպանական միջոցառումների կիրառման, ցամաքի և ծովերի ավելի լայն լանդշաֆտների ընդգրկման հաշվին

ԲՀՊՏ-ների ներկա համակարգի պահպանումն ու զարգացումը Հայաստանի կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև կայուն և երկարաժամկետ զարգացման կարևոր բաղադրիչն ու երաշխիքն են: Հայաստանի բոլոր ԲՀՊՏ-ները կառավարվում են պետական կառույցների կողմից և զբաղեցնում են 387084.4 հա, ինչը կազմում է երկրի ընդհանուր տարածքի 13.1 %-ը (ներառյալ Սևանա լճի հայելին): 2009 թ. հետո ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսն ավելացել է 88.6 հազար հա-ով: Ընդհանուր առմամբ Հայաստանում բնության հուշարձանի կատեգորիա սահմանվել է 232 օբյեկտի համար, անձնագրավորված հուշարձանների քանակը՝ 31: 2017 թ. փետրվարի 23-ի N 190-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ««Դիլիջան» ազգային պարկի՝ 2017-2026 թթ. կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին»: 2018 թ. հունվար ամսից բոլոր ԲՀՊՏ-ների կառավարումը վերապահվել է մեկ լիազորված պետական մարմնի՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության:

ԲՀՊՏ-ների ցանցը Հայաստանում շարունակ աճում է շնորհիվ պետական աջակցության, միջազգային և տեղական կազմակերպությունների համագործակցության և կենսաբազմազանության պահպանությամբ զբաղվող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

տարբեր դոնորների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և բանկերի համատեղ ծրագրերի օգնության: Դրա շրջանակներում իրականացվում է.

1. «Տաթև» ազգային պարկի ստեղծման ծրագիրը.
2. Սյունիքի մարզում կենսոլորտային պահպանավայրերի ստեղծման ծրագիրը.
3. Իջևանի և Գանձաքարի արգելավայրերի սահմանների վերանայման և հզորությունների զարգացման ծրագիրը՝ ՀՀ Տավուշի մարզում առկա երեք անտառային արգելավայրերի հիման վրա «Իջևանի անտառային» արգելավայրի ստեղծման նպատակով.
4. Վայոց ձորի մարզում «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման ծրագիրը՝ որպես համայնքային կառավարմամբ առաջին պահպանվող տարածքի մոդել.
5. «Էրեբունի» պետական արգելոցի սահմանների վերանայում, որի արդյունքում արգելոցի տարածքն ընդլայնվել է՝ կազմելով 118.75 հեկտար.
6. ԲՀՊՏ-ների միջև էկոլոգիական միջանցքների ստեղծման ծրագիրը՝ սկսած «Խոսրովի անտառ» պետական արգելոցից մինչև Իրանի Իսլամական Հանրապետության սահման.
7. Հայաստանում պահպանվող տարածքների ֆինանսական կայունության խթանում ծրագիրը, որի նպատակն է ամրապնդել Հայաստանի պահպանվող տարածքների երկարաժամկետ ֆինանսական կայունությունը.
8. «Խոսրովի անտառ», «Շիկահող» պետական արգելոցներում, «Արևիք» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Զանգեզուր» պետական արգելավայրում խոշոր կաթնասունների (կովկասյան ընձառյուծ, հայկական մուֆլոն, բեզուարյան այծ), անգղների, հայկական իժի, Դարևակու իժի հաշվառման և մոնիթորինգի համակարգի ներդրման ծրագիրը.
9. «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանի մշակման ծրագիրը.
10. Հայաստանի ԲՀՊՏ-ներում տեղեկատվական բազայի և մոնիթորինգային համակարգի ստեղծման ծրագիրը:

Այս թեմայով մանրամասն տեղեկատվությունը զետեղված է 2-րդ և 3-րդ բաժիններում:

Նպատակային խնդիր 12.

2020 թ. կանխարգելված է ոչնչացման վտանգի տակ գտնվող հայտնի տեսակների անհետացումը, հատկապես այն տեսակների, որոնց քանակն առավել կրճատվում է, իսկ դրանց կարգավիճակն արդեն բարելավվել է

Տվյալ խնդրի հետ կապված Հայաստանում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ տեսակների բնակության միջավայրերի պահպանություն ու վերականգնում, սպառնալիքների (անտառահատումներ, որսագողություն, կլիմայի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

փոփոխություն) դեմ պայքարի ուժեղացում, կենսաբազմազանության in-situ և ex-situ պահպանություն: Մասնավորապես իրականացվում են հետևյալ գործողությունները.

1. վտանգված տեսակների (հայկական մուֆլոն, հովազ, Սևանի իշխան և այլն) վերականգնման ծրագրեր.
2. էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայր հանդիսացող գետերի պայմանների բարելավում.
3. Սևանա լճի մակարդակի բարձրացում, որի շնորհիվ բարելավվել են ջրային էկոհամակարգի բնական ինքնամաքման գործընթացը և դրա հետ կապված բազմաթիվ անողնաշար կենդանիների, հատկապես՝ կողալողերի (Gammaridae) վիճակը, ինչպես նաև թռչնաֆաունայի կազմը և դրա որոշ ներկայացուցիչների թվաքանակը.
4. մի շարք ԲՀՊՏ-ներում խոշոր կաթնասունների (կովկասյան ընձառյուծ, հայկական մուֆլոն, բեզոարյան այծ), թռչունների, սողունների հաշվառում և մոնիթորինգի համակարգի ներդրում.
5. «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում բնադրող և չվող ջրածահճային թռչնատեսակների պոպուլյացիաների կայունացում և թվաքանակի ավելացում.
6. ՀՀ ԳԱԱ սերմերի բանկերի հավաքածուն ընդգրկում է 51 ընտանիքի 251 ցեղի 552 տեսակի նմուշներ:

Բուսաբանական այգու «Հայաստանի ֆլորա և բուսականություն» մշտական էքսպոզիցիոն հողամասի հավաքածուն ներառում է մոտ 1000 բուսատեսակ, ինչը կազմում է Հայաստանի ֆլորիստիկ ֆոնդի մեկ երրորդը: Հողամասում ներկայացված են ինչպես լայն տարածում ունեցող և բուսա-աշխարհագրական տեսանկյունից հետաքրքիր, այնպես էլ հազվագյուտ և անհետացող տեսակներ, տնտեսական հետաքրքրություն ներկայացնող (դեղագործական, եթերայուղային, գեղազարդ և այլն), մշակաբույսերի վայրի ցեղակիցներ և շատ այլ բուսատեսակներ:

Այս նպատակային խնդրի իրականացման վերաբերյալ հավելյալ տեղեկատվությունը գետեղվել է Զեկույցի 3-րդ բաժնում:

Նպատակային խնդիր 13.

2020 թ. պահպանվում է գյուղատնտեսական բույսերի, ընտանի կենդանիների և դրանց վայրի ցեղակիցների, սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսանկյունից այլ արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանությունը, մշակվել ու ներդրվել են գենետիկական էրոզիան նվազեցնելու, գենետիկական բազմազանությունը պահպանելու ռազմավարությունները

Հաշվի առնելով Հայաստանի բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների բազմազանությունը, ներառյալ էնդեմիկ և ռելիկտային տեսակները, տվյալ նպատակային խնդիրը չափազանց կարևոր է երկրի համար: Մշակաբույսերի վայրի ցեղակիցների հարուստ և եզակի բազմազանությունը, որը համարվում է



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ազգային ժառանգության մի մաս, էական նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ երկրագնդի համար որպես հիմք՝ պարենային ապահովության, սննդի պաշարների ավելացման և գյուղատնտեսական արտադրության կայունության համար: Հետևաբար, գյուղատնտեսական բույսերի, ընտանի կենդանիների և դրանց վայրի ցեղակիցների, սոցիալ-տնտեսական ու մշակութային տեսանկյունից այլ արժեքավոր տեսակների գենետիկական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման հիմնախնդիրները երկրում ունեն մեծ կարևորություն և լուծվում են միջազգային համաձայնությունների դրույթներին համահունչ՝ միջազգային ու տարածաշրջանային համագործակցության շրջանակներում:

Հայաստանը ՄԱԿ-ի ՊԳԿ-ի (FAO) պարենի և գյուղատնտեսության ԳՌ-ների հանձնաժողովի անդամ է (<http://www.fao.org/3/I8638EN/i8638en.pdf>) 1993 թվականից, իսկ 2007 թ.-ից՝ Պարենի և գյուղատնտեսության բույսերի ԳՌ-ների միջազգային դաշնագրի անդամ է (<http://www.fao.org/plant-treaty/countries/membership/en/>): ՊԳԿ-ի նշված հանձնաժողովի և դաշնագրի շրջանակներում իրականացվող գործողությունները համակարգվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

Ex-situ պայմաններում բույսերի գենետիկական բազմազանությունը երկրում պահպանվում է գիտական հաստատությունների մի շարք հավաքածուներում (սերմերի, կենդանի և in vitro) պետական ֆինանսավորման գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում՝ համաձայն յուրաքանչյուր հաստատության մանդատի և գործունեության նպատակների: Մասնավորապես՝ սերմերի հավաքածուները պահպանվում են հետևյալ հաստատություններում.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն»-ի գենբանկը (ք. Էջմիածին) երկարաժամկետ և կարճաժամկետ պահպանման պայմաններում պահպանում է պարենի և գյուղատնտեսության համար ԳՌ-ների 3135 նմուշ՝ հատիկաընդեղեն և բանջարային մշակաբույսերի սելեկցիոն և ավանդական սորտեր և դրանց վայրի ազգակիցներ: Գենբանկը նաև վարում է երկրի սերմերի հավաքածուներում պահպանվող նմուշների ազգային կատալոգը:
2. Հայաստանի ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի Հայաստանի ֆլորայի սերմերի բանկում (ք. Երևան) երկարաժամկետ պահպանման պայմաններում պահվում է Հայաստանի ֆլորայի 3500 նմուշ՝ 83 ընտանիքի, 395 ցեղի, 870 տեսակի պատկանող:
3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայի (ք. Երևան) սերմերի հավաքածուն պարունակում է 5523 նմուշ, որից 46 %-ը մշակաբույսերի վայրի ազգակիցների նմուշներն են, որոնք պահվում են երկարաժամկետ պահպանման պայմաններում և



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

աշխատանքային հավաքածուներում: Լաբորատորիան պատասխանատու է EURISCO-ում տվյալների գրանցման և պարբերաբար թարմացման համար:

4. ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում» (գ. Մերձավան) ուսումնասիրվում և կարճաժամկետ պահպանման պայմաններում պահպանվում է բանջարաբուստանային մշակաբույսերի տեղական սորտերի և պոպուլյացիաների 3800-ից ավելի նմուշ:
5. ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոնի» (ք. Էջմիածին) սերմերի աշխատանքային հավաքածուն ներկայացված է փափուկ ցորենի, գարու, ոսպի, սոյայի, գետնանուշի և սիսեռի տեղական և օտարերկրյա սելեկցիայի սորտերի 1580 նմուշներով:
6. ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյումրիի սելեկցիոն կայանը (ք. Գյումրի) երկարաժամկետ պահպանման պայմաններում և աշխատանքային հավաքածուներում պահպանում է հացահատիկային մշակաբույսերի տեղական և օտարերկրյա սելեկցիայի սորտերի և սորտանմուշների 820 նմուշ:

Կենդանի հավաքածուները պահպանվում են հետևյալ հաստատություններում.

1. 2011 թ. հիմնված ծիրանենու կոլեկցիոն այգին, որը բաղկացած է ծիրանենու հայկական 82 (որից 73-ը ներկայացված են հին ավանդական սորտերով) և արտերկրից ներկրված 12 սորտերից, պահպանվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոնում» (ք. Էջմիածին):
2. 2016 թ. հիմնված խաղողի 1.3 հեկտար կոլեկցիոն այգին՝ մոտ 300 սորտերի ներգրավմամբ, պահպանվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոնում» (ք. Էջմիածին):
3. Առանձնակի կարևորություն ներկայացնող Հայաստանի աբորիգեն ֆլորայի կենդանի հավաքածուն, որը ներկայացված է բույսերի շուրջ 800 տեսակներով, պահպանվում է Երևանի բուսաբանական այգում (ք. Երևան):

In vitro հավաքածուն պահպանվում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի» գենբանկում (ք. Էջմիածին): Այն պարունակում է խաղողի 10 ավանդական սորտերի և կարտոֆիլի մանրէազերծ տնկանյութի մոտ 30 սորտերի նմուշներ:

Նմուշների կրկնօրինակման և ապահովության նպատակով Հայաստանը Սվալբարդի սերմերի գլոբալ պահոց է ուղարկել վայրի ցորենի, գարու և այծակնի տեսակների 176 նմուշ:

Բույսերի ԳՌ-ների նմուշներն ազատ տրամադրվում են օգտագործողներին, հիմնականում սելեկցիոններներին և հետազոտողներին ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրի գենբանկերին և հետազոտական կառույցներին: Պարբերաբար կազմակերպվող համատեղ արշավախմբային ուսումնասիրությունների ընթացքում հավաքած նմուշները հավասարաչափ բաժանվում են մասնակիցների միջև՝



համաձայն կնքված պայմանագրերի և նյութի տրամադրման ստանդարտ պայմանագրի դրույթների:

Երկիրն իրականացնում է Պարենի և գյուղատնտեսության համար բույսերի ԳՌ-ների պահպանության և կայուն օգտագործման գործողությունների գլոբալ ծրագրի իրականացման մոնիթորինգ, որի չափորոշիչների մշակմանը Հայաստանը մասնակցել է: 2015 թ. Հայաստանը Պարենի և գյուղատնտեսության համար ԳՌ-ների հանձնաժողովին ներկայացրեց զեկույց Գործողությունների երկրորդ գլոբալ ծրագրի մոնիթորինգի իրականացման վերաբերյալ՝ համաձայն զեկույցների ներկայացման նոր ձևաչափի (Տեղեկատվության և վաղ ահազանգման համաշխարհային համակարգ - www.fao.org/pgrfa):

Պարենի և գյուղատնտեսության բույսերի ԳՌ-ների միջազգային դաշնագրին կողմ լինելով՝ Հայաստանը, երկրի գենետիկական բազմազանությունն ու առնչվող տեղեկություններն ազգային հավաքածուներում պահպանվող նմուշների մասին մատչելի դարձնելու նպատակով, դաշնագրի ներքո գործող բազմակողմ համակարգ է ներառել պարենի և գյուղատնտեսության համար բույսերի ԳՌ-ների 2504 նմուշ՝ դրանք նշելով եվրոպական առցանց կատալոգում (EURISCO):

Նպատակային խնդիր 14.

2020 թ. վերականգնվել և պահպանվում են կարևոր ծառայություններ ապահովող էկոհամակարգերը, այդ թվում՝ ջրի հետ կապված ծառայությունները, նաև նրանք, որոնք նպաստում են առողջության պահպանությանը, կենսաապահովմանն ու բարեկեցությանը՝ հաշվի առնելով կանանց, բնիկ ու տեղական համայնքների, աղքատների ու բնակչության խոցելի շերտերի կարիքները

Կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը և ԷԾ-ների տրամադրմանն ու օգտագործմանն հնարավորությունները մեծապես կախված են դեգրադացված էկոհամակարգերի վերականգնման արդյունավետությունից: Էական ծառայություններ տրամադրող ջրային էկոհամակարգերի, այդ թվում՝ ստորերկրյա ջրային պաշարների նվազումը, ջրաճահճային էկոհամակարգերի չորացման գործընթացների արագացումը բնակչության առողջության, սննդապահովման, ջրապահովման համար իրատեսական սպառնալիքն են: Սևանա լճի մակարդակի վերականգնման գործողությունները, Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների նվազմանն ուղղված միջոցառումները լայն թափ են ստացել վերջին տարիներին և ուղղված են կարևոր ծառայություններ ապահովող էկոհամակարգերի վերականգնմանն ու պահպանմանը:

«ՀՀ կառավարության որոշումներով յուրաքանչյուր տարի հաստատվում է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը», որտեղ սահմանվում են գործողություններ Սևանա լճի մակարդակի բարձրացման և



նրա ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և արդյունավետ կառավարման ուղղությամբ: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ լճում արդեն նկատելի է ձկնային ընդհանուր պաշարների աճի միտում և թռչնաշխարհի հարստացում:

Տարվող աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ զետեղված են 2-րդ գլխում՝ «Դեգրադացված էկոհամակարգերի վերականգնում՝ ջրային էկոհամակարգերի օրինակի վրա» բաժնում, և զեկույցի 3-րդ բաժնում:

Հայաստանի անտառների և դրանց դեգրադացիայի կանխման ու վերականգնման գործընթացների մասին տեղեկատվությունը ներկայացված է 3-րդ բաժնում (Ազգային նպատակային խնդիր 4) և տվյալ բաժնի Նպատակային խնդիր 5-ում: Կենսաբազմազանության պահպանության և օգտագործման գերակա ռազմավարական ուղղությունները, նպատակային խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները ներառված են 2015 թ. «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագրում»:

Նպատակային խնդիր 15.

2020 թ. բնության պահպանության ու վերականգնման միջոցով բարձրացել է էկոհամակարգի դիմադրողականությունը, ավելացել է կենսաբազմազանության ներդրումն ածխածնի պաշարների կուտակման գործում, այդ թվում՝ դեգրադացված էկոհամակարգերի առնվազն 15 %-ի վերականգնման միջոցով, որը նպաստել է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը, էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացմանը, ինչպես նաև անապատացման դեմ պայքարին

2015 թ. Հայաստանը, ստորագրելով Փարիզյան համաձայնագիրը, պարտավորվել է 35 տարվա ընթացքում սահմանափակել ջերմոցային գազերի արտանետումները 633 միլիոն տոննայի սահմաններում, իսկ անտառապատվածությունը մինչև 2050 թ. հասցնել 20.1 %-ի:

ԿՓՇԿ-ի ներքո իրականացվող գործողությունները նպաստում են CO₂, CH₄ արտանետումների կրճատմանը՝ էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով: Կլիմայի փոփոխության մեղմման համար անհրաժեշտ է կիրառել ածխաթթու գազի կլանման ավելացմանն ուղղված անտառապատման և անտառվերականգնման գործողություններ:

Անտառային էկոհամակարգերի տրանսֆորմացիայի միջոցով, որը դիտարկվում է որպես կլիմայի փոփոխության պայմաններում բնական անտառի դիմադրողականության բարձրացման և միատարր անտառների բնապահպանական արժեքի ավելացման գործիք, 2011-2015 թթ. իրականացվել է անտառապատ տարածքների տրանսֆորմացիա և մոտ 250 000 ծառերի տնկում: Նորվեգիայի



արտաքին գործերի նախարարության աջակցությամբ 2013-2014 թթ. շուրջ 184 հա անտառային տարածքներ ենթարկվել են տրանսֆորմացիայի՝ տնկվել է մոտ 130 000 ծառ: Իրականացվել է նաև անտառային վնասատուների դեմ պայքար շուրջ 17 000 հա տարածքի վրա¹³:

ՄԱԶԾ-ԳԷՀ «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիսարևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագիրն էապես նպաստել է անտառային տնտեսությունների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը՝ ներառյալ բազային տեղեկատվության հավաքագրման ու մշակման տեխնոլոգիաների ներդրումը: Երկրատեղեկատվական համակարգի օժանդակությամբ իրականացվել են անտառի գույքագրման ու քարտեզագրման, կառավարման պլանավորման ու մոնիթորինգի աշխատանքներ: ԵՄ-ի ֆինանսավորմամբ և ՄԱԶԾ-ի աջակցությամբ «Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում Հայաստանում» Կլիմա Իստ պիլոտային ծրագրի շրջանակներում աշխատանքներ են ծավալվել դեգրադացված լեռնային արոտավայրերի և անտառների վերականգնման ուղղությամբ:

Նպատակային խնդիր 16.

2015 թ. գենետիկական ռեսուրսների հասանելիության կարգավորման և դրանց կիրառումից ստացված օգուտների արդար ու հավասարաչափ բաշխմամբ համատեղ օգտագործման Նագոյայի արձանագրությունը մտել է ուժի մեջ և գործում է համաձայն ազգային օրենսդրության

Հայաստանը դեռևս չի ստորագրել ԿԲԿ-ի «Գենետիկական ռեսուրսների մատչելիության ու դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդարացի բաշխման մասին» Նագոյայի արձանագրությունը: Այդուհանդերձ, այդ կապակցությամբ բանակցություններն ու հանրային քննարկումները նախատեսվում է իրականացնել ԿՌԳԱԾ-ով:

Նպատակային խնդիր 17.

2015 թ. յուրաքանչյուր Կողմ երկիր մշակել և, որպես քաղաքականության գործիք, ընդունել է կենսաբազմազանության պահպանության արդյունավետ, համատեղ ու նորացված ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր ու սկսել է իրականացնել դրանք

Հայաստանը մշակել և ընդունել է մի շարք կարևոր ազգային ռազմավարական փաստաթղթեր՝ ուղղված կենսաբազմազանության պահպանմանը, այդ թվում՝

¹³ Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված մեխանիզմների ներդրում, բաժին 2:



ԿՌԳԱԾ-ին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության 2015 թ. N 54 արձանագրային որոշումը և ԲՀՊՏ-ՌՊԾ-ն հաստատելու մասին ՀՀ կառավարության՝ 2014 թ. N 1059 որոշումը:

Ոլորտի սպառնալիքները թուլացնելու և բնական պաշարների կառավարումն արդյունավետ կազմակերպելու նկատառումներից ելնելով՝ 2018 թ. ընդունվել է ՀՀ բնական պաշարների կառավարման ռազմավարությունը¹⁴, որի նպատակները ներառում են ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների ապահովումը և ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից, սպառումից զերծ պահումը և պահպանությունը: Ռազմավարությունը սահմանում է բնական պաշարների կառավարման հիմնական սկզբունքները, այդ թվում՝ ընդերքօգտագործման ընթացքում առաջացած թափոնների մասով: Բնական պաշարների կառավարման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը ներառում է ընդերքօգտագործման թափոնների գույքագրումը՝ աղտոտվածության նվազեցման և չեզոքացման նպատակով (2018-2025 թթ.), ինչպես նաև ընդերքօգտագործման արդյունքում հողերի աղտոտվածության և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի իրականացումը (2019 թ. և շարունակական):

Նպատակային խնդիր 18.

2020 թ. ավանդական գիտելիքները, նորարարությունները և բնիկների ու տեղական համայնքների փորձը, որոնք կարևոր են կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման համար, նաև հարգված է կենսաբանական ռեսուրսների ավանդական օգտագործումը՝ ազգային օրենսդրության և միջազգային պարտավորություններին համապատասխան, լիովին ինտեգրված և արտացոլված են Կոնվենցիայի իրականացման գործընթացում՝ բնիկների և տեղական համայնքների ամբողջական ու արդյունավետ մասնակցությամբ

Հայաստանում տվյալ նպատակային խնդիրն առնչվում է միայն տեղական համայնքներին, որոնց մասնակցությունը հիմնականում նպատակաուղղված է համայնքային անտառների հիմնման հնարավորությունների բացահայտմանը, համայնքային կառավարման ԲՀՊՏ-ների հիմնման համար նախադրյալների ստեղծմանը: Այդ տեսակետից նոր հնարավորություններ է ստեղծում ԲՀՊՏ-ՌՊԾ-ով նախատեսված ԲՀՊՏ-ների համակարգում պահպանվող լանդշաֆտի (ԲՊՄՄ չափորոշիչներով 5-րդ կատեգորիա) ամրագրումը, ինչը կարող է նպաստել բնապահպանական գործընթացներում համայնքների ակտիվ մասնակցությանը: Վերջիններիս մասնակցությունը կապահովի գյուղական համայնքներում

¹⁴ ՀՀ կառավարության՝ 2018 թ. փետրվարի 22-ի նիստի N 7 արձանագրային որոշում:



այլընտրանքային կենսամիջոցների զարգացման հնարավորությունների ստեղծումը՝ ուղղված կենսապաշարների կանոնակարգված և նորմավորված օգտագործմանը:

Մի շարք միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվել են համայնքների կարողությունների զարգացման և հողերի կայուն կառավարման միջոցով տնտեսական օգուտների խթանման գործողություններ: Կենսաբազմազանության պահպանմանը և կայուն օգտագործմանն ուղղված ռազմավարություններում և գործողություններում համայնքների մասնակցությունը կարևոր գործոն է երկրում իրականացվող միջոցառումների արդյունավետության տեսանկյունից: Կարևոր խնդիրներից է նաև տեղական համայնքի հետ ամենօրյա աշխատանքը՝ ուղղված համայնքի կենսառեսուրսների, կենսաբազմազանության պահպանմանը, կլիմայի փոփոխությանը, ԲՀՊՏ-ների, ԷԾ-ների և կայուն կառավարման առումով իրազեկվածությանն ու հմտությունների զարգացմանը:

Նպատակային խնդիր 19.

2020 թ. գիտելիքները, գիտական բազան և տեխնոլոգիաները՝ կապված կենսաբազմազանության, դրա գնային արժեքի ու գործունեության, կարգավիճակի և այդ ոլորտում միտումների, ինչպես նաև դրա կորստի հետևանքների հետ, կատարելագործվել, լայնորեն համատեղ օգտագործվում, փոխանցվում և կիրառվում են

Վերջին տարիներին երկրում իրականացվում են կենսաբազմազանության մասին գիտելիքների և գիտական բազայի հզորացման, նոր տեխնոլոգիաների ներդրման, կենսաբազմազանության գնային արժեքին ու գործունեությանը, ինչպես նաև կարգավիճակի բարելավմանն ուղղված պետական և դրամաշնորհային ծրագրեր, որոնց կարելի է ավելի մանրամասն ծանոթանալ 3-րդ բաժնում: Այս ծրագրերի հիմնական արդյունքներն են.

1. գյուղատնտեսության և անտառային տնտեսության ոլորտներում առաջարկվել են կլիմայի փոփոխության հարմարվողականության նորարարական լուծումներ.
2. կլիմայական մոդելների կիրառմամբ կանխատեսվել են Կարմիր գրքում ընդգրկված մի շարք հազվագյուտ տեսակների աճման պայմանների փոփոխության սցենարներ.
3. բազային տեղեկատվության հավաքագրման ու մշակման տեխնոլոգիաների կիրառման միջոցով ստեղծվել են նախադրյալներ անտառային տնտեսությունների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման համար.
4. Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերի արդյունահանման աճը նվազեցնելու համար առաջարկվել են գործիքներ՝ բարելավված տվյալների հավաքագրման և վերլուծության միջոցով ստորգետնյա ջրերի տեղաբաշխման և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

5. ուսումնասիրվել են կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման հնարավոր կիրառելի մեթոդները՝ ինդիկատորների ընտրության և տվյալների հավաքի ընդունված միջազգային փորձի հիման վրա.
6. բացահայտելով կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության համար գերակա ոլորտներում էկոլոգիապես հիմնավոր առաջնային տեխնոլոգիաների կարիքները՝ աջակցություն է ցուցաբերվել տեխնոլոգիաների կարիքների գնահատման գործընթացի առաջնղմանը.
7. ԲՀՊՏ-ները հրդեհներից պաշտպանելու նպատակով նորարարական մոտեցումների ու տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել է հրդեհների մարման ամբողջական համակարգ.
8. մշակման փուլում է սիրողական որսի ու ձկնորսության թույլատվությունների ստացման էլեկտրոնային համակարգը, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ՝ ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունում.
9. ԿԹՏ-ներում, որոնք ներառում են նաև Ռամսարի տարածքները, ամենամյա մոնիթորինգի ընթացքում անցկացվում է թռչունների տեսակային կազմի և պոպուլյացիաների, կենսամիջավայրերի վիճակի և վտանգների հաշվառում՝ ներառելով ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ ազդեցությունները.
10. ԿԲՀ-ի (CNF) կողմից 2018 թ. սկսվել են նախապատրաստական աշխատանքներ բնափայտի մթերման էլեկտրոնային համակարգի մշակման վերաբերյալ: Այն նախատեսված է թե՛ անտառային տնտեսությունների և թե՛ ԲՀՊՏ-ների համար, որոնք առնվազն իրականացնում են թափուկ վառելիքայտի մթերում.
11. 2018 թ. ԲՀՀ (WWF) Կովկասյան ծրագիրը և հայաստանյան գրասենյակը նախաձեռնել են Հայաստանի կարևորագույն կենսաբազմազանության տարածքների վերանայում, որը նպատակ ուներ թարմացնել Կովկասի էկոտարածաշրջանի պահպանության ծրագիրը: Այս աշխատանքը ներառում էր ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գտնվող միջազգայնորեն վտանգված տաքսոնների վերանայում, ներառյալ թռչունները և ԿԹՏ-ները:

Վերջին տարիներին նկատվում է նաև գյուղատնտեսության վարման հետ կապված բնական միջավայրերի կորստի սպառնալիքի թուլացման միտում:

Պետական օժանդակության մի շարք ծրագրերի մշակման և իրագործման շնորհիվ («Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր», «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական



տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրերը) դրական տեղաշարժեր են տեղի ունեցել հողային ռեսուրսների, մասնավորապես՝ վարելահողերի օգտագործման բնագավառում, անարդյունավետ և ջրային էրոզիայի պատճառ հանդիսացող ավանդական ոռոգման եղանակի ջրախնայողական և բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիայով փոխարինման, կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ գյուղատնտեսական մշակաբույսերի, գեղազարդային և դեղատու բույսերի արժեքավոր սորտերի վերականգնման, առողջ տնկանյութի արագ ու զանգվածային արտադրության մեջ:

Երկրում գիտելիքները, գիտական բազան և տեխնոլոգիաների կատարելագործումը, լայնորեն համատեղ օգտագործումը, փոխանակումը և կիրառումը դեռ բարելավման կարիք ունեն: Մասնավորապես դա վերաբերվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների և արդյունաբերական կազմակերպությունների համագործակցությանը, համապատասխան նյութական բազաների, լաբորատորիաների, փորձակայանների ստեղծմանը, միջազգային կառույցների, պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, ԶԼՄ-ների ու հասարակական կազմակերպությունների միջև բազմակողմ գործընկերային կապերի հաստատմանը:

Նպատակային խնդիր 20.

Ոչ ուշ, քան 2020 թ., համեմատած ընթացիկ մակարդակների հետ, պետք է զգալիորեն ընդլայնվի ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը բոլոր աղբյուրներից՝ 2011-2020 թվականներին կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման ռազմավարական պլանի արդյունավետ իրականացման նպատակով

Հայաստանում շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար ֆինանսական ռեսուրսների ապահովումը կատարվում է պետական բյուջեից և արտաքին աղբյուրներից: Վերջին տարիներին «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկման շնորհիվ զգալիորեն ավելացել են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջե մուտքագրվող եկամուտները, ինչպես նաև առանձին դեպքերում նվազել են շրջակա միջավայրի վրա ներգործության ծավալները: Աշխատանքներ են կատարվել միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

Դոնոր պետությունների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են անտառային էկոհամակարգերի կայուն կառավարման, տեղական համայնքների ներգրավմամբ անտառվերականգնման աշխատանքների կազմակերպման, նոր ԲՀՊՏ-ի (այդ թվում՝ անդրսահմանային) և էկոլոգիական միջանցքների ստեղծման,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

քաղցրահամ ջրային էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման, կարևոր բուսական ու կենդանական տեսակների և դրանց բնակության վայրերի պահպանման ապահովմանը: Շարունակվում է համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF), Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Եվրամիության, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Գերմանիայի զարգացման բանկի (KfW), Համաշխարհային բանկի (WB), Կովկասի բնության հիմնադրամի (CNF), Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (RECC), ինչպես նաև մի շարք օտարերկրյա պետությունների հետ:

2014-2019 թթ. ընթացքում ԲՀՊՏ-ներին են հատկացվել հետևյալ դրամական միջոցները.

2014	2015	2016	2017	2018
753644.8 դրամ	894691.1 դրամ	889760.9 դրամ	840198.2 դրամ	898417.7 դրամ

ՀՀ բնապահպանության նախարարությանը հատկացվել են հետևյալ միջոցները.

2014	2015	2016	2017	2018
2800974.75 դրամ	3406215.5 դրամ	3033902.74 դրամ	2999690.73 դրամ	3273949.3 դրամ

Կովկասի բնության հիմնադրամի կողմից տրամադրվել են հետևյալ միջոցները.

2014	2015	2016	2017	2018
180191.5 դրամ	197534 դրամ	211838.4 դրամ	214071.4 դրամ	389165.5 դրամ

ՀՀ բնապահպանության նախարարության տվյալներով 2017 թ. բնապահպանության ոլորտում իրականացված ներդրումային ծրագրերի կատարողականի կանխատեսումը կազմել է 165.928.102 դրամ:

Կայուն զարգացման նպատակների, Կենսաբազմազանության Այիչիի նպատակային խնդիրների և ՀՀ կենսաբազմազանության ԱՆԽ-ների համեմատական վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Կայուն զարգացման նպատակներ	Այիչիի նպատակային խնդիրներ	ՀՀ կենսաբազմազանության ազգային նպատակային խնդիրներ
Աղքատության վերացում	2, 6, 7, 14	1, 2, 4, 6, 8
Զրոյական սով	4, 6, 7, 13, 18	4, 6, 8
Առողջություն և բարեկեցություն	8, 13, 14, 16, 18	1, 2, 4, 6, 8, 10
Որակյալ կրթություն	1, 19	1, 11, 12
Գենդերային հավասարություն	14, 17, 18	1, 2, 4, 8
Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ	8, 11, 14, 15	4, 6, 9, 10
Մատչելի և մաքուր էներգիա	5, 7, 14, 15, 19	2, 4, 6, 10, 11
Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ	2, 4, 6, 7, 14, 16	1, 7, 10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ	2, 4, 8, 14, 15, 19	4, 6, 9, 10
Կրճատված անհավասարություն	8, 15, 18, 20	1, 2, 4, 6, 8
Կայուն քաղաքներ և համայնքներ	2, 4, 8, 11, 14, 15	6, 10, 11
Պատասխանատու սպառում և արտադրություն	1, 4, 6, 7, 8, 19	6, 10, 11
Գործողություն ի նպաստ կլիմայի	2, 5, 10, 14, 15, 17	2, 4, 6, 8, 10, 12
Կյանքը ջրի տակ	2, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 14, 15, 17, 19	4, 5, 6, 8, 10, 11
Կյանքը հողի վրա	2, 4, 5, 7, 9, 11, 12, 14, 15, 16	2, 4, 5, 6, 7, 8, 11
Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ	17	3
Համագործակցություն նպատակների համար	2, 17, 19, 20	9, 10

6-րդ ազգային զեկույցի «Բույսերի պահպանության գլոբալ ռազմավարության իրականացման համար ազգային ներդրման նկարագրությունը» 5-րդ բաժնի լրացումը, ըստ ԿԲԿ XIII/27 որոշման, համարվում է ֆակուլտատիվ: Քանի որ այս ռազմավարության թիրախներն ու խնդիրների լուծման ուղիներն արդեն արտացոլված են զեկույցի 2-րդ և 3-րդ բաժիններում, ապա կրկնություններից խուսափելու համար նպատակահարմար չէր լրացնել 5-րդ բաժինը:

6-րդ ազգային զեկույցի՝ «Լրացուցիչ տեղեկատվություն տեղաբնիկ ազգերի և տեղական համայնքների ներդրումների մասին» 6-րդ բաժինը նույնպես ֆակուլտատիվ բնույթ է կրում: Քանի որ Հայաստանի տարածքում հայերից բացի տեղաբնիկ ազգեր գոյություն չունեն, ապա 6-րդ բաժինը չի լրացվել:

ԲԱԺԻՆ VII.

ԵՐԿՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԿԱ ՆՈՐԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(իրականացնել <https://www.cbd.int/countries> կայքում ներկայացված նյութի վերլուծություն և գնահատում)

Կենսաբազմազանության 5-րդ Ազգային զեկույցի հրապարակումից հետո, երկրի կենսաբազմազանության վերաբերյալ նորացված տեղեկատվության համաձայն, առկա են որոշակի փոփոխություններ:

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում ինտենսիվ տեսակառաջացման գործընթացներով, որի արդյունքում հանրապետության ֆլորայի և ֆաունայի հետազոտողները հաճախ են հայտնաբերում գիտության համար չնկարագրված նոր տեսակներ:

Անողնաշար կենդանիների փոփոխման միտումները 2014-2018 թթ. ընթացքում (դրական և բացասական)

Հայաստանում անողնաշար կենդանիները ներկայացված են հարուստ բազմազանությամբ (17 000-ից ավելին), որի ուսումնասիրվածության մակարդակը դեռևս բավարար չէ:



ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված են 14 փորոտանի, 2 երկփեղկ փափկամարմինների և միջատների 139 տեսակներ: Փափկամարմինների տեսակներից 4-ի՝ Տրոշելի խխունջի (*Bithynia troscheli*), հարթ խխունջի (*Gyraulus laevis*), կանոնավոր խխունջի (*G. Regularis*) և Անանդալեի խխունջի (*Odhneripisidium annandalei*) ապրելավայրերը գտնվում են ԲՀՊՏ-ներում, և կարելի է համարել, որ դրանք ունեն ավելի պաշտպանված կարգավիճակ:

2014-2018 թթ. իրականացվել են միջատների շուրջ 300 տեսակի հետազոտություններ: Արդյունքում հաստատվել է, որ Արարատյան հարթավայրում տարածված միջատներից 89-ը (շուրջ 60 %-ը) գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Ընդ որում՝ դրանցից մեկն անհետացած տեսակ է (EX), 20-ը՝ կրիտիկական վիճակում գտնվող (CR), 36-ը՝ վտանգված (EN), 32-ը՝ խոցելի (VU): Միջատների 24 վտանգված տեսակների համար կատարվել է բնապահպանական կարգավիճակի գնահատում: ԲՊՄՄ (IUCN) Միջազգային Կարմիր ցուցակում գրանցելու նպատակով Տեսակների պահպանության միջազգային հանձնաժողով են ուղարկվել Հայաստանի 29, այդ թվում՝ 13 էնդեմիկ տեսակների համար անհրաժեշտ տվյալներ: Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

1. նկարագրվել է գիտության համար բզեզների 4 նոր տեսակ, հայտնաբերվել է Հայաստանի ֆաունայի համար բզեզների 33 նոր տեսակ.
2. առաջին անգամ Հայաստանում գրանցվել է վտանգավոր ինվազիվ *Harmonia axyridis* զատկաբզեզը.
3. վերանայվել են *Melanotus* ցեղի բզեզների կոլեկցիոն նյութերը, նկարագրվել է գիտության համար 3 նոր տեսակ, նշվել է նաև այս ցեղին պատկանող Հայաստանի համար 4 նոր տեսակ.
4. գրանցվել է երկրաչափ թիթեռների (*Geometridae*) 183 տեսակ, որից 12-ը Հայաստանի էնդեմիկներ են, 3-ը՝ Անդրկովկասի, 1-ը՝ Կովկասի, 5 տեսակ ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում.
5. կատարվել է արջաթիթեռների (*Arctiidae*) տաքսոնոմիական վերլուծություն, նշվել է 34 տեսակ, որից 3-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում, մեկը Հայաստանի էնդեմիկ է.
6. որոշվել է ֆիտոֆագ-գալամլակների (*Diptera, Cecidomyiidae*) տեսակային կազմը. Արարատի մարզում հայտնաբերվել է 25 տեսակ, որից 8-ը առաջին անգամ են նշվում մարզի համար, իսկ 4 տեսակ նոր են նաև Հայաստանի ֆաունայի համար: Լոռու և Տավուշի մարզերից հայտնաբերվել են Հայաստանի ֆաունայի համար 2 նոր տեսակ, 3 տեսակ առաջին անգամ են գրանցվել Լոռու մարզում: Գեղարքունիքի մարզում հայտնաբերվել է 10 տեսակ, որոնցից 4-ը նոր են Հայաստանի ֆաունայի համար, 1-ը առաջին անգամ է նշվում Գեղարքունիքի մարզի համար, նկարագրվել է գիտության համար մեկ նոր տեսակ՝ *Janetiella convolvuli* sp. nov. (*Diptera: Cecidomyiidae*):



7. Հետազոտվել է միջատների երկթևերի կարգի (Diptera) դոլիխոպոդիդների (Dolichopodidae) ընտանիքին պատկանող շուրջ 29 տեսակ, Tabanidae (22 տեսակ), Simuliidae (8 տեսակ), Culicidae (4 տեսակ) ընտանիքների ներկայացուցիչներ: Բացահայտվել են Culicidae (Diptera) ընտանիքի *Anopheles maculipennis* Maigen և *A.sacharovi* Favre տեսակների էկոլոգիական առանձնահատկություններն Արարատի մարզում:
8. ՄԱԶԾ-ի (UNDP) «Հողերի և անտառների կայուն կառավարում Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում» (2016-2020 թթ.) ծրագրի շրջանակներում մշակվում է անտառային թիթեռների ինդիկատորային տեսակների մոնիթորինգի ծրագիր՝ որպես անտառային էկոհամակարգերի կառավարման գործիք¹⁵:
9. Նախապատրաստվում է Հայաստանի ցերեկային թիթեռների ատլաս (2019 թ.): Արդեն իսկ մշակվել է Հայաստանի ցերեկային թիթեռների ատլասի առցանց տարբերակը (<https://www.butterfly-conservation-armenia.org/species.html>)¹⁶:

Առկա տվյալների հիման վրա անողնաշար կենդանիների, մասնավորապես՝ միջատների ֆաունայի ներկա վիճակն ընդհանուր առմամբ կարող է գնահատվել կայուն բավարար:

Ողնաշարավոր կենդանիների փոփոխման միտումները 2014-2018 թթ. ընթացքում (դրական և բացասական)

Համաձայն 5-րդ Ազգային զեկույցում առկա տվյալների՝ հանրապետության կենդանական աշխարհի կազմում ողնաշարավոր կենդանիները ներկայացված են եղել 549 տեսակով, այդ թվում՝ կաթնասուններ 93 տեսակ, որից էնդեմիկների քանակը՝ 6, սողուններ՝ 53 տեսակ (6 էնդեմիկ), երկկենցաղներ՝ 7 տեսակ, ձկներ՝ 39 տեսակ, որից 3-ը՝ էնդեմիկ: Թռչունների թվաքանակում ներկայումս ունենք որոշակի փոփոխություններ՝ նախկին 357-ի փոխարեն գրանցված է 372 թռչնատեսակ, որից մեկը՝ էնդեմիկ:

1. **Ձկներ:** Հայաստանի Կարմիր գրքում գրանցված է 7 տեսակի ձուկ: Ջրի սակավության պատճառով խիստ պակասել է Մեծամոր գետում և դրա հետ կապված ջրատարների համակարգում բնակվող էնդեմիկ, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հայկական կարմրակնի (*Rutilus rutilus schelkovnikovi* Derjavin, 1926) պոպուլյացիան: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այս ձկնատեսակի ապրելավայրերի պահպանման ուղղությամբ: Բացի դրանից, 2012 թ.-ից Արաքսի գետավազանից Մեծամոր գետ ներթափանցած կասպիական կարմրակն (*Rutilus caspicus*) և անդրկովկասյան գուստերիա (*Blicca bjoerkna transcaucasica*) տեսակները կարող են Հայաստանի էնդեմիկ տեսակների՝ հայկական գուստերիա (*Blicca*

¹⁵ Կ. Աղաբաբյան, UNDP, «Հողերի և անտառների կայուն կառավարում Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում» (2016-2020 թթ.) ծրագիր:

¹⁶ <https://www.butterfly-conservation-armenia.org/species.html>:



bjoerkna derjavini) և հայկական կարմրակն, կորստի պատճառ դառնալ՝ ցեղակից տեսակների հետ խաչասերվելու հետևանքով: Անհրաժեշտ է պահպանվող տարածքի կարգավիճակ տալ Մեծամոր գետում հայկական կարմրակնի հիմնական ապրելավայրի և ձվադրավայրի հատվածներում: Սևանա լճում նկատելի է ձկնային ընդհանուր պաշարների աճի միտում: Այսպես, 2016 թ. համեմատ ձկնային պաշարն աճել է 16.7 %-ով, և 2017 թ. ձկան ընդհանուր պաշարը կազմել է 2281 տ: Լճում գերիշխող ձկնատեսակը սիգն է, որի մասնաբաժինը 2016 թ. համեմատ աճել և 2017 թ. կազմել է ընդհանուր ձկնային պաշարների մոտ 97 %-ը¹⁷: Սակայն խոսել լճի ձկնային հանրության լիարժեք վերականգնման մասին դեռ վաղ է: Սևանի իշխանի պոպուլյացիայի վերականգնման գործում կարևոր դեր է խաղացել «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001 թ. ՀՀ օրենքով նախատեսված ձկան պաշարների վերականգնման 2005-2015 թթ. համալիր ծրագիրը, որի ընթացքում Սևանա լիճ բաց է թողնվել շուրջ 3.8 միլիոն իշխանի մանրածուկ: Այժմ իշխանի կենսազանգվածը հասել է 17 տոննայի, սակայն բնական վերարտադրությունը, ամենայն հավանականությամբ, դեռևս բացակայում է:

2. Երկկենցաղներ: Հայաստանի Կարմիր գրքում գրանցված է երկկենցաղների 2 տեսակ: Փոքրասիական տրիտոնի (*Ommatotriton ophryticus*) պահպանությունը պայմանավորված է ապօրինի որսի կանխարգելումով: Սիրիական սխտորագորտի (*Pelobates syriacus*) պոպուլյացիայի պահպանման միջոցառումները բավարար չեն, քանի որ սխտորագորտի ապրելավայրերը գտնվում են բնակավայրերի մոտ և ենթարկվում են մարդածին բացասական ազդեցության:

3. Սողուններ: Հայկական իժի թվաքանակի աճ է գրանցվել «Շիկահող» պետական արգելոցի տարածքում, երբ արգելոցի տարածքի ընդլայնման շնորհիվ հնարավոր դարձավ արգելոցի տարածք ընդգրկել Մեղրու լեռնաշղթայի ենթալպյան գոտու անտառազուրկ քարակույտերով պատված բիոտոպերը: Դարևակու իժի թվաքանակի աճ է գրանցվել նաև «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասում: Այս 2 տեսակների բիոտոպերը նախկինում ինտենսիվորեն օգտագործվում էին գյուղատնտեսական կենդանիների համար որպես արոտավայրեր: Մի շարք պայմանագրերի շրջանակներում (ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և ԱՄՆ-ի Սենթ Լուիսի և Դետրոյթի կենդանաբանական այգիների հետ կնքած պայմանագրեր) իրականացվում են Հայկական իժի, Դարևակու իժի, լեռնատափաստանային իժի, միջերկրածովային կրիայի էկոլոգիայի ուսումնասիրության և ապրելավայրերի վիճակի գնահատման հետազոտություններ՝ ժամանակակից մեթոդների կիրառման

¹⁷ ՀՀԳԱԱ ԿԶԷԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի 2017թ. հաշվետվություն:



միջոցով (ռադիոտելեմետրիկ և էլեկտրոնային չիպերի, ֆոտոբնիչների, ֆենոլոգիական ցուցանիշների գրանցման սարքեր):

- 4. Թռչուններ:** Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում (2010 թ.) գրանցված է 96 թռչնատեսակ: Դրանցից 18-ն ունեն «վտանգված» կարգավիճակ, 65-ը՝ «խոցելի», 13-ը դասվում է «Տվյալների բացակայություն» (DD) կարգավիճակ ունեցող տեսակների շարքում: Ներկայումս բազմաթիվ թռչնատեսակների կարգավիճակը պետք է վերանայել՝ հաշվի առնելով վերջին տարիներին նրանց թվաքանակի փոփոխությունները: Հայաստանում թռչունների տեսակային կազմը հաշվետու ժամանակահատվածում ավելացել է շուրջ 10 տեսակով, և այժմ հաշվվում է 372 թռչնատեսակ, որոնցից 235-ը համարվում են բնադրող, իսկ 139-ը՝ չվող տեսակներ (տե՛ս Checklist to Birds of Armenia):

2011 թ.-ից հետո, Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացմամբ պայմանավորված, լճում Մեծ ձկնկուլի (*Phalacrocorax carbo*) թվաքանակը ընթացիկ տարիներին կտրուկ աճել է (ASPB, 2013)՝ բնադրող պոպուլյացիայի թվաքանակը հասնելով 250-ի: Ավելացել է նաև Հայաստանի Կարմիր գրքում «խոցելի» կարգավիճակով գրանցված Տափաստանային հողմավար բազեի (*Falco naumanni*) թվաքանակը: Սիսիանի տարածաշրջանում՝ Գորհայք ԿԹՏ-ից մոտ 35 կմ հարավ-արևելք, հայտնաբերվեց բնադրող նոր գաղութ: Մինչև 2014 թ. Հայաստանում հայտնի էին Գորհայք ԿԹՏ-ում այս տեսակի բնադրող միայն երկու գաղութ՝ մոտ 50 բնադրող զույգերով: Հայտնաբերված նոր գաղութը (50-60 բնադրող զույգ) գործնականում կրկնապատկեց թռչնատեսակի պոպուլյացիայի հայտնի թվաքանակը: Եթե վերջին տարիների ընթացքում Սևանի ավազանում նկատվում է թռչնաֆաունայի քանակական և տեսակային կազմի փոփոխության դրական դինամիկա, ապա իրավիճակն ամբողջովին հակառակն է Արարատյան հարթավայրում: Արմաշի ձկնաբուծական լճերում և Մեծամոր գետի ավազանում, ինչպես նաև Սևանա լճում, 2017 թ. ձմեռող թռչունների հաշվառման արդյունքները ցույց են տալիս, որ գրանցված թռչունների 95 %-ից ավելին (21 տեսակ) հաշվառվել է միայն Սևանա լճի ավազանում: Արարատյան հարթավայրի գետերում կտրուկ նվազել է բադերի քանակը, որոնք օգտագործում են բաց ջրային տարածքները, ինչպես նաև կտցարների (*Charadriiformes*) և արագիլանմանների (*Ciconiiformes*) քանակը, որոնք օգտագործում են բնական ափերը: Ինչ վերաբերում է միջազգային Կարմիր ցուցակին (IUCN), ապա ներկայումս Հայաստանի տարածքում գրանցված է 14 (5%) թռչնատեսակ, որոնք համարվում են համաշխարհային մակարդակով «Անհետացման վտանգի տակ գտնվող» GT (BirdLife 2018): Եվրոպայում բնադրող Հայկական որորի (*Larus armenicus*) (NT) պոպուլյացիայի կեսից ավելին բնադրում է Հայաստանում, Մորուքավոր անգղի (*Gypaetus barbatus*) պոպուլյացիայի՝ 3-6 %-ը: Բացի այդ, Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված որոշ



թռչնատեսակների միջազգային կարգավիճակը փոխվել է: Մասնավորապես՝ կարգավիճակի բարձրացում է տեղի ունեցել հետևյալ տեսակների մոտ.

1. Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis*) (բարձրացված է EN մակարդակ՝ թվի կտրուկ նվազման պատճառով).
2. Կարմրագլուխ բաղ (*Aythya ferina*) (բարձրացված է VU մակարդակ).
3. Մոխրաայտ սուզակ (*Podiceps auritus*) (բարձրացված է մինչև VU մակարդակ).
4. Սովորական տատրակ (*Streptopelia turtur*) (շնորհվել է VU- ի կարգավիճակ).
5. Մորուքավոր անգղ (*Gypaetus barbatus*) (բարձրացել է NT մակարդակ).
6. Հայկական որոր (*Larus armenicus*) (բարձրացված է մինչև NT մակարդակ):

Տափաստանային հողմավար բազեն (*Falco naumanni*) և Կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) նախկին «անհետացող» կարգավիճակից տեղափոխվել են «նվազագույն վտանգի տակ»՝ LC կարգավիճակ: Մասնավորապես՝ Տափաստանային հողմավար բազեի կարգավիճակը փոխվեց շնորհիվ պահպանության միջոցառումների՝ ոչ միայն Եվրոպայում, այլև Հայաստանում:

- 5. Կաթնասուններ:** Վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանում արձանագրվել են որոշակի դրական փոփոխություններ կաթնասունների ֆաունայի ներկայացուցիչների առավել խոցելի տեսակների վիճակի վերաբերյալ: Երկրում կենսաբազմազանության պահպանման և վերարտադրության համար առավել նպաստավոր պայմաններ առկա են ԲՀՊՏ-ներում: Կենսաբազմազանության պահպանության առումով դրա արդյունավետությունը կարելի է գնահատել որոշակի տեսակների (բեզոարյան այծ, հայկական մուֆլոն, կովկասյան ընձառյուծ և այլն) արեալների ընդլայնման և թվաքանակի ավելացման վերաբերյալ հաշվառման տվյալներով: Օրինակ՝ բեզոարյան այծի (100-1500 առանձնյակ), հայկական մուֆլոնի (250-300 առանձնյակ) թվաքանակը 2010 թ.-ից հետո գրեթե կրկնապատկվել է շնորհիվ նոր ԲՀՊՏ-ների («Զանգեզուր», «Խուստուփ» արգելավայրեր, «Արևիք» և «Արփի լիճ» ազգային պարկեր) ստեղծման և նշված կենդանիների արեալների ներառման տարածքային պահպանության:

Մի շարք պայմանագրերի շրջանակներում (ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և ԱՄՆ-ի Սենթ Լուիսի և Դետրոյթի կենդանաբանական այգիների հետ կնքած պայմանագրեր) իրականացվում են ջրասամույրի էկոլոգիայի ուսումնասիրության և ապրելավայրերի վիճակի գնահատման հետազոտություններ:



Ֆլորայի տեսակային կազմի և քանակի փոփոխման միտումները 2014-2018 թթ. ընթացքում (դրական և բացասական)

Իրականացված գիտահետազոտական աշխատանքների շրջանակներում կատարվել են գրականության վերլուծություն, դաշտային հետազոտություններ ու նմուշների բազմաթիվ հավաքներ: Այսպես.

1. ներկայումս Հայաստանի քարաքոսերի բիոտան ներկայացված է 617 տաքսոնով, որոնցից 230-ը էպիֆիտային քարաքոսեր են (Gasparyan & Sipman 2016): Հետազոտվել է ավելի քան 150 լոկալիտետ Հայաստանի ամբողջ տարածքում, որի արդյունքների հիման վրա գնահատվել է որոշ էպիֆիտային քարաքոսերի պահպանման կարգավիճակը: Այն իրականացվել է ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակի և Հայաստանի Կարմիր գրքի չափորոշիչներով: Արդյունքում՝ 7 տեսակ գնահատվել է որպես կրիտիկական վիճակում գտնվող (CR), 5-ը՝ վտանգված (EN), 2-ը՝ խոցելի (VU) և 4-ը՝ տվյալների անբավարարություն (DD) կարգավիճակով: Գնահատված 18 էպիֆիտային քարաքոսերի տեսակներն առաջարկվում է ներառել Հայաստանի Կարմիր գրքի առաջիկա հրատարակության մեջ: Սա հնարավորություն կտա խթանել էպիֆիտային քարաքոսերի պահպանությունը հատկապես անտառային էկոհամակարգերում¹⁸:
2. Սևանա լճում գրանցվել է ֆիտոպլանկտոնի 132 տեսակ, որոնցից ջրիմուռների 31 տեսակ ֆիտոպլանկտոնի մշտական բաղադրիչներն են: Վերջիններից 14 տեսակը դիատոմային ջրիմուռներ են, 8-ը՝ կանաչ, 7-ը՝ կապտականաչ և 2-ը՝ էվգլենային: 2014-2018 թթ. ընթացքում նկատվում է մակրոֆիտային գոտու ընդլայնման միտում: Մակրոֆիտները Սևանա լճում ներկայացված են 32 տեսակով, 27 ցեղով և 21 ընտանիքներով: Լճախորշերում, քամուց պաշտպանված հատվածներում գրանցվել է մակրոֆիտների բուռն զարգացում:
3. Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանը դասվում է աշխարհում ամենաբարձրերի շարքում. յուրաքանչյուր 1000 կմ² բաժին է ընկնում մոտ 107 տեսակ: Միայն վերջին 10 տարիների ընթացքում նկարագրվել է գիտության և Հայաստանի համար 50-ից ավել բույսերի նոր տեսակ: «Հայաստանի Ֆլորա» բազմահատորյակի հրատարակված տասնմեկ հատորներում ներկայացված է 3260 բուսատեսակ: «Հայաստանի Ֆլորա»-ի 11-րդ հատորում ներառվել է նախորդ հատորներում չներառված Հայաստանի համար նոր (ներառյալ գիտության համար նոր) 452 տեսակ և 16 ենթատեսակ (33 ցեղից, 4 ընտանիքից) պարունակող ցանկը, որի արդյունքում 2014 թվականի դրությամբ Հայաստանի ֆլորան ներկայացված է շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերով՝ 160 ընտանիքից և 913 ցեղից:

¹⁸ Գասպարյան Ա. Գ. 316 Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցման համար առաջարկվող էպիֆիտային քարաքոսերի ցանկ / Ա. Գասպարյան. – Եր.: Հեղ. հրատ., 2016. - 28 էջ:



2014 թ.-ից ի վեր Հայաստանի համար գրանցվել են հետևյալ նոր տեսակները.

1. **Իշակաթնուկ դաղստանի (*Euphorbia daghestanica* Geltman (*Euphorbiaceae*)¹⁹,** որն ավելի վաղ հայտնի էր միայն Ռուսաստանի տարածքում, 2016 թ. նկարագրվում է որպես նոր տեսակ Հայաստանի համար:
2. **Արքայածաղիկ հայաստանի (*Fritillaria hajastanica*)** նախկինում նկարագրված է եղել որպես *F. pinardii* Boiss. ենթատեսակ: Այժմ *F. pinardii*-ի և subsp. *hajastanica*-ի հին և նոր հավաքածուների կարգաբանական ուսումնասիրության, բնության մեջ դիտարկումների և տարբերակիչ հատկանիշների համեմատության արդյունքում ընդունվել է նոր տեսակ՝ *Fritillaria hajastanica* (Gabrielian) Gabrielian comb. et stat. nov.²⁰:
3. Հայտնաբերվել և բնութագրվել են Հայաստանի համար Գայլաթաթ (*Alchemilla* L.) ցեղի նոր չորս տեսակ՝ ***Alchemilla debilis* Juz., *A. caucasica* Buser, *A. dura* Juz., *A. epidasys* Rothm. և *A. tredecimloba* Buser:** Արդյունքում, համաձայն նոր տվյալների, *Alchemilla* L. ցեղը երկրում ներկայացված է 23 տեսակով՝ նախկինում գրանցված 19 տեսակների փոխարեն²¹:
4. Հայաստանի համար առաջին անգամ գրանցվել են Զիվան (*Cephalaria* Schrad. ex Roem. & Schult.) ցեղի ***C. sparsipilosa* Matthews և *C. microcephala* Boiss.** տեսակները, ևս երեք տեսակ՝ *C. procera* Fisch. & Avé-Lall., *C. kotschyi* Boiss. & Hohen., *C. tchihatchewii* Boiss. բացառվել է Հայաստանի ֆլորայի կազմից: Արդյունքում հաստատվել է, որ *Cephalaria* Schrad. Ex Roem. & Schult. ցեղը Հայաստանում ներկայացված է 9 տեսակով²²:
5. Հայաստանում որպես նոր ցեղ հայտնաբերվել է օտարածին ***Grindelia squarrosa* (Pursh) Dunal** տեսակը²³:
6. Ի. Գաբրիելյանի կողմից հայտաբերվել են Կաթնուկ (*Lactuca* L.) ցեղին պատկանող Հայաստանի համար նոր տեսակներ (ըստ նախնական տվյալների)՝ ***Lactuca saligna* L.** տեսակը Սյունիքի և Տավուշի մարզերից, Կոտայքի մարզում՝ ***Lactuca aculeta* Boiss.** և Վայոց ձորի մարզում՝ ***Lactuca sibirica* (L.) Benth. Ex Maxim.:**
7. Գեղամա լեռների տարածքում հայտնաբերվել է **Գրոսհեյմիա Ախվերդովի (*Grossheimia ahverdovii* (Gabrielian) Gabrielian)** հազվագյուտ տեսակի երկու նոր պոպուլյացիա, որը 1968 թ.-ից առ այսօր չէր հայտնաբերվել: Այն Սևանի ֆլորիստիկ շրջանի համար բերվում է առաջին անգամ²⁴:

¹⁹ Д. В. Гельтман, Об *Euphorbia daghestanica* (*Euphorbiaceae*) и его находении в Армении и Грузии, 2016, 3, 132-134

²⁰ E. Tz. Gabrielian, *Fritillaria hajastanica* (*Liliaceae*), a new species from Armenia, Takhtajania, 2016, 3, 4-6

²¹ М. В. Саркисян, Род *Alchemilla* (*Rosaceae*) во флоре Армении, Takhtajania, 2016, 3, 23-30

²² М. Э. Оганесян, Род *Cephalaria* (*Dipsacaceae*) в Армении

²³ Э. Ц. Габриэлян, И. Н. Тимухин, Б. С. Туниев, М. В. Агабабян, Новый инвазивный род *Grindelia* (*Asteraceae*) из Армении и новые местонахождения из Северо-западного и Западного Закавказья, Takhtajania, 2016, 3, 130-132

²⁴ А.Т. Asatryan, New data on rare species *Grossheimia ahverdovii* (*Asteraceae*) in Armenia, Takhtajania, 2016, 3; 136-138



8. Մեղրու ֆլորիստիկական շրջանում առաջին անգամ գրանցվել է **Սպանախ քառասառեղ (Spinacia tetrandra Stev. (Chenopodiaceae))** տեսակը, որը նախկինում հայտնի էր միայն Երևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանների համար²⁵:
9. Նոր աճելավայր է հայտնաբերվել Հայաստանի հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված պտերի՝ Ադիանտում վեներայի մազիկի (*Adiantum capillus-veneris*) համար Արայի լեռան տարածքում՝ Ապարանի ֆլորիստիկական շրջանում²⁶:

Նշված տեղեկատվության ամփոփումը վկայում է 2014-2018 թթ. ընթացքում Հայաստանի ֆլորայի տեսակային կազմի և քանակի փոփոխման դրական միտումների մասին՝ նկարագրվել և հրատարակվել են գիտության համար 19 նոր և Հայաստանի համար 39 նոր տեսակ:

Բույսերի ինվազիվ և էքսպանսիվ տեսակների տարածումը Հայաստանում աստիճանաբար դառնում է կենսաբազմազանության պահպանության առաջնահերթ հիմնախնդիրներից մեկը: Այս խնդրի վերաբերյալ առավել մանրամասն նկարագրությունն առկա է Ազգային զեկույցի 3-րդ գլխի 4-րդ նպատակային խնդրում:

Սնկեր

Համաձայն կենսաբազմազանության հինգերորդ Ազգային զեկույցի՝ բույսերի Կարմիր գրքում ներառված են 40 տեսակ սնկեր, որոնք ընդգրկված չեն եղել նախկին հրատարակություններում: Նշված սնկերից 5-ը ընդգրկված է սնկերի եվրոպական Կարմիր ցուցակում: Բացի այդ, Եվրոպայում սնկերի վտանգված տեսակների քարտեզում ներկայացված է Հայաստանում հայտնաբերված 10 տեսակի սունկ:

Սնկերի արդի վիճակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Հայաստանի Հանրապետության «Շիկահող» պետական արգելոցի մակրոսկոպիկ սնկերը» (2016 թ.) թեմայի շրջանակներում արգելոցում առաջին անգամ կատարվել են մակրոմիցետների բազմազանության համապարփակ նպատակային հետազոտություններ: Բացահայտվել են 436 տեսակի մակրոմիցետներ, որոնցից 151 տեսակն ուտելի է, 51-ը՝ թունավոր, 99 տեսակ օժտված է դեղաբանական հատկություններով: «Շիկահող» պետական արգելոցի տարածքում 417 տեսակի մակրոսնկեր հայտնաբերվել են առաջին անգամ, որոնցից 12 տեսակը և 2 ցեղն առաջին անգամ են նշվում Հայաստանում²⁷: «Շիկահող» պետական արգելոցի մակրոսկոպիկ սնկերի կարգաբանական ուսումնասիրությունների տվյալները կարող են օգտագործվել պահպանվող տարածքների կառավարման պլանների թարմացման,

²⁵ И. Г. Габриелян, Новые флористические находки в Армении и в Нагорном Карабахе, Takhtajania, 2016, 3, 134-136

²⁶ Г. Г. Оганезова, О новой находке редкого папоротника *Adiantum capillus-veneris (Adiantaceae)* в Армении, Takhtajania 2016, 3, 141-142

²⁷ Nanagulyan S.G., Margaryan L.V., Hovhannisyan Y.Kh., Boyajyan E.S. "Species and genera of Basidiomycetes of Shikahogh state reserve registered in Armenia for the first time" // Proceedings of the YSU, Chemistry and Biology, 2019, N1):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

տնտեսության տարբեր ոլորտներում սնկերի գործնական կիրառման, ինչպես նաև ուսումնական նպատակներով:

